ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ՌԱԶՄԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԼԵՋՈՒ ՄԱՄՈՒԼԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ. 02.02. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Երևան 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 15
ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ՋԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ 15
1.1. Ադրբեջաներենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը 15
1.2. Ադրբեջաներենի բառապաշարի զարգացման և հարստացման հիմնական փուլերը 16
1.3. Ադրբեջանական մամուլի լեզվի զարգացման փուլերը 22
1.4. Նորաբանություններն ադրբեջաներենում և դրանց կիրառությունը մամուլում 26
1.5. Տերմինների կիրառությունն ադրբեջանական մամուլում 35
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 47
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՆ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ 47
2.1. Ադրբեջաներենի բնիկ և փոխառյալ բառապաշարի առանձնահատկություններն ու գործածումը ադրբեջանական մամուլում 47
2.2.Փոխառությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները 51
2.3.Արաբապարսկական փոխառություններ 54
2.4. Ռուսական փոխառություններ 60
2.5. Եվրոպական լեզուներից կատարված փոխառություններ 64
2.6. Թուրքաբանություններ 67
2.7. Փոխառյալ հապավումներ 71
2.8. Փոխառյալ ձևույթներ 73
2.9. Շարահյուսական փոխառություններ 76
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 79
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ 79

3.1. Զանգվածային լրատվամիջոցների լեզուն որպես ուսումնասիրության առարկա. Մեդիալեզվաբանություն 79
3.2 Քաղաքական բառապաշարն ադրբեջանական մամուլում 80
3.3. Տնտեսություն. 85
3.4. Ռազմական ոլորտ 92
3.5. Մշակույթ 98
3.6. Գիտական և տեխնիկական բնույթի հրապարակումներ 100
3.7. Սպորտ 102
3.8. Բժշկություն 104
3.9. Բնապահպանություն, եղանակ 105
3.10. Կրոն 107
3.11. Քրեական անցուդարձ 108
3.12. Այլ իմաստային խմբեր 109
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ 113
ԱՐԴԻ ՀԱՅ և ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 113
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 131
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 135
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ 141

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր լեզվի բառապաշարն իր մեջ պարփակում է տվյալ ժողովրդի պատմությունը, ծագումն ու զարգացումը, նրա կենցաղն ու մշակույթը: Բառապաշարի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում բազմիցս շեշտվել է լեզվի զարգացման և կատարելագործման անմիջական կախվածությունը ժողովրդի հասարակական կյանքի զարգացումից:

Ինչպես հայտնի է, լեզվում ամենաշատ փոփոխությունների ենթարկվում է բառապաշարը, այնուհետև՝ լեզվի հնչյունական համակարգը, իսկ ամենից քիչ փոփոխության են ենթարկվում քերականական կառույցները: Վերջիններս, հիմնական բառաֆոնդի հետ միասին փոփոխվելով շատ դանդաղ, տևական ժամանակ պահպանում են վաղ անցյալից մնացած հիմնական առանձնահատկությունները:

Բառապաշարում կատարվող փոփոխությունները ժամանակակից փուլում առաջինն արտացոլվում են զանգվածային լրատվամիջոցների, մասնավորապես՝ մամուլի լեզվում: Դիտարկումներն ու ուսումնասիրությունները վկայում են, որ ադրբեջանական մամուլի լեզուն կրել և կրում է լուրջ փոփոխություններ: Մերօրյա իրադարձություններն արտացոլող լեզվական միավորները մամուլի շնորհիվ հասարակության տարբեր շերտերի կողմից ավելի շուտ են յուրացվում: Լրատվամիջոցների լեզուն՝ հատկապես բառապաշարը, հնարավորություն է տալիս հետևել զարգացման այն բոլոր գործընթացներին, որոնք ընթանում են լեզվի բառապաշարում:

Ներկայումս նոր բառերն ու տերմիններն (եզր, բառեզր, եզրույթ) առաջին անգամ գերազանցապես հայտնվում են մամուլի էջերում: Նոր քաղաքական-տնտեսական հարաբերությունները, համաշխարհայնացման խորացող գործընթացը հանգեցրել են նրան, որ ադրբեջաներեն են ներթափանցել բազմաթիվ նոր, հատկապես անգլերեն բառեր ու տերմիններ՝ գիտատեխնիկական, տնտեսագիտական, քաղաքական, սպորտային, մշակութային, կենցաղային և այլն: Փոխառյալ նորահայտ անգլերեն բառերի զգալի հատվածն առայժմ բառարաններում

ընդգրկված չէ, սակայն մամուլի լեզվում նման բառային միավորները կիրառվում են որպես նորաբանություններ:

Սույն աշխատանքը շարադրելիս մեր առջև դրել ենք մի շարք խնդիրներ, որոնցից են.

ա)դիտարկելով մամուլի լեզվում ընթացող փոփոխությունները՝ հետևել առհասարակ լեզվում տեղի ունեցող զարգացումներին,

բ)ցույց տալ մամուլի լեզվի բառապաշարի զարգացման վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնները,

գ)պարզել ժամանակակից լեզվում փոխառությունների դերն ու դրանց ներթափանցման հիմնական պատճառները և աղբյուրները,

դ)ցույց տալ ժամանակակից հայ և ադրբեջանական մամուլում ընթացող լեզվական գործընթացները՝ զուգադրական եղանակով և այլն:

Ատենախոսությունը շարադրելիս որպես հիմք ծառայել են նկարագրական, համադրական, զուգադրական մեթոդները, ինչպես նաև կառուցվածքային վերլուծությունը, ոճական վերլուծության տարրերը և տեքստի լեզվաբանական վերլուծությունը: Աշխատանքի յուրահատկություններից է, որ որպես աղբյուր ծառայել են նաև էլեկտրոնային լրատվամիջոցները, բացի այդ ուսումնասիրության ընթացքում ընթերցվել է ընդհանուր լեզվաբանությանն առնչվող գրականություն:

Սույն աշխատանքի ուսումնասիրության առարկան 2000-ական թթ.-ից և հատկապես՝ 2010թ.-ից հետո գործունեություն ծավալող ադրբեջանալեզու պարբերական մամուլն է: Որպես ուսումնասիրության աղբյուր են ծառայել գերազանցապես էլեկտրոնային տարբերակները՝ հաշվի առնելով ադրբեջանական թերթերից ուղղակի կերպով օգտվելու փաստացի անհնարինությունը: Միաժամանակ հարկ է ավելացնել, որ ներկայումս գրեթե բոլոր ադրբեջանական թերթերն ու ամսագրերն ունեն համացանցում առանձին կայքեր, և այնտեղ, որպես կանոն, զետեղվում են տպագիր տարբերակում տեղ գտած նյութերն ու հոդվածները:

Ադրբեջանում մամուլի լեզվի հիմնախնդիրները քննարկվում են տարբեր հարթակներում՝ պետականից մինչև միջանձնային: Ժամանակակից փուլում մեծապես կարևորվում են առավել տարածված, այսպես կոչված, «ֆորումները», սոցիալական

ցանցերը, որտեղ ադրբեջանական հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներն արտահայտում են իրենց կարծիքն ամենաբազմազան թեմաների, այդ թվում՝ ադրբեջանական ՋԼՄ-ներում առկա լեզվական խնդիրների շուրջ:

Ադրբեջանական մամուլի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հայացք նետել դրա անցած ուղու վրա: Նախքան Բաքվում առաջին ռուսալեզու տպագիր մարմնի լույս ընծայումը, ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող ժողովուրդների տնտեսական և մշակութային կյանքը լուսաբանող հրապարակումները տեղ էին գտնում Թիֆլիսում լույս տեսնող ռուսական թերթերում[1]: Ադրբեջաներենով Թիֆլիսում լույս տեսած առաջին պարբերականը եղել է «Tiflis Əxbarı» [2] («Թիֆլիսի նորություններ») թերթը: Առաջին համարը լույս է տեսել 1832թ. հունվարին և փակվել է 1833թ.[3] : Ընդհանուր առմամբ, 1870թ.-ից մինչև 1889թ. Կովկասում գործում էր 56 անուն տպագիր մամուլ: Դրանցից 20-ը լույս էր տեսնում ռուսերենով, 15-ը՝ վրացերենով, նույնքան էլ՝ հայերենով և ընդամենը 3-ը՝ ադրբեջաներենով:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին եվրոպական և ավանդական իսլամական քաղաքակրթությունների շփման արդյունքում ստեղծվել է տեղի մտավորականությունը, որը վերելք է ապրել հատկապես ռուսական միջավայրի մշակութային և սոցիալական ազդեցության արդյունքում: Մտավորականության վերելքն ինքնին ենթադրում էր նոր հասարակական գիտակցության սկզբնավորում: Ադրբեջանական մտավորականությունը ձևավորվել է 19-րդ դարի կեսերին, և կարելի է պնդել, որ որոշ չափով կախված էր ռուսական մտավորականությունից[4]: Ռուսաստանի և Եվրոպայի ազդեցությունից բացի, կային նաև այլ գործոններ, մասնավորապես՝ իսլամական աշխարհի, օսմանյան մնացուկների և իրանական ադրբեջանցիների ինքնության միավորումը[5]:

[1] Şahverdiyev A., Azərbaycan mətbuatı tarixi, Bakı, "Təhsil" nəşriyyatı, 2006, s. 11.
[2] ծնթ. մինչև 20-րդ դարի սկիզբն արաբական տառագրությամբ գրվող ադրբեջաներեն բառերը սույն աշխատանքում գրված են լատինատառ:
[3] Aşırlı A., Azərbaycan mətbuatı tarixi, (1875-1920), Bakı, Elm və Təhsil, 2009, s. 5 .
[4] Свентоховский Т., Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербаджане, http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_002.htm
[5] Swietoghowski T., Russian Azerbaijan 1905-1920, The shaping of national identity in a muslim community, Cambridge, Cambridge University Press 1985, p. 28.

Մտավորականության սաղմնավորման արգասիք էր նաև ադրբեջանական մամուլի ծնունդը: Ընդունված է ադրբեջանական մամուլի պատմությունը բաժանել երեք փուլի. առաջինը սկսվում է 1875թ. հուլիսի 22-ին «Əkinçi» («վարող, հողագործ») թերթի հիմնադրմամբ և ավարտվում 1920թ., երկրորդն իր ժամանակագրությամբ համընկնում է խորհրդային շրջանի հետ, իսկ երրորդ փուլը սկսվում է Ադրբեջանի անկախացումից և շարունակվում մինչ մեր օրերը:

Հատկանշական է, որ «Əkinçi» թերթում հենց լեզուն է հայտնվում «իրանամետ» և «թյուրքամետ» մտավորականության գաղափարական բախումների կիզակետում: Գրականագետների մեծ մասն իրենց գործունեության լեզուն համարում էին պարսկերենը և թշնաբաբար էին վերաբերվում խմբագիր Հ. Զարդաբիի՝ «հասարակ մարդու լեզուն» կիրառելու փորձերին: Զարդաբին ձգտում էր նույնականացնել իր թերթի լեզուն օսմանյան լեզվի հետ[6]: Թերթի փակվելուց հետո (1877թ. սեպտեմբեր) առավել աչքի ընկած պարբերականներից առանձնանում էին «Ziya» («Լույս») թերթը, «Kəşkül» («Դերվիշի թաս») ամսագիրը, որոնք ևս երկար կյանք չունեցան: 1903 թվականի մարտի 30-ին [7] լույս ընծայված «Şərqi-rus» պարբերականը 20-րդ դարի առաջին ադրբեջաներեն օրաթերթն է:

Կարելի է վստահաբար փաստել, որ ադրբեջանական մամուլն ավելի համակարգված ձևով հանդես է եկել խորհրդային տարիներին, երբ մեկը մյուսի հետևից հրատարակվել են ադրբեջանալեզու տարաբնույթ թերթեր ու ամսագրեր՝ «İdman» («Սպորտ», 1932թ.), «Kirpi» («Ոզնի», 1952թ.), «Azərbaycan gəncləri» («Ադրբեջանի երիտասարդները»), «Ədəbiyyat qəzetəsi» («Գրական թերթ»), «Xalq maarifi» («Ժողովրդական լուսավորություն»), «Yeni yıldız» («Նոր աստղ»), «Kooperativ iş» («Կոոպերատիվ աշխատանք»), «Gələcək» («Ապագա»), «Azərbaycan» («Ադրբեջան») և այլն:

Համեմատության համար նշենք, որ նշված ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանում լույս էին տեսնում հետևյալ անվանումներով պարբերականներ՝ «Խորհրդային Հայաստան», «Բանվորական Երևան», «Ավանգարդ», «Պիոներ կանչ», «Գարուն», «Գրական թերթ», «Ոզնի» և այլն: «Ədəbiyyat

[6] Восканян В., Тюрки на территории Аррана и Ширвана, http://voskanapat.info/?p=4364
[7] Məmmədquluzadə C., Əsərləri, 3-cü cild, Bakı, "Onder" nəşriyyatı, 2004, s. 65.

qəzetəsi» և «Գրական թերթ» պարբերականներն ունեցել են համանման ուղղվածություն և անվանում, միայն թե ադրբեջաներենում գործածվել է «ədəbiyyat»՝ գրականություն գոյականը՝ կազմելով գոյականական բառակապակցություն, իսկ հայկական տարբերակում՝ «գրական» ածականը՝ կազմելով ածականական բառակապակցություն[8]:

20-րդ դարի 80-ական թթ. ողջ ԽՍՀՄ տարածքում թևածող վերակառուցման շունչը հասել էր նաև Ադրբեջան՝ իր ազդեցությունը թողնելով նաև հասարակական-քաղաքական գործընթացների և մասնավորապես մամուլի վրա: Ադրբեջանական «անկախ» մամուլի ծիծեռնակ համարվող «Azadlıq» («Ազատություն») թերթի առաջին համարը լույս է տեսել 1989թ. դեկտեմբերին[9]: Այնուհետև մեկը մյուսի հետևից հիմնվում են «Səs» («Ձայն»), «Yeni Müsavat» («Նոր Մուսավաթ», թարգմ.՝ «հավասարություն»), «İki sahil» («Երկու ափ»), «525-ci qəzet» («525-րդ թերթ»), «Yeni Azərbaycan» («Նոր Ադրբեջան») պարբերականները:

Ադրբեջանում համացանցի միջոցով լրատվություն ապահովելու սկիզբը դրվել է 1996թ. ռուսալեզու ԶԼՄ-ների շարքում «Зеркало» («www.zerkalo.az) թերթի լույս ընծայմամբ, իսկ ադրբեջանալեզու ԶԼՄ-ների մեջ՝ «Yeni müsavat»-ով (www.musavat.com): Ներկայումս երկրում գործող գրեթե բոլոր լրատվամիջոցներն ունեն իրենց պաշտոնական կայքերը և լրատվությունն ապահովում են նաև այդ տարբերակով:

Ադրբեջանական մամուլի պատմության համար կարևոր աղբյուր են երկրի սահմաններից դուրս գործունեություն ծավալած և ներկայումս գործող, ինչպես նաև հետխորհրդային տարածքում գործող ադրբեջանական պարբերականները[10], որոնց վերջին շրջանում անվանում են նաև «ադրբեջանական սփյուռքի մամուլ»: Դրանք ի հայտ են եկել ադրբեջանցների՝ աշխարհի տարբեր կողմերում ցրվելու արդյունքում[11]: Ադրբեջանական մամուլի պատմության համատեքստում կարևոր է նաև Ադրբեջանում

[8] ծնթ. թյուրքական լեզուներին բնորոշ ձևաբանական առանձնահատկություններից է գոյականների կապակցությունը՝ իր տեսակներով: Որոշ լեզուներում գոյականների կապակցության առանձին կառույց համարող առաջին ձևն ադրբեջաներենի դասագրքերում հաճախ ներկայացվում է որպես սեռական հոլով, երկրորդ և երրորդ ձևերը գործում են որպես առանձին կառույցներ:

[9] Kazımova Z., Azərbaycanda xarici dildə mətbuat ənənəsi, http://www.lent.az/xeber_62142_Az%C9%99rbaycanda_xarici_dild%C9%99_m%C9%99tbuat_%C9%99n%C9%99n%C9%99si

[10] Hüsiyev F., Xarici ölkələrdə Azərbaycan mətbuatı: 1990-2005-ci illər (postsovet məkanında), Bakı, «OL» MMC, 2014, s. 178.

[11] Tanrıverdi Ə., Dilimiz, mənəviyyatımız, Bakı, Nurlan, 2008, s. 28 .

հայերենով ներկայացվող ապատեղեկատվությունը, որը հատկապես վերջին տասնամյակում վերածվել է քարոզչական պատերազմի ակտիվ գործիքի: Իրենք էլ, սակայն, խոստովանում են, որ Ադրբեջանում խորությամբ չեն գիտակցում հայերենով տեղեկատվություն ապահովելու անհրաժեշտությունը[12]: Ներկայումս ավելանում է հայալեզու ադրբեջանական կայքերի քանակը՝ www.armenia.az, www.1905.az, www.apa.az, www.cbc.az, www.karabakhinfo.com, hayatsk.info, www.virtualkarabakh.org և այլն: Այս ոլորտ են ուղղվում զգալի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ:

Ադրբեջաներենը պատկանում է թյուրքական լեզուների օղուզական խմբի օղուզա-սելջուկյան ենթախմբին, որը ձևավորվել է օղուզների՝ 8-13-րդ դդ. և սելջուկների՝ 11-13-րդ դդ. միջավայրում, որոնք ծագում են արևելյան և մասամբ՝ արևմտյան հին օղուզական լեզվի հատկանիշներ պահպանած թյուրքական ցեղերի բարբառներից[13]: Դրանց հիման վրա հետագայում կազմավորվում են ժամանակակից ադրբեջաներենը, թուրքմեներենը, թուրքերենը և գագաուզերենը: Լեզվի բառապաշարում մեծամասնություն են կազմում արաբական և պարսկական փոխառությունները, սակայն առանձնացնենք նաև ռուսական փոխառությունների մեծ չափաբաժինը, փոխարենը՝ եվրոպական լեզուներից կատարված փոխառությունների նվազ քանակությունը:

Ցեղակից լեզուներից ադրբեջաներենն ամենից շատ ընդհանրություններ ունի թուրքերենի հետ, սակայն տարբերությունները ևս ակնհայտ են: Այսպես, հնչյունական համակարգում առկա առանձնահատկություններից նշենք մի քանիսը. ա) հին թյուրքական b>m անցումը. օրինակ՝ «ես» անձնական դերանունը թուրքերենում արտահայտվում է ben բառով, իսկ ադրբեջաներենում՝ mən հնչյունական տարբերակով, բ) ժամանակակից ադրբեջաներենում առկա է «q» բաղաձայնը, որը թուրքերենում չկա՝ açıq-açık[14]-բաց, qan-kan-արյուն, qapı-kapı-դուռ, qar-kar-ձյուն և այլն, գ) ադրբեջաներենի այբուբենում առկա է նաև լայն «ə» ձայնավորը[15], որը բացակայում է թուրքերենում: Այս հնչյունի առկայությունը պայմանավորված է պարսկերենի հզոր ազդեցությամբ՝

[12] Həsənzadə M., Azərbaycan telekanalında erməni dilində veriliş...http://modern.az/articles/49360/1/
[13] Баскаков Н., Введение в изучение тюркских языков, Изд. 2-е, испр. и доп., М.: Высшая школа, 1969, с. 242.
[14] Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոքմագյոզյան Տ., Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2015, էջ 177:
[15] Dəmirçizadə Ə, Müasir Azərbaycan dili, I hissə, fonetika, orfoepiya, orfografiya, Bakı, Şərq-Qərb, 2007, s. 44.

օրինակ՝ ədalət-adalet-արդարություն, əxlaq-ahlak-բարոյականություն, əl-el–ձեռք և այլն, դ) թյուրքական լեզուների շարքում ադրբեջաներենի հնչյունական համակարգը տարբերվում է նաև «x» հնչյունի առկայությամբ, ե) ադրբեջաներեն բառերում բառավերջում «q» հնչյունը արտասանվում է [x], իսկ «k» հնչյունը՝ [x,]՝ ancaq - միայն, torpaq-հող, arıq-նիհար, çörək-հաց և այլն:

Ի հավելումն վերոնշյալ առանձնահատկությունների՝ նշենք, որ ադրբեջաներեն բառերում բոլոր բաղաձայնները կարող են գործածվել բառասկզբում, բացառությամբ «ğ» բաղաձայնի: Ձայնավորներից առանձնացնենք «ı» ձայնավորը, որը ևս չի հանդիպում գրական ադրբեջաներեն բառերի բառասկզբում: Ձևաբանական առանձնահատկությունները համեմատաբար սակավաթիվ են և հիմնականում վերաբերում են բայական համակարգին: Շարահյուսական առանձնահատկություններից շեշտենք միայն ki ստորադասական շաղկապի հաճախ գործածումը, որն այնքան էլ բնորոշ չէ ադրբեջաներենի ցեղակից մյուս լեզուներին:

Ադրբեջաներենը, որպես առանձին թյուրքական լեզու, սկսել է բազմակողմանիորեն ուսումնասիրվել խորհրդային շրջանում, երբ հրատարակվեցին ադրբեջաներենին վերաբերող հետազոտություններ, ինչպես նաև՝ երկլեզու, եռալեզու բառարաններ, դասագրքեր և այլն: Ընդունված է լեզվի ուսումնասիրության պատմությունը բաժանել փուլերի. ա) 20-րդ դարի 30-50-ական թթ. բ) 20-րդ դարի 30-50-ական թթ. գ) 1980-ական թթ.-ից մինչ այժմ: Այս առումով հարկ է առանձնացնել երևելի թյուրքագետներ Ն. Դմիտրիևին և Ե. Սևորտյանին[16] , ովքեր լուրջ ավանդ ունեն ժամանակակից գրական ադրբեջաներենի կայացման գործում:

Ն. Դմիտրիևի անունն անբաժանելիորեն կապված է ադրբեջանական լեզվագիտության հետ, նա «համարվում է գրական ադրբեջաներենի քերականության հիմնադիրներից մեկը»[17]: Ադրբեջանի անկախացումից հետո փոխվեցին և՛ ադրբեջաներենի ուսումնասիրության շարժառիթները, մեթոդները, ուղղությունները, և՛ հետազոտողները, որոնք գերազանցապես ադրբեջանցիներ են:

[16] Севортян Э., Этимологический словарь тюркских языков: Общетюркские и межтюркские основы на гласные, М.:, АН СССР.Ин-т языкознания, Наука, 1974.
[17] “Лингвистическое наследие Н. К. Дмитриева и современная советская тюркалогия”, Структура и история тюркских языков, под ред. Э.В.Севортяна, М. Наука, 1971, с. 19.

Ադրբեջաներենի պատմությանը նվիրված աշխատություններից է Ն. Խուդիևի «Գրական ադրբեջաներենի պատմություն» մենագրությունը, որտեղ առանձին անդրադարձ է կատարվում լեզվի հրապարակախոսական ոճին՝ սկսած առաջին ադրբեջանական պարբերականի լեզվից[18]:

Կեղծարարությամբ և վառ երևակայությամբ աչքի ընկնող ադրբեջանցի լեզվաբան Խ. Բալաևի՝ «Ադրբեջաներենի՝ որպես պետական լեզու կազմավորման պատմությունից» գրքում նշվում է, որ Սեֆյանների ժամանակաշրջանում «ադրբեջաներենը և՛ պալատում, և՛ բանակում գերակա դիրք ուներ»[19]:

Ադրբեջանում լույս տեսած և ԶԼՄ-ների լեզվին, բառապաշարին առնչվող, առկա խնդիրներին ու հեռանկարներին նվիրված գրքերից աչքի է ընկնում Ն. Խուդիևի հեղինակած «Ռադիոյի, հեռուստատեսության լեզու և գրական լեզու» աշխատությունը[20]: Հեղինակը մանրակրկիտ անդրադարձ է կատարում հեռուստատեսության և ռադիոյի լեզվի յուրահատկություններին՝ շեշտելով, որ հեռուստատեսության և ռադիոյի լեզուն փոխազդեցության մեջ է մամուլի լեզվի հետ: Այսպես, թերթերի լեզվի ազդեցությունը զգացվում է եթերի լեզվի բառապաշարի, երբեմն նաև՝ շարահյուսության վրա: Շատ դեպքերում արտալեզվական գործոնները ևս ազդում են ԶԼՄ-ների լեզվական ոճի վրա:

Ադրբեջանցի Թ. Յագուբովայի «Փոխառություններն ադրբեջանական մամուլի լեզվում» մենագրությունը վերաբերում է 1990-2000-ական թթ. ադրբեջանական մամուլի լեզվական խնդիրներին[21], մասնավորապես՝ մամուլում փոխառությունների ուսումնասիրությանը: Նա հիմնականում օգտվել է հետազոտության սոցիոլեզվաբանական մեթոդից: Մեկ այլ հեղինակ՝ Նադիր Մեմմեդլին, իր «Փոխառյալ տերմիններ» գրքում հավաստիացնում է, որ ադրբեջաներենի փոխառյալ տերմինների հարցը, դրանց կառուցվածքը, բառիմաստային առանձնահատկությունները, քերականական կողմերը ամբողջությամբ և բավարարար մակարդակով ուսումնասիրված չեն[22]: Փոխառություններին նվիրված Ա. Գարաևի, Ս. Ջաֆարովի, Ք.

[18] Xudiyev N., Azərbaycan ədəbi dili tarixi, Ankara, 1997, ss. 385-386.
[19] Balayev X., Azərbaycan dilinin dövlət dili kimi təşəkkül tarixindən, (XVI-XX əsrler), Bakı, “Elm ve heyat”. 2002, s.10.
[20] Xudiyev N., "Radio, televiziya və ədəbi dil". Bakı, Azərbaycan Dövlət Nəşriyyatı, 2002.
[21] YAQUBOVA T., AZƏRBAYCAN MƏTBUAT DİLİNDƏ ALINMALAR (1990-2000), Bakı, MBM- 2008, s. 4.
[22] Məmmədli N. Alınma terminlər (1920-1995-ci illər), Bakı, Elm , 1997, s. 47.

Ջաֆարովայի համահեղինակած «Եվրոպական ծագում ունեցող բառերի համառոտ բառարան»[23] աշխատության ներածական մասում հատուկ ուշադրություն է դարձվում փոխառությունների աղբյուրներին:

Մեծածավալ աշխատություններից բացի կան նաև բազմաթիվ հոդվածներ և վերլուծություններ ադրբեջանական մամուլի լեզվի առանձնահատկությունների, հատկապես՝ մամուլի լեզվի բառապաշարի տարբեր խնդիրների վերաբերյալ[24]: Հետազոտողները փաստում են, որ մամուլն ակտիվորեն արդիականացնում է գրական լեզուն՝ և՛ բառապաշարային, և՛ շարահյուսական առումներով: Մերօրյա ադրբեջանական մամուլը ևս անդրադարձ է կատարում մամուլի լեզվի բառապաշարային խնդիրների պատճառներին, լուծման մեթոդներին, բառապաշարի հարստացման ուղիներին և միջոցներին, կազմակերպվում են նաև հանրային և մասնագիտական քննարկումներ, կլոր սեղաններ, անցկացվում են հարցազրույցներ և այլն[25]:

Ադրբեջաներենի արդի խնդիրների, մամուլի լեզվի առանձնահատկությունների, բառապաշարի զարգացման շուրջ հոդվածաշարերով պարբերաբար հանդես է գալիս Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի Նասիմիի անվան լեզվաբանության ինստիտուտը (Azərbaycan Milli Elmlər akademiyası Nsəsimi adına dilçilik institutu)[26]: Այն հրատարակում է «Tədqiqlər» («Ուսումնասիրություններ») անվանումով ժողովածուներ, որտեղ զետեղված գիտական հոդվածներում հաճախ անդրադարձ է կատարվում մամուլում կիրառվող փոխառյալ բառերին, հատկապես տերմիններին և դրանց գործածության առանձնահատկություններին և ինտենսիվությանը[27]:

Ատենախոսության համապատասխան բաժիններում զուգադրություններ ենք անցկացրել համապատասխան ժամանակաշրջանի հայ մամուլի լեզվին նվիրված աշխատությունների հետ: Բոլոր գլուխներում ներկայացված մեջբերումներն

[23] Cəfərov S., Qarayev A., Cəfərova K., Avropa mənşəli sözlərin qısa lüğəti, Bakı - "Maarif", 1981, 236 ss.
[24] Kazımov İ., Müstəqil mətbuatın dilində gedən proseslər, http://ahiska-az.narod.ru/m015.htm
[25] QURBANLI T., KAMALQIZI R., Azərbaycan mətbuatının dünəni və bugünü, http://www.anl.az/down/meqale/ses/2010/iyul/126682.htm
[26] Azərbaycan Milli Elmlər akademiyası Nsəsimi adına dilçilik institutu, http://www.dilcilik.org/
[27] Rzayeva V., Müasir mƏbuatin dinildƏ türkizmlƏr, Tədqiqlər, Bakı, AMEA NƏSİMİ adına DİLÇİLİK institutu, 2008, №1, ss. 177 – 178.

ադրբեջանական մամուլից թարգմանված են հայերեն, որտեղ արտահայտվել է բառերի և համապատասխան քերականական կառույցների հայերեն տարբերակների համեմատությունը: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ հայերենն ու ադրբեջաներենը միմյանցից տարբերվում են լեզվական գրեթե բոլոր կարգերով:

Հայ մամուլի հրապարակախոսության լեզվի խնդրով սկսել են խորությամբ զբաղվել անցյալ դարի 80-ական թթ.-ից: Հայ իրականության մեջ Ռ. Շալունցի՝ մամուլի լեզվին նվիրված առաջին հիմնարար աշխատությունը «Մամուլի և հրապարակախոսության լեզուն» աշխատությունն է[28]: Այնտեղ քննության է ենթարկվել խորհրդային մի քանի պարբերականներում զետեղված նյութերի լեզուն:

Ինչ վերաբերում է անկախ Հայաստանի մամուլի լեզվի ուսումնասիրությանը, ապա նշենք, որ սույն թեմայով լույս են ընծայվել ուսումնասիրություններ, հոդվածներ, ակնարկներ: Առանձնացնենք Յու. Դավթյանի «Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում»[29] դոկտորական ատենախոսությունը և Հ. Բալոյանի «Արդի մամուլի հրապարակախոսության լեզուն» թեկնածուական ատենախոսությունը[30], որոնցում ուսումնասիրվել են 2000-ական թթ. լույս ընծայված հայկական պարբերականների լեզուն, բառապաշարում ընթացող փոփոխությունները, հատուկ ուշադրություն է դարձվել լեզվում ստեղծված նորակազմություններին, դրանց գործածության առանձնահատկություններին, հրապարակախոսության լեզու մուտք գործած օտար բառերին, լեզվական և ոճական որոշ սխալներին և կաղապարներին:

Առհասարակ, մամուլի լեզվի ուսումնասիրության պատմությունը համակարգված բնույթ է ստացել 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ գիտնականների հետաքրքրության առարկա դարձան զանգվածային լրատվամիջոցների լեզվի կիրառման տարբեր կողմերը՝ լեզվաբանական, ոճական, գործառութային և այլն: Երևան են եկել մի շարք ուսումնասիրություններ, որոնցում զանգվածային հաղորդակցության լեզուն դիտարկվել է որպես առանձին լեզվական ենթահամակարգ և դարձել համակողմանի քննության առարկա: Այսպես, մամուլի լեզվի

[28] Շալունց Ռ., «Մամուլի և հրապարակախոսության լեզուն», Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
[29] Դավթյան Յու., «Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում», Եր., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստ., 2006:
[30] Բալոյան Հ., «Արդի մամուլի հրապարակախոսության լեզուն», Եր., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստ., 2009:

բովանդակությունը և կառուցվածքը ուսումնասիրվել է Վ. Վոլոդինայի «ԶԼՄ լեզուն որպես միջակայքային ուսումնասիրության առարկա» գրքում[31], իսկ Տ.Դոբրոսկլոնսկայայի մենագրության մեջ մանրամասն ուսումնասիրվել է մեդիա-տեքստերի լեզուն իր բոլոր կողմերով[32]: Անգլալեզու աշխատություններից առանձնացնենք Ա. Բելլի «Մամուլի նորությունների լեզուն» գիրքը, որտեղ հիմնականում վերլուծության են ենթարկվել անգլերեն տեքստերը, ինչպես նաև հեղինակը վեր է հանել դրանց լեզվաոճական յուրահատկությունները[33]:

[31] Язык СМИ как объект междисциплинарного исследования. Учебное пособие. Часть 2. Отв. ред. М.Н. Володина, 2004, Издательство Московского университета Москва, с. 38.
[32] Добросклонская Т., Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, М., Макс- Пресс, 2008, с. 3 .
[33] Bell A.,The Language of News Media, Oxford, 1991, p. 2.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ՋԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1.1. Ադրբեջաներենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը

Լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենազգայունը, որն «ամենից հաճախ է ենթարկվում արտալեզվական գործոնների ազդեցությանը, բառապաշարն է»[34]: Հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն իրենց արտացոլումը գտնում են առաջին հերթին բառապաշարում: Բառապաշարը՝ հատկապես հիմնական բառաֆոնդից դուրս գտնվող բառերը, փոփոխվում են հաճախ և արագ, և այդ փոփոխությունները գլխավորապես պայմանավորված են արտաքին գործոններով[35]: Գոյություն ունի գիտական այն կարծիքը, որ «հազար տարվա ընթացքում դուրս է ընկնում հիմնական բառաֆոնդի բառերի միջին հաշվով 15%-ը»[36]:

Ադրբեջաներենի հիմնական բառաֆոնդի բառերն ըստ իրենց իմաստի պատկանում են հետևյալ ոլորտներին. *մարմնի մասերի անվանումներ*՝ baş-գլուխ, göz-աչք, burun-քիթ, əl-ձեռք, ağız-բերան, qan-արյուն և այլն, *ազգակցական հարաբերություններ մատնանշող բառեր*՝ ata-հայր, ana-մայր, qardaş-եղբայր, oğul-որդի, uşaq-երեխա, yeznə-փեսա, dayı-քեռի, əmi-հորեղբայր և այլն, *բնության երևույթների և առարկաների անվանումներ*՝ günəş-արև, ay-լուսին, torpaq-հող, yağış-անձրև, qar-ձյուն, dağ-սար, çay-գետ և այլն, *կենդանական աշխարհի ներկայացուցիչների անվանումներ*՝ at-ձի, inək-կով, qoyun-ոչխար, xoruz-աքաղաղ, it-շուն, pişik-կատու, canavar-գայլ, *բույսերի անվանումներ*՝ buğda-ցորեն, ağac-

[34] Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատարակչություն, Եր.- 1999, էջ 137:
[35] Исенгалиева В., “Интернациональные основы в тюркских языках”, Советская тюркология, No 5, Баку, Академия наук Азербайджанской ССР, 1970, с. 36.
[36] Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972, էջ 219:

ծառ, yarpaq–տերև, gül-ծաղիկ և այլն, *սննդատեսակներ՝* çörək-հաց, su-ջուր, duz-աղ, yağ-կարագ, bal-մեղր, üzüm-խաղող, alma-խնձոր, meyvə-միրգ և այլն, *աշխատանքային գործունեությանն առնչվող բառեր՝* çəkic–մուրճ, bıçaq-դանակ, əkmək-ցանել, tikmək-կառուցել, yazmaq-գրել, սովորել, danışmaq–խոսել և այլն, *հատկանիշ, որակ ցույց տվող բառեր՝* ağ-սպիտակ, qara-սև, çirkin-տգեղ, gözəl-գեղեցիկ, böyük-մեծ, kiçik-փոքր, xoş-հաճելի և այլն, *տարածություն և ժամանակ ցույց տվող բառեր՝* səhər-առավոտ, axşam-երեկո, dünən-երեկ, ölkə-երկիր, şəhər-քաղաք և այլն:

Եթե որևէ առարկայի, երևույթի, գործողության, որակի և այլնի անվանումները պահպանվում են լեզվում, իսկ հետագայում փոխարինվում են նոր, տվյալ ժամանակաշրջանի համար ավելի ընդունելի տարբերակներով, ապա հին անվանումներն աստիճանաբար անցնում են ոչ գործուն բառապաշար, իսկ հետագայում արդեն՝ հնաբանությունների շարք: Սույն գործընթացը բավականին տևական է[37]: Այս երևույթը բնորոշ է նաև ադրբեջաներենի բառապաշարին:

Ըստ ծագման աղբյուրի՝ ադրբեջաներենի բառապաշարում, ինչպես այլ լեզուներում, տարբերակվում է երկու հիմնական շերտ՝ բնիկ և փոխառյալ: Ադրբեջաներենի փոխառյալ բառերը խմբավորվում են հիմնականում հետևյալ կերպ՝ *արաբապարսկական ծագման բառեր* (օրինակ՝ kitab-գիրք, alim-գիտնական, dünya-աշխարհ, məktəb-դպրոց, tələbə-ուսանող, şagird-աշակերտ և այլն), *եվրոպական լեզուներից և ռուսերենից կամ ռուսերենի միջոցով փոխառված բառեր* (օրինակ՝ respublika–հանրապետություն, prezident–նախագահ, demokratiya–ժողովրդավարություն, futbol–ֆուտբոլ և այլն:

1.2. Ադրբեջաներենի բառապաշարի զարգացման և հարստացման հիմնական փուլերը

Պատմել մի որևէ լեզվի պատմություն՝ նշանակում է նկարագրել այն բոլոր ձևափոխությունները, որոնց ենթարկվել է այդ լեզուն իր գոյության ընթացքում՝ սկսած իր նախնական շրջանից ցայսօր: «Լեզվի պատմությունը կապվում է նույն ազգի

[37] А.А.Поликарпов Теоретические основания и эксперименты для анализа соотношения индивидуальных словарей с лексической системой языка, http://www.philol.msu.ru/~lex/pdfs/polikarpov_2012_2.pdf

քաղաքակրթության պատմության, քաղաքական պատմության և գրականության պատմության հետ»[38]: Ակնհայտ է, որ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցող տեղաշարժերը չեն կարող չազդել լեզվի վրա՝ իրենց հետ բերելով նշանակալի փոփոխություններ: [39]

Գրեթե բոլոր լեզուները, ըստ էության, ունեն նախագրային շրջան, նախապատմություն: Լեզվական և պատմական փաստերը վկայում են, որ ադրբեջաներենը մինչ գրավոր լեզու դառնալը եղել է խոսակցական լեզու: Ադրբեջանական և ադրբեջանամետ հեղինակներից շատերը պնդում են, որ արդեն 10-րդ դարում ադրբեջանական ժողովրդի կազմավորման գործընթացն իր ընդհանուր խոսակցական ադրբեջաներենով ավարտված էր[40]: Թյուրքագիտության մեջ գերազանցապես տարածված է այն կարծիքը, որ համաժողովրդական ադրբեջաներենը ձևավորվել է 12-13-րդ դդ. սելջուկների՝ Անատոլիա ներթափանցելուց հետո: Ըստ նրանց՝ 15-16-րդ դարերի ադրբեջաներենի բառապաշարն աչքի է ընկնում համաժողովրդական կիրառություն ունեցող բառերի գերակշիռ առկայությամբ[41]: Իրականում, սակայն, վերը նշված դարաշրջանում արդեն զգացվում էին թյուրքական լեզուների տարանջատման, միմյանցից առանձնացման միտումներ: Թյուրքական լեզուները, իրենց բառապաշարով հանդերձ, աստիճանաբար առանձնանալով իրենց հիմք լեզվից, սկսում են անցնել զարգացման համեմատաբար ինքնուրույն ճանապարհ[42]:

---

[38] Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 7, 22:

[39] Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 21

[40] Гукасян В., В. Асланов, Исследования по истории азербайджан.ского языка дописьменного периода, Баку, Элм, 1986, с. 5

[41] Abdullayev E., Türk dillerinin tarihsel gelişme sorunları, Ankara, Türk Dil Kurumu Yayınları,1996, s. 45.

[42] ծնթ. Փաստենք որ, հնագույն ժամանակներից մինչև 1918թ. Արևելյան Անդրկովկասում «Ադրբեջան» անունը կրող աշխարհագրական միավոր կամ քաղաքական-էթնիկական կազմավորում չի եղել: Ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքը 1պատմությանը հայտնի է «Բուն Աղվանք» (Կուր գետից հյուսիս) և «Առան» (Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքը) անուններով: «Ադրբեջան» երկրանունը իրանական հնագույն աղբյուրներում հիշատակվում է Ատրպատական նախնական ձևով, որը բառացի նշանակում է «կրակի տաճար» կամ «իշխողի տիրույթ»: 7-րդ դարից արաբ հեղինակները գործածում են անվան տեղայնացված տարբերակը՝ «Ազարբայջան», որը հետագայում ընդհանուր գործածություն է ձեռք բերում: Հետևաբար, «Ադրբեջան» երկրանունը ավանդված է վաղուց, սակայն մինչև 20-րդ դարի 2-րդ տասնամյակը այն վերաբերել է բացառապես Արաքսից հարավ ընկած տարածքին, որը համապատասխանում է նախ Մաննա, ապա Մարաստան, Իրան երկրների մի հատվածին:

Թյուրքական լեզուների դասակարգման տարբերակներից ամենաընդունելի և գիտականորեն հիմնավորվածներից է Ն. Բասկակովի դասակարգումը, ըստ որի՝ ադրբեջաներենը թուրքերեն և թուրքմեներենի հետ միասին մտնում է թյուրքական լեզուների արևմտահոնական ճյուղի հարավ-արևմտյան կամ օղուզական խմբի մեջ՝ ընդհանուր ձևաբանական, հնչյունական և բառապաշարային գծերով[43]: Առ այսօր ադրբեջաներենի, մասնավորապես նրա բառապաշարի ծագման, կազմավորման հարցը բազմաթիվ քննարկումների, բանավեճերի առարկա է և համակողմանիորեն ուսումնասիրված չէ[44]:

Ադրբեջաներենի, նրա բառապաշարի պատմության վերաբերյալ կան միմյանցից տրամագծորեն տարբերվող կարծիքներ և ենթադրություններ: Հարցի հանդեպ հետաքրքրությունը ծագել է դեռևս 19-րդ դարի կեսերին: Գրական ադրբեջաներենը սկսել է ուսումնասիրվել 20-րդ դարի 30-ական թթ.-ից, եթե հաշվի չառնենք մինչ այդ գոյություն ունեցած ոչ այնքան համակարգված և հիմնավորված մի շարք նախաձեռնությունները:

Ադրբեջաներենն ըստ պատմական փուլերի բաժանելու փորձերից համեմատաբար հիմնավորված թվացող Ա.Դեմիրչիզադեի դիտարկումներում գրական ադրբեջաներենի ծագումը և զարգացման պատմությունը բաժանված է երեք շրջանի. 1)համաժողովրդական լեզվի հիման վրա ադրբեջաներենի ձևավորում 2)ազգային լեզվի հիման վրա միասնական գրական լեզվի ստեղծում և կայունացում 3) ադրբեջաներենի վերաձևավորում պետական լեզվի (խորհրդային շրջան):

1)Առաջին շրջանն ընդգրկում է մոտ 11-19-րդ դդ. սկիզբը[45]: Լեզվում մինչև 19-րդ դարի վերջը պահպանվել են և զուգահեռ գործածվել են նախկին և առկա ցեղախմբերի լեզուների բազմաթիվ բառեր: Փուլի ավարտին հասարակական-քաղաքական նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ադրբեջաներենի վերջնական ձևավորման համար: Բառապաշարում՝ մասամբ նաև քերականական կառուցվածքներում, հիմնականում պահպանվել էին «հիմք-լեզվի»՝ թյուրքական լեզուների արևմտյան խմբի տարրեր:

[43] Баскаков Н.А., Введение в изучение тюркских языков, М., Высшая школа- 1969, с. 84.
[44] Гейбуллаев Г.А.К этногенезу азербайджанцев, т.1 ,Баку: Элм, 1991, с.14 .
[45] Демирчизаде А., “О периодизации истории азербайджанского литературного языка”, Структура и история тюркских языков, Сборник статей. М., Наука,1971, сс. 251-260.

2)Երկրորդ փուլն ընդգրկում է 1820-1920թթ., երբ դեռ գերակայում էին նախկինում լեզվում գործածված արաբական և պարսկական բառերը: 19-րդ դարի կեսերից Թիֆլիսում, ինչպես նաև ռուսական կայսրության այլ քաղաքներում ապրող և գործունեություն ծավալող ադրբեջանցի մտավորականները (Ա. Բաքիխանով, Մ.Քազըմբեկ, Մ. Ախունդով, Հ. Զարդաբի և այլք) մեծ ջանքեր էին գործադրում ռուսական կայսրությունում ադրբեջաներենի՝ որպես առանձին լեզվի ընկալման և զարգացման համար: Ադրբեջաներենի բառապաշարում կատարվում են մի շարք փոփոխություններ[46]. գնալով ավելանում է բուն թյուրքական ծագում ունեցող բառերի քանակը, համեմատաբար մեծանում է արևմտաեվրոպական, սլավոնական բառերի տեսակարար կշիռը, զուգահեռաբար մի շարք հնաբանություններ դուրս են մղվում ակտիվ գործածությունից:

3) Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ադրբեջաներենի համար սկսվում է նոր փուլ, որի գլխավոր առանձնահատկությունները և ձեռքբերումներն են լեզվի ձևավորման ավարտն ու պետական լեզվի կարգավիճակ ստանալը: Գրական ադրբեջաներենն ունեցավ բազմակողմանի զարգացում և դարձավ համակարգված գրական լեզու:

Խորհրդային շրջանում ի հայտ են եկել մեծ թվով նոր բառեր և արտահայտություններ: Մի շարք բառերի իմաստային ընդլայնումը և նեղացումը, նոր իմաստների ձեռքբերումը, քերականական, բառային նոր միավորների ստեղծումը կարևոր դեր են խաղացել լեզվի բառային կազմի զարգացման գործում[47]: Լեզվի բառապաշարի զարգացման վրա ներգործող կարևոր ազդակներից առանձնացնենք սույն փուլում զանգվածային լրատվության միջոցների և մշակույթի դերը: Մասնավորապես, մամուլն ուներ նշանակալից կշիռ ու դեր ադրբեջաներենի զարգացման, հատկապես՝ նրա բառապաշարի հարստացման գործում:

Խորհրդային շրջանի գրական ադրբեջաներենը հետազոտողները բաժանում են զարգացման ենթափուլերի, և այդ հարցում ևս լեզվաբանները միակարծիք չեն: Բառապաշարի զարգացման գործընթացը կարող ենք պայմանականորեն բաժանել

[46] N.Xudiyev, Azərbaycan ədəbi dil tarixi, Ankara- 1997, s. 389.
[47] Ширалиев М., Процессы развития азербайджанского литературного языка на современном этапе , Вопросы языкознания,Май-Июнь, Москва, «Наука» -1978, с.10.

երկու ենթափուլի: Առաջինը՝ 1920-40-ական թթ., համարվում է գրական ադրբեջաներենի կանոնակարգման փուլ[48]: 1920-ական թթ. ադրբեջաներենի բառապաշարում տիրապետող էին արաբական և պարսկական ծագման բառերը[49]՝ məmnuniyyət-գոհունակություն, xalq–ժողովուրդ, əlifba-այբուբեն, qəbul-ընդունելություն, mədəni–մշակութային, inkişaf-զարգացում, dövr–ժամանակաշրջան, təsərrüfat–տնտեսություն, qərar-որոշում, əlaqə-հարաբերություն, ziyalı–մտավորական, azad-ազատ, sərf–ծախս և այլն, իսկ ռուսերեն փոխառությունների մեծ ներհոսք դեռ չէր նկատվում: Ադրբեջաներենի բառապաշարի պատմության խորհրդային շրջանի առաջին ենթափուլում մեծ հնարավորություններ են ստեղծվում բառապաշարի կայունացման, լեզվի ներքին հնարավորությունների մեծացման համար:

Խորհրդային շրջանի ադրբեջաներենի զարգացման երկրորդ ենթափուլը՝ 1940-80-ական թթ., համարվում է գրական ադրբեջաներենի զարգացման շրջան, որի ամենաբնորոշ գծերն են բառակազմական հնարավորությունների մեծացումը և ռուսերեն փոխառությունների հաշվին գրական լեզվում տերմինների քանակի ավելացումը: 1960-80-ական թթ., բնականաբար, գրական լեզվի բառային կազմում բառաշերտերի արագընթաց փոփոխությունը չէր կարող միայն դրական ազդեցություն ունենալ լեզվի վրա: Լեզվական միավորները կարճ ժամանակամիջոցում հասարակության լայն շերտերի կողմից չէին կարող լիարժեք կերպով ընկալվել, առավել ևս՝ գիտատեխնիկական բնույթի բառերն ու արտահայտությունները. օրինակ՝ teleqraf siqnalları–հեռագրային ազդանշաններ, telemetrik aparat–հեռաչափիչ սարք, uçuş aparatları–թռչող սարքեր, manevrli kosmik gəmi–մանևրող տիեզերանավ, planetlərarası stansiya–միջմոլորակային կայան, global raket–միջմայրցամաքային հրթիռ և այլն:

Խորհրդային շրջանում ադրբեջաներենի կառուցվածքային և բառապաշարային փոփոխությունները տեղի են ունեցել բավականին արագ և, որպես կանոն, արտահայտել են երկրի հասարակական, սոցիալական, տնտեսական, մշակութային կյանքի փոփոխությունները:

Գրական ադրբեջաներենը հետխորհրդային շրջանում ոտք է դնում զարգացման նոր փուլ: 1991թ. Ադրբեջանի Հանրապետության անկախության

[48] Xudiyev N., Azərbaycan ədəbi dili tarixi. Ali məktəblər üçün dərslik. Bakı, "Elm və təhsil", 2012, s. 638.
[49] Xudiyev N., Azərbaycan ədəbi dili lüğət tərkibinin inkişafı (sovet dövrü), Bakı, Elm- 1986, s. 14.

հռչակումից հետո պայմաններ են ստեղծվում ադրբեջաներենի՝ որպես անկախ պետական լեզու զարգացման համար: Փոփոխություններ են տեղի ունենում լեզվի գրեթե բոլոր մակարդակներում, առաջին հերթին՝ բառապաշարում:

Բառապաշարի զարգացման վրա իր որոշակի ազդեցությունն է թողել ադրբեջաներենի այբուբենը[50]: Ակնհայտ է, որ այբուբենի տառագրության տեսակը (արաբատառ, լատինատառ և կիրիլյան, (կիրիլիցա) փոխադարձ պատճառահետևանքային կապի մեջ է բառապաշարի արաբապարսկական, թյուրքական և սլավոնական շերտերի հետ: Այս կայուն կապն իր հերթին մեծապես նպաստել է բառապաշարի բնիկ և փոխառյալ շերտերի պատմական փոխազդեցության բացահայտմանը: Սույն գործընթացներն անմիջական ազդեցություն են ունեցել բառապաշարի զարգացման ու հարստացման տվյալ փուլի վրա: Լատինական տառագրությանն անցնելուց հետո ադբեջաներեն ներթափանցող փոխառությունների հիմնական աղբյուր են դարձել լատինական տառագրություն ունեցող լեզուները՝ օրինակ՝ sponsor-հովանավոր, sayt–կայք, menecer–կառավարիչ, մենեջեր, holding-ունեցվածք, հողամաս, բաժնեմաս, spiker–խոսնակ, biznes-բիզնես, ձեռներեցություն, şou–ցուցադրություն, ներկայացում, başkan–ղեկավար, նախագահ, և այլն:

Լեզվաքաղաքականության ուղղություններն ու բովանդակությունը ևս որպես լուրջ քաղաքական գործիք են ծառայել և ծառայում անկախ Ադրբեջանում դեռևս

[50] ծնթ.՝ արաբական գրից հրաժարվելու առաջին փորձերը 1860-70-ական թթ. Արևելյան Անդրկովկասում եղել են երեք գործիչների՝ Մանիֆ փաշայի, Մալքոմ խանի և, իհարկե, ադրբեջանցի լուսավորիչ Ախունդովի կողմից: 1918-1920թթ. մուսավաթական կառավարությունն իր պաշտոնական թղթակցությունը վարում էր արաբական այբուբենով: 1921թ. խորհրդային իշխանությունները ստեղծեցին «Նոր այբբենական կոմիտեն»: Հաջորդ տարվա հուլիսի 22-ին Ադրբեջանական ԽՍՀ ժողկոմը որոշում ընդունեց արաբական այբուբենի փոխարեն կիրառել լատինականը: 1928թ. նոյեմբերի 1-ին Կոմիտեի կողմից ստեղծվեց թուրքերենին համապատասխան նոր այբուբեն: Նոր այբուբենն ուներ 33 տառ: Մինչև ռուսատառ այբուբենի ընդունումը այս այբուբենը շարունակեց կիրառվել 11 տարի: Ադրբեջանի խորհրդային ղեկավարության և Մինիստրների խորհրդի 1939թ. հուլիսի 11-ի որոշմամբ 1940թ. հուլիսի 1-ից այբուբենը լատինականից անցավ կիրիլականի: Իսկ 1991թ. դեկտեմբերի 25-ին Ադրբեջանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը որոշում ընդունեց Ադրբեջանի Հանրապետության «Ադրբեջանական այբուբենի լատինական գրի վերականգնման մասին» օրենքի կիրառման կարգի մասին: Որոշման առաջին կետի համաձայն լատինական գրի վրա հիմնված ադրբեջանական այբուբենը բաղկացած է 32 տառից և ունի հետևյալ տեսքը. `Aa, Bb, Cc, Çç, Dd, Ee, Əə, Ff, Gg, Ğğ, Hh, Xx, İi, Iı, Jj, Kk, Qq, Ll, Mm, Nn, Oo, Öö, Pr, Rr, Ss, Şş, Tt, Uu, Üü, Vv, Yy, Zz: Ադրբեջաներենին պետական լեզվի կարգավիճակ է շնորհվում 1995թ. Սահմանադրությամբ:(տե՛ս,gՄովսիսյան Լ., Ադրբեջաներենի այբուբենի պատմության ուրվագծեր, 21-րդ դար «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2008, թիվ 4, էջ 157-166)

վերջնականապես չձևավորված ադրբեջանական ինքնությունն ընդգծելու, ինչպես նաև՝ բառապաշարի դերը, նշանակությունը և գործառութային հնարավորությունները մեծացնելու գործում[51]:

1.3. Ադրբեջանական մամուլի լեզվի զարգացման փուլերը

19-րդ դարից ընդլայնվում են ադրբեջաներենի կիրառման գործառույթները: Մասնավորապես, գիտական և գեղարվեստական լեզվին զուգահեռ ի հայտ է գալիս լեզվի հրապարակախոսական ոճը: «Əkinçi» թերթի լույս ընծայմամբ սկսվում է ադրբեջանական մամուլի և, հետևաբար, մամուլի լեզվի պատմությունը: Արդեն 19-րդ դարի վերջից գրական լեզվի կարևորագույն գործընթացներն արտացոլվում էին մամուլի լեզվում: Ներկայացնելով թերթի դերն ադրբեջանական հասարակության կյանքում՝ բավական է նշել, որ վերոնշյալ ժամանակահատվածում կիրառվել է «Əkinçi»-ի լեզու» արտահայտությունը: Պարբերականի խմբագրության գործունեության արգասիքներից է ադրբեջաներենի տերմինաբանության սաղմնավորումը: Թերթի էջերում կարելի էր հանդիպել բազմաթիվ նոր տերմինների, որոնք վերաբերում էին հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներին՝ birjə-բորսա, tamojni–մաքսային ծառայություն, nataryus–նոտար, pensiya–կենսաթոշակ, konfrans–համաժողով, bank-բանկ, bankrot–սնանկացում, stansiya–կայարան, professor–պրոֆեսոր, termometr–ջերմաչափ, kofein–կոֆեին, telefon–հեռախոս, spirt-սպիրտ, etnograf-ազգագրագետ, akademiya-ակադեմիա, universitet–համալսարան, muzey–թանգարան, klub-ակումբ և այլն: Այս բառերից շատերը գործուն կիրառություն ունեն ժամանակակից մամուլում ևս (օրինակ՝ *«Konfransın rəsmi açılış mərasimində Estoniyanın prezidenti tədbiri parlaq ideyaların müzakirəsi üçün əlverişli məkan kimi qiymətləndirib.»*[52]*/ «Համաժողովի բացման արարողության ժամանակ Էստոնիայի նախագահը միջոցառումը գնահատել է որպես նպաստավոր հարթակ փայլուն գաղափարներ քննարկելու համար»):*

[51] Մովսիսյան Լ., «Լեզվաքաղաքականությունը ժամանակակից Ադրբեջանում» N3, 2009թ. «21-րդ դար Նորավանք գիտակրթական հիմնադրամի» հանդես, էջ 86:
[52] Azərbaycan İKT təcrübəsi Tallində yüksək qiymətləndirilib, 14.05.2015, http://sia.az/ru/news/economy/477239-azerbaycan-ikt-tecrubesi-tallinde-yuksek-qiymetlendirilib

20-րդ դարի սկզբին մամուլի զարգացումը նոր զարկ է տալիս նաև լեզվի հրապարակախոսական ոճի զարգացմանն ու կատարելագործմանը: Մամուլի լեզուն առանցքային դեր էր կատարում մշակութային նոր արժեքների տարածման գործում: 20-ական թթ. հրապարակախոսության լեզվում հատկապես գործուն էր հասարակական-քաղաքական բառապաշարը, որը շարունակում է հարստանալ 30-ական թթ.:

40-50-ական թթ. մամուլի լեզուն ձեռք է բերում որոշակի կայունություն: 60-ական թթ. վերադարձը դեպի, այսպես կոչված, «ժողովրդական լեզու» իր ազդեցությունն է թողնում լեզվի հրապարակախոսական ոճի վրա: Հրապարակախոսության լեզուն, ի տարբերություն լեզվական մյուս ոճերի, ադրբեջանական հասարակական կյանքում կատարվող երևույթներին համընթաց ենթարկվում էր փոփոխությունների:

Ստորև ամփոփ ներկայացնենք արդեն 1990-ական թթ.-ից հետո ադրբեջանական մամուլի բառապաշարում կատարվող փոփոխությունները և զարգացման ընդհանուր միտումները.

ա) հայտնի է, որ տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների միջև հարաբերությունները, շփումները լինում են ուղղակի, սերտ ու երբեմն էլ՝ ոչ ակտիվ և անուղղակի: Ժամանակակակից ադրբեջաներենի հետ շփման մեջ գտնվող օտար լեզուներից առանձնացնենք անգլերենը: Ադրբեջանական մամուլի լեզու են ներթափանցել ու ներթափանցում անգլերեն բազմաթիվ բառեր ու տերմիններ՝ գիտատեխնիկական, տնտեսագիտական, քաղաքական, սպորտային, մշակութային, կենցաղային և այլն. օրինակ՝ start-սկիզբ, մեկնարկ, trening–մարզում, luk–տեսք, sponsor–հովանավոր, media–մամուլ, biznes–ձեռնարկատիրություն, բիզնես, trend-միտում, market–խանութ, diler–վաճառող, դիլեր, transfer-փոխանցում, bodibilding–մարմնակերտում, բոդիբիլդինգ, klip–հոլովակ և այլն: Օրինակ մամուլից՝ *«Sabah Bakıda Azərbaycan-Kamboca biznes forumu keçiriləcək.»*[53] / *«Վաղը Բաքվում կանցկացվի*

[53] Bakıda Azərbaycan-Kamboca biznes forumu keçiriləcək, 21.04.2014, http://sia.az/ru/news/economy/405090-bakida-azerbaycan-kamboca-biznes-forumu-kecirilecek

Ադրբեջան-Կամբոջա բիզնես-համաժողովը»: «Qara qartallar» bu transferə heç bir məbləğ ödəməyəcəklər.»[54]/ «Սև արծիվները» այս փոխանցմանը ոչ մի գումար չեն վճարելու»:

բ) Անդրադառնանք ադրբեջանական մամուլում բազմաթիվ թուրքերեն բառերի հաճախակի գործածման երևույթին. օրինակ՝ canlı yayım-ուղիղ եթեր, özəlləşdirmə-մասնավորեցում, iş adamı-գործարար, durum-իրավիճակ, anayasa-սահմանադրություն, düzən–հարթ, պարզ, gərçəkləşdirmək-իրականացնել, bilgisayar-համակարգիչ և այլն: Թուրքերեն բառերով հատկապես հագեցած են «Zaman» և «Azadlıq» պարբերականների հոդվածները. օրինակ՝ *«Arzular gərçəkləşməsi üçün əlimizdən gələni edirik.»*[55] / «*Ցանկությունների իրականացման համար անում ենք ամեն հնարավորը»:*

գ) Մամուլի էջերում հայտնվում են նորակազմ բառեր, որոնք ստեղծվում են ադրբեջաներենում արդեն գոյություն ունեցող բառակազմական միջոցներով. առանձնացնենք իրանական ծագում ունեցող և ադրբեջաներենում որպես վերջածանց կիրառվող «pərəst» ձևույթով, թյուրքական daş վերջածանցով կազմված բառերը. օրինակ՝ Moskvapərəst-մոսկվայամետ, Türkiyəpərəst-թուրքամետ, qərbpərəst-արևմտամետ, tərəfdaş-կողմնակից (tərəf–կողմ, ուղղություն), məsləkdaş-գործընկեր (məslək-մասնագիտություն) և այլն: Օրինակ՝ «*Hasan Cemal ermənipərəstliyi ilə tanınır.»*[56] /«Հասան Ջեմալը հայտնի է հայամետությամբ»: «*Çünki onlar bu məqsədlə qonşu ölkədə etibarlı tərəfdaş tapmaqda çətinlik çəkir.*»[57] / «Քանի որ այս նպատակով հարևան երկրում դժվարանում է գտնել վստահելի գործընկեր»:

դ) Ժամանակակակից ադրբեջանական մամուլի լեզվում ժամանակ առ ժամանակ նույն իմաստն ունեցող տարբեր ծագում ունեցող բառեր զուգահեռաբար են կիրառվում երբեմն նույնիսկ նույն հեղինակի կողմից: Խոսքը հիմնականում արաբապարսկական ծագում ունեցող և նոր՝ փոխառյալ, եվրոպական լեզուներից

[54] "Beşiktaş" daha bir ulduz futbolçunu alır, 8 Yanvar 2014, http://news.milli.az/sport/237799.html
[55] Legend.az userlərinin arzuları, 23.02.2013,http://legend.az/110109-legend-az-userlerinin-arzulari.html
[56] Ermənipərəst türk yazar işdən çıxarıldı, 1603.2013, http://big.az/117937-Ermeniperest_turk_yazar_isden_cixarildi.html
[57] Şərab üçün Türkiyədə etibarlı tərəfdaş tapılmır, 14.08.2012, http://www.anspress.com/siyaset/14-08-2012/serab-ucun-turkiyede-etibarli-terefdas-tapilmir

փոխառված բառերի մասին է. օրինակ՝ region-bölgə-տարածաշրջան, շրջան, kredo-əqidə-համոզմունք, կարծիք և այլն:

ե) Ադրբեջաներենի շարահյուսությանը բնորոշ ki մասնիկը, որպես ստորադասական շաղկապ, վերջին տասնամյակում սկսել է կորցնել իր գերակա դիրքը, և փոխարենը նախադասությունները կառուցում են բայանունների, մակբայական դերբայների միջոցով: Այստեղ ևս հստակ զգացվում է թուրքերենի շարահյուսական կառույցների ազդեցությունը: Օրինակ՝ «*Söhbət zamanı Azərbaycanda yeni islahatlar proqramının həyata keçirildiyi, bunun biznes sahəsində fəaliyyət üçün yaxşı imkan yaratdığı bildirilib.*»[58] / «*Զրույցի ժամանակ նշվել է, որ Ադրբեջանում իրականացվում է բարեփոխումների նոր ծրագիր, լավ հնարավորություն է ստեղծվել գործարարության ոլորտում գործունեություն ծավալելու համար*»: «*O, bildirib ki, Azərbaycanın bölgələrində müəllim çatışmazliqının aradan qaldırılması ilə bağlı hökumətin proqramı var.*»[59] / «*Նա հայտնել է, որ առկա է կառավարության ծրագիր Ադրբեջանի շրջաններում ուսուցիչների պակասը լրացնելու առնչությամբ*»:

Կարելի է փաստել, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարում արտացոլված են արժեքավոր տեղեկություններ ժողովրդի ծագման ու կազմավորման ընթացքի, նրա կենցաղի ու մշակույթի մասին: Լեզուների բառապաշարներն ուսումնասիրողների աշխատություններում բազմիցս ընդգծվել է լեզվի զարգացման և կատարելագործման անմիջական կախվածությունը ժողովրդի հասարակական կյանքի զարգացումից:

Ադրբեջանական տպագիր մամուլը, չունենալով մեծ ավանդույթներ, այնուամենայնիվ, իր նկատելի ազդեցությունն է թողել ադրբեջաներենի կազմավորման, իսկ հետագայում արդեն՝ զարգացման վրա: Անմասն չմնալով աշխարհի մեդիա ոլորտում տեղի ունեցող զարգացումներից՝ ադրբեջանական մամուլում ևս կատարվում են փոփոխություններ. հարստանում է առաջին հերթին ադրբեջաներենի բառապաշարը, ի հայտ են գալիս նոր ձևաբանական ու շարահյուսական կառույցներ, ընդլայնվում է մամուլի բովանդակային կողմը՝ ներառելով նորանոր թեմաներ, զարգանում է «բլոգների, ֆորումների» ոլորտը և այլն:

[58] Azərbaycan prezidenti ABŞ-ın "Export-Import" bankının sədri ilə görüşüb, 31 Mart 2016,http://az.apa.az/news/421399

[59] «Bölgədə müəllim çatışmazlığı problemi öz həllini tapıb», 27.11.2012, http://news.lent.az/news/109369

1.4. Նորաբանություններն ադրբեջաներենում և դրանց կիրառությունը մամուլում

Նորաբանությունները (հուն. բոց.՝ neos-նոր, logos-հասկացություն, գիտելիք) լեզու ներթափանցած և դեռևս համընդհանուր գործածություն ձեռք չբերած բառերն են: Բառը համարվում է նորաբանություն, քանի դեռ տվյալ լեզուն կրողների լայն շերտերը զգում են այդ բառի նոր լինելը: Երբ բառը դառնում է մատչելի և կիրառելի, դադարում է նորաբանություն լինելուց: Նման բառերը կարող են անցնել բառապաշարի գործուն շերտ կամ մոռացության մատնվել[60]: Նորաբանությունները պատմական հասկացություն են: Այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում համարվում է նորաբանություն, պատմական այլ շրջանում այլևս չի ընկալվում որպես այդպիսին[61]: Նորաբանությունների բնորոշ գծերից է դրանց անմիջական կապը նոր հասկացությունների հետ: Նորաբանությունները վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին, մեծ է դրանց դերը և արժեքը բառապաշարի թարմացման և հարստացման գործում[62]: Զարգացած լեզուների պարագայում ԶԼՄ-ներում մեկ տարվա ընթացքում արտացոլված նորաբանությունների քանակը հասնում է հազարների: Այս երևույթը պայմանավորված է ինչպես յուրաքանչյուր նոր հասկացություն անվանելու անհրաժեշտությամբ, այնպես էլ՝ լեզվի ներքին գործոններով[63]:

Լեզվի բառային կազմում ի հայտ եկած նոր բառերը հաճախ իրենց քանակով գերազանցում են արդեն հնացած, իրենց կիրառելիությունը մասամբ կամ ամբողջովին կորցրած բառերին[64]: Լեզվի բառապաշարի թարմացումն ընթանում է ավելի մեծ արագությամբ, քան բառերի «հնացման» գործընթացը:

Նորաբանություններն ունեն երկու հիմնական աղբյուր. դրանք կամ կազմվում են լեզվի սեփական միջոցներով՝ արդեն եղած բառերի օրինակով, կամ փոխ են

---

[60] Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., Երևանի համալսարանի հրատարակություն, 1984, էջ 138:

[61] ծնթ. Խորհրդային շրջանում ադրբեջաներեն ներթափանցած traktor– տրակտոր, kombayn- կոմբայն, kolxoz – կոլխոզ, sovxoz–սովխոզ, komsomol- կոմսոմոլ, ferma – ֆերմա, pioner- կոմսոմոլ, komuna – կոմունա, raykom - շրջկոմ, komunist –կոմունիստական, teleqram–հեռագիր, sovet–խորհուրդ և այլ բառերը եղել են նորաբանություններ, եղել են խորհրդային իրականության անբաժանելի բնութագիրներից մեկը, ժամանակի ընթացքում դարձել են համագործածական բառեր, իսկ ավելի ուշ աստիճանաբար դուրս են եկել գործածությունից՝ վերածվելով հնաբանությունների:

[62] Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 1999, էջ 159:

[63] Лингвитический энциклопедический словарь, Неологи́змы. http://tapemark.narod.ru/les/331b.html

[64] Лопатин, В. В. Рождение слова *:* Неологизмы иокказиональные образования, М. : Наука, 1973, с. 59.

առնվում այլ լեզուներից[65]: Ադրբեջաներենում նոր բառերը ստեղծվել են հիմնականում ադրբեջաներենի վերջածանցների օգնությամբ: Դրանցից ամենակենսունակներից են՝ -lıq, -lı, -sız, -laş, -lan, -ca, -çı, -ıcı, -ma, -ım և այլ վերջածանցները. օրինակ՝ azadlıq-ազատություն, yeddiillik–յոթնամյա, qardaşlaşmaq-եղբայրանալ, şərqşünaslıq-արևելագիտություն, pambıqçılıq-բամբակագործություն, qırıcı–կործանիչ, soyuducu–սառնարան, dinləyici–ունկնդիր, toplama –հավաքույթ, bölüm-բաժանում, dözüm-համբերություն, müqayisəli-համեմատական, qaydasız-անկանոն, qabaqcıl–առաջատար և այլն: Հավելենք, որ ժամանակակից հայերենում ևս ածանցների միջոցով ստեղծվում են նորաբանություններ, որոնցից ամենակենսունակներից առանձնացնենք –ություն վերջածանցը: Այն իր գործառույթով և իմաստով համարժեք է ադրբեջաներենի -lıq վերջածանցին: Այդ նորաբանություններից են՝ հանդուրժողականություն, լեգիտիմություն, բազմակարծություն, ամբոխահաճություն, կամարտահայտություն և այլն:

Ադրբեջաներենի վերջածանցների օգնությամբ կազմվել և կազմվում են նորաբանություններ, որոնք, որպես կանոն, իրենց արտացոլումն են գտնում նախ և առաջ ադրբեջանական լրատվամիջոցներում: Փոխառելով որևէ բառ կամ բառարմատ հիմնականում եվրոպական լեզուներից կամ ռուսերենից՝ դրանց կցվում է որևէ ադրբեջանական վերջածանց, և ստեղծվում է նոր բառ. օրինակ՝ tolerantlıq-հանդուրժողականություն, demokratlaşdırmaq-ժողովրդականացնել, aktivləşdirmək-ակտիվացնել, aktivlik-աշխուժություն, ակտիվացում, populyarlıq-հանրաճանաչություն, normallaşma-կարգավորում և այլն: Օրինակ՝ *«Milli Tolerantlıq Mərkəzi (MTM) Beynəlxalq Tolerantlıq Gününü gənclərlə birgə qeyd edib».*[66]*/«Ազգային հանդուրժողականության կենտրոնը Հանդուրժողականության միջազգային օրը նշել է երիտասարդների հետ»: «İlk dəfə qadınlara seçim hüququ tanıyan və qadın–kişi bərabərliyini təmin edən cümhuriyyət, o cümlədən demokratlaşma, azad seçkilər, beynəlxalq əlaqələr istiqamətində də yenilikçi işlər görüb.»*[67]*/ «Առաջին անգամ կանանց ընտրության իրավունքը ճանաչող և ողամարդ-*

[65] Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., Զանգակ-97, 2007, էջ 43:
[66] Milli Tolerantlıq Mərkəzi gənclərə radikalizmin fəsadlarını izah edib, 17 Noyabr 2014, http://az.trend.az/azerbaijan/society/2333861.html
[67] Azərbaycan Xalq Cümhuriyyəti- 95 il, 28 May 2013, http://yukselis.info/2013/05/az%C9%99rbaycan-xalq-cumhuriyy%C9%99ti-95-il/

կին հավասարությունն ապահովող հանրապետությունը նորարարական աշխատանքներ է տարել նաև ժողովրդականացման, ազատ ընտրությունների, միջազգային հարաբերությունների ուղղությամբ»:

Մերօրյա հայ մամուլի լեզուն ևս համալրվում է նորաբանություններով, որոնց զգալի մասը կազմավորվում է հայերենի լեզվական հնարավորությունների հաշվին՝ մասնավորապես հայերենի վերջածանցների օգնությամբ: Հաճախ նորակազմությունների ստեղծման ժամանակ գործածվում են նաև այլ բառակազմական միջոցներ: Այստեղ պետք է շեշտել, որ փոխառյալ բառերը և ձևույթները շատ ավելի քիչ մասնակցություն են ունենում, քան ադրբեջաներենում:

Հայերենում ևս ժամանակին նորաբանություններ համարվող բազմաթիվ բառեր այժմ դուրս են եկել ակտիվ գործածությունից և համարվում են հնաբանություններ: Նման բառերից առանձնացնենք հատկապես խորհրդային իրականությանը բնորոշ բառերն ու տերմինները: Նման բառերը ժամանակի պահանջով ներմուծվեցին լեզու որպես նորաբանություններ, հետո աստիճանաբար դարձան հիմնական բառաֆոնդի մաս, իսկ Հայաստանի անկախացումից հետո վերոնշյալ բառերն աստիճանաբար դուրս մղվեցին. օրինակ, կոլխոզ, պարտիական, պիոներ, հոկտեմբերիկ և այլն: Մինչդեռ ռուսերենից փոխառված բազմաթիվ բառեր ոչ թե դուրս մղվեցին, այլ փոխարինվեցին դրանց հայերեն համարժեքներով:

Նոր հասկացություններն ադրբեջաներենում նույնպես արտահայտվում են նաև բառաբարդման միջոցով ստեղծված նոր բառերով, երբ ստեղծվում է նոր բառ, բարդություն՝ որոշակի տարրերի, բաղադրիչների համադրությամբ: Բառակազմության սույն մեթոդն առավել հաճախ կիրառում են, օրինակ՝ թուրքերենում (eliaçık-առատաձեռն, günaydın-բարի լույս, denizaltı–սուզանավ, olağanüstü-բացառիկ, insanüstü – գերմարդկային և այլն): Վերոնշյալ մեթոդով ստեղծված բառերից են, օրինակ՝ dəmiryolu-երկաթգիծ, gözüaçıq-աչքաբաց, əliaçıq-առատաձեռն, seçkisonrakı-հետընտրական, seçkiqabağı-նախընտրական, önşərt-նախապայման և այլն: Օրինակ՝ *«Türkiyədə seçkisonrakı anti-Gülən davası Azərbaycanda da davam edə bilər.»*[68]*/ «Թուրքիայում*

[68] Türkiyədə seçkisonrakı anti-Gülən davası Azərbaycanda da davam edə bilər,04.08.2016, http://www.baki-xeber.com/v5/1084.html#.V6OOM4MrLIU

հեփընփրական հակագյուլենական շարժումը կարող է շարունակվել նաև Ադրբեջանում»:

Որպես բառակազմության եղանակ բարդաձանցման ժամանակ բարդացման և ածանցման համակցությամբ ստեղծվում են նոր բառեր, որոնք կոչվում են բարդաձանցավոր կամ բարդաձանց բառեր[69]: Բարդաձանցման ճանապարհով ստեղծված ադրբեջաներենի նորաբանություններն իրենց քանակով զիջում են մյուսներին, այնուամենայնիվ, որոշ նորաբանություններ տեղ են գտել մամուլում. օրինակ՝ suölçən–ջրաչափ, neftayıran–նավթահոր, neftçıxarma–նավթահանում, yerölçən–հողաչափ, tozsoran-փոշեկուլ, otbiçən-խոտհնձիչ, sözdüzəldici-բառակազմական և այլն:

Ի լրումն նշենք, որ վերոնշյալ բառերն արդի հայերենում, ինչպես երևում է, ևս բաղադրյալ բառեր են և ստեղծվել են բարդաձանցման, բառաբարդման եղանակով: Օրինակ՝ *«İstehlakçıların suölçən cihazlarla təmin edilməsi ilə bağlı tədbirlər haqqında" Azərbaycan Respublikası Prezidentinin 29 mart 2016-cı il tarixli sərəncamından irəli gələn vəzifələrin icrasına başlanılıb.»*[70]*/ «Սկսվել են «Սպառողներին ջրաչափ սարքավորումներով ապահովելու միջոցառումների մասին» Ադրբեջանի Հանրապետության նախագահի 2016թ. մարտի 29-ի հրամանագրից բխող պարտավորությունների կատարումը»:*

Ադրբեջաներենում նորաբանությունների ի հայտ գալու հիմնական և կարևոր ուղիներից են փոխառությունները: Այս երևույթն ադրբեջաներենում ավելի մեծ թափ ստացավ հատկապես վերջին շրջանում՝ կապված ժամանակակից հասարակական կյանքում սոցիալական, տնտեսական, տեխնոլոգիական զարգացումների հետ. օրինակ, investisiya-ներդրում, spiker–խոսնակ, birja- բորսա, kompüter– համակարգիչ, mer- քաղաքապետ, faks– ֆաքս, menecer–մենեջեր, կառավարիչ, biznesmen- գործարար, ekologiya- բնապահպանություն, internet– համացանց, distributer-մատակարար, fayl- էլեկտրոնային փաստաթուղթ, printer-տպիչ, skaner-սկաներ, monitor-համակարգչի էկրան, մոնիտոր, maus- համակարգչային մկնիկ, kartriç-քարթրիջ, biznes-sentr-բիզնես-կենտրոն, diler-վաճառող, դիլեր, broker- անշարժ գույքի գործակալ, բրոկեր, eksçenc-փոխանակում, mesaj-հաղորդագրություն և այլն: Օրինակ՝ *«Yuxulara monitorda baxmaq*

[69] Հայերենագիտական բառարան, Պետրոսյան Հ., Եր., «Հայաստան», 1987, էջ 136:
[70] Suölçən cihazların quraşdırılması sürətləndirilir, 11.04.2016, http://www.xalqqazeti.com/az/news/social/69708

mümkün olacaq.»[71] */ «Հնարավոր է լինելու դիտակներով երազները դիտել»: «O, son anda dostuna mesaj göndərib.»*[72] */ «Նա վերջին պահին ընկերոջը հաղորդագրություն է ուղարկել»: «Aprelin 21-də London əmtəə birjasında "Azeri Light" markalı Azərbaycan neftinin 1 barreli 63.31 dollara satılıb.»* [73] */ «Ապրիլի 21-ին Լոնդոնի ապրանքների բորսայում «Azeri Light« ապրանքանիշի ադրբեջանական նավթի մեկ բարելը վաճառվել է 63,31 դոլարով»:*

Բառաստեղծման առկա տարբերակներից է լեզվի՝ արդեն հնացած արմատներից, բարբառներից և խոսվածքներից օգտվելը: Երբեմն տարբեր բարբառների և խոսվածքների բառերն առանց որևէ անհրաժեշտության մուտք են գործում գրական լեզու: Այս գործընթացում մեծ դեր են ունենում անհատ հեղինակները. օրինակ՝ latayir (söz)-բառ, sirimsəmiş (daş)–քար, iraz (dil)–լեզու և այլն: Ընդ որում, «մոռացված» բառերը հիմնականում փոխարինելու են գալիս արաբապարսկական փոխառություններին: Այնուամենայնիվ, բնականաբար, լեզվում առկա բոլոր օտար բառերը հնարավոր չէ և պետք չէ փոխարինել սեփական բառերով, այլ կերպ ասած՝ արհեստականորեն «բառ ստեղծելու» ճանապարհը չի կարող իրեն մշտապես արդարացնել: Երբեմն լեզվից դուրս եկած բառերն ինքնաբերաբար կրկին մտնում են գործածության մեջ, որն էլ անվանում են բառի «վերակենդանացում». օրինակ՝ çavuş–սերժանտ, ulu–մեծ, հզոր, ulus-ազգ, nəsnə-օբյեկտ և այլն: Օրինակ՝ *«Hicab–Azərbaycana kənardan gəlmiş bir nəsnə deyil.»*[74] */ «Գլխաշորը դրսից Ադրբեջան եկած ինչ-որ բան չէ»:*

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է նորաբանությունները բաժանել *բառային* և *իմաստային* նորաբանությունների: Ադրբեջաներենի բառային նորաբանությունները միայն իրենց ձևով են նոր, դրանք հիմնականում ստեղծվում են լեզվում գոյություն ունեցող բառերից կամ փոխառվում են այլ լեզվից. օրինակ՝ şura–խորհուրդ, sovet–խորհուրդ, universitet-համալսարան և այլն:

---

[71] Yuxulara monitorda baxmaq mümkün olacaq, 02.09.2013, http://big.az/147885-Yuxulara_monitorda_baxmaq_mumkun_olacaq.html

[72] Dostuna göndərdiyi mesaj həyatını qurtardı, 06.02.2011, http://www.azxeber.com/news/1962.htm

[73] Dünya birjalarında neftin qiyməti , 22.04.2015, http://www.azadliq.org/content/article/26971427.html

[74] Hicab – Azərbaycana kənardan gəlmiş bir nəsnə deyil", 03.06.2014, http://birlik.az/index.php?do=xeber&id=10618

Իմաստային նորաբանությունները ստեղծվում են լեզվում առկա բառերին նոր իմաստ հաղորդելու արդյունքում՝ müqəddəs–սուրբ, անձեռնմխելի, yoldaş-ընկեր, կին, կողակից բառերի դեպքում: Այսպես, «yoldaş» բառն ադրբեջաներենում գործածություն է ունեցել դեռևս մինչև ԽՍՀՄ մաս կազմելը՝ որպես «ճանապարհի ընկեր», սակայն 20-րդ դարի 20-ական թթ.-ից այն ստացել է նոր իմաստ՝ որպես դիմելաձև, ինչպես հայերենում ժամանակին կիրառվել է «ընկեր» բառը: 1990-ական թթ.-ից սկսած բառն սկսեց իմաստային փոփոխություն կրել: Մասնավորապես, որպես «ընկեր» դիմելաձևն արդեն գնալով դառնում էր հնաբանություն, չնայած հարկ է նշել, որ ադրբեջանական կրթական հաստատություններում մինչ օրս այն հաճախ պահպանում է իր այդ գործառույթը: Միաժամանակ այդ իմաստին գումարվել են նորերը՝ «həyat yoldaşı» կամ պարզապես «yoldaş» ձևը որպես «կյանքի ընկեր, կին, կողակից». Օրինակ մամուլից՝ *«Sənətdə olduğum üçün həyat yoldaşım məni çox incidirdi».*[75]/ *«Ինձ ինձ շատ էր վիրավորում, քանի որ ես արվեստում էի»:* Հետաքրքիր է նշել, որ «yoldaş» բառը թուրքերենում ևս ունի նույն իմաստը, սակայն հիմնականում գործածվում է «ճանապարհի ընկեր» իմաստով:

Ինչպես նշում է Հ.Աճառյանը իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ, «ձայնական փոփոխություններն ունեն իրենց ժամանակը և հատկապես՝ հաջորդական կարգը, նմանապես և՝ իմաստի փոփոխությունները»[76]: Հաճախ ադրբեջաներենում նոր բառեր մուտք գործելիս նկատվում են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են բառիմաստի նեղացումն ու ընդլայնումը: Հատնի է, որ ադրբեջաներեն alverçi–վաճառական, falçı-գուշակ, molla–մոլլա բառերը խորհրդային շրջանում կիրառվում էին որոշակի բացասական երանգավորմամբ, նույնիսկ որպես վիրավորական արտահայտություններ küçə alverçisi-բոց.՝ փողոցային առևտրական, mollalıq etmək-բոց.՝ մոլլայություն անել[77]: Այսպես, bazar-շուկա բառն ընդլայնել է իր իմաստը, և ոչ հարգալից իմաստ արտահայտող բառը (bazar arvadı - բոց.՝ շուկայի կին, կռվարար, անհաշտ, անկիրթ կին, bazar açmaq–կռիվ սկսել, bazarı

[75] Həyat yoldaşım son nəfəsində məni istədi, amma getmədim", 01.02.2016, http://big.az/242711-sssssssssssss.html
[76] Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների), Իմաստաբանություն, բառաքննություն, շարահյուսություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2005, էջ 26:
[77] Babayeva P., Azərbaycan dilinin lüğət tərkibində müasir dövrdə zənginləşmə prosesi, “Filologiya məsələləri”, № 4, «Elm və təhsil», Bakı– 2014, s. 69.

bağlamaq-բոց.՝ շուկան փակել) ստացել է նաև նոր իմաստ՝ որպես տնտեսագիտական տերմին: Բացասական իմաստն աստիճանաբար վերանում է, և արդյունքում վերոնշյալ բառերով գործածության մեջ են մտնում նոր, ոչ բացասական երանգավորմամբ արտահայտություններ: Օրինակ՝ *«Hal-hazirda bazar iqtisadiyyatı özündə "bazar" anlayışını cəmləşdirməklə, daha mürəkkəb bir prosesə çevrilmişdir.»*[78] / *«Ներկայումս շուկայական տնտեսությունն իր մեջ ամփոփելով «շուկա» հասկացությունը՝ վերածվել է ավելի բարդ մի գործընթացի»: «Bazar iqtisadiyyatına malik olan ölkələrdə də iqtisadiyyatda dövlət planlaşdırılması həyata keçirilir."* [79] / *«Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում նույնպես իրականացվում է տնտեսության պետական պլանավորում»:*

Նույնը կարող ենք ասել հայերեն «շուկա» (1.բացօթյա կամ շինության մեջ ծածկի տակ առևտուր անելու տեղ 2. արտադրանքի սպառման ապրանքաշրջանառության ոլորտ՝ ասպարեզ)[80] բառի մասին՝ որպես տնտեսագիտական տերմին, որի գործածությունն այդքան էլ բնորոշ չէր խորհրդային միության տնտեսական հարաբերություններին: Հետխորհրդային շրջանում բառը լայնորեն կիրառվում է որպես տնտեսագիտական հասկացություն՝ տարբեր բառակապակցությունների մեջ. օրինակ՝ շուկայական հարաբերություններ, սպառման շուկա, ֆինանսական շուկա, արժութային շուկա, համաշխարհային շուկա, շուկայական տնտեսություն և այլն: Օրինակ՝ *«Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Ֆրանսիայում, գրական ժանրում, ու, ընդհանրապես, արվեստի բոլոր ճյուղերում տիրում են շուկայական հարաբերություններ՝ առնել այն, ինչ վաճառվում է, գրել այն, ինչ հետաքրքիր է այսօրվա մարդուն»*[81]*:*

Նորաբանությունների մասին խոսելիս շատ տեղին է անդրադառնալ *նույնանիշների* գործածությանը: Սույն հարցին անդրադարձել է նաև ակադեմիկոս Է. Աղայանը, ով նշում է, որ «բացարձակ նույնանիշների կամ բազմանունների կիրառությունը հաճախ դառնում է արդիական, երբ լեզու են մուտք գործում նոր

[78] Bazar iqtisadiyyatı və Azərbaycan reallıqları, 01.02.2016, http://muxalifet.az/bazar-iqtisadiyyati-v-azrbaycan-realliqlari.html
[79] İqtisadiyyatda dövlət planlaşdırması tətbiq oluna bilər, 2010, http://www.movqe.az/news/iqtisadiyyat/30674.html
[80] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հատոր չորրորդ, Եր., Հր. Աճառյանի անվան լեզվի ինստ., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 91:
[81] Ֆրանսիացի գրող. Արվեստի բոլոր ճյուղերում այսօր տիրում են շուկայական հարաբերություններ, 2010, http://www.panorama.am/am/news/2010/09/30/france-writer/1050288

բառեր»[82]: Նման բառերի երևան գալուն նպաստող գործոններից են այլ լեզուներից գեղարվեստական գրականության թարգմանությունները, զանգվածային պարբերական մամուլի զարգացումը, լեզվում փոխառությունների թվի մեծացումը և այլն. օրինակ՝ islahat–reforma-բարեփոխում, maliyyə–finans-ֆինանսներ, ֆինանսական, memarlıq–arxitektura-ճարտարապետություն *(«Azərbaycan Prezidenti İlham Əliyev Dövlət Şəhərsalma və Arxitektura Komitəsi əməkdaşlarının təltif edilməsi haqqında sərəncam imzalayıb.»* [83] */ «Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հրամանագիր է ստորագրել քաղաքաշինության և ճարտարապետության պետական կոմիտեի աշխատակիցների պարգևատրման մասին»: «Azərbaycan Memarlıq və İnşaat Universitetinin rektoru, professor Gülçöhrə Məmmədova bu ali təhsil ocağının tələbələri ilə görüşüb.»* [84] */ «Ադրբեջանի Ճարտարապետության և շինարարության համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Գյուլչոհրե Մամեդովան հանդիպել է այս կրթօջախի ուսանողների հետ»:)*, köpək balığı–akula-շնաձուկ (*օրինակ՝ «Kann" kino festivalının finalçısı yeni zelandiyalı rejissior Adam Streynci köpək balığı yeyib.»*[85] */ «Կանն»-ի կինոփառատոնի հաղթող նորզելանդացի ռեժիսոր Ադամ Սթրեյնջին կերել է շնաձուկը»:)*, duyum–intuisiya-կանխազգացում, masa–stol-սեղան, nəqliyyat–transport-տրանսպորտ, փոխադրում *(«*Bakcell *şəbəkəsi klassik TDM/ATM ilə birgə istifadə olunan müasir İP Transport texnogiyasından ibarət hibrid şəbəkədir».*[86]*/ «Բաքսել ցանցը դասական ԹԴՄ/ԱԹՄ-ի հետ համատեղ կիրառվող ժամանակակից «ԱՅՓԻ» տրանսպորտային տեխնոլոգիայից բաղկացած հիբրիդային ցանց է»: «Günümüzü nəqliyyatsız, nəqliyyat vasitələrsiz təsəvvür etməm çətindir.»*[87] */ «Դժվար է պատկերացնել մեր օրը առանց տրանսպորտի, տրանսպորտային միջոցների»:)*, layihə–proyekt-նախագիծ, təqdimat–prezentasiya-շնորհանդես, tərcümeyi-hal–avtobioqrafiya-ինքնակենսագրություն, təhlil–analiz-վերլուծություն, afərin-əhsən–bravo-կեցցե՛ս, mübahisə-polemika-բանավեճ, lüğətçilik-

[82] Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 186:
[83]Dövlət Şəhərsalma və Arxitektura Komitəsinin əməkdaşları təltif edilib , 27.02.2016, http://az.trend.az/azerbaijan/politics/2500249.html
[84]Azərbaycan Memarlıq və İnşaat Universitetinin rektoru tələbələrlə görüşüb, 04.03.2014, http://az.trend.az/azerbaijan/society/2249076.html
[85] Məşhur rejissoru köpək balığı yedi, 28.02.2013, http://xeber.azeri.net/hadise/meshur-rejissoru-kopek-baligi-yedi
[86] Bakcell şirkəti transmissiya şəbəkəsinin modernləşdirilməsinə başlayıb, 24.05.2013, http://sia.az/ru/news/social/349560-bakcell-sirketi-transmissiya-sebekesinin-modernlesdirilmesine-baslayib
[87] Dünyanın qəribə nəqliyyat vasitələri, 22.05.2015, http://news.lent.az/news/203508

leksiqoqrafiya-բառարանագրություն, münaqişə-konfilikt-հակամարտություն *(«Münaqişələr var ki, onlara həqiqətən də inanmaq olur.»*[88] */ «Կան հակամարտություններ, որոնց իրականում կարելի է հավատալ»:)* և այլն: Ընդ որում, երկրորդ տարբերակները սովորաբար ավելի լայն գործածություն ունեն ժամանակակից փուլում:

Տեղին է նշել, որ լեզվաբանության մեջ նույնանիշների նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ: Հոմանիշների և զուգահեռաբար կիրառվող բառերի խնդիրն ուսումնասիրող ադրբեջանցի լեզվաբան Ա.Գարաևը նշում է, որ «պարալելիզմները լեզուն ծանրացնող գործոններից են, մասնավորապես տերմինաբանության մեջ դրանք հանգեցնում են որոշակի խառնաշփոթի»[89]:

Ընդունված է համարել, որ անկախության առաջին տարիներին ադրբեջաներենի՝ արդեն որպես ռուսերենից անկախ զարգացող լեզվի կայացման և այն նորաբանություններով հարստացնելու գործում նշանակալի դեր է ունեցել Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը: Նրա ելույթներում հաճախ կարելի էր հանդիպել բազմաթիվ նորաբանությունների, որոնք մինչ այդ ծանոթ չէին ադրբեջանական հասարակության լայն զանգվածներին: Արդյունքում դրանք աստիճանաբար ներթափանցեցին լեզվի բառային կազմ և ստացան համընդհանուր գործածություն: Նշենք, որ 1994թ. Հ. Ալիևն առաջին անգամ ժամանակակից ադրբեջաներենի համար կիրառել է atəşkəs–հրադադար տերմինը[90], որն այսօր ադրբեջանական մամուլի բառապաշարի անքակտելի մի մասն է. օրինակ՝ *«Bu müddətdə atəşkəs davam edir» / «Այս ընթացքում զինադադարը շարունակվում է»:*

Նման բառերի ցանկից նշենք նաև sivilizasiya–քաղաքակրթություն, referendum–հանրաքվե, konstruktivizm–կառուցողականություն, totalitarizm-ամբողջատիրություն, diaspor–սփյուռք, lobbi -լոբբի, ճնշում և այլ բառեր: Օրինակ՝ *«Diasporla İş üzrə Dövlət Komitəsi 42 ölkədə yaşayan azərbaycanlıların statistikasını təqdim edib».*[91] */ «Սփյուռքի հետ աշխատանքների գծով պետական կոմիտեն ներկայացրել է 42 երկրում ապրող ադրբեջանցիների վիճակագրությունը»:*

[88] Etnik münaqişələr niyə uzanır?, 14.11.2014, http://www.azadliq.org/content/article/26691936.html
[89] Sadıqova S.,Dil sistemində Leksik paralellərin ifadə formaları, Terminologiya məsələləri, №1, Bakı-Elm-2014, s. 6.
[90] Zamanov N., Heydər Əliyevin nitqində neologizmlər, http://anl.az/down/meqale/azerbaycan/2011/iyun/181174.htm
[91] Heydər Əliyevin HƏMRƏYLİK mirası, 30.12.2015, http://www.7news.az/diaspor-11/heyder-eliyevin-hemreylik-mirasi-12151

Հայտնի է, որ գիտության տարբեր բնագավառների նորաբանությունների մեծամասնությունը տերմիններ են: Օրինակ՝ կրթության ոլորտում կատարվող փոփոխությունները հանգեցրել են մի շարք նոր տերմինների ստեղծմանը[92]: Ադրբեջանը փորձում է ինտեգրվել միջազգային կրթական գործընթացներին, կնքում է միջպետական, միջբուհական պայմանագրեր, կատարում է ուսանողների փոխանակում տարբեր երկրների հետ, որի արդյունքում լեզու են ներմուծվում բազմաթիվ նորաբանություններ: Վերջիններիս հիմնական աղբյուրն անգլերենն է: Ի դեպ, սույն նորաբանություններից շատերը վաղուց գործածվում են մամուլի լեզվում (diaqnostik test-ստուգողական, ստուգիչ թեստ, distant təhsil-հեռավար ուսուցում և այլն):

Այսպիսով, ադրբեջաներենի մամուլի լեզուն համալրվում է բազմազան ոլորտներին առնչվող նորաբանություններով ՝ քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, արվեստ, կենցաղ, տեխնիկա, գիտության տարբեր ճյուղեր և այլն: Միաժամանակ անհերքելի է ռուսերենի, իսկ նորագույն շրջանում՝ անգլերենի դերը, որպես նորաբանությունների աղբյուր: Ադրբեջանի անկախացումից հետո ադրբեջաներենում հաճախ հայտնվում են նաև թուրքերեն բառեր:

1.5. Տերմինների կիրառությունն ադրբեջանական մամուլում

1.5.1. Տերմինաբանություն, ադրբեջաներենի տերմինները. տերմինաբանությունը գիտություն է, որն ուսումնասիրում է լեզվի հատուկ բառապաշարը, այդ բառապաշարի տիպաբանության, ծագման, բովանդակության, ինչպես նաև կանոնակարգման և զարգացման խնդիրները: Երբեմն տերմինաբանություն են անվանում լեզվում ընդհանուր գիտական տերմինների որոշակի բազմությունը կամ ամբողջությունը[93], գիտության որևէ ճյուղի հասկացությունների և անվանումների ամբողջությունը և այլն: Տերմինաբանությունը ներառում է գիտության, տեխնիկայի, տնտեսության, կենցաղի, հասարակական-քաղաքական կյանքի, արհեստների, արվեստի ճյուղերի, գրասենյակային-

[92] Azərbaycan dilində alınma sözlər, http://zekalar.edu.az/2014/10/az%C9%99rbaycan-dilind%C9%99-alinma-sozl%C9%99r/

[93] Суперанская А.В., Подольская Н.В., Васильева Н.В. Общая терминология: Вопросы теории, М., ЛИБРОКОМ, 2012, с. 145.

պաշտոնական գործառնությունների բոլոր տերմիններն ու տերմինային արժեք ունեցող բառերը[94]: Տերմինների մեծ հոսքի պայմաններում մասնագետների առաջ լուրջ խնդիր է առաջացել կանոնակարգել նրանց ողջ զանգվածը: Տերմինաբանությունն ունի ձևավորման և զարգացման որոշակի ինքնուրույնություն[95]: Ժամանակակից լեզվաբանության տեղեկատվական դաշտը բնութագրվում է տեսական-մեթոդաբանական աղյուսակում բազմաթիվ ուղղությունների առկայությամբ, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է իրեն հատուկ տերմինային համակարգ, որն էլ արտացոլում է այս կամ այն ուղղության առանձնահատկությունը[96] :

Ադրբեջանի անկախացումից հետո ադրբեջաներենի տերմինների զարգացման խնդիրը, դրանց լեզվագիտական հետազոտությունը դարձել է ադրբեջանական լեզվաբանության արդիական խնդիրներից մեկը: Ներկայումս ադրբեջաներենի բառային կազմն արագորեն հարստանում է մեծաքանակ տերմիններով[97], տերմինային համակարգն ընդգրկում է գիտության և տեխնիկայի, տնտեսության և մշակույթի, արդյունաբերության և գյուղատնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հասկացություններն արտահայտող հատուկ գործառույթ ունեցող բառապաշարը[98]:

19-րդ դարում ադրբեջաներենի տերմինաշարի ձևավորման գործում շեշտվում է ադրբեջանցի դրամատուրգ, լեզվաբան, փիլիսոփա, հասարակական գործիչ Մ.Ֆ.Ախունդովի (Մ.Ֆ.Ախունդզադե) ծավալած գործունեությունը: Վերջինս տերմինների ստեղծումը կարևոր նախապայման էր համարում լեզվի զարգացման և առաջընթացի համար: Նա երբեմն փոխառյալ ռուսական տերմիններին կցում էր ադրբեջանական վերջածանցներ և ստեղծում նորերը. օրինակ՝ aristokratlıq-արիստոկրատիա, patriotluq-հայրենասիրություն, atəşpərəstlik-կրակապաշտություն, filosofluq-փիլիսոփայություն և այլն: Ադրբեջանցի լեզվաբան

[94] Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 142:.
[95] Культура русской речи. Учебник для вузов, Под ред. проф. Граудиной Л. и проф. Ширяева Е., М., НОРМА-ИНФРА, 1999, с. 375.
[96] Жеребило Т., Словарь лингвистических терминов. Изд. 5-е, испр. и доп. – Назрань: ООО «Пилигрим», 2010, с. 2.
[97] Новрузова С., О многозначности в научно-технических терминах, Terminologiya məsələləri №1, Bakı, Elm, 2014, s. 39.
[98] Qasımova X., Müstəqillik illərində Azərbaycan dilində termin yaradıcılığının əsas istiqamətləri, Bakı, Elm-2009, s. 14.

Դեմիրչիզադեն էլ, անդրադառնալով տերմինների հիմնախնդրին, գրում է, որ գրական լեզվում գործածվող տերմինների գրեթե 90 տոկոսը փոխառված են պարսկերենից և արաբերենից[99]:

Մամուլը, ըստ էության, մեծ դերակատարում ունի նոր տերմինները հասարակության լայն շերտերին հասանելի դարձնելու գործում: Այդպես է եղել նաև առաջին ադրբեջանական պարբերականի պարագայում, որն օգտվում էր ինչպես կենդանի ժողովրդական լեզվից, այնպես էլ դրա առանձին բարբառներից: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ադրբեջաներենի տերմինային համակարգի համար սկսվում է նոր փուլ: Այս շրջանում միջազգային, մասնավորապես ռուսերեն տերմինները սկսում են ավելի հաճախ կիրառվել. օրինակ՝ академия-ակադեմիա, трагедия-ողբերգություն, университет-համալսարան, актер-դերասան, тираж-տպաքանակ, журналист-լրագրող, педагог-մանկավարժ, кандидат-թեկնածու, клуб-ակումբ, студент-ուսանող, етнограф-ազգագրագետ, театр-թատրոն և այլն:

Ադրբեջաներենի տերմինային համակարգը նկատելիորեն հարստանում և կանոնակարգվում է խորհրդային շրջանում, երևան են գալիս մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված տերմիններին առնչվող խնդիրներին: 1990-ական թթ.-ից հետո հասարակական-քաղաքական վերափոխումների արդյունքում ադրբեջաներենի բառապաշարում երևան են գալիս բազմաթիվ նոր տերմիններ:

Տերմինային համակարգը կանոնակարգելու նպատակով Ադրբեջանի Ազգային ակադեմիայի նախագահության որոշմամբ 2001 թ. ստեղծվում է Տերմինաբանական հանձնաժողով[100]: Վերջինս մեծ ուշադրություն է դարձնում նաև պարբերական մամուլում, հեռուստատեսությունում և ռադիոյում, դպրոցական դասագրքերում, պետական հիմնարկություններում տերմինների կիրառմանը: Հանձնաժողովի հանձնարարությամբ Ադրբեջանի բոլոր գիտահետազոտական ինստիտուտները և բարձրագույն ուսումնական հաստատությունները կազմում են մոտ 60 ոլորտային բառարան: Եթե նախկինում ավելի շատ նախապատվություն էր տրվում ռուսերեն-ադրբեջաներեն, ադրբեջաներեն-ռուսերեն բառարաններին, ապա այսօր մեծապես կարևորվում է անգլերեն, թուրքերեն, գերմաներեն և այլ լեզուներով

[99] Նույն տեղը՝ s. 13:
[100] Sadıqova S., Azərbaycan dili terminologiyası, http://www.azerbaijan-news.az/index.php?mod=3&id=31234

բառարանների առկայությունը[101]: Հրատարակվում են նաև եռալեզու, քառալեզու բառարաններ: 2002թ. հրատարակված «Կինոյի, հեռուստատեսության, ռադիոյի տերմինների բացատրական բառարան»-ը[102] սույն ոլորտի հաջողված բառարաններից է:

1.5.2. Տերմինների ստեղծման մեթոդները. հայտնի է, որ տարբեր են ինչպես տերմինների զարգացման ուղղությունները և աղբյուրները, այնպես էլ՝ դրանց ստեղծման մեթոդները՝ իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական, բառապատճենում և հապավումներ: Իմաստաբանական մեթոդով ստեղծված տերմիններն ադրբեջաներենում ևս ձևավորվում են լեզվի բառային կազմում առկա համընդհանուր գործածական բառերի, բարբառային բառերի և այլ բառերի հաշվին: Համագործածական, կենցաղային, բարբառային և այլ բառերը նոր բովանդակություն են ստանում և վերածվում տերմինների. օրինակ, isim, sifət-անուն, դեմք (համագործածական բառ) և isim, sifət՝ որպես լեզվաբանության մեջ կիրառվող տերմին՝ անուն, ածական, ağız-բերան՝ որպես համագործածական բառ և ağız՝ որպես ռազմական տերմին: Այս մեթոդը պարունակում է նաև ենթատեսակներ՝ իմաստի ընդլայնում, իմաստի նեղացում, իմաստային փոփոխություն:

Ժամանակակից ադրբեջաներենում նոր տերմինների ստեղծման ամենաարդյունավետ միջոցը ձևաբանականն է: Ժամանակակից փուլում սույն գործընթացում ադրբեջանցի լեզվաբանները նախապատվություն են տալիս ադրբեջաներենի վերջածանցներին:

Առավել մեծ կիրառություն ունեցող վերջածանցների մեջ առանձնացնենք հետևյալները.

1) -lıq (-lik//-luq//-lük) վերջածանցի միջոցով հիմնականում կազմվում են նոր գոյականներ. օրինակ՝ menecerlik-մենեջերի աշխատանք, spikerlik-խոսնակի աշխատանք, պաշտոն, suverenlik-ինքնավարություն, legitimlik –լեգիտիմություն և այլն: Օրինակ՝ *«Məqalədə qeyd olunur ki, ilk Avropa Oyunları Azərbaycan prezidentinə beynəlxalq*

[101] Sadıqova S., Ana dilinə dövlət qayğısı onun inkişafına real təminat yaradır, "Xalqqəzeti", 11.06.2012, http://www.xalqqazeti.com/az/news/social/22961

[102] Məhərrəmli Q., «Kino, televiziya, radio terminlərinin izahlı lüğəti», Bakı, Azərbaycan Milli Ensiklopediyası» nəşriyatı, 2002, s. 7.

legitimlik və nüfuz qazandırdı.»[103] / *«Հոդվածում նշվում է, որ եվրոպական առաջին խաղերի արդյունքում Ադրբեջանի նախագահը վաստակեց հեղինակություն և լեգիտիմություն»:*

2) -çı (-çi//-çu//-çü) վերջածանցի կիրառման շրջանակները տերմինաստեղծ գործում հատկապես մեծացել են վերջին տարիներին. օրինակ՝ islahatçı-բարեփոխիչ, terrorçu-ահաբեկիչ, istifadəçi–օգտատեր, klipçi-տեսահոլովակ պատրաստող, abunəçi-բաժանորդ, reklamçı-գովազդի մասնագետ, qəzetçi-լրագրող, թերթի աշխատակից, vasitəçi-միջնորդ և այլն: Հատկապես, օրինակ՝ պարսկական ծագում ունեցող և ադրբեջաներենում որպես վերջածանց գործածվող -şünas ձևույթը սկսում է փոխարինվել թյուրքական -çı վերջածանցով: Օրինակ՝ «*Bununla belə terrorçularının hədəflərinin hansı strateji obyektlər olduğu açıqlanmır.»*[104] / *«Դրանով հանդերձ, չի պարզաբանվում, թե որ ռազմավարական օբյեկտներն են եղել ահաբեկիչների թիրախներ»:*

3) -lı (-li//-lu//-lü) ածականակերտ կամ գոյականակերտ վերջածանցն ունի արդյունավետ կիրառություն. օրինակ՝ riskli-ռիսկային, intelektli-ինտելեկտ ունեցող, problemli-խնդիր ունեցող, խնդրահարույց, canlı-կենդանի (օր.՝ կենդանի, ուղիղ եթեր), potensiallı–ներուժ ունեցող, texnikalı–տեխնիկա ունեցող և այլն: Օրինակ՝ «*Xəstə kompüterli tomoqrafiya aparatının masasında hərəkət etmədən uzanır.»*[105] / *«Հիվանդն անշարժ պառկում է համակարգչային տոմոգրաֆիայի սարքի սեղանին»:*

4) -ma//-mə բայանուններ կազմող վերջածանցի օգնությամբ ստեղծվում են տարբեր գործողություններ արտահայտող հարյուրավոր նոր տերմիններ՝ özəlləşdirmə-սեփականաշնորհում, demokratlaşdırma-ժողովրդավարացում, aktivləşmə-աշխուժացում, ակտիվացում և այլն: Օրինակ՝ *«Azərbaycan Mərkəzi Bankı isə öz bəyanatında bildirir ki, "xarici iqtisadi çaxnaşmaların aktivləşməsi" nəticəsində manatın kursunu sabit saxlamaq artıq mümkün olmur.»*[106] / *«Իսկ Ադրբեջանի Կենտրոնական բանկը իր հայտարարության մեջ*

[103] "Avropa Oyunları Ilham Əliyevə legitimlik qazandırdı, 16.07.2015, http://www.azadliq.org/content/article/27130692.html
[104] Terrorçularyeni "11 sentyabr" hazırlayır, 05.09.2011, http://legend.az/40655-terrorchular-yeni-11-sentyabr-hazirlayir.html
[105] Kompüterli tomoqrafiya haqqında bilmədiklərimiz, http://www.tibb.az/page/519
[106] "Financial Times" manatınçöküşühaqda: "Bu gedişlə…", 21.12.2015, http://azpolitika.info/?p=179937

նշում է, որ «միջազգային տնտեսական խուճապի ակտիվացման» արդյունքում հնարավոր չի լինում կայուն պահել մանաթի փոխարժեքը»:

Երբեմն նոր տերմիններ ստեղծվում են պարզ և ածանցավոր բառերի համակցման արդյունքում. օրինակ՝ birmənalı-միիմաստ, çoxtərəfli-բազմակողմ, hərtərəfli-համակողմանի և այլն: Օրինակ՝ *«Avropa Parlamentində ölkəmiz əleyhinə qəbul edilmiş və Azərbaycan reallıqlarına uyğun olmayan qətnamə həmçinin ikili standart nümunəsidir”.»*[107] */ «Եվրոպայի խորհրդարանում մեր երկրի դեմ ընդունված և Ադրբեջանի իրողություններին չհամապատասխանող հռչակագիրը նաև երկակի չափորոշիչի օրինակ է»:*

Շարահյուսական ճանապարհով ստեղծված տերմիններ. ադրբեջաներենում շարահյուսական ճանապարհով ստեղծված տերմինների քանակը սակավ է ձևաբանական միջոցներով ստեղծվածներից: Այս ճանապարհով ստեղծված անվանական բառակապակցությունների մեծ մասը կազմվում են հետևյալ կերպ. գոյական-գոյական, ածական-գոյական, թվական-գոյական. օրինակ՝ neft sektoru-նավթային ոլորտ, işçi qrup-աշխատանքային խումբ, milli bank-ազգային բանկ, ortaq dil–ընդհանուր լեզու, ikili standart-երկակի չափանիշ, ümumi maraq-ընդհանուր շահ, xarici investisiya-օտարերկրյա ներդրում, qırıcı təyyarə-կործանիչ ինքնաթիռ, birinci səsvermə-առաջին քվեարկություն և այլն:

Լեզուների հարստացման ուղիներից մեկն էլ բառապատճենման (ռուս.՝ калька) մեթոդով նոր բառերի ստեղծումն է: Տերմինային բառապաշարի զգալի մասը ստեղծվել է վերոնշյալ մեթոդով: Ամենակիրառելին *ամբողջական* կամ *մասնակի* բառապատճենումն է:

Ամբողջական բառապատճենման ժամանակ ներմուծվող տերմինի ճշգրիտ համարժեք բառը կամ բառակապակցությունը ներկայանում է նոր տերմինը վերցնող լեզվի քերականական կանոններին համապատասխան: Օրինակ՝ ռուսերենից կամ անգլերենից պատճենված փոխառյալ բառի ճշգրիտ իմաստն արտահայտելու համար կիրառվում են նաև բառակազմական վերջածանցներ. օրինակ՝ оффициальное сообщение – rəsmi məlumat-պաշտոնական հաղորդագրություն, гражданское право –

[107] "Avropa Parlamentində Azərbaycan əleyhinə qəbul edilmiş qətnamə ikili standart nümunəsidir", 14.09.2015, http://az.trend.az/azerbaijan/politics/2433147.html

vətəndaş hüququ -քաղաքացիական իրավունք, боевой устав – döyüş nizamnaməsi-մարտական կարգ, рыночная экономика – bazar iqtisadiyyatı-շուկայական տնտեսություն, сотрудник-əməkdaş-աշխատակից, user–istifadəçi–օգտատեր, sayt-səhifə–կայք, download–yükləmək-ներբեռնել և այլն: Օրինակ՝ *«Bizim nəzərdə tutduğumuz sistemdə "Gənclər şəhərciyi"nin tikilməsi bazar iqtisadiyyatında mümkün deyil.»*[108] */ «Մեր նախատեսած համակարգում «Երիտասարդական քաղաք»-ի կառուցումը շուկայական տնտեսության մեջ չէ»:*

Անդրադառնալով հապավումներին՝ նշենք, որ վերոնշյալ մեթոդով ստեղծվող տերմինները երևան են գալիս բառերի, բառակապակցությունների կրճատման արդյունքում. օրինակ՝ AZƏRTAC (Azərbaycan Telegraf Agentliyi)-Ադրբեջանի հեռագրային գործակալություն, MM (Milli Məclis)-Ազգային ժողով, HSK (Hərbi Sənaye Kompleksi-ռազմարդյունաբերական համալիր և այլն: Օրինակ՝ *«Bu gün Azərbaycan Dövlət İnformasiya Agentliyi - "Azərtac"ın yaradılmasından 96 il ötür».*[109] */ «Այսօր լրանում է Ադրբեջանի տեղեկատվության պետական գործակալության՝ «Ազերթաջ»-ի ստեղծման 96 ամյակը»:* Հատկանշական է, որ բառապատճենման միջոցով ստեղծված տերմինային արժեք ունեցող հապավումների հաճախ կարելի է հանդիպել նաև արդի հայ մամուլում, սակայն այստեղ կրկին գործ ենք ունենում հայերենի բառակազմական հարուստ միջոցների հետ. ԵԽ-Եվրախորհուրդ, ԵՄ-Եվրամիություն, ՋԼՄ-զանգվածային լրատվամիջոց, ԵԱՏՄ- Եվրասիական տնտեսական միություն և այլն:

Փոխառյալ տերմիններ. ինչպես արդեն նշվել է, ադրբեջաներենի տերմինային համակարգում մեծ տեղ են գրավում փոխառյալ տերմինները, և դրանց շարքում իրենց կայուն տեղն ունեն արաբապարսկական փոխառությունները: Դրանք ադրբեջաներեն են մուտք գործել հիմնականում ուղղակի՝ առանց երրորդ լեզվի միջնորդության: Ժամանակի ընթացքում փոխառություններն ադրբեջաներենի ինչյունական համակարգի ազդեցությամբ կրել են որոշ ինչյունական փոփոխություններ: Արաբերենից փոխառված տերմինների մի ստվար հատված վերաբերում է իսլամին, որն իր հետ բերել է բազմաթիվ արաբերեն կրոնական

[108] "Evtikibgənclərəpaylamaqdüzdeyil", 25.12.2015, http://www.olke.az/olke-2/ev-tikib-genclere-paylamaq-duz-deyil-nazir-43477
[109] "Azərtac"ın yaradılmasından 96 il ötür., http://apa.az/xeber-az/media-xeber/azertac-in-96-yasi-tamam-olur.html

հասկացություններ. օրինակ՝ allah-աստված, vəqf-նվիրատվություն, qiyamət–աշխարհի վերջ, ziyarət-ուխտագնացություն, imam–իմամ, առաքյալ, mürid–հետևորդ, şiə-շիա, sünni-սուննի և այլն: Ներկայումս շարունակվում է արաբապարսկական տերմինները նորերով փոխարինելու միտումը: Մասնավորապես, ստորև ներկայացված բառացանկում արաբապարսկական ծագումով տերմիններն աստիճանաբար փոխարինվում են եվրոպական, ռուսական համարժեքներով՝ məsafə-interval-տարածություն, միջակայք, quruluş-sistem–համակարգ, կառուցվածք, ənənə– tradisiya-ավանդույթ, ərazi-region –տարածք, շրջան. rəmz-simvol–խորհրդանիշ, müsbət-plyus–դրական, məcmuə-jurnal-ամսագիր, ժողովածու, təcrübə-praktika–փորձ, պրակտիկա, məlumat-informasiya–տեղեկություն, imkan-potensial–հնարավորություն, ներուժ, fəal-aktiv-գործուն և այլն: Օրինակ՝ *«Qeyd edim ki, ölkədə aksizli malların plastik kartlarla satışı üçün ölkə ərazisində yerləşən ticarət obyektlərində lazımi potensial mövcuddur.»*[110]*/ «Նշեմ, որ առկա է անհրաժեշտ ներուժ երկրում դրոշմանիշով ապրանքների՝ պլաստիկ քարտերով վաճառքի համար երկրի տարածքում տեղակայված առևտրի կետերում»: «Ukraynanın şərqində gedən döyüşlərə humanitar yardımın göstərilməsində buradakı azərbaycanlılar çox aktivdir”.»*[111] */ «Տեղի ադրբեջանցիները շատ ակտիվ են Ուկրաինայի արևելքում ընթացող մարտերում մարդասիրական աջակցություն ցուցաբերելու գործում»:*

Ադրբեջաներենում տերմինների կազմության գործում բավականին մեծ է ռուսերենի դերն ու ազդեցությունը: Ռուսերեն տերմինների զանգվածային հոսքն ադրբեջաներեն սկսվեց 20-րդ դարի 20-ական թթ.-ից: Աստիճանաբար ռուսերեն բառերը հաստատվեցին ադրբեջաներենի բառային կազմում և ընդգրկվեցին բառարաններում. օրինակ՝ kolxoz–կոլտնտեսություն, zavod-գործարան, rota–վաշտ, vzvod-դասակ, posyolok-ավան, nabor–հավաքածու, oçerk–ուրվագիծ, peçenye-թխվածքաբլիթ, pirojki–կարկանդակ և այլն: Այսօր ևս ռուսերենի կշիռը նշանակալի է ադրբեջաներենի տերմինային համակարգում, որն էլ իր արտացոլումն է գտնում պարբերականների էջերում:

[110] FazilMəmmədovsiqaretinvəspirtliiçkilərinkartlasatılmasınaaydınlıqgətirdi, 10.12.2015, http://news.lent.az/news/224734

[111] Jitomirvilayətinininvitse-qubernatoru: “Humanitaryardımıntəşkilindəənçoxazərbaycanlılaraktivdir”, 11 Fevral 2016, http://az.apa.az/news/415586

ԽՍՀՄ փլուզումից հետո մեծացան եվրոպական լեզուներից լեզվական անուղղակի փոխառություններ կատարելու հնարավորությունները: Եվրոպական երկրների հետ ավելի սերտ շփումների արդյունքում հարստացավ ադրբեջաներենի տերմինային բառապաշարը. օրինակ՝ sayt-կայք, fayl-փաստաթուղթ (էլեկտրոնային), disk-սկավառակ, xaotik-քաոսային, brifing-ճեպազրույց, media-մամուլ, valyuta-արտարժույթ, spiker-խոսնակ, totalitar-ամբողջատիրական, investisiya–ներդրում, legitim–լեգիտիմ, konsensus-փոխզիջում, փոխհամաձայնություն, embarqo-արգելք և այլն:

Ադրբեջաներենի տերմինային համակարգում ևս կարելի է հանդիպել երկու կամ ավելի տերմինի համաժամանակյա գործածության երևույթին. օրինակ՝ bankrot-iflas–սնանկացում, auksiyon-hərrac-աճուրդ, kvorum-yetersay–քվորում, jurnal-toplu–dərgi-məcmuə-ժողովածու և այլն: Օրինակ՝ *«Victoria Bekhemin öz toyunda taxdığı tac* auksiyona *çıxarılıb.»*[112] / *«Աճուրդի է հանվել Վիկտորիա Բեքհեմի այն թագը, որը նա կրել է իր հարսանիքին»: «Aktyorun serialda öz işi barədə dostuna yazdığı məktub da* hərracda *satılıb.»*[113] / *«Հեռուստասերիալում իր աշխատանքի համար դերասանի գրած նամակը ևս վաճառվել է աճուրդում»:*

1.5.3. Տերմիններն ըստ իմաստային հիմնական խմբերի. ստորև ներկայացնենք ադրբեջաներենի տերմինային համակարգից որոշ բովանդակային խմբեր, որտեղ առավել ակտիվ է զգացվում նոր տերմինների մուտքը: Այսպես, շուկայական հարաբերությունների զարգացման արդյունքում լեզու են ներթափանցում նոր մասնագիտական, տնտեսագիտական տերմիններ. օրինակ՝ dempinq-դեմպինգ, klirinq–քլիրինգ (զուտացում), lizinq–լիզինգ, marketinq–մարքեթինգ, շուկայագիտություն, menecer–մենեջեր, reytinq–վարկանիշ, reimport–վերաներմուծում, çarter-չարտեր և այլն: Ընդ որում, նմանատիպ տերմիններից շատերն անփոփոխ ձևով հայերենում ևս փոխառվել են օտար լեզուներից, մասնավորապես անգլերենից: Օրինակ՝ «*Göstərilmiş broker xidmətlərinin həcminə görə üçüncü yerdə 38,08 milyon manatla "Brokdil Az" qərarlaşıb.»*[114]

[112] Viktoriya Bekhemin tacı auksiyonda uduzdu, 09.12.2013, http://big.az/159061-Viktoriya_Bekhemin_taci_auksiyonda_uduzdu.html
[113] Brüs Linin paltosu hərracda satılıb, 10.08.2011, http://news.milli.az/interest/62336.html
[114] Azərbaycan brokerlərinin renkinqində dəyişikliklər olub, 11 Avqust 2014, http://az.trend.az/business/economy/2301931.html

/ «Անշարժ գույքի գործակալի ցուցաբերած ծառայությունների ծավալին համապատասխան որոշում է կայացվել երրորդ փեղում նշանակել «Բրոկդիլ Ազ»-ին՝ 38,08 միլիոն մանաթով»: «*Dünya məhşur marketinq alimi Professor Qari Armstronga 70-illik yubileyi ilə bağlı Azərbaycan Marketinq Cəmiyyəti tərəfindən təbrik məktubu ünvanlanıb.»*[115] */ «Ադրբեջանի Մարքեթինգի*[116] *միության կողմից շնորհավորական նամակ է ուղարկվել համաշխարհային ճանաչում ունեցող մարքեթինգի գծով գիտնական, պրոֆեսոր Գարի Արմստրոնգի 70-ամյա հոբելյանի առթիվ»:*

Պայմանավորված նավթագազային արդյունաբերության ճյուղում արտասահմանյան ընկերությունների ներկայությամբ՝ ոլորտում կիրառվող տերմինների ճնշող մեծամասնությունն օտարալեզու են, երբեմն նույնիսկ խնդիր է առաջանում անհրաժեշտ փաստաթղթերն ադրբեջաներեն թարգմանելիս: 1997 թ. լույս է տեսել «Նավթային և գազային արդյունաբերության ոլորտում գործածվող տեխնիկական տերմինների ռուսերեն-ադրբեջաներեն-անգլերեն բառարան»-ը[117], որում կարելի է գտնել մոտ 4600 մասնագիտական բառ:

Խորհրդային շրջանում ադրբեջաներենի ռազմական տերմինաբանությունը ձևավորվել է գերազանցապես ի հաշիվ ռուսերենի: Ադրբեջանի անկախացումից հետո փոխվեց վերջինիս զարգացման ընթացքը, և այն սկսեց հարստանալ նաև ի հաշիվ թյուրքական ծագման բառերի, որոնց մի մասը ժամանակին համարվում էր հնաբանություն: Այնուամենայնիվ, այսօր ևս ռազմական տերմինների մեջ կրկին մեծամասնություն են կազմում ռուսական բառերը՝ pulemyot-գնդացիր, avtomat-ինքնաձիգ, raket-հրթիռ, serjant-սերժանտ, praporshik (gizir)-ենթասպա և այլն: Ռազմական տերմինների մեջ քիչ չեն նաև միջազգային բառերը. օրինակ՝ general-գեներալ, mayor-մայոր, hospital-հոսպիտալ, diviziya-դիվիզիա, aparat-սարք, distansiya-տարածություն, հեռավորություն, agent-գործակալ և այլն: Օրինակ՝ *«Rumıniyada Birləşmiş Ştatların Avropada raketlərdən müdafiə sisteminin bir hissəsi olan obyektin tikintisi başlayıb.»*[118] */ «Ռումինիայում սկսվել է Եվրոպայում Միացյալ Նահանգների հրթիռներից*

[115] AMC Qari Armstronqu 70-illik yubileyi ilə təbrik etdi, http://marketing.az/index.php/az/azerbaycan-marketing-cemiyyeti/16-azerbaijan/yenilikler/press-relizler/249-armstronq-qari-gary-armstrong-amc-seventy-yetmis-yetmish-yubiley-holiday-birthday

[116] ծնթ.՝ հայերենում հանդիպում են և՛ մարկետինգ, և՛ մարքեթինգ հնչյունական տարբերակները:

[117] Abbasov M., Neft və qaz üzrə rusca-azərbaycanca-ingiliscə terminlər lüğəti, Bakı, Mütərcim 1999. 758 s.

[118] Rumıniyada ABŞ-ın Avropada raketlərdən müdafiə sisteminin bir hissəsi olan obyektin tikintisi başlayıb,

պաշտպանական համակարգի մի հատվածը համարվող օբյեկտի շինարարությունը»: «Hospitala daxil olan yaralılara ixtisaslaşdırılmış yardım göstəriləndən sonra müvafiq bölmələrə yerləşdirilib.»[119] */ «Մասնագիտական օգնություն ցուցաբերելուց հետո հոսպիտալ ընդունվող վիրավորներին տեղավորել են համապատասխան բաժանմունքներում»:*

Ադրբեջանի անկախացումից հետո ադրբեջաներենի տերմինային համակարգ մտած նոր բառերից հատկապես մեծ կշիռ ունեն դիվանագիտական տերմինները: Վերջիններս, ըստ իրենց բառիմաստային տարբերությունների, կարելի է բաժանել մի քանի խմբի՝ դիվանագիտական կոչման տերմիններ, կազմակերպությունների, միջազգային կառույցների անվանումներ, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ, միջազգային միջկառավարական կազմակերպություններ, առանձին փաստաթղթերի, պայմանագրերի անվանումներ և այլն. օրինակ, «Beynəlxalq qızıl xaç komitəsi-Միջազգային Կարմիր խաչի կազմակերպություն, Beynəlxalq mülki aviasiya təşkilatı- Միջազգային քաղաքացիական ավացիայի կազմակերպություն, BMT Elm və mədəniyyət təşkilatı-ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, BMT ixtisaslaşdırılmış qurumları-ՄԱԿ-ի մասնագիտացված կառույցներ, Britaniya birliyi - Բրիտանական խորհուրդ, diplomatik nümayəndə-դիվանագիտական ներկայացուցիչ, diplomatik attaşe-դիվանագիտական կցորդ, fəxri attaşe-պատվավոր կցորդ, persona non grata–անցանկալի անձ, protokol-արձանագրություն և այլն: Օրինակ՝ *«Modern.az xəbər verir ki, tədbirdə Müdafiə Nazirliyinin nümayəndəsi hərbi ataşe Kamil Quliyev iştirak edib.»*[120] */ «Մոդեռն.ազ»-ը տեղեկացնում է, որ միջոցառմանը մասնակցել է նաև պաշտպանության նախարարության ներկայացուցիչ, ռազմական կցորդ Քամիլ Գուլիևը»:*

Առանձին ուսումնասիրության առարկա են նաև քաղաքական, մշակութային, մարզական, կրոնական, բժշկական, իրավական և այլ ոլորտներին վերաբերող տերմինները, որոնց վերաբերյալ անդրադարձ կլինի մամուլի բառապաշարի բովանդակային քննության բաժնում:

[119] Azərbaycan Müdafiə Nazirliyi: Hospitalda olan yaralıların həyatına təhlükə yoxdur, 02.08.2014, http://arxiv.az/az/az.apa.az/9304171/Azerbaycan+Mudafie+Nazirliyi:+Hospitalda+olan+yaralilarin+heyatina+tehluke+yoxdur

[120] Deputat Sloveniyada Qələbə günü ilə bağlı keçirilən tədbirlərə qatılıb, 12.05.2015, http://modern.az/articles/77166/1/

Այսպիսով, անկախության տարիներից սկսած, ադրբեջաներենում նոր տերմինների ստեղծումն ընթացել է երկու ուղղությամբ՝ ադրբեջաներենի ներքին հնարավորությունների և այլ լեզուներից նոր բառեր փոխառելու հաշվին: Տարբեր ոլորտներ ընդգրկող տերմինները հիմնականում կիրառվում են ադրբեջաներենի հնչյունական, բառային, քերականական կանոններին համահունչ: Եթե 1920-ական թթ.-ից մինչև 1990-ական թթ. տերմինների ստեղծման գործում գերակա էին ռուսերենից ուղղակի և միջնորդավորված փոխառությունները, ապա 1990-ական թթ.-ից հետո ավելի մեծաթիվ տերմիններ են փոխառվում արևմտաեվրոպական լեզուներից, հատկապես՝ անգլերենից, սակայն ավելի սակավ՝ թուրքերենից: Զուգահեռաբար նկատվում է նոր փոխառյալ բառերն ադրբեջաներեն համարժեքներով փոխարինելու միտում. ամենատարբեր ոլորտներում ստեղծվող տերմինների արդյունավետ գործածությունը ԶԼՄ-ներում հանգեցնում է դրանց համընդհանուր կիրառություն ձեռք բերելուն: Ընդհանուր առմամբ, 20-րդ դարի վերջն ադրբեջաներենի տերմինաբանության պատմության մեջ կարելի է համարել լեցուն և ակտիվ շրջան[121]:

Այնուամենայնիվ, ադրբեջաներենի տերմինային համակարգը, դրա կառուցվածքը, բառիմաստային և քերականական առանձնահատկություններն ամբողջությամբ և բավարար մակարդակով ուսումնասիրված չեն: Չնայած ադրբեջաներենի փոխառյալ տերմինների՝ հնչյունական, քերականական, իմաստաբանական և քերականական մակարդակներում յուրացման գործընթացի շարունակականությանը՝ դրանց պատմական, լեզվաբանական ուղղության վերաբերյալ բազմաթիվ հարցեր դուրս են մնացել հետազոտությունների շրջանակներից:

[121] Əzizxan T., Dilimiz, mənəviyyatımız, Bakı, “Nurlan”, 2008, s. 167 .

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՆ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ

2.1. Ադրբեջաներենի բնիկ և փոխառյալ բառապաշարի առանձնահատկություններն ու գործածումը ադրբեջանական մամուլում

Բնիկ թյուրքական բառապաշարի ուսումնասիրությունը թյուրքագիտության խնդրահարույց ուղղություններից է և առ այսօր կարիք ունի համալիր, բազմակողմանի մոտեցման: Օղուզական լեզուների բառապաշարի հնագույն շերտերի համեմատական և պատմահամեմատական ուսումնասիրությունը նպաստում է բառակազմական հնացած ձևերի վերհանմանը, տարբեր ցեղակից լեզուների միջև տարատեսակ շփումների բացահայտմանը, դրանց արդյունքում լեզվական փոխազդեցությունների լուսաբանմանը և սույն լեզուների բառաֆոնդերում կատարվող տեղաշարժերի հստակեցմանը: Բնիկ համարվող բառերը պատկանում են տարբեր ժամանակաշրջաններին, ուստի հստակ կերպով խմբավորել բնիկ բառերը՝ դյուրին չէ:

Թյուրքական լեզուների համար ընդհանուր համարվող բազմաթիվ բառեր գործածվում են ադրբեջաներենում և այլ մերձավոր ցեղակից լեզուներում: Այդ բառերն ընդգրկում են թվականները, բայերի մեծ մասը, դերանունները, մարդու մարմնի մասերը ցույց տվող բառերը, գույները, մերձավոր ազգակցական կապերը մատնանշող բառերը, կենդանիների և բույսերի, բնության երևույթների անվանումները, առօրյա աշխատանքային գործունեությանն առնչվող բառերը և այլն՝[122] ata-հայր, ana-մայր, qardaş-եղբայր, baş-գլուխ, əl–ձեռք, qırmızı–կարմիր, ağ–սպիտակ, yaxşı-լավ, uzun-երկար, bir-մեկ, beş-հինգ, mən-ես, kim-ով, gəlmək-գալ, getmək-գնալ, yemək-ուտել, inək-կով, qoyun-ոչխար և այլն: Ինչ վերաբերում է միայն զուտ ադրբեջանական բառերին, ապա հարկ է նշել, որ ժամանակի ընթացքում, երբ ադրբեջաներենը սկսեց առանձնանալ մյուս թյուրքական լեզուներից և զարգանալ

[122] Buludxan X., Müasir Azərbaycan dilinin leksikologiyası, Bakı, «Nurlan» nəşriyyatı-2008, s. 28.

որպես ինքնուրույն լեզու, փոխվեց նաև ադրբեջաներենի բառապաշարի ընդհանուր պատկերը:

Այսպես կոչված, «զուտ» ադրբեջաներեն բառերը տարբերակելու համար ադրբեջանցի լեզվաբաններն առաջարկում են հիմնվել որոշ առանձնահատկությունների վրա, որոնք, ըստ էության, կարելի է դիտարկել նաև որպես բնիկ թյուրքական բառերին բնորոշ գծեր.

ա)բնիկ թյուրքական բառերը սովորաբար միավանկ են. օրինակ՝ il-տարի, el-երկիր և այլն,

բ)մի խումբ բառեր ավարտվում են -nc բաղաձայններով. օրինակ՝ dinc-հանգիստ, tunc–բրոնզ և այլն,

գ)որոշ բնիկ բառեր ավարտվում են -aq, -ar, -ıq, -ır վերջածանցներով՝ daraq–սանր, yaraq-զենք, çanaq–տարա, ipək–մետաքս, ələk–ցանց, qatar–գնացք, çəpər–ցանկապատ, qatıq –մածուն, çadır–վրան և այլն,

դ)բառարմատում ձայնավոր-բաղաձայն հերթականությունը բնորոշ է թյուրքական ծագման բառերին. օրինակ՝ sümük-ոսկոր, qulaq-ականջ, gəlin-հարս և այլն,

ե)թյուրքական ծագումով բառերում շեշտն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա՝ dodaq-շրթունք, yanaq-այտ, açıq-բաց և այլն,

զ)բնիկ բառերի բառասկզբում չի կիրառվում երկու բաղաձայն կողք կողքի, ինչպես օրինակ՝ plan –պլան, ծրագիր, snayper-դիպուկահար, strateqiya-ռազմավարություն, prospekt-պողոտա, proqram-ծրագիր և այլ փոխառյալ բառերում,

է)ադրբեջաներենում բացակայում են ğ բաղաձայնով և ı ձայնավորով սկսվող բառերը, իսկ, օրինակ՝ թուրքերենում՝ միայն ğ բաղաձայնով սկսվող բառերը,

ը)բնիկ բառերում սակավաթիվ են e, o և ö ձայնավորներով սկսվող բառերը:

Վերոնշյալ առանձնահատկություններով բառերն առատորեն գործածվում են ադրբեջանական լրատվամիջոցների (համապատասխան բառերը գրված են ոչ շեղատառ). օրինակ՝ *«Heç vaxt* dinc *əhalini və mülki obyektləri atəşə tutmur.»*[123] / *«Երբեք չի*

[123] Düşmənimiz erməni işğalçısıdır, dinc əhali yox, 12.02.2016, http://www.olke.az/olke-2/dusmenimiz-ermeni-isgalcisidir-dinc-ehali-yox-beyanat-47770

կրակում խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների վրա»: «Çünki süd çox isti olsa, qatıq *sulu olar.»*[124] */ «Եթե կաթը շատ տաք լինի, մածունը ջրալի կստացվի»:*

Մշտադիտարկելով ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների բառապաշարը՝ կարելի է պնդել, որ դրա հիմքը կազմում են փոխառյալ բառերը: Մամուլի տեքստերում կիրառվող բառերի զգալի մասը չեն համարվում բնիկ ադրբեջաներեն բառեր, ինչպես պնդում են ադրբեջանցի լեզվաբաններն ու լրագրողները: Միաժամանակ նկատվում է մամուլի լեզուն արաբապարսկական, ինչպես նաև ռուսերեն բառերից «մաքրելու» միտում՝ դրանք փորձելով փոխարինել բնիկ թյուրքական բառերով կամ գոնե եվրոպական լեզուներից վերցված նոր փոխառություններով: Կարելի է նկատել նաև թյուրքական հնաբանություններին կրկին կենդանություն հաղորդելու միտումը: Որպես բնիկ բառերի հիմնական «աղբյուր» ծառայում է օսմաներենը: Ժամանակակից թուրքերենում վաղուց հնաբանություն համարվող որոշ բառեր արհեստականորեն ներմուծվում են ադրբեջանական մամուլի լեզու, որտեղից էլ դրանք տարածում են գտնում ընթերցողների շրջանում:

Ստորև ներկայացնենք հակառակ պատկերը՝ առանձնահատկություններ, որոնց միջոցով հիմնականում կարելի է ենթադրել, որ տվյալ բառը բնիկ չէ.

ա)ձայնավորների ներդաշնակության կանոնից շեղված բառերը համարվում են փոխառյալ բառեր (հայտնի է, որ թյուրքական լեզուներին բնորոշ հնչյունական առանձնահատկություններից մեկն էլ բառի՝ հնչյունական առումով միակազմ լինելն է, որը կոչվում է ձայնավորների ներդաշնակություն).[125] օրինակ՝ opera-օպերա, balet-բալետ, futbol-ֆուտբոլ, ժողովրդավարություն, ilan–օձ, işıq-լույս inam-հավատ, quzey-հյուսիս, aşıq-աշուղ, məktub–նամակ, vəfa–հավատարմություն, ticarət-առևտուր և այլն: Հավելենք, որ խոսքը չի վերաբերում բաղադրյալ բառերին,

բ)բառում երկու իրար հաջորդող ձայնավորների առկայության պարագայում կարող ենք պնդել, որ այն փոխառյալ է, ընդ որում, կապ չունի ձայնավորների կրկնություն է, թե տարբեր ձայնավորներ են. օրինակ՝ saat-ժամ, ժամացույց, ailə-ընտանիք, radio-ռադիո, məişət-կենցաղ, müəllim-ուսուցիչ, müalicə-բուժում, maaş-

[124] Qatığın hazırlanması, 18.10.2013, http://kayzen.az/blog/kulinariya/13301/qat%C4%B1%C4%9F%C4%B1n-haz%C4%B1rlanmas%C4%B1.html
[125] Кононов А., Грамматика турецкого языка, изд. Академии Наук СССР, М.-Л., 1941, с. 20.

աշխատավարձ, inşaat-կառույց, zəif-թույլ, səadət-երջանկություն, mətbəə-տպագրություն և այլն,

գ)երբ միավանկ բառի վերջում հանդիպում ենք կրկնավոր բաղաձայնի, ապա կարող ենք պնդել, որ կրկին գործ ունենք փոխառյալ բառի հետ՝ həll–լուծում, sirr-գաղտնիք, həzz–հաճույք, fənn-առարկա, həqq-սահման, xətt-գիծ, hiss-զգացմունք, զգացողություն, tibb-բժշկություն, sirr-գաղտնիք և այլն: Եթե միավանկ բառի վերջում կրկին հանդիպում ենք երկու տարբեր բաղաձայնի, ապա դրանց մեծ մասը թյուրքական բառեր են՝ alt-տակ, üst–վրա, qənd-շաքար, kənd-գյուղ, türk-թյուրք, թուրք, bərk-ուժգին, սաստիկ և այլն՝ չհաշված որոշ բացառություններ. օրինակ՝ şərq-արևելք, qərb-արևմուտք, hərb-պատերազմ, fərq-տարբերություն և այլ բառեր,

դ)եթե որևէ բառի հնչյունական կազմում առկա է j բաղաձայնը, ապա այն փոխառյալ է՝ jaket-ժակետ, jüri-ժյուրի, jalüz-շերտավարագույր, müjdə-բարի լուր, əjdaha-վիշապ, jalə-ցող, janr–ժանր, qaraj-ավտոտնակ, jurnal-ամսագիր, montaj–մոնտաժ, կառուցապատում և այլն,

ե)նախկինում ապաթարցի նշանով գրվող բոլոր բառերը ևս համարվում են փոխառյալ. օրինակ՝ a(ʹ)rif-գիտակ, իմաստուն, a(ʹ)ləm-աշխարհ, bə(ʹ)zi -որոշ, m(ʹ)əna–իմաստ, e(ʹ)lan–հայտարարություն, mötə(ʹ)bər–հուսալի, xü(ʹ)susi–հատուկ, mu(ʹ)siqi-երաժշտություն, su(')fi-սուֆի, hə(')qiqət–իրականություն, պարտականություն, şe(')r-բանաստեղծություն, ə(ʹ)la-գերազանց, mə(ʹ)na–իմաստ, cü(ʹ)rət–քաջություն, sü(ʹ)ni-արհեստական և այլն: Վերոնշյալ բառերն ունեն արաբական ծագում, քանի որ արաբերենում գրվել են երկար ձայնավորով: Քանի որ ադրբեջաներենում երկար ձայնավորներ չկան, ձայնավորի երկար արտասանությունը պահպանելու համար կիրառվել է ապաթարցի նշանը,

զ)կրկնավոր y բաղաձայնով բառերը ևս փոխառյալ են՝ xasiyyət-բնույթ, əziyyət–տանջանք, ədəbiyyat-գրականություն, nəqliyyat-տրասպորտ, təyyarə-ինքնաթիռ և այլն:

Մեջբերումներ ներկայացնենք վերոնշյալ բառերով. *«Azərbaycan Dövlət* Akademik Opera və Balet *Teatrı fevral ayında maraqlı tamaşalarla çıxış edəcək.»*[126] / *«Ադրբեջանի Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը փետրվար ամսին հանդես կգա հետաքրքիր ներկայացումներով»: «Ancaq abituriyentlər* riyaziyyat, *fizika, kimya* fənnləri *üzrə aşağı nəticə əldə ediblər.»* [127]/ *«Միայն հանրահաշիվ, ֆիզիկա, քիմիա առարկաներից դիմորդները ստացել են հետևյալ արդյունքը»: «Bəs Azərbaycan öz* həqiqətini, haqqını *niyə göstərmir?»*[128] / *«Իսկ Ադրբեջանն ինչու՞ ցույց չի տալիս իր ճշմարտությունը, իր իրավունքը»:*

Հավելենք, որ բազմաթիվ փոխառություններ, մուտք գործելով ադրբեջաներենի հիմնական բառաֆոնդ, ժամանակի ընթացքում ենթարկվել են ադրբեջաներենի հնչյունական առանձնահատկությունների ազդեցությանը և կրել որոշակի հնչյունական փոփոխություններ:

2.2.Փոխառությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները

Յուրաքանչյուր կենդանի լեզվում բառապաշարի հարստացումը, որպես կանոն, տեղի է ունենում երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Բառապաշարի հարստացման ներքին ճանապարհն իրականացվում է՝ օգտագործելով տվյալ լեզվի հնարավորությունները: Ամեն լեզու ունի իր բառակազմական միջոցները, օրինաչափությունները և հնարավորությունները[129]: Բառապաշարի հարստացման արտաքին ճանապարհը լեզվի բառային կազմի համալրումն է՝ այլ լեզուներից կատարվող փոխառությունների հաշվին: Փոխառությունները լինում են երկու տեսակ՝ ուղղակի (անմիջական) և անուղղակի (միջնորդավորված)[130]: Ուղղակի է կոչվում փոխառության այն տեսակը, երբ այն կատարվում է տվյալ բառի սկզբնաղբյուր

[126] Akademik Opera və Balet Teatrı fevral repertuarını açıqlayıb, 02.02.2016, http://azertag.az/xeber/Akademik_Opera_ve_Balet_Teatri_fevral_repertuarini_achiqlayib-923604
[127] Abituriyentlər sınaq imtahanlarında bəzi fənnlərdən aşağı nəticə göstəriblər, 21.05.2011, http://modern.az/articles/5146/1/
[128] Həqiqət haqqında yalan, 23.03.2014, http://www.anspress.com/siyaset/23-03-2014/heqiqet-haqqinda-yalan-video
[129] Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 169:
[130] Жеребило Т., Словарь лингвистических терминов, Назрань: ООО «Пилигрим», 2010, с. 107.

համարվող լեզվից: Անուղղակի են այն փոխառությունները, որոնք կատարվում են ոչ թե սկզբնաղբյուրից, այլ միջնորդ լեզվից:

«Փոխառություն» հասկացությունը լեզվագիտական շրջանակներում ունի տարբեր սահմանումներ: Լեզուների փոխազդեցության հիմնախնդիրներով զբաղվող հեղինակների մեծ մասը փոխառությունը դիտարկում են որպես բնական գործընթաց լեզվի պատմական զարգացման ընթացքում[131]: Փոխառության արդյունքում լեզվում հայտնվում և ամրապնդվում է որևէ օտար լեզվի պատկանող տարր:

Փոխառությունը սովորաբար սահմանափակվում է բառապաշարով և բառակերտման ընդհանուր կաղապարներով: Փոխառությունը լեզվի պատմական փոփոխության և գործածության գործընթացի անբաժանելի մասն է, լեզվի բառային ֆոնդի հարստացման հիմնական աղբյուրներից մեկը: Փոխառության հիմքում ընկած են տնտեսական, քաղաքական, կրոնական, մշակութային գործոնները: Փոխառյալ բառապաշարն արտացոլում է էթնիկական կապերի փաստերը, լեզվական հանրույթների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային շփումները: Նոր բառերն այլ լեզուներից թափանցում են՝ պայմանավորված արտաքին և ներքին պատճառներով: Արտաքին պատճառներից են ժողովուրդների միջև սերտ քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային կապերը, առարկաների և հասկացությունների անվանումները և այլն: Ներքին պատճառներից առանձնացնենք լեզվական միջոցների տարբերակումը, նկարագրական, բազմատարր անվանումների փոխարինումը միաբառ, միատարր միջոցներով, օտար բառի գնահատումը որպես ավելի հեղինակավոր բառ, հասկացության հասարակական արդիականությունը և այլն:

Որպես կանոն, երբ լեզուն «հանդիպում» է, իր մոտ բացակայող որևէ օտար բառի, ի հայտ է գալիս երեք հնարավորություն. ա. փոխառել այդ բառը, բ.ստեղծել նոր բառ իր ձևույթների շրջանակներում օտար բառի օրինակով (պատճենման միջոցով բառաստեղծում), գ.անհրաժեշտ իմաստն արտահայտելու համար կիրառել արդեն գոյություն ունեցող բառը՝ դրան հաղորդելով նոր նշանակություն օտար բառի օրինակով (իմաստային պատճենում, բառիմաստի ընդլայնում): Եթե փոխառության դեպքում ուղղակի վերցվում է տվյալ լեզվի (փոխատու լեզու) պատրաստի բառը, ապա

[131] Байкова О., Заимствования в речи российских немцев Кировской области, с.16, http://www.lib.csu.ru/vch/093/15.pdf

պատճենումների ժամանակ վերցվում են բառի արտահայտած հասկացությունը և ներքին ձևը, այլ կերպ ասած՝ օտար բառը պարզապես թարգմանվում է փոխառու լեզվի բառերով: Պատճենվում են ոչ միայն բառերը, այլև բառակապակցությունները, դարձվածքները, առանձին արտահայտությունները: Փոխառությունների մեջ սովորաբար առանձնացվում է առանձին խումբ՝ այսպես կոչված ինտերնացիոնալիզմներ (միջազգային բառեր), որոնք մեծ տարածում են գտել աշխարհի տարբեր լեզուներում[132]:

Լեզվաբանների կողմից մի շարք փորձեր են կատարվել՝ խմբավորելու ադրբեջաներենում առկա փոխառություններն ըստ ծագման, և այդ փորձերը միմյանցից էականորեն չեն տարբերվում: Ադրբեջանցի լեզվաբան Ա.Գուրբանովը գրական լեզվում առկա փոխառյալ բառերը, ըստ իրենց աղբյուրի, խմբավորում է հետևյալ կերպ[133]՝ ա)արաբական ծագման բառեր, բ)պարսկերենից փոխառված բառեր, գ)ռուսական ծագում ունեցող բառեր, դ)եվրոպական լեզուներից փոխառված բառեր, ե)կովկասյան լեզուներից ներմուծված բառեր: Ուշագրավ է նաև ադրբեջանցի մերօրյա լեզվաբան Թ.Յագուբովայի՝ փոխառյալ բառերն ըստ իրենց ներթափանցման նպատակի խմբերի բաժանելու տարբերակը՝ ա)պարտադրաբար ներմուծված փոխառություններ (məcburi alınmalar), բ)«անհրաժեշտ» փոխառություններ (zəruri alınmalar): Երկու խմբին պատկանող փոխառություններն էլ առկա են ժամանակակից ադրբեջաներենում:

Սկսած 19-րդ դարի առաջին քառորդից եվրոպական լեզուներից փոխառված բառային միավորների մեծ մասն ադրբեջաներեն է մտել ռուսերենի միջոցով: Մասնավորապես, Դեմիրչիզադեն ընդգծում է, որ անգլերենից, լատիներենից, հունարենից մի շարք փոխառյալ բառեր թափանցել են ադրբեջաներեն հիմնականում ռուսերենի միջոցով: Ադրբեջանի անկախացումից հետո անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից և այլ ռոմանագերմանական լեզուներից դեպի ադրբեջաներեն բառերը սկսեցին գերազանցապես ներփաթանցել ուղղակիորեն[134]:

---

[132] Заимствонание, Лингвистика, Энциклопедия Кругосвет, http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/ZAIMSTVOVANIE.html

[133] Rzayeva V., MÜASİR MƏTBUATIN DİLİNDƏ TÜRKİZMLƏR, Tədqiqlər, 2008, № 1, AZƏRBAYCAN MİLLİ ELMLƏR AKADEMİYASI NƏSİMİ adına DİLÇİLİK İNSTİTUTU s.176.

[134] Xudiyev N., Azərbaycan ədəbi dili lüğət tərkibinin inkişafı (sovet dövrü). Dərs vəsaiti. Bakı, «Elm və təhsil», 2013, s.19.

Հայոց լեզվի պարագայում շատ ավելի բարդ է հստակ տարանջատել բնիկ ու փոխառյալ բառերը՝ միայն հաշվի առնելով մեր լեզվի հազարամյա պատմությունը և այդ ընթացքում բազմաթիվ մեռած ու մինչ օրս կենդանի լեզուների հետ ունեցած շփումները: Գիտնականները հաստատել են, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ հայտնի է գիտության մեջ *հնդեվրոպական* անունով: Գիտնականների միահամուռ ջանքերով հանարավորինս ապացուցվել է, որ հնդեվրոպական նախալեզուն պարունակում է «2223 արմատ բառ, որոնցից հայերենը պահպանել է 713 հատ»:[135] Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում հանդես է գալիս որպես ինքնուրույն ճյուղ: Խնդրո առարկա չհամարելով հայերենում առկա փոխառությունները՝ այնուամենայնիվ փաստենք, որ հայոց լեզուն իր բազմադարյա գոյության ընթացքում իր վրա կրել է մի շարք լեզուների ազդեցությունը, որոնցից են խալդերենը, վրացերենը, ասորերենը, պարսկերենը, արաբերենը, հունարենը, լատիներենը, փոքրասիական մի շարք լեզուներ, կովկասյան լեզուները, իսկ ավելի ուշ շրջանում՝ սլավոնական լեզուները և ներկայիս արևմտաեվրոպական լեզուները:

2.3.Արաբապարսկական փոխառություններ

Ադրբեջաներենի բառապաշարի ծանրակշիռ մասը կազմում են արաբերենից և պարսկերենից ներթափանցած բառերը: Կարելի է փաստել, որ դժվար է գտնել ադրբեջանական մերօրյա մամուլում մի նախադասություն, որտեղ արաբապարսկական փոխառյալ բառեր չլինեն: Արաբերեն բառերը հիմնականում մուտք են գործել թյուրքական լեզուներ, երբ արաբները սկսեցին նվաճել Միջին Ասիան, Կովկասը. օրինակ՝ adət–սովորություն, aləm-աշխարհ, տիեզերք, ağıl–խելք, bəyaz–սպիտակ, beyt–բեյթ (երկու տող), bəşər-մարդ, մարդկային ցեղ, bəsit–պարզ, vahid–միավոր, միասնական, varis–ժառանգորդ, vərəqə-թերթիկ, qalib–հաղթող, qələm-գրիչ, qadir–ունակ, qüdrət-ուժ, կարողություն, qəddar–դաժան և այլն: Կան նաև բազմաթիվ հատուկ անուններ՝ Mustafa, Əhməd, Qismət, Kamal, Əli, Hüseyn և այլն:

[135] Աճառյան Հ., նշվ. աշխ. էջ 32:

Մերօրյա ադրբեջանական էլեկտրոնային մամուլի լեզուն, մեղմ ասած, հագեցած է արաբերեն բառերով (համապատասխան բառերը գրված են ոչ շեղատառ), որը հստակ երևում է ստորև ներկայացված մեջբերումներում. *«Gənc yazıçı Kamran Qasımovun* "Mirassız varislər" *adlı* tarixi mövzuda sənədli *romanı* dərc *olunub.»*[136] */ «Տպագրվել է երիտասարդ գրող Քամրան Գասըմովի «Ժառանգներ առանց ժառանգության» անվանմամբ պատմական վավերագրական վեպը»: «O qeyd edib ki, "*İslam Dövləti"nin *terror* əməlləri *bütün* bəşəriyyət *üçün* ciddi təhlükə *qaynağıdır.»*[137]*/ «Նա նշել է, որ «Իսլամական պետության» ահաբեկչական գործողությունները լուրջ վտանգի աղբյուր են ամբողջ մարդկության համար»:*

Ժամանակակից ադրբեջաներենում առկա արաբական ծագման բառերը տարբերակելու նպատակով լեզվաբաններն առանձնացնում են որոշ լեզվական առանձնահատկություններ, որոնցից առանձնացնենք հիմնականները.

ա)ժամանակին ադրբեջաներենում ապաթարցի նշանով գրվող բառերն ունեն արաբական ծագում, սույն բառերն այժմ գրվում են առանց ապաթարցի, սակայն դրանցում պահպանվել է ձայնավորի երկար արտասանությունը. օրինակ՝ əla-գերազանց, məlum–հայտնի, elan–հայտարարություն, etimad–վստահություն, şöbə-բաժին, ücrət-վճարում, məsud-երջանիկ և այլն,

բ)բառավերջում «mal» բաղադրիչն ունեցող բառերը արաբական են՝ icmal–ակնարկ, ընդհանուր ամփոփում, ehtimal–հավանականություն, emal–մշակում, ehmal–զգույշ, şimal–հյուսիս և այլն,

գ)այն բառերը, որոնք ավարտվում են –iyyat, -iyyət, -iyyə, -at, -ət, -anə, -ən, -i, -vi վերջածանցներով, նույնպես գերազանցապես արաբական փոխառություններ են. օրինակ՝ əməliyyat-գործողություն, aidiyyət-պատկանելիություն, nəzəriyyə-տեսություն, bələdiyyə-համայնք, քաղաքային իշխանություն, varidat-եկամուտներ, əhvalat-–իրադարձություն, məlumat–տեղեկություն, vəkalət-լիազորություն, ismət–ամաչկոտություն, malikanə-կալվածք, arifanə-իմաստուն կերպով, qəflətən –հանկարծակի, ənənəvi -ավանդական և այլն,

[136] "Mirassız varislər"in imza günü, 13.02.2014, http://axar.az/news/8924

[137] "İslam Dövləti"nin terror əməlləri bütün bəşəriyyət üçün ciddi təhlükədir", http://www.aktual.az/dunya-5/islam-dovleti-nin-terror-emelleri-butun-beseriyyet-ucun-ciddi-tehlukedir-6662

դ)երկու բաղաձայնով ավարտվող բառերն ունեն արաբական ծագում՝ nəşr-հրատարակում, rəmz–խորհուրդ, նշան, rəsm–նկար, նկարչություն, sərf–ծախս, qəlb–սիրտ, ərz–ընթացք, əsr–դար, cild–հատոր, կազմ և այլն,

ե)«i» և «ü» ձայնավորներով սկսվող բառերի մեծ մասն արաբական փոխառություններ են. օրինակ՝ ibadət–երկրպագություն, ibarə-արտահայտություն, ianə-զոհաբերություն, ibtidai–նախնական, տարրական, idarə-կառավարում, izah-բացատրություն, imla–թելադրանք, inşa–կառույց, icad–գյուտ, ülfət-կապվածություն, ümman–օվկիանոս, üzvi–օրգանական, ünvan–հասցե, ünsür-տարր, üslüb–ոճ, մեթոդ, üfüq–հորիզոն և այլն,

զ)«a» և «i» ձայնավորների հաջորդականությամբ բառերը. օրինակ՝ aid–վերաբերվող, պատկանող, dair–վերաբերյալ, daim–միշտ, sait–ձայնավոր, şair–բանաստեղծ և այլն,

է)«a» և «ə» կրկնավոր ձայնավորներով բառերն ունեն արաբական ծագում. օրինակ՝ maaş–աշխատավարձ, saat–ժամ, ժամացույց, maarif–լուսավորություն, təəccüb-զարմանք, mənfəət–օգուտ, mətbəə-տպագրություն և այլն,

ը)«əa» և «üu» ձայնավորների հաջորդականություն ունեցող բառերը փոխառվել են արաբերենից, ինչպես օրինակ՝ səadət–երջանկություն, fəal-գործուն, ակտիվ, təam–կերակուր, şüur–գիտակցություն, vücud–մարմին, էություն, qürur-հպարտություն և այլ բառեր,

թ)բառեր, որտեղ առանձին վանկերում հանդիպում ենք «əia» և «əiə» ձայնավորների հաջորդականությանը, նույնպես արաբական ծագում ունեն՝ təbliğat–քարոզչություն, təşviqat–քարոզչություն, təchizat–սարքավորումներ, təxribat-դիվերսիա, səliqə-կոկիկ, vəzifə-պարտականություն, qərinə-35 տարվան հավասար ժամանակահատված, səhiyyə-առողջապահություն և այլն:

Այժմ ներկայացնենք հիշատակված բառերով կոնկրետ օրինակներ ժամանակակից ադրբեջանական մամուլից. *«Bildirib ki, bəzən qəzetin əməkdaşları* ezam *olunduqları rayonlarda* aidiyyət *orqanlar tərəfindən* ezamiyyət *və* rəqlərinə mühür *vurdurmaq problemi ilə üzləşiblər.»*[138]/ *«Հայտնել է, որ երբեմն թերթի*

[138] Layihəsi yekunlaşıb, 30.12.2009 , http://modern.az/az/news/2234/#gsc.tab=0

աշխատակիցներն իրենց գնացած շրջաններում բախվել են պատկան մարմինների կողմից գործուղման փեղեկանքը կնքելու խնդրին»: «Vəkil gənc fəallar *Bayram Məmmədov və Qiyas İbrahimovla görüşüb.»*[139] */ «Փաստաբանը հանդիպել է երիտասարդ ակտիվիստներ Բայրամ Մամեդովի և Գիյաս Իբրահիմովի հետ»:*

Ադրբեջաներենում զգալի շերտ են կազմում նաև իրանական ծագման բառերը: Թուրքերենում, օրինակ, իրանական բառերը որքան էլ շատ լինեն, այս առումով զիջում են ադրբեջաներենին: Պարսկերեն ծագման բառերը հիմնականում սկսել են ներթափանցել թյուրքական լեզուների բառապաշար սկսած 13-14-րդ դարերից: Իրանական մեծաքանակ փոխառյալ բառերը ժամանակի ընթացքում հարմարեցվել են ադրբեջաներենի հնչյունական համակարգին և հաստատվել լեզվում. օրինակ՝ atəş–կրակ, azar–հիվանդություն, aludə-կախվածություն, arzu–ցանկություն, böhtan–զրպարտանք, bənd–կապ, կետ, badə-գավաթ, bəndə-ստրուկ. ustad–վարպետ, xəstə-հիվանդ, şikəst–հաշմանդամ և այլն: Փոխառյալ պարսկերեն բառերը վերաբերում են կենցաղին, տարբեր գիտական ոլորտներին, հրապարակախոսությանը, գեղարվեստական ոճին և այլն: Հրապարակախոսության լեզուն հագեցած է պարսկական փոխառություններով: Իրանական ծագում ունեցող բառերը տարբերակելու համար ևս կան որոշ առանձնահատկություններ.

ա)բառավերջում «ng» բաղաձայններն ունեցող բառերը համարվում են իրանական փոխառություններ՝ ahəng–ներդաշնակություն, zəng–զանգ, qəşəng–գեղեցիկ, həng-ռիթմ, ləng–դանդաղ և այլն,

բ)«g, p, ç» բաղաձայններով սկսվող բառերի մի մասը, որպես կանոն, ունի իրանական ծագում. օրինակ՝ gənc-գեղեցիկ, gil–կավ, gilə-հատիկ, կաթիլ, pəri–փերի, pir–ծերունի, çarə-միջոց, çarx–ակ, çarpayı–մահճակալ, çadra–գլխաշոր, չադրա և այլն,

գ)հետևյալ ձևույթներով բառերն ադրբեջաներենում համարվում են պարսկական փոխառյալ բառեր՝ –zadə, -stan, -ıstan, -dan, -xana, -dar, -pərəst, -şünas, -keş, -kar, -baz, -xor, -gir, -gah, -ran, -vat (վերջիններիս մի մասը պարսկերենում բառարմատներ են, սակայն ադրբեջաներենում ստացել են վերջածանցի կարգավիճակ). օրինակ՝ şamdan-

[139] Elçin Sadıqov: Gənc fəallar möhkəmdir, məhkəmədə mübarizələrini davam etdirəcəklər, 24.05.2016, http://www.amerikaninsesi.org/a/elcin_sadiqov-musahibe/3343883.html

մոմակալ, əməkdar–վաստակավոր, fəndgir-ճարպիկ, kəfgir–քափքաշ, hökmran–տիրակալ, xırdavat–մանրածախ ապրանք և այլն,

դ) bi-, na- ժխտական նախածանց ունեցող բառերն ունեն իրանական ծագում. օրինակ՝ bitərəf-անկողմնակալ, bixəbər-անտեղյակ, narazı-դժգոհ, natamam–թերի և այլն:

Մեջբերումներ մամուլից՝ *«Evimizdən çıxanda elə hisslər yaşayıram, sanki* qəşəng *qızla görüşə gedirəm.»*[140] / *«Երբ տանից դուրս եմ գալիս, այնպիսի զգացողություն եմ ունենում, կարծես գնում եմ գեղեցիկ աղջկա հետ հանդիպման»: «Ey dünyadan* bixəbər bədbəxtlər, *cahillər...»*[141] / *«Հեյ, աշխարհից անտեղյակ դժբախտներ, տգետներ....»: «Azərbaycan və Pakistan arasında hərb sahədə əməkdaşlığın inkişafı məsələləri martın 1-də İlham Əliyevin Pakistanın Baş* Qərargah *rəisi Rəşad Mahmudla görüşündə müzakirə olunub.»*[142] / *«Մարտի 1-ին Իլհամ Ալիևի՝ Պակիստանի Գլխավոր շտաբի պետ Ռաշադ Մահմուդի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են Ադրբեջանի և Պակիստանի միջև ռազմական ոլորտում համագործակցության զարգացման հարցերը»:*

Արդի ադրբեջանական մամուլում որոշ իրանական ձևույթներ երբեմն փոխարինվում են այլ ածանցներով, ընդ որում՝ կրկին փոխառյալ: Այսպես, պարսկերենում որպես բառ, իսկ ադրբեջաներենում որպես վերջածանց գործածվող, մասնագիտություն մատնանշող –şünas-ի փոխարեն կիրառվում են ռուսական –log կամ թյուրքական –çı վերջածանցները, իսկ պարսկերենում ժխտական իմաստ արտահայտող -na նախածանցի փոխարեն՝ կրկին ժխտական ցուցիչ համարվող թյուրքական –sız վերջածանցը և այլն: Օրինակ՝ *«Azərbaycan Atatürk Mərkəzində Azər Turanın müəllifi olduğu "Xalid Səid Xocayev – şəhid* türkşünas" *kitabının təqdimatı keçirilib.»*[143] / *«Ադրբեջանի Աթաթուրքի կենտրոնում տեղի է ունեցել Ազար Թուրանի հեղինակած «Խալիդ Սաիդ Խոջաև - նահատակ թուրքագետ» գրքի շնորհանդեսը»: «Oktyabrın 8-də Moskvada yaşayan həmvətənimiz,* türkoloq *alim, şair, tərcüməçi Tofiq Məliklinin 70 illiyinə həsr*

[140] Az qalıram, sinəmə plakat yapışdıram..., 23.07.2015, https://www.meydan.tv/az/site/opinion/7069/
[141] Qənirə Paşayeva hirsləndi:, 02.03.2014, http://news.lent.az/news/157658
[142] İlham Əliyev Pakistan Baş Qərargah rəisini və AŞPA prezidentini qəbul edib, 01.03.2016, http://www.contact.az/docs/2016/Politics/030100148506az.htm#.VxkqEvmLTIU
[143] Xalid Səid Xocayev – şəhid türkşünas" kitabının təqdimatı keçirilib, 07.10.2009, http://az.apa.az/news/165435

edilmiş tədbir keçirilmişdir.»[144] */ «Հոկտեմբերի 8-ին միջոցառում է անցկացվել՝ նվիրված Մոսկվայում ապրող մեր հայրենակից, թուրքագետ-գիտնական, բանաստեղծ, թարգմանիչ Թոֆիգ Մալիքլիի 70-ամյակին»:*

Հարկ է նշել, որ որոշ գործոններ նպաստել են արաբերեն և պարսկերեն բառերի՝ թյուրքական լեզուների բառապաշար արագ ներթափանցմանը և ամրապնդմանը: Դրանցից նշենք, օրինակ, այն, որ գրական արաբերենով և պարսկերենով գրվել են բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններ և գիտական աշխատություններ, որոնք թարգմանվում էին ժամանակի թյուրքական լեզուներով: Ընդ որում, արաբերենը, լինելով իսլամի լեզուն, կրոնի հետ միասին իր հետ բերել է բազմաթիվ կրոնական բառեր, իսկ պարսկերենը համարվել է պոեզիայի և գրականության լեզու, և պարսկերեն ստեղծագործությունների թարգմանության արդյունքում ներմուծվել են բազմաթիվ պարսկերեն բառեր: Ժամանակակից ադրբեջաներենում հանդիպող կրոնի, կրթության, գիտության ոլորտի բառերի մեծ մասն արաբապարսկական ծագում ունեն՝ məktəb-դպրոց, kitab-գիրք, dərs -դաս, sinif-դասարան, tabaşir–կավիճ, elm-գիտություն, dəftər–տետր, peyğəmbər–մարգարե, məscid–մզկիթ, ibadət–պաշտամունք, axirət–հանդերձյալ կյանք, behişt-դրախտ և այլն:

Մերօրյա ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում արաբապարսկական բառերի գործածության ընդհանուր պատկերը հասկանալու համար կատարենք որոշ մեջբերումների ծագումնաբանական դիտարկում:

Օրինակ՝ «Azərbaycanda *qiyabi (*արաբ.) *şöbədə* (արաբ.) ən çox *tələbəsi* (արաբ.) olan *ali* [145] (արաբ.) *məktəblərin*[146] (արաբ.) adları açıqlanıb.»[147] */ «Պարզվել են Ադրբեջանում հեռակա բաժիններում ամենաշատ ուսանողներ ունեցող*

[144] Moskvada yaşayan görkəmli azərbaycanlı türkoloq alimin 70 illik yubileyi qeyd edilmişdir, 08.10.2012, http://azertag.az/xeber/Moskvada_yasayan_gorkemli_azerbaycanli_turkoloq_alimin_70_illik_yubileyi_qeyd_edilmisdir-188843

[145] Klassik Azərbaycan ədəbiyyatında işlənən Ərəb və fars sözləri lüğəti, Elmi red. Məmməd A., İki cilddə, İ cild, Bakı, "Şərq-Qərb"- 2005, s. 15.

[146] Ərəb və fars sözləri lüğəti (Azərbaycan klassik ədəbiyyatını oxumaq üçün), Elmi red. Məmməd A., İki cilddə, İİ cild, Bakı, "Şərq-Qərb"- 2005, s.36.

[147] Qiyabi şöbədə ən çox tələbəsi olan universitet hansıdır?, 19.07.2013, http://arxiv.az/az/news.milli.az/572444/Qiyabi+shobede+en+cox+telebesi+olan+universitet+hansidir

ԲՈՒՀ-երի անունները»: «Apple Amerika korporasiyasının *rəhbəri*[148] (պարսկ.) Tim Cook bütün varını *xeyriyyəçilik məqsədlərinə* (արաբ.) *sərf* (արաբ.) etmək *niyyətindədir* . (արաբ.)»[149] / *«Apple» ամերիկյան կորպորացիայի նախագահ Թիմ Քուկը մտադիր է ամբողջ ունեցվածքը ծախսել բարեգործական նպատակներով»:* «Azərbaycan *əhalisinin* (արաբ.) böyük *əksəriyyəti* (արաբ.) bilmir ki, *Qərbdə* (արաբ.) işi olan *adamın* (արաբ.) kreditə ən bahalı mallar alması çox *sadə* (պարսկ.) bir şey idi.»[150] / «*Ադրբեջանի բնակչության մեծ մասը տեղյակ չէ, որ արևմուտքում աշխատանք ունեցող մարդու՝ վարկով թանկարժեք ապրանք գնելը շատ պարզ երևույթ է»: «Onun sözlərinə görə, Dağlıq Qarabağ dondurulmuş* münaqişə (*արաբ.) deyil,* fəal *(արաբ.) münaqişədir və istənilən zaman genişmiqyaslı (արաբ.)* hərbi *(արաբ.) əməliyyatlar (արաբ.) başlaya bilər.»* [151] / *«Նրա խոսքերի համաձայն, ԼՂ սառեցված հակամարտություն չէ, ակտիվ հակամարտություն է, և ցանկացած ժամանակ կարող են սկսվել լայնածավալ ռազմական գործողություններ»:*

2.4. Ռուսական փոխառություններ

Ժամանակակից ադրբեջաներենի բառապաշարի զարգացման գործում, ինչպես նշվել է ատենախոսության նախորդ գլխում, ռուսերենն ունեցել է և ունի նշանակալի դեր ու կշիռ: Ռուսերենից ադրբեջաներեն բառերի փոխառման պատմությունը երբեմն ներկայացվում է առանձին փուլերով՝ ուշ միջնադարից մինչև մեր օրերը: Բնականաբար, ռուսերեն բառերի մեծ հոսքն ադրբեջաներեն սկսվել է ներկայիս Ադրբեջանի տարածքի մի մասի՝ ցարական Ռուսաստանի կազմում ընդգրկվելուց հետո և ակտիվացել խորհրդային կարգերի հաստատումից հետո: Ռուսերենը, լինելով ԽՍՀՄ պետական լեզու, մեծ դեր է ունեցել ադրբեջաներենի բառապաշարի հարստացման գործում: Խորհրդային տարիներին փոխառյալ ռուսերեն բառերն անմիջապես տեղ էին գտնում տպագիր մամուլի էջերում, այնուհետև

[148] Ərəb və fars sözləri lüğəti (Azərbaycan klasik ədəbiyyatını oxumaq üçün), Elmi red. Məmməd A., İki cilddə, İİ cild, Bakı, "Şərq-Qərb"- 2005, s.231.
[149] Apple şirkətin başçısı varını xeyriyyəçiliyə sərf edəcək, 27.03.2015, http://www.bbc.com/azeri/international/2015/03/150327_apple_cook_charity
[150] İqtisadi böhran: Azərbaycan və dünya, 04.04.2010, http://www.azadliq.org/content/article/2001030.html
[151] Qarabağda hərbi əməliyyatlar başlaya bilər, 25.11.2014, http://aznews.az/m/news.php?id=67850

աստիճանաբար անցնում էին հիմնական բառաֆոնդի կազմ: Այսօր էլ ադրբեջանական մամուլը հագեցած է ռուսերեն բառերով, սակայն դրանց թիվն աստիճանաբար նվազում է. պետական լեզվաքաղաքականության արդյունքում աշխատանքներ են տարվում փոխառյալ, այդ թվում՝ ռուսերեն բառերի քանակը նվազեցնելու ուղղությամբ՝ դրանք փորձելով փոխարինել թյուրքական բառերով կամ նոր եվրոպական փոխառություններով: Ռուսերեն բառերի մեծ ներհոսքի շարունակական գործընթացում իր դերն են ունեցել նախ՝ խորհրդային, ապա նաև ռուսական լրատվամիջոցները: Վերջիններս Ադրբեջանում բավական մեծ հեղինակություն են վայելում: Բացի այդ, ռուսական մամուլից կատարվող թարգմանություններն իրենց հետ ադրբեջաներեն են բերել բազմաթիվ ռուսերեն բառեր և տերմիններ:

Ադրբեջաներենում կան և՛ բազմաթիվ ռուսերենից կատարված ուղղակի փոխառություններ (stol-սեղան, stul-աթոռ, qəzet-թերթ, kurtka-բաճկոն, qorox-ոլոռ, qreçka-հնդկաձավար, papuqay-թութակ, podnos-սկուտեղ, rubaşka (saroçka)-վերնաշապիկ, sumka-պայուսակ, telexranitel-թիկնապահ, trimo-զարդասեղան, truba-խողովակ, tuperklyoz-թոքախտ, tvorog-կաթնաշոռ և այլն), և՛ ռուսերենի միջոցով ներմուծված բազմաթիվ փոխառյալ բառեր (radio-ռադիո, avtomobil-ավտոմեքենա, avtobus-ավտոբուս, elektronika-էլեկտրոնիկա, motosikl-մոտոցիկլետ, general-գեներալ, futbol-ֆուտբոլ, hospital-հոսպիտալ, atom-ատոմ, informasiya-ինֆորմացիա, dinamika-դինամիկա և այլն):

Մեծաքանակ ռուսերեն բառեր գործածական են հատկապես կենցաղում, որոնք արմատացած են մարդկանց առօրյա բառապաշարում: Ռուսերենից ադրբեջաներեն են մուտք գործել բառեր, որոնց դեմ «պայքարելը» շատ բարդ է, եթե նույնիսկ առկա են այդ բառերի ադրբեջաներեն համարժեքները: Նմանօրինակ բառերից են՝ zato-փոխարենը, okazıvayetsa-պարզվում է, neujeli-միթե, uje-արդեն, daje-նույնիսկ և այլն: Ճիշտ է, այս գործընթացը տեղ է գտել հիմնականում խոսակցական լեզվում, սակայն երբեմն ներթափանցում է հրապարակախոսության ոլորտ:

Ներկայացնենք ռուսաբանությունների կիրառման այլ օրինակներ ևս, որոնց ադրբեջաներեն համարժեքները նույնպես լայն գործածություն ունեն՝ otkritka-açıqça-բացիկ, bint-sarğı-վիրակապ, çaynik-qəhvədan-թեյնիկ, çernil-mürəkkəb-բարդ,

բաղադրյալ, fortoçka-nəfəslik-օդանցք, xolodelnik-soyuducu-սառնարան, qarçitsa-xardal-մանանեխ, morojna-dondurma-պաղպաղակ, morozilka-buzxana-սառցարան, ruçka-qələm-գրիչ, samolyot-təyyarə-ինքնաթիռ, uje-artıq-արդեն, kurtka-gödəkçə-բաճկոն, qreçka-qarabaşaq-հնդկաձավար, papuqay-tutuquşu-թութակ, podnos-altlıq-սկուտեղ, rubaşka-saroçka-köynək-վերնաշապիկ, sumka-çanta-պայուսակ և այլն: Ընդ որում, արդեն նորագույն շրջանի մամուլում համանման ռուսերեն բառերի գրեթե չենք հանդիպում, սակայն նույնը չենք կարող ասել առօրյա խոսակցական լեզվի բառապաշարի մասին, որտեղ ռուսերեն բառերն առայժմ ունեն գործածության լայն շրջանակ:

Ռուսերեն փոխառություններով հարուստ են ամենաբազմազան ոլորտներին վերաբերող մամուլի հրապարակումները՝ qəzet–թերթ, maşın–մեքենա, vedrə-դույլ, stol–սեղան, stul-աթոռ, stakən-բաժակ, peçenye–թխվածքաբլիթ, samovar–ինքնաեռ, bioloqiya–կենսաբանություն, sumka-պայուսակ, snayper-դիպուկահար, redaksiya–խմբագրություն, termin–տերմին, եզր, եզրույթ, universitet–համալսարան, kino-կինո, teatr–թատրոն, institut-ինստիտուտ, politika–քաղաքականություն, deputat–պատգամավոր, poeziya–պոեզիա, mexanizm–մեխանիզմ, trimo-զարդասեղան, truba–խողովակ, veşelka–կախիչ, zamok–կողպեք, zontik-անձրևանոց և այլն: Օրինակ՝ *«Sevgilisi ilə meyiti bir neçə "sumka"da daşıyıb.»*[152] */ «Իր սիրեցյալի հետ դիակը տարել է մի քանի «պայուսակով»:*

Ռուսերենից և ռուսերենի միջոցով ադրբեջաներեն ներթափանցած բառերն ունեն որոշ հնչյունական առանձնահատկություններ, որոնց մի մասը ներկայացնում ենք ստորև.

ա)երկու իրար հաջորդող բաղաձայնով սկսվող բառերը համարվում են ռուսական փոխառություններ. օրինակ՝ kran–վերամբարձ կռունկ, klub-ակումբ, traktor–տրակտոր, plan–պլան, նախագիծ, şlang–խողովակ, şrift–տառատեսակ և այլն,

բ)«re», «poli» «rep», «te» հնչյունական խմբերով սկսվող բառերը. օրինակ՝ realist–իրատես, redaksiya–խմբագրություն, poliklinika–պոլիկլինիկա, poligrafiya-տպագրություն, reportaj-հաղորդում, repertuar-երգացանկ, tezis-դրույթ, telefon–հեռախոս, teleskop–հեռադիտակ և այլն,

[152] Ərini öldürən qadının qonşuları, 03.10.2015, http://www.qafqazinfo.az/kriminal-5/sevgilisi-ile-meyiti-bir-nece-sumka-da-dasiyib-erini-olduren-qadinin-qonsulari-124691

գ)« f» բաղաձայնով սկսվող բառերի մեջ շատ են ռուսերեն կամ ռուսերենի միջոցով փոխառված բառերը. օրինակ՝ ferma-ֆերմա, fevral-փետրվար, feldşer-բուժեղբայր, folklor-բանահյուսություն, fond–հիմնադրամ, fonetika–հնչյունաբանություն, film-ֆիլմ, filial-մասնաճյուղ և այլն,

դ)« e» ձայնավորով սկսվող բառերի շարքում ևս շատ են ռուսերեն փոխառյալ բառերը. օրինակ՝ ekran-էկրան, ekskursiya–շրջայց, elastik–առաձգական, elektrik-էլեկտրական, epoxa-դարաշրջան, epizod-դրվագ, epidemiya–համաճարակ, eskiz-էսքիզ և այլն,

ե)եթե բառի մեջ առկա է «o» ձայնավորը, ապա լեզվաբանները հիմնականում պնդում են բառի՝ ռուսերենից կամ ռուսերենի միջոցով ներթափանցելու մասին. օրինակ՝ kino-կինո, kolxoz–կոլտնտեսություն, mikrob-մանրէ և այլն,

զ)«- iya», «-ist», «-izm», «-iv» վերջածանցով բառերը միանշանակ ունեն ռուսական կամ ռուսերենի միջոցով ադրբեջաներեն անցած փոխառության կարգավիճակ. օրինակ՝ zooloqiya–կենդանաբանություն, leksikoloqiya-բառագիտություն, mineraloqiya–հանքագիտություն, bioloqiya–կենսաբանություն, maşinist–մեքենավար, rasizm-ռասիզմ, faşizm–ֆաշիզմ, humanizm–մարդասիրություն, kollektiv–հավաքական, obyektiv–անաչառ և այլն:

Օրինակ՝ *«Klub rəhbərliyinə ona görə minnətdaram ki, mənim başqa* kluba *keçidimi anlayışla qarşıladı”.»*[153] */ «Երախտապարտ եմ ակումբի ղեկավարությանը, որ ըմբռնումով ընդունեցին իմ՝ այլ ակումբ տեղափոխվելու փաստը»:* «*Reportajda vurğulanır ki, bu bütünlükdə Avropa üçün alternativ mənbə rolunu oynayacaq.»*[154] */ «Թողարկման մեջ նշվում է, որ սա ամբողջությամբ այլընտրանքային աղբյուրի դեր է խաղալու Եվրոպայի համար»:* «Fond *birjası sayəsində istənilən şəxs qiymətli kağız sahibi ola bilər.»*[155] */ «Ֆոնդային բորսայի շնորհիվ յուրաքանչյուր ոք կարող է արժեթղթի սեփականատեր դառնալ»: «Səhiyyə*

[153] “Qəbələ”nin yeni müdafiəçisi: Bu klub həmişə ürəyimdə qalacaq, 04.02.2013, http://www.apasport.az/xeber_%E2%80%9CQ%C9%99b%C9%99l%C9%99%E2%80%9Dnin_yeni_m%C3%BCdafi%C9%99%C3%A7isi-_Bu_klub_h%C9%99mi%C5%9F%C9%99_%C3%BCr%C9%99yimd%C9%99_qalacaq_70347.html

[154] Euronews” TANAP-ın təməlinin qoyulması mərasimindən bəhs edib, 18.03.2015, http://matbuat.az/news/65912/euronews-tanap-in-temelinin-qoyulmasi-merasiminden-behs-edib.html

[155] Fond birjası necə işləyir?, 19.09.2015, http://news.milli.az/economy/370152.html

sistemində fırıldaqçılıq həyatımıza hər istiqamətdən toxunan bir epidemiyadır.» [156] / *«Առողջապահության համակարգում խաբեբայությունը բոլոր ուղղություններով մեր կյանքին հարող համաճարակ է»:*

2.5. Եվրոպական լեզուներից կատարված փոխառություններ

Ադրբեջաներենի բառային կազմում այսօր գնալով ավելանում են եվրոպական լեզուներից փոխառված բառերը, որոնք մինչև Ադրբեջանի անկախանալը լեզու էին թափանցում գերազանցապես ռուսերենի միջոցով: Այս շարքում տիրապետող են գիտատեխնիկական բառերն ու տերմինները: Կան նաև այլ ոլորտներին վերաբերող փոխառություններ՝ բժշկությանը, ռազմական ոլորտին, ադյունաբերությանը, տիեզերագիտությանը, բնապահպանությանը, հեռահաղորդակցությանը և այլն՝ monument–հուշարձան, absurd-անհեթեթ, kompyuter–համակարգիչ, media–մամուլ, faks–ֆաքս, fotoaparat-ֆոտոխցիկ, agent-գործակալ, akkreditə-հավատարմագրում, brifinq-ճեպազրույց, defakto-փաստացի, դե ֆակտո, embarqo-արգելք, sammit-գագաթաժողով, separatizm-անջատողականություն, status–կարգավիճակ, infrastruktur–ենթակառուցվածք, investisiya–ներդրում, terror-ահաբեկչություն, arqument-փաստարկ և այլն:

Եվրոպական լեզուներից փոխառությունների մեջ առաջատարն անգլերենն է: Այս երևույթը բնորոշ չէ միայն ադրբեջաներենին և ունի մի շարք հիմնավորումներ. նախ՝ անգլերենը համարվում է միջազգային լեզու և մեծ տարածում ունի ամբողջ աշխարհում: Ադրբեջանի հանրակրթական դպրոցների մեծ մասի համար այն համարվում է առաջին օտար լեզու[157]: Անգլերենին լավ տիրապետելը կարևոր նախապայման է բազմաթիվ ոլորտներում մրցունակ մասնագետ դառնալու համար: Վերջին տասնամյակներում գիտատեխնիկական մեծ նվաճումներն իրենց հետ ասպարեզ են բերել նոր հասկացություններ, նոր տեխնիկական միջոցներ, և

[156] Nəhəng dərman şirkəti 3 milyard dollar təzminat ödəyəcək, 03.07.2012, http://az.trend.az/azerbaijan/interestingly/2043127.html

[157] ծնթ. հարկ է նշել, որ Ադրբեջանում դեռևս պահպանվում են որոշ ռուսական դպրոցներ, որտեղ ամբողջ ուսումնական գործընթացն ընթանում է ռուսերենով: ԽՍՀՄ փլուզումից հետո դրանց մեծ մասը փակվեց, բայց Ադրբեջանում դեռևս կա «ռուսախոս բնակչություն» հասկացությունը:

արդյունքում ստեղծվել են այդ հասկացություններն արտահայտող հիմնականում անգլերեն նոր բառեր և տերմիններ: Վերջիններս աստիճանաբար մուտք են գործում նաև ադրբեջաներեն և առաջին հերթին հայտնվում են մամուլի էջերում: Կարևոր է նաև նշել, որ անգլալեզու լրատվամիջոցներից մշտապես օգտվում են ադրբեջանցի լրագրողները, ինչպես նաև՝ հասարակության մի հատվածը: Այստեղ ծանրակշիռ է համացանցում և մասնավորապես սոցիալական ցանցերում անգլերենի ունեցած գերակշիռ դերը: Անկախություն ձեռք բերելուց հետո ադրբեջաներեն ներթափանցած անգլերեն բառերը կարելի է պայմանականորեն խմբավորել՝ ըստ ոլորտների.

ա)գիտատեխնիկական բառեր և տերմիններ՝ internet-համացանց, veb-ցանց, domen-դոմեն, ոլորտ, noutbuk-թեթև, շարժական համակարգիչ, printer-տպիչ, skaner-տեսածրիչ, server-սերվեր, modem-մոդուլավորող և ապամոդուլավորող սարք, fayl-համակարգչային փաստաթուղթ, sayt-կայք, interfeys-ծրագրահամակարգիչ, drayver-սարքավար, çat-համակարգչային զրույց, xaker-համակարգչային անվտանգության մասնագետ, kseroks-պատճեն և այլն: Օրինակ՝ *«AzərTAc xəbər verir ki, sayta yeni funksional bölmələr əlavə edilmiş və ən son internet texnologiyaları əsasında dizayn hazırlanıb».*[158] */ «Ազերտաջ»-ը տեղեկացնում է, որ կայքում ավելացվել են նոր գործառութային բաժիններ և կատարվել է ձևավորում համացանցային նորագույն տեխնոլոգիայով»: «Təcili Kseroks Aparatları Satılır»*[159] */ «Շտապ վաճառվում են պատճենահանման սարքեր»:*

բ)տնտեսագիտական բառեր և տերմիններ՝ biznes-vumen-գործարար կին, diler-դիլեր, գործակալ, միջնորդ, distributer–մատակարար, market-meyker-շուկա ստեղծող, menecer-կառավարիչ, promouter-հովանավոր, շուկա խթանող, treyder-առևտրական, գործարք կատարող, holdinq-ունեցվածք, հողամաս, բաժնեմաս, trast-վստահություն, monitorinq-վերահսկում, դիտարկում, tender-առաջարկ, հայտ, գումարի կամ ծառայության առաջարկ, qrant-համաձայնություն, դրամաշնորհ, marketinq-շուկայաբանություն, menecment-կառավարում, brend-ապրանքանիշ, trend-գերակշռող միտում կամ ուղղություն և այլն: Օրինակ՝ «Dilerlərin *müraciətindən aydın olurdu ki,*

[158] PREZİDENT İLHAM ƏLİYEVİN SAYTI DƏYİŞDİ,http://www.mediaforum.az/az/2010/07/05/PREZ%C4%B0DENT-%C4%B0LHAM-%C6%8FL%C4%B0YEV%C4%B0N-SAYTI-D%C6%8FY%C4%B0%C5%9ED%C4%B0-032847161c.html#.Vl1o-NLhCt8

[159] http://elan-az.com/elan/tecili-kseroks-aparatlari satilir_5311886cfb838f7c3f00034c_512f80ab6803fad60500000f/

Azərbaycanın ən iri mobil *rabitə* operatoru *"Azercell"də uzun illərdir ki,* monopoliya *hökm sürür».*[160]/ *«Դիլլերների դիմումից պարզ է դառնում, որ Ադրբեջանի ամենախոշոր բջջային հաղորդակցության օպերատոր «Ազերսել»-ում երկար տարիներ է, ինչ մենաշնորհ է տիրում»: «Keith'ə (1960) görə* marketinq, *bütün şirkət boyunca nüfuz edir».*[161]/ *«Մարքեթինգը, համաձայն Քեյթի, ամբողջությամբ ներթափանցում է ընկերության մեջ»:*

գ)քաղաքական բառեր և տերմիններ՝ spiker-խոսնակ, ombudsman-մարդու իրավունքների պաշտպան, impiçment-պարսավանք, մեղադրանք, sammit-գագաթնաժողով և այլն: Օրինակ՝ *«Azərbaycanın xarici işlər naziri Elmar Məmmədyarov Slovakiyaya rəsmi səfəri çərçivəsində Slovakiya* parlamenti spikerinin *müavini Yan Figel ilə görüşüb.»*[162] / *«Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը Սլովակիա պաշտոնական այցի շրջանակներում հանդիպել է Սլովակիայի խորհրդարանի փոխխոսնակ Յան Ֆիգելի հետ»:*

դ)մարզական բառապաշարից բառեր՝ xokkey-հոկեյ, taym-խաղակես, start-սկիզբ, finiş-ավարտ, transfer-փոխանցում, bayker-հեծանվորդ, մոտոցիկլավար, bodibilder-բոդիբիլդեր, մարմնակերտիկ և այլն: Օրինակ՝ *«Lakin idmançımız* finiş *xəttinə çata bilməyib. Start xəttinə çıxan 66 velosipedçidən 61-i* finişə *çatıb.»*[163] / *«Մեր մարզիկը, սակայն, չի կարողացել հասնել վերջնագիծ: Սկզբնագիծ դուրս եկող 66 հեծանվորդից 61-ը հասել են վերջնագիծ»:*

ե)մշակութային բառեր՝ şou-biznes-շոու-բիզնես, repper-ռեփեր, klipmeyker-տեսահոլովակ պատրաստող, xedlayner-աստղ, şoumen-հանդես կազմակերպող, հանդիսավար, remiks-երաժշտության վերամշակում, klip-հոլովակ, sikvel-շարունակություն գրականության մեջ կամ կինոֆիլմում, blokbaster-ժողովրդավարություն վայելող, ազդեցիկ կամ ֆինանսական հաջողություն ունեցող, leybl-պիտակ, piar-գովազդ, հանրային կապեր, sloqan-կարգախոս, şop-maqazin-

[160] Alt distribüterlər "Azercell"i baykot edir..?, 2015, http://azinforum.az/alt-distributerl%C9%99r-azercelli-baykot-edir/
[161] Marketinqin İnkişaf Prosesi,http://sahinekber.com/2011/11/14/marketinqin-inkisaf-prosesi/
[162] Elmar Məmmədyarov Slovakiya parlamentinin vitse-spikeri ilə görüşüb, 26.01.2015, http://metbuat.az/news/20857/elmar-memmedyarov-slovakiya-parlamentinin-vitse-spikeri-ile-.html
[163] Yelena Çalıx finişə çatmadı, 29.07.2012, http://www.apasport.az/xeber_Yelena_%C3%87al%C4%B1x_fini%C5%9F%C9%99_%C3%A7atmad%C4%B1_-_YEN%C4%B0L%C6%8FN%C4%B0B_62133.html

գնումների ամսագիր, prezentasiya-ներկայացում, շնորհանդես, reytinq-գնահատական, արժեք, վարկանիշ, sponsor-հովանավոր և այլն: Օրինակ՝ *«Konsertin* sponsorları *bu vəsaiti ödəyəcəklər.»*[164] */ «Համերգի հովանավորները վճարելու են այս միջոցները»:*

զ)կենցաղային և սպասարկման ոլորտի բառեր՝ şopping-գնումներ, pampers-տակդիրի ապրանքանիշ, տակդիր, supermarket-հանրախանութ, minimarket-փոքր խանութ, փոքր շուկա և այլն: Օրինակ՝ *«Bu gün Bakıda iyunun 9-dan 29-dək İstanbulda keçiriləcək Istanbul* Şopping Festival *ilə əlaqədar mətbuat konfransı təşkil olunub.»* [165]*/ «Այսօր Բաքվում տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ նվիրված հունիսի 9-ից 29-ը Սթամբուլում անցկացվելիք «Գնումների փառատոն»-ին»:*

Վերոշարադրյալ բառերի մեծամասնությունն առայժմ բառարաններում ընդգրկված չէ, բայց մամուլի լեզվում նման բառային-տերմինային միավորները կիրառվում են որպես նորաբանություններ:

2.6. Թուրքաբանություններ

Ադրբեջանցի որոշ լեզվաբաններ չեն առանձնացնում թուրքական փոխառությունները՝ դրանք համարելով բուն թյուրքական բառեր: Մինչդեռ լեզվաբանների մյուս մասը հանդես է գալիս ազգակից լեզուներից փոխառվող բառերն օտար արտահայտություններ համարելու օգտին: Ադրբեջանի անկախացումից հետո Թուրքիայի հետ բոլոր ասպարեզներում կապերի ու շփումների ընդլայնման և տարբեր ոլորտներում առանձին մասնագետների համատեղ գործունեության արդյունքում ադրբեջաներենում սկսվեց նոր լեզվական գործընթաց: Թուրքերեն բառերի մեծ հոսքին նպաստող գործոններից առանձնացնենք ադրբեջանցիների շրջանում թուրքական մամուլի հանդեպ մեծ հետաքրքրությունը: Հղում կատարելով որևէ թուրքական էլեկտրոնային լրատվամիջոցի՝ հաճախ հրապարակման հեղինակը հարկ չի համարում նույնիսկ թարգմանելու որոշ թուրքերեն բառեր և դրանք իր ներկայացրած տեքստում թողնում է անփոփոխ՝ համարելով, որ թուրքերեն բառերը հասկանալի են ադրբեջանական հասարակության համար: Օրինակ՝ cumhuriyet–

[164] Elzaya 150 000 manat xərcləyən sponsor kimdir?, 12.02.2014, http://publika.az/p/5716
[165] Bakıda İstanbul Şopping Festivalla əlaqədar mətbuat konfransı keçirilib, 15.05.2012, http://m.apa.az/az/news/260370

հանրապետություն, cumhurbaşkanı–հանրապետության նախագահ, başkan–նախագահ, anayasa-սահմանադրություն և այլ նմանատիպ թուրքերեն բառեր կարելի է երբեմն տեսնել այն ադրբեջանական հոդվածներում, որտեղ հիմնական թեման առնչվում է Թուրքիային: Օրինակ՝ *«Bayraq və* Anayasa *günləri arasında məsafənin bu qədər qısa olması təsadüf kimi görünsə də...»*[166] / *«Եթե Դրոշի և Սահմանադրության օրերի միջև այսքան կարճ ժամանակահատվածը դիտարկվի որպես պատահականություն...»:*

Թուրքերեն բառերի՝ ադրբեջանական լրատվամիջոցներ թափանցելու այլընտրանքային ուղիներից նշենք նաև թուրքական ֆիլմերն ու բազմասերիանոց հեռուստանովելները, որոնք երբեմն ցուցադրվում են ադրբեջանական հեռուստաալիքներով՝ առանց դրանք ադրբեջաներեն թարգմանելու: Բացի այդ, առանձնացնենք սոցիալական ցանցերը, համացանցային ֆորումները, որտեղ թուրքերն ու ադրբեջանցիները բավականին ազատ և ակտիվ շփվում են: Այս և մի քանի այլ գործոնների արդյունքում թուրքաբանությունները հայտնվում են նաև ադրբեջանական մամուլում: Այսպես, օրինակ՝ hadisə-իրադարձություն բառի փոխարեն կիրառվում է թուրքերեն, olay բառը, (օրինակ՝ *«Rusiyada yaşanılan şok* olaylar *Azərbaycanda təkrarlanmayacaq»*.[167] / *«Ռուսաստանում տեղի ունեցող ցնցումները չեն կրկնվելու Ադրբեջանում»*), müstəqillik-անկախություն բառի փոխարեն՝ bağımsızlıq, məlumat-տեղեկություն բառի փոխարեն՝ թուրքերեն bilgi, əlaqə-կապ, հարաբերություն բառի փոխարեն՝ ilişgi, İzah etmək/şərh etmək բայի փոխարեն գործածում են açıqlamaq, izah և şərh բառերի փոխարեն açıqlama կամ açıqlanma տարբերակները, əhəmiyyət-նշանակություն, կարևորություն բառի փոխարեն՝ önəm, (օրինակ՝ *«Bu görüş mənim üçün xüsusi* önəm *daşıyır»*.[168] / *«Այս հանդիպումն ինձ համար ունի հատուկ նշանակություն»*), nəşr etmək/çap etmək-տպել, հրատարակել բայերի փոխարեն նախընտրում են թուրքերեն yayınlamaq/yayımlamaq ձևերը, iclas-նիստ բառի փոխարեն գործածում են նաև toplantı թուրքերեն համարժեքը, vəziyyət-իրավիճակ, դրություն գոյականի փոխարեն հաճախ կարելի է հանդիպել durum տարբերակին, xüsusi-հատուկ,

[166] Mustafa F., Bayraq ucadır, ya Anayasa?, 11.11.2012, http://news.lent.az/news/107872
[167] Rusiyada yaşanılan şok olaylar Azərbaycanda təkrarlanmayacaq", http://www.dia.az/8/61194-rusiyada-yashanilan-shok-olaylar-azerbaycanda-tekrarlanmayacaq.html
[168] Azay Quliyev: "Bu görüş mənim üçün xüsusi önəm daşıyır", http://news.lent.az/news/218744,

մասնավոր բառի փոխարեն՝ özəl բառը, mənbə-աղբյուր բառի փոխարեն կիրառվում է qaynaq ձևը՝ թուրքերեն kaynak հնչյունական տարբերակի փոփոխված ձևը (օրինակ՝ *«Elm və təhsil» nəşriyyatında "Azərbaycan ədəbiyyatının əlyazma* qaynaqları*" kitabının ikinci cildi çapdan çıxıb.»*[169] */ «Գիտություն և կրթություն» հրատարակչությունում տպագրվել է «Ադրբեջանական գրականության ձեռագիր աղբյուրները» գրքի երկրորդ հատորը»)*, rəhbər-առաջնորդ, ղեկավար բառի փոխարեն կիրառվել է öndər բառը և այլն:

Իրանական şagird-աշակերտ և արաբական tələbə-ուսանող բառերը, կարելի է պնդել, որ մենաշնորհ ունեն իրենց գործածության մեջ, սակայն վերջին շրջանում ադրբեջանական մամուլի էջերում կարող է հանդիպել նաև թուրքերեն öyrənci համարժեքը, որը, սակայն, առայժմ չի կարողանում ձեռք բերել համընդհանուր գործածություն: Օրինակ՝ *«İzzət Quluzadə İran Azərbaycanında* öyrənci *fəaliyyətləri haqda danışıb.»*[170] */ «Իսաեթ Գուլուզադեն խոսել է Իրանի Ադրբեջանում ուսանողների գործունեության մասին»:*

Ժամանակակից մամուլում հանդիպող թուրքաբանություններից առանձնացնենք նաև say-թիվ բառը: Ոչ վաղ անցյալում ադրբեջաներենում գործածում էին «beş nömrəli xəstəxana»-«համար 5 հիվանդանոց», «88 nömrəli məktəb»-«թիվ 88 դպրոց», «qəzetin 31 mart tarixli nömrəsi»-«թերթի մարտի 31-ի համարը» և այլ արտահայտություններ, իսկ այսօր նույն արտահայտությունները կիրառում են հետևյալ կառույցների օգնությամբ՝ «beş saylı xəstəxana, 88 saylı məktəb, qəzetin 31 mart tarixli sayı»: Ադրբեջանում փորձում են «nömrə» բառը փոխարինել «say» բառով, սակայն, օրինակ, հետևյալ կառույցներում դա հնարավոր չէ, քանի որ բառի իմաստն ամբողջությամբ աղավաղվում է: Այսպես, «telefonunuzun nömrəsini unutmuşam»-«ձեր հեռախոսահամարը մոռացել եմ» արտահայտությունը ճիշտ չէ փոխարինել «telefonunuzun sayını unutmuşam» արտահայտությամբ: Հարկ է նշել, որ թուրքերենում օգտագործվում է նաև «numara» հնչյունական ձևը:

[169] Azərbaycan ədəbiyyatının əlyazma qaynaqları, http://azertag.az/xeber/Azerbaycan_edebiyyatinin_elyazma_qaynaqlari-805733

[170] Azərbaycan bilimyurdlarında türk dilinin İranda rəsmi olması istəyi yayğın və ümumidir", 17.07.2015, http://www.amerikaninsesi.org/a/2866651.html

Վերջին մի քանի տարում մամուլում համեմատաբար հաճախ հանդիպող թուրքերեն բառերից շատերն արդեն իսկ կրել են ադրբեջաներենի հնչյունական ազդեցությունը և գործածվում են թուրքերենից տարբերվող հնչյունական կազմով gündəm (թուրք.՝gündem)-օրակարգ, առօրյա, sonuc (թուրք.՝ sonuç)-արդյունք, görəv (թուրք.՝ görev)-պարտականություն, sıcaq (թուրք.՝sıcak)-տաք, gələnək (թուրք.՝ gelenek)-ավանդույթ, bəkləmək (թուրք.՝ beklemek)-սպասել, yapmaq (թուրք.՝ yapmak)-անել, կատարել և այլն:

Ադրբեջանական լեզվագիտական շրջանակներում տարածում գտած, այսպես կոչված, «պարտադրված» թուրքերեն փոխառություններից առանձնացնենք հետևյալ բառերը, որոնք, ադրբեջանցի մասնագետների պնդմամբ, կարող են փոխարինվել ադրբեջաներեն համարժեքներով. օրինակ՝ arkadaş (թուրք.) բառը՝ dost, yoldaş-ընկեր բառով, aydın (թուրք.) բառը՝ ziyalı-մտավորական բառով, başqan (թուրք.)՝ rəhbər-ղեկավար, առանջնորդ, bəlirlənmək (թուրք.)՝ müəyyənləşdirmək-որոշել, որոշակիացնել, çözmək (թուրք.) բառը՝ həll etmək-լուծել բառով, düzənləmək (թուրք.) բառը՝ təşkil etmək-կազմակերպել բառով, olay (թուրք.) բառը՝ hadisə-իրադարձություն բառով, öndər (թուրք.) բառը՝ başçı-առաջնորդ բառով, önəm (թուրք.) բառը՝ vacib-կարևորություն բառով, uçaq (թուրք.) բառը՝ təyyarə-ինքնաթիռ բառով և այլն: Օրինակ՝ *«Olay uçaq Xarkovda havaya qalxandan 15 dəqiqə sonra başlamışdı.»*[171] / *«Դեպքը սկսվել է Խարկովում օդ բարձրանալուց 15 րոպե հետո»: «Yeni Azərbaycan Partiyası (YAP) Yevlax rayon təşkilatı ulu* öndər *Heydər Əliyevin anadan olmasının 93-cü ildönümü ilə bağlı tədbirlərə start verib.»*[172] / *«Նոր Ադրբեջան» կուսակցության Յեվլախի շրջանի կազմակերպությունը փվել է մեծ առաջնորդ Հեյդար Ալիևի ծննդյան 93 ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը»:*

Թուրքերենի դերն ադրբեջաներենի բառապաշարի հարստացման գործում ակնհայտ է նաև որպես եվրոպական լեզուներից փոխառված բառերի միջնորդ լեզու: Ժամանակի ընթացքում բազմաթիվ հնդեվրոպական բառեր և տերմիններ արագորեն

[171] Xarkov-İstanbul hava gəmisinin Soçiyə qaçırılma cəhdi bu mövzunu yenidən aktuallaşdırdı, 09.02.2014, http://politika.az/karusel/print:page,1,349-dunyada-meshhur-teyyare-qachirmalari.html

[172] Ulu öndər Heydər Əliyevin Azərbaycan mədəniyyətinin inkişafında misilsiz xidmətləri xatırlanıb, 23.04.2015, http://azertag.az/xeber/Ulu_onder_Heyder_Aliyevin_Azerbaycan_medeniyyetinin_inkisafinda_misilsiz_xidmetleri_xatirlanib-945393

ներթափանցեցին ադրբեջանական մամուլ թուրքերենի միջոցով[173]. օրինակ՝ mentalitet–մենթալիտետ, դիմագիծ, aura–միջավայր, konsern–կոնցեռն, terminal–տերմինալ, konsolidasiya–համախմբում, ombudsman-մարդու իրավունքների պաշտպան, sammit-գագաթնաժողով, konstruktiv-կառուցողական, legitim–լեգիտիմ, prezentasiya–շնորհանդես, ներկայացում և այլն: Օրինակ՝ *«Parisdə Azərbaycan və Ermənistan prezidentlərinin görüşü* konstruktiv, *faydalı və səmimi keçib».*[174]-*«Փարիզում Ադրբեջանի և Հայաստանի նախագահների հանդիպումը եղել է կառուցողական, օգտակար և անկեղծ»: «Daha sonra Səfa Mirzəyev bildirdi ki, hal-hazırda* ombudsmanın *vəzifəsini onun aparatı icra edir.»* [175] */ «Ավելի ուշ Սեֆա Միրզաևը տեղեկացրեց, որ ներկայումս մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունը կատարում է իր աշխատակազմը»:*

2.7. Փոխառյալ հապավումներ

Հապավումը «բաղադրյալ անվանումների և տերմինների կրճատված մասերի միավորումով բաղադրություններ կազմելու եղանակն է»[176]: Բառերի հապավված մասերը, որոնցով կազմվում են հապավվական բաղադրություններ, կոչվում են հապավույթներ: Հապավույթները լինում են տառային, բառամասային կամ վանկային և հատվածական: Լեզվաբանական գրականության մեջ հաճախ հապավումներն կոչում են «աբրեվիատուրա» (abreviatura*)* տերմինով: Ադրբեջաներենի «անհրաժեշտ» փոխառությունների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում հապավումները, որոնք վերաբերում են տարբեր ոլորտների՝ քաղաքականից մինչև սպորտային ու մշակութային:

Փոխառյալ հապավումների մի մասն ադրբեջաներեն է թափանցել ռուսերենից, մյուս մասն էլ՝ եվրոպական լեզուներից անփոփոխ ձևով, ինչպես դրանք գործածվում են փոխատու լեզվում: Եթե անգամ առկա են դրանց՝ ադրբեջաներենով թարգմանված տարբերակները, ապա դրանք չեն գործածվում որպես հապավումներ,

[173] Cahid İsmayıloğlu ,Türkiyə və Azərbaycan münasibətlərində dil amili,http://www.cahid.info/archives/1439
[174] Nalbandyan: Prezidentlərin Paris görüşü konstruktiv və faydalı olub,http://www.olke.az/siyaset-1/nalbandyan-prezidentlerin-paris-gorusu-konstruktiv-ve-faydali-olub-7141
[175]Azərbaycanda Ombudsman kimdir? 09.07.2009, http://www.bbc.com/azeri/news/story/2009/07/printable/090709_omdusman.shtml
[176] Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 301:

այլ կիրառվում են միայն ամբողջական բառերով, այն էլ՝ շատ հազվադեպ ու մամուլում. օրինակ՝ NATO (անգլ.՝ North Atlantic Treaty Organisation, ադրբ.՝ Şimali Atlantika Alyansı), YUNESKO (անգլ.՝ United Nations Educational, Scientific and Cultural Organization, ադրբ.՝ Elm, Təhsil və Mədəniyyət üzrə Birləşmiş Millətlər Təşkilatı), İSESKO (անգլ.՝ Islamic Educational, Scientific and Cultural Organization, ադրբ.՝ Təhsil, elm və mədəniyyət üzrə İslam təşkilatı), FIFA–(ֆրանս.՝ Federasion International de footbol assosiation, ադրբ.՝ Beynəlxalq Futbol Assosiasiyası Federasiyası), FIDE (ֆրանս.՝ Federasion international des echecs, ադրբ.՝ Beynəlxalq Şahmat Federasiyasının), SMS (անգլ.՝ Short Message Service), VİP (անգլ.՝ Very important person), P.S. (Post scriptum), CV (լատ.՝ Curriculum Vitae) և այլն:

Խոսելով հապավումների փոխառման աղբյուրներից՝ կրկին ընդգծենք անգլերենի տիրապետող դիրքը, որի արդյունքում ավելի է արագանում բազմաթիվ հապավումների միջազգայնացման գործընթացը[177]: Դիտարկենք ժամանակակից մամուլից որոշ մեջբերումներ. *«Brüssel şəhərində yerləşən NATO Mənzil Qərargahında rəsmi ziyafət keçirilib».*[178]*/ «Բրյուսել քաղաքում տեղակայված ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում տրվել է պաշտոնական ճաշկերույթ»: «Bu hadisə YUNESKO və İSESKO-nun xoşməramlı səfiri, millət vəkili Mehriban Əliyevanın təşəbbüsləri və dəstəyi ilə həyata keçirilən tədbirlər nəticəsində mümkün olub»*[179]*/ «Այս իրադարձությունը հնարավոր եղավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԻՍԵՍԿՈ-ի բարի կամքի դեսպան, պատգամավոր Մեհրիբան Ալիևայի նախաձեռնությամբ և աջակցությամբ իրականացվող միջոցառումների արդյունքում»:*

Ինչպես երևում է վերոշարադրյալ ադրբեջաներեն նախադասություններում, փոխառյալ հապավումները կիրառվում են որպես միջազգային հապավումներ, առանց որևէ փոփոխության ու թարգմանության: Հապավումների մասին խոսելիս անդրադառնանք նաև պատճենման միջոցով ստեղծված հապավումներին, որոնց քանակը ևս քիչ չէ՝ հատկապես քաղաքական, տնտեսական ոլորտներում. օրինակ՝ AŞ–Avropa şurası-Եվրոպայի խորհուրդ, AŞPA-Avropa şurası Parlament Assambleyası-

[177] Məhərrəmova V., Azərbaycan və İngilis dilləri arasındakı Abreviativ xarakterli leksik paralellər, Terminologiya məsələləri, №1, BAKI-ELM-2014, ss.145-146.

[178] NATO Qərargahında Azərbaycan Respublikası Silahlı Qüvvələri Günü qeyd edilib, 26.06.2015, https://report.az/herbi/nato-qerargahinda-azerbaycan-respublikasi-silahli-quvveleri-gunu/

[179] Azərbaycan tar ifaçılıq sənəti YUNESKO-nun qeyri-maddi mədəni irs siyahısına daxil edilib,5 Dekabr 2012, http://az.trend.az/azerbaijan/culture/2095744.html

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով, BMT-Birləşmiş Millətlər təşkilatı-Միավորված ազգերի կազմակերպություն, ATƏT-Avropa Təhlükəsizlik və Əməkdaşlıq təşkilatı-Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն, MDB- Müstəqil Dövlətlər Birliyi-Անկախ պետությունների համագործակցություն, QHT-Qeyri-hökumət təşkilatı-ոչ կառավարական կազմակերպություն, ABŞ-Amerika Birləşmiş Ştatları-ԱՄՆ, IIR-İran İslam Respublikası-Իրանի Իսլամական Հանրապետություն, XIN-Xarici işlər nazirliyi-ԱԳՆ, KIV-Kütləvi informasiya vasitələri-ՋԼՄ և այլն: Օրինակներ բերենք մամուլից. *«Bu gün Avropa Şurası Parlament Assambleyasının (AŞPA) payız sessiyasının ikinci iş günündə qurumun baş katibi vəzifəsinə seçkilər keçirilib.»*[180] / *«Այսօր ԵԽԽՎ աշնանային նստաշրջանի երկրորդ օրը տեղի են ունեցել կառույցի գլխավոր քարտուղարի ընտրությունները»: «Türkiyə XİN Ermənistanın təxminən əsrin dörddə biri qədər müddətdə Azərbaycan torpaqlarının bir hissəsini işğal altında saxladığını xatırladıb.»*[181] / *«Թուրքիայի ԱԳՆ-ն հիշեցրել է, որ գրեթե քառորդ դար է, ինչ Հայաստանը բռնազավթել է Ադրբեջանի հողերի մի մասը»:*

2.8. Փոխառյալ ձևույթներ

Հայտնի է, որ նոր հասկացություններն արտահայտելու համար այլ լեզուներից փոխառվում են ոչ միայն բառային միավորներ, այլև որոշակի քերականական կառույցներ կազմող ձևույթներ: Ըստ այդմ էլ՝ առանձնացնում ենք ձևաբանական փոխառությունները որպես փոխառությունների առանձին տեսակ:

Փոխառյալ ձևույթները (morfem) նպատակահարմար է բաժանել երկու ենթախմբի. ա. արմատ ձևույթներ բ.ածանց ձևույթներ: Արմատ ձևույթներ ասելով հասկանում ենք էթիմոն (փոխատու) լեզվում բառարմատ եղող, փոխառու լեզվում որպես ածանց հանդես եկող ձևույթները. օրինակ՝ anti, dər, eks, xana, saz, neo, bəd, həm, qeyri, kar, baz, dar, namə, gah, post, avto, avia, tele, aqro, kontra և այլն: Ածանց ձևույթներ ասելով հասկանում ենք երկու լեզվում էլ որպես ածանց հանդես եկող ձևույթները:

[180] AŞPA-nın yeni baş katibi bəlli oldu, 29.09.2015, http://news.lent.az/news/216137
[181] Türkiyə XİN Ermənistana çağırış etdi, 03.04.2016, http://xeber-24.az/region/8195-turkiye-xn-ermenistana-chagirish-etdi.html

Արաբերենից և պարսկերենից ադրբեջաներեն ներմուծված արմատ ձևույթների մեծ մասը ժամանակի ընթացքում կորցրել են իրենց բառիմաստը և արտահայտում են զուտ ձևաբանական իմաստ: Դրանցից բերենք մի քանի օրինակ՝ xana-տուն, bəd-վատ, dər-դուռ, namə-նամակ և այլն: Օրինակ մամուլից՝ *«Nazirliyindən AZƏRTAC-ın müxbirinə bildirmişlər ki, sözügedən* əczaxana *təmirə ehtiyacı olan, xüsusi mebeli olmayan otaqda yerləşirdi.»*[182] / *«Նախարարությունից «ԱԶԵՌԹԱՋ»-ի թղթակցին հայտնել են, որ վերոնշյալ դեղատունը վերանորոգման կարիք ուներ և գտնվում էր այնպիսի մի սենյակում, որտեղ բացակայում էր հատուկ կահույքը»:* Այսպես, վերոշարադրյալ մեջբերման մեջ əczaxana բառը կիրառվում է որպես aptek-դեղատուն բառի հոմանիշ: Որոշ լեզվաբաններ, սակայն, կարծում են, որ պարսկերեն xana-տուն բառը վեջնականապես վերջածանցի չի վերածվել: Օրինակ՝ xəstəxana–հիվանդանոց, kitabxana-գրադարան բառերում այն պահպանում է իր՝ «տուն» իմաստը՝ գրքերի տուն (գրադարան), հիվանդների տուն (հիվանդանոց): Մամուլում երբեմն կիրառվում է նաև kitab evi ձևը: Մեկ այլ մեջբերում՝ «*Ötən ilin müvafiq dövründə isə baş vermiş* bədbəxt *hadisə nəticəsində 20 nəfər ölüb»*[183]*/ «Իսկ անցած տարվա նույն ժամանակահատվածում տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում մահացել է 20 մարդ»:* Այստեղ արդեն bədbəxt բառը նշանակում է վատ, դժբախտ: Bəd բառը պահպանել է պարսկերենում եղած իմաստը:

Որոշ դեպքերում արաբերենից և պարսկերենից ադրբեջաներենին փոխանցվել են նախածանցավոր բառեր՝ la-, na-, bi-, ba- և այլ նախածանցներով՝ օրինակ՝ laməkan-անտուն, laqeyd-անուշադիր, naşükür-երախտամոռ, naməlum-անհայտ, nalayiq-վիրավորական, nanəcib-անշնորհակալ, bisavad-անգրագետ, bişüur-անկարող և այլն: Սույն փոխառյալ բառերն ադրբեջաներենում ընկալվում են որպես միակազմ բառեր: Օրինակ՝ *«Büdcəyə ödəniləcək vəsait, yatırılacaq sərmayənin məbləği*

[182] SURAXANI RAYONUNDA ZƏRURİ NORMALARA CAVAB VERMƏYƏN ƏCZAXANA AŞKAR EDİLMİŞDİR, 28.10.2008, http://azertag.az/xeber/SURAXANI_RAYONUNDA_ZARURI_NORMALARA_CAVAB_VERMAYAN_ACZAXANA_ASKAR_EDILMISDIR-422524

[183] Azərbaycanda bu il istehsalatda baş vermiş bədbəxt hadisə nəticəsində ölüm hallarının sayı ötən ilin müvafiq dövrü ilə müqayisədə artıb., 07.02.2016, http://www.ekspress.az/az/cemiyyet/5843-istehsalatda-bedbext-hadiseler-artir

də naməlum *qalır.»*[184] / *«Անհայտ են մնում այն գումարը և միջոցները, որոնք վճարվելու են բյուջե և ներդրվելու են»: «Adam gərək* naşükür *olmasın.»*[185] / *«Մարդը չպետք է երախտամոռ լինի»:*

Երբեմն արդեն փոխառված na-, bi- նախածանցները, կցվելով ադրբեջաներեն բառին, կրկին, պահպանում են իրենց իմաստը, ինչպես եղել է փոխատու լեզվում. մասնավորապես՝ այս նախածանցներն ունեն ժխտական իմաստ և կիրառվում են ինչ-որ երևույթի կամ որակի, հատկանիշի բացակայությունը ցույց տալու նպատակով: Իհարկե, ադրբեջաներենի ձևաբանական համակարգում կա դրանց համարժեք –siz վերջածանցը, սակայն միշտ չէ, որ կարելի է փոխարինել այդ համարժեքով: Արդյունքում այդ փոխարինումն անմիջապես ազդում է բառիմաստի վրա: Օրինակ՝ nakişi-տմարդ բառում na- ձևույթը չի կարող փոխարինվել, որովհետև kişisiz նշանակում է «անմարդաբնակ վայր, որտեղ մարդ չկա», բառի իմաստը բոլորովին այլ է:

Արաբապարսկական ծագում ունեցող ձևույթների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք ունեն հնչյունական մեկ տարբերակ՝ ի տարբերություն թյուրքական վերջածանցների: Արդյունքում նման բառերը շեղվում են ադրբեջաներենին բնորոշ ձայնավորների ներդաշնակության կանոնից. օրինակ՝ həmsədr-համանախագահ, həmfikir-միակարծիք, bitərəf-անկողմնակալ, dərhal-անմիջապես, əleyhinə-դեմ, հակառակ, nabələd-անտեղյակ, անծանոթ, naməhrəm-օտար և այլն: Օրինակ մամուլից՝ *«Ailə həyatının ən mühüm məharətlərindən* biri - həmfikir *olmaqdır.»*[186] / *«Ընտանեկան կյանքի ամենակարևոր նրբություններից մեկն էլ համերաշխությունն է»: «40 ölkənin təmsilçiləri* bitərəf *qalıblar.»*[187] / *«40 երկրի ներկայացուցիչներ ձեռնպահ մնացին»: «Martın 6-da Gürcüstanın paytaxtı Tbilisidə bir qrup sakin Rusiya* əleyhinə *etiraz aksiyası keçirib.»*[188] / *«Մարտի 6-ին Վրաստանի*

[184] Əmlak Komitəsinin naməlum investorları, 22.02.2016, http://www.azadliq.org/content/namelum-investor-emlak/27567209.html
[185] Mavi göyərçinlər, sahibsiz pişiklər, dənsatan Muxtar əminin, 17.09.2014, http://news.lent.az/news/178506
[186] Həmfikir olmaq xoşbəxtliyin məharətidir, 08.10.2015, http://news.milli.az/society/374142.html
[187] Azərbaycan "Hüquq müdafiəçilərinin müdafiəsi" qətnaməsinin qəbulunda bitərəf qaldı, 27.11.2015, https://www.meydan.tv/az/site/news/9626/Az%C9%99rbaycan-%E2%80%9CH%C3%BCquq-m%C3%BCdafi%C9%99%C3%A7il%C9%99rinin-m%C3%BCdafi%C9%99si%E2%80%9D-q%C9%99tnam%C9%99sinin-q%C9%99bulunda-bit%C9%99r%C9%99f-qald%C4%B1.htm
[188] Gücrüstanda Rusiya əleyhinə etiraz aksiyası, 06.03.2016, http://www.azadliq.org/media/photogallery/gurcustan-tbilisi-etiraz-aksiya-rusiya-putin-neft-qaz/27592228.html

մայրաքաղաք Թբիլիսիում մի խումբ բնակիչներ Ռուսաստանի դեմ բողոքի ակցիա են անցկացրել»:

Հատկապես 2000-ական թթ.ից հետո եվրոպական ծագում ունեցող նախածանցները և մասնիկները սկսեցին մուտք գործել ադրբեջաներենի ձևաբանական համակարգ՝ գերազանցելով ռուսական ծագում ունեցողներին. օրինակ՝ post-, geo-, neo-, pan-, anti-, avia-, eks- և այլն: Հաճախ հանդիպում ենք geosiyasi-աշխարհաքաղաքական, antimilli-հակազգային, eksprezident-նախկին նախագահ այլ նմանատիպ բառերի: Մամուլում գործածություն ունեցող ռոմանագերմանական վերջածանցներից առանձնացնենք առավել հաճախ կիրառվողները՝ –al, -iv, -sion, -men, -er, -ji, -ant, -loqos, -ar, -oz, -ent և այլն:

Կանգ առնելով ֆրանսերեն «sion կամ si» վերջածանցի վրա՝ շեշտենք, որ ադրբեջաներենում այս վերջածանցն իմաստային առումով կարելի է փոխարինել «-lı» վերջածանցով կամ կարող է կիրառվել առանց վերջածանցի՝ գոյականների կապակցության ձևով (İkinci tamlama), սակայն կրկին գործածվում է փոխառյալ տարբերակը. օրինակ՝ konstitusion-konstitusiyalı–սահմանադրական, konstitusiya islahatları–սահմանադրական բարեփոխումներ: Օրինակ մամուլից՝ *«Ümumilikdə isə Azərbaycan* Konstitusiyasının *hüquqi fəlsəfəsində bir ali məqsəd – insan və vətəndaş hüquqlarının və azadlıqlarının təminatı məramı dayanır.»*[189] / *«Ընդհանրապես Ադրբեջանի Սահմանադրության իրավական փիլիսոփայության հիմքում ընկած է մի գերագույն նպատակ՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորումը»:*

2.9. Շարահյուսական փոխառություններ

Շարահյուսական փոխառություններ ասելով հասկանում ենք ոչ թե ամբողջական տեքստի, կառույցի, այլ առանձին շարահյուսական միավորների փոխառություն: Ժամանակակակից ադրբեջանական մամուլի լեզվում կիրառվող շարահյուսական փոխառյալ միավորները հիմնականում բաղկացած են պարսկական

[189] Müstəqil Azərbaycanın ilk Konstitusiyasının qəbulu müasir tariximizin ən mühüm hadisəsidir, 12.11.2013, http://www.xalqqazeti.com/az/news/social/39536

ծագում ունեցող «իզաֆետ»-ներից (izafet), որոնք ամենևին էլ գեղարվեստական գրականության մեջ հանդիպող բաղադրյալ, դժվարությամբ ընկալելի բառակապակցությունները չեն: Մի շարք «իզաֆետ»-ների կազմում բոլոր բաղադրիչները չէ, որ կորցրել են իրենց նախկին բառիմաստը:

Մեջբերում մամուլից՝ *«Hazırda Azərbaycanın hər bir gənci öz* dəstixətti *ilə seçilir.»*[190] - *«Ներկայումս Ադրբեջանի յուրաքանչյուր երիտասարդ տարբերվում է ըստ իր ձեռագրի»:* Այստեղ dəstixətt պարսկերեն բառը նշանակում է ձեռագիր՝ dəst-ձեռք, դաստակ, xətt-գիծ, գրվածք: Կարելի է պնդել, որ շարահյուսական փոխառությունների հիմքը կազմում են ադրբեջաներենի գոյականների կապակցության առաջին և երկրորդ ձևերը (birinci tamlama, ikinci tamlama): Առաջին ձևի կապակցություններն ըստ իրենց կառուցվածքի առավել կայուն են, սակայն մամուլի լեզուն ավելի հարուստ է գոյականների կապակցության երկրորդ ձևով՝ որոշիչ-որոշյալ հարաբերություններն արտահայտող փոխառյալ կառույցներով:

Անդրադառնալով եվրոպական լեզուներից փոխառված շարահյուսական ձևերին՝ նշենք, որ խոսակցական լեզվում հաճախ մարդիկ կիրառում են որոշ օտար արտահայտություններ, սակայն մամուլն առայժմ հիմնականում զերծ է մնում նմանատիպ փոխառություններից: Առանձնացնենք, օրինակ՝ ֆրանսերեն tête-à-têtes-դեմառդեմ բառը, որն ունի լայն գործածություն աշխարհի տարբեր լեզուներում՝ հիմնականում որպես քաղաքական տերմին: Միաժամանակ փաստենք, որ ադրբեջանական մամուլում ֆրանսերեն տարբերակը չունի լայն գործածություն, փոխարենը կիրառվում է ադրբեջաներեն üzbəüz կամ təkbətək բառը: Օրինակ՝ *«Bayramlar və əlamətdar günlərdə ancaq sevdikləri ilə «tet-a-tet» olmaq istəyirlər.»*[191] */ «Տոներին և նշանակալից օրերին ցանկանում են դեմառդեմ անցկացնել միայն իրենց սիրելիների հետ»: «Prezidentlər* üzbəüz *görüş keçirmək barədə qərar qəbul ediblər.»*[192] */ «Նախագահները որոշում են կայացրել դեմառդեմ հանդիպելու վերաբերյալ»:*

[190] YAP Gənclər Birliyi Azərbaycanda Gənclər Günü ilə əlaqədar tədbir keçirib, 29.01.2013, http://arxiv.az/az/salamnews.org/9840937/YAP+Gencler+Birliyi+Azerbaycanda+Gencler+Gunu+ile+elaqedar+tedbir+kecirib

[191] Məhəbbətin 3 dili var - Sevgilinin tipini tap, 10.02.2015, http://metbuat.az/news/33256/M%25C9%2599h%25C9%2599bb%25C9%2599tin%2B3%2Bdili%2Bvar%2B-%2B%2BSevgilinin%2Btipini%2Btap.html

[192] Ərdoğan və Putin 40 dəqiqə danışdı - Görüşəcəklər, 29.06.2016, http://www.ekspress.az/az/siyaset/5621-erdoghan-ve-putin-40-deqiqe-danishdi---g-ouml-r-uuml-shedzekler

Փաստորեն, ժամանակակից Ադրբեջանի մամուլի լեզվում առկա են բազմաթիվ և բազմաբնույթ լեզվական, այդ թվում նաև բառապաշարային հիմնախնդիրներ: Դրանց շարքին կարելի է դասել փոխառյալ բառերի ոչ տեղին գործածությունը, առանձին-առանձին բառերին ոչ ճշգրիտ իմաստ հաղորդելը, ձևույթների և բառային միավորների ոչ ճիշտ քերականական կապերի մեջ մտնելը և այլն: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ 1990-ական թթ.-ից հետո լույս տեսնող ադրբեջանական թերթերի լեզվում փոխառյալ բառերի քանակը և կիրառման հաճախականությունը ոչ թե նվազում, այլ հակառակը՝ գնալով ավելանում է: Ժամանակակից մամուլի լեզվում ակնհայտ են նաև ուղղագրության խնդիրները: Կարելի է պնդել, որ եթե լեզուն չունի ձևավորված և կայուն ուղղագրություն և կետադրություն, ուրեմն տվյալ լեզուն չի կարող կոչվել «կատարյալ և հարուստ», ինչպես բարձրաձայնում են ադրբեջանցիները ամեն պատեհ և անպատեհ առիթի դեպքում:

Ուսումնասիրելով 2000-ական թթ. սկզբից ադրբեջանական բազմաթիվ պարբերականների լեզվում առկա փոխառությունները՝ կարող ենք պնդել, որ պատկերը զգալիորեն փոխվել է՝ հօգուտ եվրոպական ու հատկապես թուրքերեն փոխառությունների: Աստիճանաբար նվազում է արաբական և պարսկական ծագում ունեցող բառերի քանակը: Հետաքրքրական է, որ արաբապարսկական բառերը երբեմն կենդանություն են ստանում և մուտք գործում բառապաշար, որոնք երբեմն ադրբեջանցիներն անվանում են հին թյուրքական բառեր՝ ժառանգված օսմանյան կամ ավելի վաղ շրջանից: Այստեղ տեղին է ընդգծել, որ օսմաներենի բառապաշարի հիմքում ընկած են եղել հենց արաբական ու պարսկական ծագումով բառերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

3.1. Զանգվածային լրատվամիջոցների լեզուն որպես ուսումնասիրության առարկա. մեդիալեզվաբանություն

Ժամանակակակից լեզվաբանության մեջ շրջանառության մեջ է մտել, այսպես կոչված, «մեդիալեզվաբանությունը», որի կազմավորումը և զարգացումը որպես ժամանակակից լեզվաբանության ինքնուրույն ուղղություն, պայմանավորված է մի շարք գործոններով՝ լեզվական, տեղեկատվական-տեխնոլոգիական և սոցիալական-մշակութային: Մեդիալեզվաբանության ստեղծման կարևոր նախադրյալներից առանձնացնենք, օրինակ՝ տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների սրընթաց աճը, որը մասնավորապես արտահայտվում է մեդիահաղորդակցության համաշխարհային ցանցի ստեղծման, միասնական տեղեկատվական դաշտի կազմավորման ու զարգացման մեջ: Ռուսաստանյան գիտական շրջանակներում «մեդիալեզվաբանություն» տերմինը երևան է եկել՝ 2000-ական թթ.: Ավելի վաղ գործածության մեջ էր մտել անգլերեն «media linguistics» բառը, որը կարելի է հանդիպել բրիտանացի հետազոտողների աշխատություններում[193] :

Ժամանակակից պարբերականների լեզվում նկատվում է գրքային և խոսակցական լեզվի բացահայտ փոխազդեցություն, ինչպես նաև՝ ԶԼՄ-ների լեզվի խոսքի պարզեցման միտում[194]: ԶԼՄ-ների լեզվի բնորոշ գծերից առանձնացնենք հրապարակախոսական ոճի լեզվի ժողովրդականացումը և զանգվածային հաղորդակցության սահմանների ընդլայնումը, առանձին սոցիալական խմբերի

[193] Добросклонская Т.Г., Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, Москва 2008, с. 5. http://www.ffl.msu.ru/research/publications/dobrosklonskaya/dobrosklonskaya-medialingvistika.pdf

[194] Скороходова Е., Использование некодифицированной лексики в текстах СМИ, Современный Русский Язык, http://filfucker.ru/pervoistochniki/e-u-skorochodova-ispolzovanie-nekodifitsirovannoy-leksiki-v-tekstach-smi

խոսքային վարքագծի կանոնների զանազանությունը, ՋԼՄ-ների լեզվի «ամերիկանացումը»[195] և այլն:

Ժամանակակից Ադրբեջանը փորձում է խորացնել հարաբերություններն Արևմուտքի հետ, հնարավորինս մերձենալ Թուրքիային և միաժամանակ չհեռանալ Ռուսաստանից: Սույն գործընթացներն ադրբեջաներենի մամուլի լեզվի բառապաշարի հետ գտնվում են մշտական փոխազդեցության մեջ: Ինչպես նշում է ադրբեջանցի լեզվաբան Է. Դեմիրչիզադեն, «այս գործընթացը լեզվի ներքին հնարավորությունների և միջոցների հիման վրա օր օրի կատարելագործվելու հետ մեկտեղ, ընթանում է ցեղակից և ոչ ցեղակից, ուղղակի և անուղղակի շփման մեջ գտնվող լեզուների փոխադարձ ազդեցության արդյունքում:»[196]

3.2. Քաղաքական բառապաշարն ադրբեջանական մամուլում

Ինչպես վկայում է միջազգային փորձը, մամուլում առավել հաճախ և հանգամանալից անդրադարձ է կատարվում քաղաքական իրադարձություններին և դրանց վերլուծությանը: Քաղաքական լեզուն հարուստ է տերմիններով և ինքնատիպ է[197]: Ուշագրավ է, որ քաղաքական բառապաշարն ուսումնասիրելիս նրա անբաժանելի մաս է համարվում նաև հասարակական կյանքն ընդգրկող բառապաշարը և գիտական գրականության մեջ ստանում մեկ ընդհանուր անվանում՝ հասարակական-քաղաքական բառապաշար: Երբեմն լեզվի հասարակական-քաղաքական բառապաշարը բնութագրվում է որպես այնպիսի բառախումբ, որը բնորոշ է պարբերական մամուլին և հրապարակախոսական ոճին:

Ադրբեջանական առաջատար էլեկտրոնային լրատվամիջոցները հագեցած են քաղաքական բնույթի տեղեկատվությամբ: Որպես կանոն, ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում քաղաքական բաժինն ունի իր ենթաբաժինները՝ ներքին քաղաքական լրահոս, միջազգային քաղաքական նորություններ,

[195] ЯЗЫК СМИ КАК ОБЪЕКТ МЕЖДИСЦИПЛИНАРНОГО ИССЛЕДОВАНИЯ, Отв. ред: д.ф.н. проф. Володина М.Н., М.: Изд-во МГУ, 2003. с. 23.
[196] Sadıqova S.,Dil sistemində sistemində leksik paralellərin ifadə formaları, Terminologiya məsələləri, №1 Bakı-Elm - 2014, s. 8.
[197] Демьянков В.З.,ИНТЕРПРЕТАЦИЯ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА В СМИ, // Язык СМИ как объект междисциплинарного исследования: Учебное пособие / Отв. ред. М.Н. Володина. М.: Изд-во МГУ - 2003, с. 125.

տարածաշրջանային լուրեր, վերլուծություններ, հարցազրույցներ և այլն: Ադրբեջաներենի հասարակական-քաղաքական բառապաշարը համարվում է լեզվի բառապաշարի կարևոր շերտերից մեկը և ունի բառագիտական, պատմամշակութային նշանակություն: Փաստենք, որ ադրբեջաներենի քաղաքական բառապաշարը համեմատաբար աչքի է ընկնում համակարգվածությամբ և կայուն բառապաշարով: Նշենք, որ քաղաքական բառերով և արտահայտություններով բավականաչափ հարուստ է նաև մերօրյա հայ մամուլի բառապաշարը, իսկ բովանդակային առումով հաճախ արծարծվում են համանման թեմաներ. օրինակ՝ *«Խորհրդի հայտարության մեջ նշվում էր, որ նրանք աջակցում են խնդրի՝ բացառապես խաղաղ կարգավորմանը, որի հիմքում պետք է լինեն ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության արդյունքերը, Հելսինկյան եզրափակիչ ակտի մոտեցումները, ՄԱԿ կանոնադրության հիմնարար և ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքները»:*[198]

Ստորև ներկայացնենք ժամանակակից ադրբեջանական մամուլի քաղաքական բաժիններից կոնկրետ մեջբերումներ:

3.2.1. Արտաքին քաղաքականություն. արտաքին քաղաքական լրահոսը մամուլում բավականաչափ հագեցած է: Տեքստերում հաճախ կիրառվում են հետևյալ բառերն ու բառակապակցությունները՝ xarici işlər nazirliyi-արտաքին գործերի նախարարություն, görüş–հանդիպում, əməkdaşlıq–համագործակցություն, əlaqə-կապ, siyasi–քաղաքական, prezident–նախագահ, rəsmi–պաշտոնական, səfər-այց, məlumat–տեղեկություն, diplomatik-դիվանագիտական, iştirak–մասնակցություն, təhlükəsizlik-անվտանգություն, müzakirə-քննարկում, inkişaf-զարգացում, danışıq-բանակցություն, strateji–ռազմավարական, tərəfdaşlıq-գործակցություն, dialoq–երկխոսություն և այլն: Օրինակ ադրբեջանական մամուլից. *«Azərbaycan prezidenti İlham Əliyevin Çexiyaya rəsmi səfəri gözlənilir.»*[199] */ «Սպասվում է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնական այցը Չեխիա»: «Azərbaycan Xarici İşlər Nazirliyinin mətbuat xidmətindən Turan-a bildirilib ki,*

[198] ՀԱՊԿ-ից մենք կարողանում ենք քաղել այն, ինչ մեր օպերատիվ ու ռազմավարական անվտանգության համար կարևոր է. Քաղաքագետ, 2016, http://www.aysor.am/am/news/2016/10/18/%D4%B1%D5%AC%D5%A5%D5%B6-%D5%82%D6%87%D5%B8%D5%B6%D5%A4%D5%B5%D5%A1%D5%B6/1154403

[199] Azərbaycan prezidenti İlham Əliyevin Çexiyaya rəsmi səfəri gözlənilir., 28.03.2012, http://www.anspress.com/siyaset/28-03-2012/azerbaycan-prezidentinin-cexiyaya-seferi-planlasdirilir

diplomatik missiyanın ölkəni tərk etməsi təhlükəsizlik və ölkədəki mövcud durumla bağlıdır.»[200] / *«Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայությունից «Թուրանին» տեղեկացրել են, որ դիվանագիտական առաքելությունների՝ երկիրը լքելը կապված է անվտանգության և երկրում տիրող իրավիճակի հետ»: «Ümid edirik ki, viza rejiminin sadələşdirilməsi Azərbaycan və İranın sərhədyanı rayonlarında turizmin, ticari münasibətlərin inkişafına kömək edəcək».*[201] / *«Հուսով ենք, որ մուտքի ընթացակարգի պարզեցումը կնպաստի Ադրբեջանի և Իրանի սահմանամերձ շրջաններում զբոսաշրջության, առևտրային հարաբերությունների զարգացմանը»: «Avropa İttifaqına üzv ölkələr arasında strateji tərəfdaşların sayının artması bizi Aİ ilə dialoqu inkişaf etdirməyə ruhlandırır.»*[202] / *«ԵՄ անդամ երկրների շրջանում ռազմավարական գործընկերների քանակի ավելացումը ոգեշնչում է մեզ ԵՄ-ի հետ երկխոսությունը զարգացնելու գործում»:*

3.2.2. Ներքին քաղաքականություն. ադրբեջանական մերօրյա էլեկտրոնային մամուլի՝ ներքաղաքական իրադարձությունները լուսաբանող հոդվածներում բառապաշարը բազմազան է, ընդգրկում է ներքին քաղաքական անցուդարձին առնչվող բոլոր իրադարձությունները. nazir–նախարար, sərəncam–հրամանագիր, vətəndaş–քաղաքացի, xidmət–ծառայություն, imzalamaq–ստորագրել, sosial–սոցիալական, iclas-նիստ, hökümət–կառավարություն, sessiya–նստաշրջան, komissiya–հանձնաժողով, məsələ-հարց, hakimiyyət–իշխանություն, icra-գործադիր, qanunverici–օրենսդիր, millət vəkili–պատգամավոր, region–շրջան, sakin–բնակիչ և այլն: Օրինակ մամուլից՝ *«Milli Məclisin V çağırış sessiyasının 2015-ci ilin son plenar iclası öz işinə başlayıb.»*[203] / *«Իր աշխատանքներն է սկսել Ազգային ժողովի 5-րդ գումարման նստաշրջանի 2015թ. վերջին լիագումար նիստը»: «Fəzail Ağamalı deyib ki, məsələ İntizam Komissiyasında araşdırılmalıdır. Spiker Oqtay Əsədov da məsələnin komissiyada araşdırılacağını dedi.»*[204] / *«Ֆազայիլ Աղամալըն ասել է, որ հարցը պետք է քննվի կարգապահական հանձնաժողովում: Խոսնակ Օգթայ Ասադովն էլ հայտնել է, որ հարցը քննվելու է*

[200] Azərbaycan səfiri Suriyanı tərk edib, 2012 Avqust 07, http://www.contact.az/docs/2012/Politics/080700007035az.htm#.VsORYvmLTIU
[201] Naxçıvanla viza rejimi sadələşdirildi,, 20.09.2014,http://www.qafqazinfo.az/siyaset-2/naxcivanla-viza-rejimi-sadelesdirildi-89729
[202] XİN rəhbəri: Avropa İttifaqı ilə danışıqların başlamasını səbirsizliklə gözləyirik, 04.05.2016, http://oxu.az/politics/130242
[203] Milli Məclisin 2015-ci ilin son plenar iclası öz işinə başlayıb, 29 DEKABR 2015, HTTP://AZ.TREND.AZ/AZERBAIJAN/POLITICS/2475311.HTML
[204] Milli Məclisdə dava düşdü, 16.03.2007, http://www.azadliq.org/content/article/383098.html

հանձնաժողովում»: «Bu sözləri parlamentdə "Mədəniyyət haqqında" Azərbaycan Respublikası qanununun layihəsinin müzakirəsi zamanı millət vəkili Asim Mollazadə deyib.»[205] */ «Խորհրդարանում այս խոսքերն արտահայտել է պատգամավոր Ասիմ Մոլլազադեն «մշակույթի մասին» Ադրբեջանի Հանրապետության օրինագծի քննարկման ժամանակ»:*

3.2.3. Արցախյան հակամարտություն. ադրբեջանական լրատվամիջոցների լրահոսում իր կարևոր և ծավալուն տեղն ունի Արցախի թեման, որի շուրջ ծավալվող գործողություններն ու տեղի ունեցող իրադարձություններն իրենց արտացոլումն են գտնում բոլոր հայտնի պարբերականներում: Բառապաշարը հիմնականում ոլորտային է և առանձնապես աչքի չի ընկնում բազմազանությամբ՝ ərazi bütövlüyü–տարածքային ամբողջականություն, işğal-զավթում, məruzə-զեկույց, müzakirə-քննարկում, sərhəd–սահման, beynəlxalq–միջազգային, region–շրջան, տարածաշրջան, gərginlik–լարվածություն, münaqişə-հակամարտություն, həll-լուծում, həmsədr–համանախագահ, vasitəçilik–միջնորդություն, nizamlanma–կարգավորում, sülh–խաղաղություն, sədr–նախագահ, ղեկավար և այլն: Օրինակ՝ *«Gec-tez Azərbaycanın ərazi bütövlüyü qəbul edilmiş beynəlxalq sərhədlər çərçivəsində bərpa olunacaq və əgər bu tez baş versə region üçün daha yaxşı olacaq.»*[206] */ «Վաղ թե ուշ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը միջազգային փաստաթղթերի շրջանակներում վերականգնվելու է և, եթե դա շուտ տեղի ունենա, ավելի լավ կլինի տարածաշրջանի համար»: «ATƏT-in Minsk qrupunun həmsədrləri İqor Popov (Rusiya), Robert Bradtke (ABŞ), Fransadan olan sabiq həmsədr Bernar Fasye səfərdə olduqları Bakıda regiondakı görüşləri barədə bəyanatla çıxış ediblər.»*[207] */ «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը, Ռոբերտ Բրադկեն, Ֆրանսիայից նախկին համանախագահ Բեռնար Ֆասիեն այցով գտնվելով Բաքվում՝ հանդես են եկել տարածաշրջանում իրենց ունեցած հանդիպումների մասին հայտարարությամբ»: «Dağlıq Qarabağ münaqişəsi status-kvonun təhlükəli yolu ilə həll olunmalıdır". "Report"un xəbərə*

[205] Millət vəkili AzTV-ni kəskin tənqid etdi,21/12/2012 , http://www.azxeber.com/news/24810.htm
[206] E.Məmmədyarov: «Azərbaycanın ərazi bütövlüyü bərpa olunacaq», 02.02.2013, http://www.azadliq.org/content/article/24891342.html
[207] ATƏT-in Minsk qrupunun həmsədrləri Bakıda bəyanatla çıxış ediblər, 30.11.2011, http://www.amerikaninsesi.org/content/att-in-minsk-qrupunun-hmsdrlri-azrbaycanda-sfrddir--134746973/725415.html

görə, bunu İranın Ermənistandakı səfiri Məhəmməd Rəisi deyib.»[208] */ «ԼՂ հակամարտությունը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով»: «Report»-ի տված տեղեկության համաձայն, այս մասին ասել է Հայաստանում Իրանի դեսպան Մահամադ Ռահիմին»:*

Հայ մամուլում արցախյան թեմայով անդրադարձը, ըստ էության, գրեթե ամենօրյա բնույթ ունի, որտեղ գործածվող բառերի ու տերմինների համեմատական պատկերը հակիրճ ներկայացված է աշխատանքի չորրորդ գլխում:

3.2.4. Սփյուռք. Ադրբեջանում պետական մակարդակով տարվում է քարոզչություն ադրբեջանցի ժողովրդի՝ հնագույն լինելու մասին «փաստերը» ողջ աշխարհին ներկայացնելու ուղղությամբ: Ի լրումն դրա, ներկայացվում է «ադրբեջանական մեծ և ազդեցիկ սփյուռքը», որն իր «հայրենանվեր» գործունեությամբ ծառայում է «ադրբեջանական ինքնագիտակցության» պահպանմանը երկրի սահմաններից դուրս, պահպանում է կապը հայրենիքի՝ Ադրբեջանի հետ և իր ռեսուրսները ծառայեցնում է ի նպաստ Ադրբեջանի պետական շահերի: Որպես այդ քաղաքականության շարունակություն, ադրբեջանական առաջատար կայքերում հատկացված է առանձին տեղեկատվական բաժին, որն իրազեկում է սփյուռքի ադրբեջանցիների գործունեության և, ընդհանրապես, Ադրբեջանի սահմաններից դուրս գտնվող ադրբեջանցիների մասին: Սույն թեմաներին վերաբերող բառապաշարն ունի լայն ընդգրկում, քանի որ քաղաքական թեմաներից բացի լուսաբանվում են նաև այլ ոլորտներում Ադրբեջանի սահմաններից դուրս բնակվող ադրբեջանցիների գործունեությունը ամենատարբեր ասպարեզներում՝ diaspor/diaspora–սփյուռք, fəaliyyət-գործունեություն, iş-աշխատանք, güc-ուժ, soyqırım–ցեղասպանություն, komitə-կոմիտե, dünya-աշխարհ, təşkilat–կազմակերպություն, xaric-արտասահման, perspektiv–հեռանկար, plan–ծրագիր, tədbir–միջոցառում, yaşamaq-ապրել, qorumaq–պահպանել, güclənmək–հզորանալ, təşkil etmək–կազմակերպել և այլն: Ներկայացնում ենք որոշ մեջբերումներ. *«Azərbaycan diasporasının son illərdəki fəaliyyəti yüksək qiymətləndirilməlidir. Xüsusən, Azərbaycanda Diasporla İş üzrə Dövlət Komitəsi yarandıqdan sonra bu iş daha da güclənib.»*[209] */ «Բարձր է գնահատվում Ադրբեջանի սփյուռքի վերջին տարիների*

[208] İran səfiri: "Qarabağ münaqişəsi sülh yolu ilə həll olunmalıdır", Bakı. 25 iyul., http://report.az/dagliq-qarabag/iran-sefiri-qarabag-munaqisesi-sulh-yolu-ile-hell-olunmalidir/

[209] Azərbaycan diasporası ermənіləri təşvişə salıb, 13.08.2013 , http://www.olaylar.az/news/diaspora/50469

գործունեությունը: Այս աշխատանքն ավելի է ակտիվացել հատկապես Ադրբեջանում սփյուռքի հետ աշխատանքների գծով պետական կոմիտեի ստեղծումից հետո»: «Komitə sədri 2011-ci ilin martında Bakıda Dünya Azərbaycanlılarının 3-cü qurultayının keçiriləcəyini bildirib.»[210] / «Կոմիտեի նախագահը հայտնել է, որ 2011թ. մարտին Բաքվում տեղի է ունեցել աշխարհի ադրբեջանցիների 3-րդ համաժողովը»: «Xaricdə yaşayan azərbaycanlıların bir araya gəlməsi, perspektiv planları müzakirə etmələri üçün belə tədbirlər çox vacibdir.»[211] / «Նման միջոցառումները շատ կարևոր են արտասահմանում ապրող ադրբեջանցիների հետ հանդիպման, հեռանկարային նախագծերի քննարկման համար»:

3.3.Տնտեսություն

Ժամանակակից զանգվածային լրատվամիջոցներում կարևոր տեղ է զբաղեցնում տնտեսական թեմաների լուսաբանումը: Տնտեսական հիմնախնդիրները դիտարկվում և ուսումնասիրվում են ոչ միայն մասնագիտացված, այլև ընթերցողների լայն շրջանակ և մասնագիտական ուղղվածություն չունեցող լրատվամիջոցներում: Ընդունված է առանձնացնել, այսպես կոչված, «արդի տնտեսական բառապաշար» հասկացությունը որպես առանձին ուսումնասիրության առարկա, որի ժամանակ վերլուծության են ենթարկվում ԶԼՄ-ների համապատասխան տեքստերը: Այդ նպատակով, որպես կանոն, մշտադիտարկման համար կիրառվում են ընթերցողների մեծ բանակ ունեցող պարբերականները: Լրագրության մեջ որպես առանձին սուբյեկտ ուսումնասիրվում է «գործարար լրագրություն» հասկացությունը: Գործարար և տնտեսագիտական բնույթի հրապարակումներում մեծ տեղ է հատկացվում ոչ միայն զուտ տեղեկատվությանը, այլև վերլուծություններին, տնտեսագիտական կանխատեսումներին և այլն[212]: Ուշագրավ է, որ ԶԼՄ տեքստերում գործածության

[210] Amerikada Azərbaycan diaspor təşkilatlarının mərkəzi ofisi Vaşinqtonda olacaq, 17.12.2010, http://www.amerikaninsesi.org/content/amerikada-azrbaycan-diaspor-tkilatlarnn-mrkzi-ofisi-vainqtonda-olacaq--112082054/719904.html

[211] Azərbaycan ziyalıları diaspor quruculuğu prosesinə daha fəal qoşulmağa başlamışlar, 05.07.2011, http://azpress.az/index.php?id=8329&lang=az&sectionid=news

[212] Хуонг Т., Чарыкова О., ТЕМАТИЧЕСКИЕ ГРУППЫ АКТУАЛЬНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ЛЕКСИКИ В РУССКИХ ПЕЧАТНЫХ СМИ, Филологические науки. Вопросы теории и практики Тамбов: Грамота, 2015. № 11(53): в 3-х ч. Ч. II. с. 186.

բավականին մեծ հաճախականություն ունեն ծառայությունների ոլորտն ընգրկող բառային միավորները: Այս խմբում առավել արդիական են հանրային ծառայությունների և կենցաղային սպասարկման, շուկայական, առևտրային թեմաները: Ադրբեջանական առաջատար տեղեկատվական կայքերում տնտեսությանը վերաբերող նորությունները զետեղվում են առանձին բաժնում, երբեմն էլ իրենց ենթաբաժիններով:

Իր հարուստ տերմիններով բավականաչափ լայն ընգրկում ունի հայ մամուլի տնտեսագիտական բառապաշարը, որտեղ տեղ են գտնում ինչպես երկրի ներքին տնտեսական կյանքին, այնպես էլ միջազգային տնտեսական կապերին առնչվող հրապարակումներ: *(«Մասնակից երկրներից որն ինչպիսի ճկուն իրավական և տնտեսական միջավայր է ձևավորում՝ մրցակցային հավասար և գրավիչ պայմաններ ստեղծելու համար: Ելույթիս մեջ, մասնավորապես, խոսք է գնում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող այն քայլերի մասին, որոնք առնչվում են միջազգային ներդրումների համար բարենպաստ դաշտ ձևավորելուն, ինչպես նաև, օրենսդրական հարթակում կանոնակարգվող այն գործառույթներին, որոնք պետք է խթանեն արտաքին ներդրումային քաղաքականությունը:»*[213]

Դիտարկում կատարելով ամենամեծ հետևորդներ ունեցող կայքերում և որպես ուղեցույց վերցնելով ադրբեջանական «Azertac» տեղեկատվական գործակալությունը՝ մամուլից մեջբերումները ներկայացնենք համանման սկզբունքով.

3.3.1. Արդյունաբերություն, նավթ և գազ. ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում արդյունաբերությանը բավականաչափ մեծ կարևորություն է տրվում, և բառապաշարն էլ արտացոլում է հիմնականում Ադրբեջանի արդյունաբերության համեմատաբար զարգացած ճյուղերին վերաբերող հասկացություններն ու երևույթները: Ընդ որում, տնտեսական ոլորտին առնչվող տեքստերում քիչ չեն նաև տերմինները՝ օրինակ՝ tender–մրցույթ, kvalifikasiya–որակավորում, istehsal-արտադրանք, zavod-գործարան, sığorta-ապահովագրություն, dinamika-դինամիկա, միտում և այլն: Մամուլից մեջբերումներ. *«İndi tenderdən əvvəl kvalifikasiya seçimi aparılıb, 6 şirkət və alyans tenderdə iştirak etmək üçün*

[213] Մեկնարկեց Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) ԽՎ 48-րդ լիագումար նիստի աշխատանքները, 2016, http://henaran.am/241360.html

dəvət alıb.»[214] */ «Այժմ մրցույթներից առաջ անցկացվել է որակավորման ընտրություն, 6 ընկերություն և միություն հրավեր են ստացել մասնակցելու մրցույթին»: «Üç yüz milyon avro dəyərində olan zavodun təməli 2009-cu ildə Prezident İlham Əliyevin iştirakı ilə qoyulmuşdur.»*[215] */ «Երեք հարյուր միլիոն եվրո արժողությամբ գործարանի հիմքը դրվել է 2009թ. նախագահ Իլհամ Ալիևի մասնակցությամբ»: «Həmin dövrdə neft sənayesində müşahidə edilən canlanma sığorta işinin inkişafına da təkan vermişdir».*[216] */ «Տվյալ ժամանակաշրջանում նավթաարդյունաբերության մեջ նկատվող աշխուժացումը նոր լիցք է հաղորդել նաև ապահովագրական գործի զարգացմանը»: «Bakı sakinləri ilə söhbətimizdən də bəlli oldu ki, vətəndaşlar ciddi xəstəliklərin Azərbaycanda istehsal olunan dərmanlarla müalicəsinə inanmırlar.»* [217] */ «Բաքվի բնակիչների հետ մեր զրույցից պարզ դարձավ, որ քաղաքացիները չեն հավատում, որ Ադրբեջանում արտադրվող դեղամիջոցներով լուրջ հիվանդություններ կբուժվեն»:*

Նավթագազային արդյունաբերությանը վերաբերող նորությունները, վերլուծությունները, կանխատեսումները, բնականաբար, ադրբեջանական մամուլում իրենց քանակով և ծավալով գերազանցում են տնտեսության մյուս ճյուղերը: Բառապաշարն ինքնատիպ է, բառերն ու արտահայտություններն էլ՝ կրկնվող: Բառապաշարը հարուստ է մասնագիտական տերմիններով, որոնք գրեթե նույնությամբ գործածվում են բոլոր կայքերում: Հոդվածներում հաճախ կարելի է հանդիպել, օրինակ՝ նմանատիպ բառերի ու բառակապակցությունների՝ *xam neft*–հում նավթ, göstərici–ցուցանիշ, ixrac-արտահանում, birja-բորսա, barel-բարել, qiymət–արժեք, neft ehtiyatları–նավթային պաշարներ, təchizat–մատակարարում, neft kəməri–նավթամուղ, neft-qaz satışı–նավթի ու գազի վաճառք, neft gəlirləri–նավթային եկամուտներ, aşağı düşmə-նվազում, sektor–հատված, սեկտոր, artım tempi-աճի տեմպ և այլն: Օրինակ՝ *«SOCAR* [218] *tərəfindən ixrac olunmuş xam neftin göstəriciləri həm Azərbaycan dövlətinə, həm də SOCAR-a*

[214] TANAP üzrə tender keçiriləcək, http://ucnoqta.az/news/20528
[215] Prezident İlham Əliyev: "Azərbaycanda qeyri-neft sektorunun inkişafına çox böyük diqqət göstərilir", 10 İyul 2012, http://news.milli.az/politics/125951.html
[216] Azərbaycanın sığorta bazarında həyat sığortasının rolu: həyat sığortasının inkişafı və potensial imkanları, 14.01.2013, http://xalqqazeti.com/az/news/economy/29465
[217] Azərbaycanda hansı dərmanlar istehsal olunur?, 21.11.2008, http://www.azadliq.org/content/article/1351270.html
[218] ծ ն թ. SOCAR - Azərbaycan Dövlət Neft Şirkəti, հայ .՝ Ադրբեջանի պետական նավթային ընկերություն:

məxsus xam neft həcmlərini əks etdirir.»[219] / *«Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) կողմից արտահանվող չմշակված նավթի ցուցանիշները արտացոլում են և՛ Ադրբեջան պետությանը, և՛ Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը պատկանող չմշակված նավթի ծավալները»: «Dövlətimizdə neft gəlirlərinin aşağı düşməsinə baxmayaraq 2015-ci ilin 1-ci yarımilliyində ÜDM-un real artım tempi 5.7% təşkil edib.»*[220] / *«Չնայած մեր պետությունում նավթից եկամուտների նվազելուն, 2015թ. առաջին կիսամյակում ՀՆԱ իրական աճի տեմպը կազմել է 5.7 տոկոս»:*

3.3.2. Էներգետիկա և տրանսպորտ. Էներգետիկայի և տրանսպորտի ոլորտները ևս շաղկապված են նավթի և գազի ոլորտներին, սակայն ադրբեջանական էլեկտրոնային կայքերի մեծ մասում կա նաև առանձին ենթաբաժին, որտեղ արծարծվում են էներգետիկային և տրանսպորտին առնչվող բազմաբնույթ թեմաներ: Դրանք հիմնականում վերաբերում են երկրի ներքին ենթակառուցվածներին, էլեկտրաէներգիայի հարցերին: Այստեղ համեմատաբար մեծ է ռուսերեն բառերի կշիռը. տեխնիկական տերմինների զգալի մասը ներմուծվել է ադրբեջաներեն դեռևս խորհրդային շրջանում: Տրանսպորտային համակարգին վերաբերող հրապարակումները ևս հարուստ են փոխառյալ բառերով, որոնք գնալով ավելանում են ի հաշիվ նոր, եվրոպական փոխառությունների: Տրանսպորտային և էներգետիկ համակարգերին վերաբերող բառերից և բառակապակցություններից առանձնացնենք, օրինակ՝ enerji sistemi-էներգետիկ համակարգ, kilovatsaat–կիլովատտ/ժամ, elektrik enerjisi-էլեկտրաէներգիա, istehsal-արտադրանք, meqavat–մեգավատ, elektrik istifadəçisi-էլեկտրաէներգիայի սպառող, tarif–սակագին, enerji təhlükəsiziliyi-էներգետիկ անվտանգություն, aviadaşıyıcı-ավիափոխադրող, aviaşirkət-ավիաընկերություն, reys-թռիչք, aviabilet-ավիատոմս, yük daşımaları-բեռնափոխադրումներ, nəqliyyat dəhlizi–տրանսպորտային միջանցք և այլն: Մամուլից մեջբերումներ. *«Son bir ayda ölkə enerjisistemində 1,5 milyard kilovatsaatdan artıq elektrik enerjisi istehsal edilib.*[221] / *«Վերջին մեկ ամսում երկրի էներգետիկայի համակարգում արտադրվել է մեկուկես միլիարդ*

[219] SOCAR aprel ayının hesabatını açıqladı, 04.05.2014, http://big.az/183747-SOCAR_aprel_ayinin_hesabatini_aciqladi.html%D5%9B

[220] Deputatdan sahibkarlara dəstək: "İri sahibkarlara təmənnasız torpaq sahələri ayrılsın" , http://ucnoqta.az/news/26518

[221] 1,5 milyard kilovatsaat elektrik enerjisi istehsal edilib, 08.10.2013, http://www.anspress.com/iqtisadiyyat/08-10-2013/15-milyard-kilovatsaat-elektrik-enerjisi-istehsal-edilib

կիլովատտ/ժամից ավելի էլեկտրաէներգիա»: «Stansiyanın ümumi gücü 25,2 meqavatdır.» [222] */ «Կայանի ընդհանուր հզորությունը կազմում է 25.2 մեգավատտ»: «Enerji təhlükəsiziliyi dünyada çox mühüm bir məqama çevrilib və Azərbaycan enerji sahəsində çox böyük uğurlar qazanıb»*[223]*/ «էներգետիկ անվտանգությունն աշխարհում վերածվել է շատ կարևոր հնարավորության, և Ադրբեջանը մեծ հաջողություններ է ձեռք բերել էներգետիկայի ոլորտում»: «Azərbaycan ticarət gəmiləri ilə yük daşımaları tempi azalıb.»*[224] */ «Նվազել է Ադրբեջանի առևտրային նավերով բեռնափոխադրումների տեմպը»:*

3.3.4. Ֆինանսներ, բանկային համակարգ. ֆինանսաբանկային համակարգի զարգացումը հանգեցնում է նաև նոր հասկացությունների, երևույթների ի հայտ գալուն: Արդյունքում ստեղծվում են նոր տերմիններ, արտահայտություններ, որոնք աստիճանաբար ստանում են միջազգային բնույթ և կիրառվում գրեթե ամբողջ աշխարհի ֆինանսական և բանկային համակարգերում: Ադրբեջաներենի համար որպես նմանատիպ տերմինների հիմնական աղբյուր ծառայում է անգլերենը: Դրանք արդյունավետ կերպով կիրառվում են լրագրողների, տնտեսագիտական վերլուծաբանների կողմից և աստիճանաբար ամրապնդում իրենց դիրքերն ադրբեջաներենի բառապաշարում: Ներկայացնենք առավել հաճախ հանդիպող որոշ բառեր ու բառակապակցություններ՝ dövlət büdcəsi–պետական բյուջե, xərc–ծախս, gəlir-եկամուտ, vergi–հարկ, vergi daxilolmaları–հարկային մուտքեր, proqnoz–կանխատեսում, icra–կատարում, üzən məzənnə-լողացող փոխարժեք, milli valyuta-ազգային փոխարժեք, risk-ռիսկ, bank sektoru-բանկային համակարգ, ÜDM–ՀՆԱ (համախառն ներքին արդյունք), ödəmək–վճարել, kredit–վարկ, bankomat-բանկոմատ, faiz dərəcələri–տոկոսադրույք և այլն: Օրինակ՝ *«Layihəyə əsasən, 2013-cü il dövlət büdcəsinin gəlirləri 19 milyard 154 milyon manat, xərcləri isə 19 milyard 810 milyon manatdır.»*[225] */ «Նախագծի համաձայն, 2013 թ.-ին պետական բյուջեի եկամուտները կազմել են 19 միլիարդ 154 միլիոն, իսկ ծախսերը՝ 19 միլիարդ 810 միլիոն մանաթ»: «2015-ci ilin ilk ayında*

[222] Prezident Füzuli Su Elektrik Stansiyasının açılışında iştirak edib.,15.12.2012, http://news.lent.az/news/111054
[223] Qışın astanasında enerji söhbəti, 25.10.2010, http://www.azadliq.org/content/article/2200414.html
[224] Dəniz yük daşımaları 0,4% artıb, 30 Noyabr 2012, http://www.contact.az/docs/2012/Economics&Finance/113000019910az.htm#.VsoqB_mLTIU
[225] 2013-cü ilin büdcə layihəsi parlamentə tövsiyə edildi, 06.11.2012, http://www.azadliq.org/content/article/24762245.html

Azərbaycanda ÜDM 2014-cü ilin yanvarına nisbətən isə 17.9% düşüb.»[226] / *«2015թ. առաջին ամսում Ադրբեջանի ՀՆԱ-ն 2014թ. հունվարի հետ համեմատ նվազել է 17.9 տոկոսով»: «Bank sektorunda kreditlər üçün təklif olunan faiz dərəcələri Mərkəzi Bank tərəfindən tənzimlənə bilməz.»*[227]*/ «Բանկային հատվածում վարկերի համար առաջարկվող տոկոսադրույքները չեն կարող կարգավորվել Կենտրոնական բանկի կողմից»:*

3.3.5. Շինարարություն և գործարարություն. ոլորտն արտացոլող բառերից ու բառակապացություններից առանձնացնենք՝ sahibkarlıq–ձեռնարկատիրություն, torpaq mülkiyyəti–հողի սեփականություն, hesabat–հաշվետվություն, fiziki şəxs–ֆիզիկական անձ, investisiya–ներդրում, iş adamı-գործարար, işgüzar əlaqələr-գործնական հարաբերություններ, inşaat–շինարարություն, tikinti şirkətləri–շինարարական ընկերություններ, qiymət-արժեք, daşınmaz əmlak-անշարժ գույք, tikinti sektoru–շինարարական հատված, ticarət mərkəzi-առևտրի կենտրոն և այլն: Ներկայացնենք մեջբերումներ. *«Aprelin 1-i üçün insaat bölməsində çalışan isciləri̇n orta siyahı sayı 93,1 min nəfər olub. Bu, əvvəlki ilin eyni dövrü ilə müqayisədə 15,4% çoxdur.»*[228] / *«Ապրիլի 1-ի դրությամբ շինարարության ոլորտում աշխատողների միջին թվաքանակը կազմել է 93.1 հազար մարդ: Սա նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ ավելի է 15,4 տոկոսով»: «Bina ilə üzbəüz nəhəng ticarət mərkəzi, restoran və digər obyektlər tikiləcək.»*[229] / *«Շենքի առջևում կառուցվելու է առևտրի մեծ կենտրոն, ռեստորան և այլն»:*

3.3.6. Գյուղատնտեսություն. ադրբեջանական լրատվական կայքերի մեծամասնությունն ունի առանձին բաժին կամ ենթաբաժին, որտեղ արծարծվում են հիմնականում Ադրբեջանի գյուղատնտեսության, մասնավորապես երկրագործության և անասնապահության տարբեր ենթաճյուղերին վերաբերող հարցեր: Տեքստերում գործածվում են բազմաթիվ ոլորտային բառեր, արտահայտություններ և բառակապակցություններ, որոնք գրեթե չեն հանդիպում այլ հրապարակումներում. օրինակ՝ taxıl–հացահատիկ, buğda–ցորեն, un-ալյուր, ərzaq məhsulları–սննդամթերք, ət

[226] Azərbaycanda nominal ÜDM 18% düşüb, http://www.azadliq.org/content/article/26853955.html
[227] Bank faizlərindən böyük narazılıq var, 19 марта 2014, http://news.day.az/economy/475677.html
[228] Özəl tikinti şirkətləri işçilərə az pul verməyə başlayıb, 2013 May 20, http://www.contact.az/docs/2013/Economics&Finance/052000036802az.htm#.VsjVS_mLTIU
[229] Bu binalar Sumqayıtın simasını dəyişəcək, 21 Oktyabr 2014, http://news.milli.az/society/303624.html

kombinatı–մսի կոմբինատ, ət məhsulları–մսամթերք, iribuynuzlu heyvan–խոշոր եղջերավոր կենդանի և այլն: Ներկայացնենք մեջբերումներ ադրբեջանական էլեկտրոնային մամուլից. *«Ölkədə 3 milyon tona yaxın taxıl yığılır. Onun da 1.7 milyon tonu buğdanın payına düşür.»*[230] */ «Երկրում հավաքվում է մոտ 3 միլիոն տոննա հացահատիկ: Դրանից 1.7 մլն տոննան բաժին է հասնում ցորենին»: «Bilirsiniz ki, biz un istehsalı ilə məşğuluq.»*[231] */ «Գիտեք, որ մենք զբաղվում ենք ալյուրի արտադրությամբ»: «Bakıda tikilən ət kombinatları istifadəyə veriləndən sonra diri heyvanların şəhərə girişi qadağan olunacaq.»*[232]*/ «Բաքվում կառուցվող մսի կոմբինատները շահագործման հանձնելուց հետո արգելվելու է խոշոր եղջերավորների ներմուծումը քաղաք»:*

3.3.7. Զբոսաշրջություն. ադրբեջանական մերօրյա մամուլում երբեմն հանդիպում է առանձին ենթաբաժին «զբոսաշրջություն» անվանմամբ, որտեղ հիմնականում տեղ են գտնում Ադրբեջանի զբոսաշրջության ոլորտին առնչվող վերլուծություններ, վիճակագրական տվյալներ, ինչպես նաև՝ զբոսաշրջության խթանմանը վերաբերող հոդվածներ: Ընթերցողների շրջանում հետաքրքրություն են առաջացնում նաև արտասահմանյան տեսարժան վայրերի վերաբերյալ տեղեկատվական հոդվածները: Բառապաշարը համեմատաբար հարուստ է՝ elektron viza-էլեկտրոնային մուտքի արտոնագիր, turist-զբոսաշրջիկ, turizm sərgisi-զբոսաշրջային ցուցահանդես, turizm sənayesi-զբոսաշրջային արդյունաբերություն և այլն: Այսպես օրինակ՝ *«Azərbaycana gələn turistlərə elektron vizanın verilməsi müddəti iki dəfə azaldılır.»*[233] */ «Երկու անգամ նվազել է Ադրբեջան այցելող զբոսաշրջիկներին էլեկտրոնային կարգով մուտքի թույլտվություն տալու ժամկետը»: «Əmirliyə hər dəfə gələndə burada nə isə bir yenilik aşkar edirsən.»*[234] */ «Ամեն անգամ գալով Էմիրություններ՝ այստեղ ինչ որ նորություն ես բացահայտում»:*

[230] Aqrar sektorun paradoksu: Taxılımız boldur, amma buğdanı xaricdən alırıq, 15 Fevral 2016, http://news.milli.az/economy/407507.html
[231] Əsas un və ərzaq istehsalçısı olan şirkətlər: Unun qiyməti qalxmayıb, 23 Fev 2015, http://oxu.az/economy/64611
[232] Bakıda diri heyvanların şəhərə girişi qadağan olunacaq, 13.03.2015, http://news.day.az/society/563201.html
[233] Azərbaycana gələn turistlərə elektron vizanın verilməsi müddəti iki dəfə azaldılır., 25 Yan 2016, http://oxu.az/economy/114001
[234] Birləşmiş Ərəb Əmirliklərinə - ekstremal əyləncə dalınca, 08.02.2016, http://azertag.az/xeber/Birlesmis_Areb_Amirliklerine___ekstremal_eylence_dalinca-925486

3.4. Ռազմական ոլորտ

Ռազմական տերմիններն ընդգրկում են այն բառերն ու բառակապակցությունները, որոնք արտահայտում են ռազմական հասկացություններն ու հարաբերությունները: Ռազմական տերմինաբանությունը պետք է համապատասխանի ռազմական գիտության զարգացման համապատասխան ժամանակաշրջանի մակարդակին և պետք է արտացոլի ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ հասկացությունները: Այն ներառում է բոլոր զորատեսակները, զինվորական կոչումները, զենքերի, զինամթերքի ավանդական և նորագույն տեսակների անվանումները, զինվորական տեխնիկան և միջոցները, ռազմական գործողությունների ապահովման օպերատիվ միջոցները, ռազմական-ինժեներական տեխնիկան, համընդհանուր քաղաքացիական և ռազմական տրանսպորտային միջոցները, վառելիքի տեսակները, նյութական, բժշկական ունեցվածքը, էներգիայի մատակարարման և այլ ենթակառուցվածքներ և այլն:

Ռազմական բառապաշարն ադրբեջաներենում ունի ինքնատիպ և կայուն բնութագիր: Ադրբեջաներենի ռազմական բառապաշարը սերտորեն կապված է արաբերենից, պարսկերենից, ռուսերենից և արևմտաեվրոպական լեզուներից փոխառված տերմինների հետ: Տևական ժամանակ որպես զինվորականների շփման միջոց հիմնականում ծառայել է ռուսերենը, խորհրդային կարգերի փլուզումից հետո պատկերը փոքր ինչ սկսել է փոխվել: Աստիճանաբար որոշ ռուսերեն բառեր դուրս են եկել ակտիվ գործածությունից, սակայն մինչև օրս ականառու է այդ լեզվի հսկայական ազդեցությունը վերոնշյալ ոլորտում: Ռազմական կոչումների, զորամիավորումների, տեխնիկայի անվանումների մեծ մասն ադրբեջաներեն են փոխանցվել ռուսերենից կամ ռուսերենի միջոցով՝ գրեթե անփոփոխ ձևով: Ադրբեջանի անկախացումից հետո ռազմական տերմինաշարը սկսեց հարստանալ նաև ցեղակից լեզուներից, մասնավորապես թուրքերենից փոխառություններ կատարելու շնորհիվ: Այսօր ժամանակակից մամուլում կարելի է հանդիպել, օրինակ՝ թուրքերեն tabur-գումարտակ, taqım-հրաման, gizir-ենթասպա, çavuş-սերժանտ և այլ ռազմական տերմիններ: Մամուլում առավել հաճախ հանդիպող ռազմական տերմիններից առանձնացնենք, օրինակ՝ artilleriya–հրետանի, avtomat–ինքնաձիգ, batalyon-

գումարտակ, bomba–ռումբ, diviziya-դիվիզիա, general-գեներալ, flot–նավատորմ, kapitan–կապիտան, komandir–հրամանատար, manevr–մանևր, tank–տանկ, հրասայլ, mayor–մայոր, patron-փամփուշտ, pistolet-ատրճանակ, raket–հրթիռ, serjant–սերժանտ, snayper-դիպուկահար, polkovnik-գնդապետ, rota–վաշտ, minomyot-ականանետ, pulemyot-գնդացիր, admiral-ծովակալ և այլն: Միաժամանակ նշենք, որ հայերենի ռազմական տերմինաշարում ևս կան ռուսերեն փոխառություններ, սակայն ի տարբերություն ադրբեջաներենի, մերօրյա մամուլում ավելի հաճախ տեղ են գտնում կա՛մ դրանց հայերեն համարժեքները, կա՛մ էլ նորակազմ բառեր հայերենի հնարավորությունների հաշվին:

Բառակազմության միջոցով համալրվել և հարստացել է ռազմական բառապաշարը. այսպես, bomba–ռումբ, պայթուցիկ բառից ստեղծվել են bombardman, bombardmançı, bombardmaq բառերը: Ադրբեջաներենի որոշ բառային խմբեր և բառակապակցություններ, կիրառվելով ռազմական բնույթի տեքստերում, ձեռք են բերել նոր իմաստային երանգներ. օրինակ՝ dərə-ձորակ, arahetk, əmlak-գույք, yanacaq –վառելիք, mal-ապրանք, uzunluq-երկարություն, երկայնք, təlimat-հրահանգ և այլն:

Զինվորական տերմինների մեջ իրենց հատուկ տեղն ունեն փոխառյալ և ոչ փոխառյալ հապավումները. օրինակ՝ PTM–Polkun tibb məntəqəsi-գնդի բժշկական կետ, TSB-Tibb sanitariya batalyonu-բժշկասանիտարական գումարտակ, kombat (ռուս.՝ командир батальона) գումարտակի հրամանատար, DOT (ռուս.՝ долговременная огневая точка) երկարաժամկետ կրակակետ, HHQ - Hərbi Hava Qüvvələri -ռազմական օդուժ և այլն: Օրինակ՝ *«Azərbaycanda Hərbi Hava Qüvvələri (HHQ) günü qeyd olunur.»*[235]/ *«Ադրբեջանում նշվում է ռազմական օդուժի օրը»:*

Հատկանշական է, որ գրեթե բոլոր ադրբեջանական լրատվամիջոցներին բնորոշ է ռազմական բաժնին կից կամ ևս մեկ առանձին բաժնի առկայությունը, որը վերաբերում է արցախյան հակամարտությանը և տարբեր կայքերում կրում է տարբեր անվանումներ՝ Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղ, ԼՂ հակամարտություն և այլն: Մասնավորապես, ադրբեջանական www.apa.az կայքում առկա է առանձին բաժին «ռազմական» անվանմամբ, որտեղ հիմնականում զետեղված են կրկին

[235] 23 yaşlı Azərbaycan Hərbi Hava Qüvvələri, 14.02.2015, http://oxu.az/war/63290

արցախյան համակարտությանն առնչվող հրապարակումները: Մասնավորապես, 2014թ. օգոստոսից հետո այդ նորությունների բովանդակությունը ևս նույնատիպ է՝ կապված Հայաստան-Ադրբեջան պետական սահմանին և Արցախ-Ադրբեջան զինված ուժերի շփման գծում իրադարձությունների հետ: Լուրերը հիմնականում վերաբերում են զինադադարի ռեժիմի խախտումներին, օգտագործված զինատեսակներին և արձակված կրակոցների քանակին, ներկայացվում են սահմանամերձ գյուղերի անվանումները (եթե կա տեղեկություն, ապա նաև խոսվում է երկուստեք վիրավորների կամ զոհերի մասին), վերջում էլ պարտադիր կերպով նշվում է, որ «ադրբեջանական զինված ստորաբաժանումները տիրապետում են օպերատիվ իրավիճակին և անհրաժեշտության դեպքում պատասխան հարված հասցնում հայկական զինված ուժերի կրակակետերին, դիրքերին և խրամատներին»:[236]

Մեջբերումներ մամուլից. *«Müdafiə Nazirliyinin mətbuat xidmətindən ATV xəbər.az-a bildiriblər ki, erməni silahlı bölmələri dünən və bu gecə Ermənistan Respublikasının Berd rayonunun çinari və Ayqepar kəndlərində yerləşən mövqelərdən Tovuz rayonunun Koxanəbi və Əlibəyli kəndlərində yerləşən mövqelərimizi atəşə tutublar.»*[237] / *«Պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունից ATVxəbər.az–ին հայտնել են, որ հայկական զինված սպորաբաժանումները երեկ և այս գիշեր ՀՀ Բերդի տարածաշրջանի Չինարի և Այգեպար գյուղերում տեղակայված դիրքերից կրակ են բացել Թովուզի շրջանի Կոխանաբի և Ալիբեյլի գյուղերում տեղակայված մեր դիրքերի ուղղությամբ»: «Qafqazinfo Müdafiə Nazirliyinə istinadən xəbər verir ki, qarşı tərəfin bir neçə texnikası sıradan çıxarılıb, şəxsi heyəti arasında ən azı 2 nəfər ölən və 4 yaralanan var.»* [238] / *«Գաֆգազինֆո»-ն, պաշտպանության նախարարությանը վկայակոչելով, հայտնում է, որ շարքից հանվել է հակառակորդի մի քանի տեխնիկա, անձնակազմից առնվազն 2 հոգի մահացել է և 4 հոգի վիրավորվել է»:*

2016թ. ապրիլի սկզբին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում Ադրբեջանի սանձազերծած և 1994թ. հրադադարից հետո աննախադեպ լայնամասշտաբ ռազմական գործողություններով պայմանավորված՝ ադրբեջանական

[236] Azərbaycan Ordusu düşmən mövqelərinə 120 atəş zərbəsi endirib http://az.trend.az/azerbaijan/karabakh/2477962.html

[237] Atəşkəs rejimi 21 dəfə pozulub, 14.10.2014, http://news.atv.az/az/event/1357-ateskes-rejimi-21-defe-pozulub

[238] Müdafiə Nazirliyi: Ermənilər həftə ərzində 18 ölü və 20-dən artıq yaralı olaraq itki verib, 20 декабря 2015, http://news.day.az/azerinews/730281.html

մամուլում ռազմական բնույթի հրապարակումներն ավելացել են թե՛ իրենց քանակով, թե՛ ծավալով: Ընդհանրապես, 2016թ. ապրիլ ամսից ադրբեջանական էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային լրատվամիջոցների առանցքում ռազմական գործողություններն էին և դրանց շուրջ ծավալվող իրադարձությունները: Բացի զուտ տեղեկատվական բնույթի և ռազմական տերմիններով հագեցած լուրերից, մամուլում կարելի է հաճախ հանդիպել նաև մասնագիտական վերլուծություններ, ռազմական թեմաներով հարցազրույցներ, քննարկումներ: Արդյունքում ադրբեջանական մամուլում զետեղված նյութերը հագեցած էին այնպիսի ռազմական բառերով և արտահայտություններով, որոնք մինչ այդ այդքան հաճախ չէին գործածվում լրագրողների կողմից. օրինակ՝ minaatan-ականանետ, qumbaraatan-նռնականետ, təxribat-դիվերսիա, silah növü-զինատեսակ, snayper-դիպուկահար, təmas xətti-շփման գիծ, cəbhə-ռազմաճակատ, atəşkəs-զինադադար, atəş açmaq-կրակ բացել, canlı qüvvə-մարդկային ուժ, hərbi texnika–զինտեխնիկա, artilleriya-հրետանի, pozulma–խախտում, keşfiyyat-հետախուզություն, nəzarət etmək-վերահսկել, müşahidə-մշտադիտարկում, döyüş maşını-մարտական մեքենա, hücum-հարձակում, münaqişə-հակամարտություն, münaqişəli qoşunlar-հակամարտող զորքեր, könüllü-կամավոր, itkilər və yaralılar-զոհեր և վիրավորներ, zərbə endirmək-հարված հասցնել, arsenal-զինանոց և այլն:

Օրինակ մամուլից՝ *«V.Dərgahlı qeyd etdi ki, düşmənin cəbhəboyu aktivləşməsi, həmçinin təmas xəttinə əlavə hərbi texnika və canlı qüvvənin daşınması kimi faktlar ordumuzun nəzarəti altındadır.»*[239] */«Վ.Դարգահլին նշել է, որ ռազմաճակատում հակառակորդի ակտիվացումը, ինչպես նաև շփման գծում լրացուցիչ ռազմական տեխնիկայի և կենդանի ուժի տեղափոխման վերաբերյալ փաստերը վերահսկվում են մեր բանակի կողմից»: «Erməni silahlı bölmələri cəbhənin müxtəlif istiqamətlərində 60 millimetrlik minaatanlardan da istifadə etməklə sutka ərzində atəşkəs rejimini ümumilikdə 112 dəfə pozub.»*[240] */ «Հայկական զինված սդորաբաժանումները ռազմաճակատի տարբեր ուղղություններով օրվա ընթացքում հրադադարի ռեժիմը ընդհանուր առմամբ խախտել են 112 անգամ՝ կիրառելով 60 միլիմետրանոց ականանետեր»: «Azərbaycan Silahlı Qüvvələri əməliyyat*

[239] "Hərbi əməliyyatlar hər an yenidən başlaya bilər" – MN, 28.04.2016, http://metbuat.az/news/434975/herbi-emeliyyatlar-her-an-yeniden-baslaya-biler---mn.html

[240] Ermənistan silahlı bölmələri atəşkəs rejimini 112 dəfə pozub, 01.05.2016, http://www.kaspi.az/az/ermenistan-silahli-blmeleri-ateskes-rejimini-112-defe-pozub/

şəraitini nəzərə alaraq düşmənin atəş nöqtələrinə, mövqelərinə və səngərlərinə 137 atəş zərbəsi endirib.»[241] / *«Ադրբեջանի զինված ուժերը, հաշվի առնելով իրավիճակը, թշնամու կրակակետերին, դիրքերին և խրամատներին հասցրել են 137 հարված»:*

Կատարելով ժամանակակից ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների մշտադիտարկում կոնկրետ ռազմական բնութի տեղեկատվության առումով՝ կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ կայքերը միմյանցից չեն տարբերվում լեզվական, այդ թվում՝ բառապաշարային առանձնահատկություններով: Գրեթե բոլոր կայքերում համանման պատկերն է՝ նույն բառապաշարը, համանման քերականական կառույցները: Սա մի կողմից կարող է վկայել ադրբեջաներենի ոչ հարուստ բառապաշարի, մյուս կողմից՝ լրատվամիջոցների նկատմամբ լուրջ պետական կենտրոնացված վերահսկողության առկայության մասին: Հավելենք, որ սույն վերահսկողությունն առավել ակնառու է հատկապես ռազմական ոլորտը լուսաբանող լրատվամիջոցների նկատմամբ. գաղտնիք չէ, որ Ադրբեջանում արդեն տևական ժամանակ է, որ հանրությանը չի ներկայացվում շփման գծում տեղի ունեցող իրական վիճակը:

Ստորև ներկայացնենք ադրբեջանական մամուլից մի մեջբերում, որտեղ շարադրված նյութը նույնությամբ կրկնվում է նույն օրվա բոլոր համապատասխան հրապարակումներում՝ apa.az trend.az, azertag.az և այլն: Այսպես, օրինակ՝ *«Ermənistan silahlı qüvvələrinin bölmələri cəbhənin müxtəlif istiqamətlərində sutka ərzində atəşkəs rejimini ümumilikdə 117 dəfə pozub. Müdafiə Nazirliyinin mətbuat xidmətindən AZƏRTAC-a bildiriblər ki, Ermənistanın İcevan rayonunun Paravakar, Berkaber kəndlərində və adsız yüksəkliklərdə yerləşən mövqelərdən Ağstafa rayonunun Köhnəqışlaq, Qazax rayonunun Qızılhacılı kəndlərində və adsız yüksəkliklərdə, Berd rayonunun Mosesqex, Çinari kəndlərində yerləşən mövqelərdən Tovuz rayonunun Ağdam, Əlibəyli, Koxanəbi, Ağbulaq kəndlərində, Krasnoselsk rayonu ərazisindəki adsız yüksəkliklərdə yerləşən mövqelərdən Gədəbəy rayonu ərazisindəki adsız yüksəkliklərdə yerləşən mövqelərimiz atəşə tutulub. Goranboy rayonunun Talış, Gülüstan, Tərtər rayonunun Göyarx, Çaylı, Çiləbürt, Yarımca, Ağdam rayonunun Şıxlar, Novruzlu, Cəvahirli, Kəngərli, Sarıcalı, Şuraabad, Yusifcanlı, Nəmirli, Xocavənd rayonunun Kuropatkino, Füzuli rayonunun Horadiz, Qaraxanbəyli, Qorqan, Aşağı Seyidəhmədli, Cəbrayıl rayonunun Mehdili kəndləri yaxınlığında, həmçinin Göygül, Goranboy, Xocavənd, Füzuli və Cəbrayıl rayonları ərazisindəki adsız yüksəkliklərdə yerləşən*

[241] Düşmənin atəş nöqtələrinə 137 atəş zərbəsi endirilib, http://news.lent.az/news/214323

mövqelərdən də Silahlı Qüvvələrimizin mövqeləri atəşə tutulub. Azərbaycan Silahlı Qüvvələri əməliyyat şəraitini nəzərə alaraq düşmənin atəş nöqtələrinə, mövqelərinə və səngərlərinə 120 dəfə atəş zərbəsi endirib».[242]*/ «Հայկական զինված ստորաբաժանումները ռազմաճակատի տարբեր ուղղություններով օրվա ընթացքում հրադադարի ռեժիմը ընդհանուր առմամբ խախտել են 117 անգամ: Պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունից «Թրենդ»-ին տրված տեղեկության համաձայն, Հայաստանի Իջևանի տարածաշրջանի Պառավաքար, Բերքաբեր գյուղերում և անանուն բարձունքներում տեղակայված դիրքերից Աղստաֆա շրջանի Քյոհնեգըշլաք, Ղազախի շրջանի Գըզըլհաջըլը գյուղերում և անանուն բարձունքներում, Բերդի շրջանի Մովսես, Չինարի գյուղերում տեղակայված դիրքերից կրակ է բացվել Թովուզի շրջանի Աղդամ, Ալիբեյլի, Կոխանաբի, Աղբուլակ գյուղերում, Կրասնոսելսկի շրջանի անանուն բարձունքներում տեղակայված մեր դիրքերի ուղղությամբ: Դրանից բացի Հայաստանի կողմից գրավված Գորանբոյ շրջանի Թալիշ, Գյուլիստան, Թարթարի շրջանի Գյոյարխ, Չայլը, Չիլեբյուրթ, Յարըմջա, Աղդամի շրջանի Շըխլար, Նովրուզլու, Ջավահիրլի, Քանգարլի, Սարըջալը, Շուրաաբադ, Յուսիֆջանլը, Նամիրլի, Խոջավենդ շրջանի Կուրոպատկինո, Ֆիզուլի և Ջաբրաիլ շրջանների տարածքում գտնվող անանուն բարձունքներում տեղակայված դիրքերից էլ մեր զինված ուժերը ենթարկվել են գնդակոծության: Ադրբեջանի զինված ուժերը, հաշվի առնելով օպերատիվ իրավիճակը, 120 անգամ հարված են հասցրել թշնամու կրակակետերին, դիրքերին և խրամատներին»:*

Ռազմական ուղղվածություն ունեցող տեղեկատվությունը, ցավոք, վերջին շրջանում դարձել է ավելի արդիական նաև կապված աշխարհի տարբեր կողմերում առկա թեժ կետերում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Մամուլում ռազմական հակամարտությունների լուսաբանման հիմնահարցը համարվում է բարդ սոցիալական–քաղաքական խնդիր: Միջազգային լրահոսում տեղ գտած տեղեկատվությունը հաճախ զետեղվում է նաև ադրբեջանական մամուլում և, հաշվի առնելով սույն լրատվության՝ գերազանցապես թարգմանված լինելու հանգամանքը, փաստենք, որ բառապաշարը հարուստ է լինում փոխառյալ ռազմական տերմիններով, իսկ բովանդակային առումով այն ունենում է զուտ տեղեկատվական, երբեմն նաև

[242] Ermənistan silahlı qüvvələrinin bölmələri sutka ərzində atəşkəs rejimini 117 dəfə pozub, http://azertag.az/xeber/Ermenistan_silahli_quvvelerinin_bolmeleri_sutka_erzinde_ateskes_rejimini_117_defe_pozub_VIDEO-916828

վերլուծական ուղղվածություն. օրինակ՝ müdafiə naziri–պաշտպանության նախարար, Silahlı Qüvvələr-զինված ուժեր, təlim-մարզում (զորավարժություն), snayper tüfəngi-դիպուկահար հրացան, müdafiə təyinatlı–պաշտպանական նշանակություն ունեցող, nüvə silahı–միջուկային զենք, hərbi raket -ռազմական հրթիռ, təkmilləşdirmə kursları–վերապատրաստման դասընթացներ, sülhməramlı əməliyyatları–խաղաղապահ գործողություններ, qoşun-զորք և այլն:

Ստորև ներկայացնենք ադրբեջանական մերօրյա էլեկտրոնային մամուլից մեջբերումներ. *«Yeri gəlmişkən Azərbaycanda da markalı snayper tüfəngi istehsal olunur. »İstiqlal« snayper tüfəngi ötən ilin noyabrında Pakistanda keçirilən »İDEAS-2008« hərbi sənaye sərgisində nümayiş etdirilib.»*[243] */ «Ի դեպ, Ադրբեջանում կիրառվում է «Իստիգլալ» մակնիշի դիպուկահար հրազենը: «Իստիգլալ» մակնիշի դիպուկահար հրացանը ցուցադրվել է անցած տարվա նոյեմբերին Պակիստանում անցկացվող (İDEAS-2008) ռազմական արդյունաբերության ցուցահանդեսում»: «Rəsmi olaraq dövlət nüvə silahına malik olmadığını deyir, amma belə hesab olunur ki, İsrailin sərəncamında 80-dən 200-ə qədər hərbi raket ola bilər.»*[244] */ «Պետությունը պաշտոնապես հայտարարում է, որ միջուկային զենք չունի, բայց կա կարծիք, որ Իսրայելի տրամադրության տակ կարող է լինել 80-200 ռազմական հրթիռ»:*

3.5. Մշակույթ

Ժամանակակից ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների մեծ մասն ունի առանձին բաժին՝ հատկացված մշակութային կյանքի լուսաբանմանը (www.azerbaijan-news.az, www.baki-xeber.com, xalqcebhesi.az, www.ikisahil.com, apa.az, http://sesqazeti.az/, http://www.ayna.az, http://www.movqe.az/ և այլն): Սույն կայքերի ընդհանուր և երկարաժամկետ դիտարկումը վկայում է, որ վերը նշված բաժիններում լուսաբանվում են ինչպես Ադրբեջանի ներքին մշակութային կյանքին վերաբերող իրադարձությունները, այնպես էլ ոչ պակաս ակտիվությամբ (եթե ոչ առավել)

[243] Azərbaycanlı snayperlər dəstəsi...,16.10.2009,http://modern.az/articles/870/1/

[244] Dünya ordularının reytinqi 2013-cü il, http://big.az/153422-Dunya_ordularinin_reytinqi_2013-cu_il.html

արտասահմանում տեղի ունեցող կարևոր մշակութային անցուդարձը: Ուշագրավ է, որ նմանատիպ նյութերը թե՛ իրենց բովանդակությամբ, և թե՛ իրենց ոճով ու բառապաշարով հաճախ արտասահմանյան պարբերականներում տեղ գտած հրապարակումների կրկնօրինակն են: Սույն թեմաներն ունեն նաև ինքնատիպ բառապաշար, բառային միավորներ և տերմիններ, որոնք կրկնվում են տարբեր կայքերում զետեղված հոդվածներում: Երբեմն ադրբեջանական կայքերում մշակութային նորությունները տեղ են գտնում ոչ թե առանձին, այլ հարակից ոլորտների հետ միասին՝ «գիտություն և մշակույթ», «մշակույթ և գրականություն», «հետաքրքիր տեղեկատվություն», անվանումներով բաժիններում (modern.az,zaman.az, http://news.day.az, www.azerbaijan-news.az): Երբեմն մշակութային բաժինն իր հերթին ունենում է ենթաբաժիններ՝ շոու բիզնես, արվեստ, գրականություն, մշակութային քաղաքականություն, մշակութային իրադարձություններ:

Շոու բիզնեսին առնչվող հրապարակումներում հաճախ գործածվող բառերից և արտահայտություններից նշենք, օրինակ՝ mahnı müsabiqəsi-երգի մրցույթ, estrada müğənnisi-էստրադային երգիչ, klip–տեսահոլովակ, təqdimat–շնորհանդես, caz vokal–ջազային վոկալ, ulduz-աստղ, konsert proqramı–համերգային ծրագիր, kompozisiya–ստեղծագործություն և այլն: Օրինակ՝ *«Müğənni Zaur Həsənovun "Tənhayam bu gün" mahnısına çəkdirdiyi klipin təqdimatı keçirilib.»*[245] */ «Տեղի է ունեցել երգիչ Զաուր Հասանովի «Այսօր միայնակ եմ» երգի հիման վրա նկարահանված տեսահոլովակի շնորհանդեսը»:*

Արվեստին և գրականությանը նվիրված նյութերում վերջին տասնամյակում հաճախ կարելի է հանդիպել նաև նոր բառերի և արտահայտությունների. müasir incəsənət üslubu–ժամանակակից արվեստի ոճ, prima balerina–բալետի պրիմա պարուհի, tamaşaçı–հանդիսատես, kinofestival–կինոփառատոն և այլն. օրինակ՝ *«Balerina məsələyə münasibət bildirərək, Amerika Balet Teatrının ilk qaradərili prima balerinası olmaq istədiyini açıq dilə gətirmişdi.»*[246] */ «Բալետի պարուհին հարցի վերաբերյալ հստակ բարձրաձայնել է, որ ցանկանում է դառնալ Ամերիկայի Բալետի թատրոնի առաջին սևամորթ պրիմա պարուհին»:*

[245] Müğənni Zaur Həsənovun klipinin təqdimatı keçirilib, 12 Noyabr 2015, http://az.apa.az/news/404506
[246] Balerina məsələyə münasibət bildirərək, Amerika Balet Teatrının ilk qaradərili prima balerinası olmaq istədiyini açıq dilə gətirmişdi,3rd July, 2015, http://amerikavekil.com/qaraderili-balerina-amerika-balet-teatrinin-tarixinde-ilk-defe-prima-balerina-olub/

Մշակութային քաղաքականությանն ու մշակութային իրադարձություններին առնչվող հրապարակումները վերաբերում են զանազան մշակութային իրադարձություններին՝ և՛ միջազգային, և՛ տեղական: Բառապաշարն առանձնապես աչքի չի ընկնում յուրահատուկ բառերի առկայությամբ. օրինակ՝ jurnal-ամսագիր, redaktor–խմբագիր, Mədəniyyət və Turizm Nazirliyi–մշակույթի և զբոսաշրջության նախարարություն, yaradıcılıq–ստեղծագործություն, sərgi–ցուցահանդես, qeyri-maddi irs–ոչ նյութական ժառանգություն, tətbiqi incəsənət–կիրառական արվեստ, mədəni industriya–մշակութային արդյունաբերություն, sənədli film–վավերագրական ֆիլմ, festival-փառատոն և այլն: Օրինակ՝ *«Mədəniyyət və Turizm Nazirliyinin təşkilatçılığı ilə keçiriləcək tədbir çərçivəsində milli kitabxananın konfrans zalında X.Hasilovanın yaradıcılığına həsr olunmuş sərgi nümayiş etdiriləcəkdir.»*[247] / *«Մշակույթի և զբոսաշրջության նախարարության կողմից կազմակերպվելիք միջոցառման շրջանակներում ազգային գրադարանի համաժողովների դահլիճում տեղի է ունենալու Խ.Հասիլովայի ստեղծագործություններին նվիրված ցուցահանդես»:* *«Fransız rejissor Olivye Daanın filmi bu gün 67-ci Kann kinofestivalının açılışında nümayiş olunacaq.»* [248] / *«Ֆրանսիացի ռեժիսոր Օլիվյե Դաանի ֆիլմն այսօր ցուցադրվելու է Կաննի կինոփառատոնի բացման արարողության ժամանակ»:*

3.6. Գիտական և տեխնիկական բնույթի հրապարակումներ

Ժամանակակից փուլում աշխարհի լեզուների տերմիններն ընդհանրացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտում: Այս առումով հարցականի տակ է դրվում ազգային լեզվով ինքնուրույն տերմինային համակարգերի գոյության հարցը՝ լինի դա գիտատեխնիկական, ԶԼՄ-ների կամ հասարակական-քաղաքական: Այստեղ առկա է երեք հնարավոր տարբերակ. գործածել միջազգային տերմիններ, փոխառել հարևան առավել խոշոր ազգի լեզվից համապատասխան տերմինը, կամ էլ, եթե թույլ են տալիս տվյալ լեզվի ներքին

[247] Yazıçı-dramaturq Xalidə Hasilovanın 90 illiyinə həsr olunmuş yubiley tədbiri keçiriləcəkdir, 14.12.2010, http://azertag.az/xeber/Yazichi_dramaturq_Xalide_Hasilovanin_90_illiyine_hesr_olunmus_yubiley_tedbiri_kechirilecekdir-504616

[248] Kann kinofestivalının ən yaxşı 10 filmi, 23.05.2014, http://www.anspress.com/medeniyyet/14-05-2014/kann-kinofestivalinin-en-yaxsi-10-filmi-siyahi

հնարավորությունները, ստեղծել սեփականը: Արդյունքում ստեղծվել է և շարունակում է ձևավորվել նոր բառապաշար[249]: Անդրադառնալով ժամանակակից ադրբեջաներենի բառապաշարի գիտատեխնիկական բառային շերտին՝ հարկ է նշել, որ այն չի շրջանցում ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը: Տեխնիկական բառապաշար մուտք գործող բառերը հիմնականում վերաբերում են համակարգչային տեխնիկային, համացանցի հնարավորություններին, տարբեր սարքավորումներին և այլն: Նոր տերմինների մուտքն ադրբեջաներեն տեղի է ունենում երբեմն շատ արագ, երբեմն էլ՝ աստիճանաբար: Պետք է նշել, որ հատկապես մեծ հետաքրքրություն են առաջացնում կապի նորագույն միջոցներին, հեռահաղորդակցությանը, տեխնոլոգիական նորարարություններին վերաբերող նորությունները:

Գիտական կամ գիտահանրամատչելի հրապարակումները մամուլում համեմատաբար սակավաթիվ են, և դրանց շուրջ լայն քննարկումներ գրեթե չեն ծավալվում, դա բնորոշ է հատուկ գիտական ուղղվածություն ունեցող տեղեկատվական կայքերին և հանդեսներին: Մերօրյա ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում զետեղված համանման հոդվածների բառապաշարի մասին պատկերացում կազմելու համար առանձնացնենք հաճախ կիրառվող բառեր և բառակապակցություններ՝ fəxri ad–պատվավոր կոչում, alimlik dərəcəsi-գիտական աստիճան, elmi işçi-գիտաշխատող, elmi tədqiqat müəssisəsi-գիտահետազոտական հաստատություն, super kompyuter–գեր համակարգիչ, Rabitə və Yüksək Texnologiyalar Nazirliyi–Կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարություն, istifadəçi–օգտատեր, sosial şəbəkələri–սոցիալական ցանցեր, genişzolaqlı İnternet-լայնաշերտ համացանց և այլն: Օրինակ՝ *«Heyder Eliyev adına Coğrafiya İnstitutunda elmi işçilerin attestasiyası başa çatıb.»*[250] / *«Ավարտվել է Հեյդար Ալիևի անվան Աշխարհագրության ինստիտուտում աշխատակիցների ատեստավորումը»: «Cari tədris ili üçün ölkənin ali təhsil müəssisələrinə qəbul üçün 34098 yer ayrılıb.»*[251] / *«Ընթացիկ ուսումնական տարվա համար երկրի բարձրագույն կրթական հաստատություններ ընդունվելու համար*

[249] Куранбеков А.,ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ТЕРМИНОЛОГИИ В СОВРЕМЕННОМ ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ0 (Вопросы филологии. - М., 2003 - № 2 (14). – сс. 16-18.

[250] Elmi işçilerin attestasiyası başa çatıb, 17 Mart 2014, http://xeber.azeri.net/tehsil/elmi-iscilerin-attestasiyasi-basa-catib

[251] Magistraturaya qəbulda II mərhələ ləğv edilə bilər, 02.03.2013, http://www.ayna.az/2013/magistraturaya-qebulda-ii-merhele-legv-edile-biler/

հատկացվել է 34098 տեղ»: «2016-cı ilin birinci rübündə Amerika şirkəti "Apple" yeni smartfon modelləri olan iPhone 6s və iPhone 6s Plus-un istehsalını 30% azaldacaq.»[252]*/ «2016թ. առաջին քառորդում ամերիկյան "Apple" ընկերության նոր սմարթֆոն մոդելներ համարվող «iPhone 6s» և «iPhone 6s Plus»-ի արտադրության 30 տոկոսը նվազելու է»: «Birləşmiş Millətlər Təşkilatının 2015-ci il üçün "Genişzolaqlı İnternetin vəziyyəti" adlı hesabata əsasən, hazırda 3,2 mlrd. insan internetə çıxış imkanına malikdir ki, bu da dünya əhalisinin 43%-ini təşkil edir.»* [253] */ «ՄԱԿ-ի 2015թ. համար «Լայնաշերտ համացանցի իրավիճակը» վերնագրով հաշվետվության համաձայն, ներկայումս 3,2 միլիարդ մարդ համացանց մուտք գործելու հնարավորություն ունի, որն էլ կազմում է աշխարհի բնակչության 43 տոկոսը»:*

3.7. Սպորտ

Մարզական իրադարձությունները, խաղերը, մրցումները հնարավորինս հանգամանալից կերպով լուսաբանվում են ժամանակակից մամուլում: Արդյունքում ստեղծվել է նոր ճյուղ լրագրության ոլորտում՝ մարզական լրագրություն: Այն ներառում է ոչ միայն մարզական իրադարձությունների մեկնաբանությունը, այլև հրապարակախոսությունը, մարզական լրագրողական հետաքննությունը և այլն: Բնական է, որ մարզական լրագրության նման խոշոր ճյուղն ունի հատուկ բառապաշար, որի հիմքում ընկած է հատուկ տերմինաշար:

Ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում հիմնականում արծարծվում են առավել մեծ տարածում ունեցող ժամանակակից մարզաձևերը և այն մարզաձևերը, որտեղ ադրբեջանցի մարզիկները մասնակցում են միջազգային մրցումների և աչքի ընկնում հաջողություններով: Ադրբեջանական գրեթե բոլոր տեղեկատվական ԶԼՄ-ներն ունեն առանձին բաժին, որտեղ մանրամասն լուսաբանվում են մարզական իրադարձությունները: Ադրբեջանում գործում է նաև հատուկ մարզական ուղղվածության մի քանի կայք՝ http://cempion.az/, http://rekord.az, http://azerisport.com և այլն:

[252] "Apple" istehsalını aşağı saldı, 06 Yanvar, 2016, http://anspress.com/index.php?a=2&cid=2&lng=az&nid=368996
[253] Azərbaycan internetdən istifadə göstəricisinə görə 192 ölkə arasında 63-cü pillədə qərarlaşıb, 22 Sentyabr 2015 , http://az.apa.az/news/398010

Հատկանշական է, որ ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ Ադրբեջանում ամենամեծ հետաքրքրություն առաջացնող մարզաձևը ֆուտբոլն է: Ավելին, կան նաև հատուկ կայքեր զուտ ֆուտբոլային ուղղվածությամբ՝ http://futbolpress.az/, http://football-plus.az/, http://www.goal.az/, http://qol.az/new/: Օրինակ՝ *«İngiltərə milli komandasının yeni baş məşqçisi Roy Hocson "Mançester Yunayted"in hücumçusu Ueyn Runini Polşa və Ukraynada keçiriləcək Avropa çempionatının final mərhələsinə aparacağını deyib.»*[254] / *«Անգլիայի ազգային հավաքականի նոր գլխավոր մարզիչ Ռոյ Հոջսոնը հայտնել է, որ Լեհաստանում և Ուկրաինայում անցկացվելիք Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլում «Մանչեսթր Յունայթեդ»-ի հարձակվող Ուեյն Ռունին լինելու է առաջատար»: «Porto"nun baş məşqçisi Xulen Lopeteqi istefaya göndərilib.»*[255] / *«Պորտո»-ի գլխավոր մարզիչ Խուլեն Լոպետեգին հրաժարական է տվել»:*

Մարզաշխարհին վերաբերող հրապարակումներում գործուն կիրառություն ունեցող ադրբեջաներեն բառերից են, օրինակ՝ komanda–թիմ, məşqçi–մարզիչ, çempionat-առաջնություն, final–եզրափակիչ, hücumçu–հարձակվող, kubok-գավաթ, qızıl-ոսկի, gümüş-արծաթ, bürünc-բրոնզ, medal–մեդալ. yığma–հավաքական, gimnastika növləri–մարմնամարզության ձևեր, güləş–ըմբշամարտ, yeniyetmə-պատանի, yarış–մրցում այլն: Օրինակ՝ *«Qızlardan ibarət voleybol üzrə milli komandamız Polşa yığmasına qalib gələcəyi təqdirdə, qrup liderliyinə yüksələcək.»*[256] / *«Եթե կանանց վոլեյբոլի մեր թիմը հաղթի Լեհաստանի հավաքականին, կդառնա խմբի առաջատար»: «Sarayevoda keçirilən gənc cüdoçular arasında Avropa çempionatına yekun vurulub.»*[257] / *«Սարաևոյում ավարտվել է ձյուդոիստների Եվրոպայի երիտասարդական առաջնությունը»: «30 may-1 iyun tarixində Azərbaycanın paytaxtı Bakıda yüngül atletika üzrə yeniyetmələrin Avropa 2-ci Təsnifat yarışı keçiriləcək.»*[258] / *«Մայիսի 30-ից մինչև հունիսի 1-ը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում անցկացվելու է թեթև ատլետիկայի Եվրոպայի պատանիների 2-րդ դասակարգման մրցումը»: «Bildirib ki, bu il güləşçilərimiz üçün də*

[254] Runi "Avro-2012"yə aparılacaq, 01.05.2012, http://qol.az/new/?name=xeber&news_id=33901
[255] "Porto"nun baş məşqçisi istefaya göndərilib,08/01/2016, http://www.goal.az/teams/news/22358
[256] Voleybolçu qızlardan möhtəşəm qələbə,16 İyun 2015 , http://www.publika.az/p/96886
[257] 2 cüdoçumuz Avropa çempionu olub, 23 Sentyabr 2013, http://az.apa.az/news/314697
[258] Bakıda yüngül atletika üzrə yeniyetmələrin Avropa 2-ci Təsnifat yarışı keçiriləcək,21 may 2014, http://azerisport.com/az/athletics/20140521110510082.html

uğurlu olub. Yunan-Roma güləşi üzrə millimiz tarixində ilk dəfə dünya kubokuna sahib çıxıb.» [259] / *«Տեղեկացվել է, որ այս տարի մեր ըմբշամարտիկների համար եղել է հաջողակ տարի: Հունահռոմեական ոճի ըմբշամարտի մեր հավաքականը պատմության մեջ առաջին անգամ նվաճել է աշխարհի գավաթը»:*

Ադրբեջանական մամուլում հաճախ անդրադարձ է կատարվում նաև շախմատային անցուդարձին: Շախմատային լեզվում շատ են բառապատճենման միջոցով փոխառված բառերը՝ reytinq cədvəli–վարկանշային աղյուսակ, şahmatçı–շախմատիստ, olimpiada-օլիմպիադա, çempion-չեմպիոն, հաղթող և այլն: Օրինակ՝ *«Oyunlar hər gün saat 15.00-da Respublika Şahmat Mərkəzində (klub) keçiriləcək.»*[260] / *«Խաղերը անցկացվելու են ամեն օր ժամը 15.00-ին Շախմատի հանրապետական կենտրոնում»: «Şahmatçıların dünya reytinq cədvəlində dünya çempionu Magnus Carlsen-dən sonra ikinci mövqedə olan Ermənistan şahmatçısı Levon Aronian Vüqar Həşimovun ölüm ilə bağlı bunları deyib.»*[261]/ *«Շախմատիստների համաշխարհային վարկանիշային աղյուսակում աշխարհի չեմպիոն Մագնուս Կարլսենից հետո երկրորդ տեղում գտնվող Հայաստանի շախմատիստ Լևոն Արոնյանը Վյուգար Հաշիմովի մահվան կապակցությամբ ասել է այս խոսքերը»:*

3.8 . Բժշկություն

20-րդ դարի վերջին տասմանյակը և 21-րդ դարը նշանավորվեց բժշկագիտությունում արմատական փոփոխություններով: Կան այլ ոլորտներ ևս, որտեղ արծարծվում են բժշկության հետ կապված հարցեր: Այս ոլորտներից ամենակարևորը, թերևս, լրագրությունն է[262]: Ադրբեջանական մամուլի բժշկական և բժշկագիտական ուղղվածության հրապարակումներում հանդիպում ենք ինչպես առօրյա գործածական բառերի, այնպես էլ՝ զուտ բժշկական տերմինների՝ depressiya–ընկճախտ, ambulator müayinə-ամբուլատոր զննում, müalicə-բուժում, tibbi məsləhət-բժշկական

[259] Azərbaycan Güləş Federasiyası ilin ən yaxşılarını mükafatlandırıb, 28.12.2015, http://azertag.az/xeber/Azerbaycan_Gules_Federasiyasi_ilin_en_yaxsilarini_mukafatlandirib-914842
[260] Qadınlar arasında Azərbaycan çempionatı başlayır, http://idman.com.az/news.php?id=14517
[261] Azərbaycana Avropa çempionu adını qazandıran şahmatçı yanvarın 14-də dəfn ediləcək, 13.01.2014, http://www.azadliq.org/content/article/25228752.html
[262] Маджаева С. И., ГЛОБАЛИЗАЦИЯ МЕДИЦИНСКОЙ ТЕРМИНОЛОГИИ, Вестник Челябинского государственного университета. 2013. № 1 (292). Филология. Искусствоведение. Вып. 73. с.96.

խորհրդատվություն, virus–վարակ, aptek-դեղատուն, qoruyucu maska–պաշտպանիչ դիմակ, xəstəlik–հիվանդություն, profilaktika–կանխարգելում, diaqnostika-ախտորոշում, cərrahi avadanlıq–վիրահատական սարքավորում և այլն:

Ժամանակակից ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներից ոչ բոլորն ունեն առանձին բաժին՝ հատկացված առողջապահության ոլորտին, սակայն բոլոր կայքերում էլ անդրադառնում են ոլորտի նորություններին, բայց տեղեկատվական այլ բաժինների շրջանակներում՝ հասարակություն, առօրյա կյանք, նորություններ, գիտություն և այլն (http://www.ikisahil.com, http://online.ekspress.az, http://www.azerbaijan-news.az, http://zaman.az, http://news.milli.az/) և այլն: Կան նաև առանձին մասնագիտացված կայքեր (http://az.med.az,http://tibb.az/, http://saglamaile.az/): Հաճախ ադրբեջանական մերօրյա մամուլի էջերում հայտնվում են բժշկական ուղղվածությամբ արտասահմանյան պարբերականների նյութերը՝ թարգմանված ադրբեջաներեն: Ներկայացնենք ադրբեջանական մամուլում արտացոլված նմանատիպ լրատվությունից առանձին օրինակներ. *«Ebola virusu bütün dünyaya qorxu və dəhşət saçmaqda davam edir.»*[263] */ «Էբոլա վիրուսը շարունակում է ամբողջ աշխարհի մեջ վախ ու սարսափ տարածել»: «Onlar sübut ediblər ki, internet-asılılıq insan orqanizminin immunitetini məhv edir.»*[264] */ «Նրանք ապացուցել են, որ համացանցից կախվածությունը վնասում է մարդու օրգանիզմի դիմադրողականությունը»:*

3.9. Բնապահպանություն, եղանակ

Հատկանշական է, որ բնապահպանական իրավիճակների լուսաբանման գործընթացում արդեն 21-րդ դարում ակտիվորեն ներգրավվում են զանգվածային լրատվամիջոցները, բազմաթիվ ոչ-կառավարական բնապահպանական ուղղվածությամբ կազմակերպություններ: Ադրբեջանական ժամանակակից էլեկտրոնային ոչ բոլոր լրատվամիջոցներն ունեն առանձին բաժին՝ «բնապահպանություն» անվանումով, սակայն այլ բաժիններում հաճախ զետեղվում են նմանատիպ հրապարակումներ: Ընդ որում, սույն բաժնում տեղ են գտնում նաև

[263] "Bu xəstəlik Azərbaycana yalnız xaricdən gətirilə bilər", 18 октября 2014, http://news.day.az/society/528321.html
[264] İnternetdən asılılıq qripə və infarkta gətirib çıxardır, 26 Dekabr 2015, http://www.azerbaijan-news.az/index.php?mod=3&id=87042

եղանակային կանխատեսումները: Հիմնականում նման լրատվությունը հասանելի է «հետաքրքիր», «հասարակություն», «առօրյա», «այլ լուրեր», «սոցիալական» անվանումներով բաժիններում, ընդգրկում է նմանատիպ բառեր և բառակապակցություններ՝ suyun səviyyəsi–ջրի մակարդակ, dəyişkən-փոփոխական, çay-գետ, yağmursuz-առանց տեղումների, iqlim dəyişiklikləri–կլիմայական փոփոխություններ, ekologiya hüququ-բնապահպանական իրավունք, Dövlət Təbiət Qoruğu–բնության պետական արգելոց, ətraf mühit–շրջակա միջավայր և այլն: Օրինակ՝ *«Qanıx çayının Əyriçay məntəqəsində suyun səviyyəsində 3 sm artım müşahidə olunub.»*[265] */ «Նկատվել է ջրի մակարդակի 3 սմ աճ Գանըխ գետի Այրիչայ հատվածում»: «Martın 3-də Bakıda və Abşeron yarimadasında havanın dəyişkən buludlu, arabir tutulacağı, əsasən, yağmursuz keçəcəyi gözlənilir.»*[266] */ «Մարտի 3-ին Բաքվում և Ապշերոնի թերակղզում սպասվում է փոփոխական ամպամածություն, հիմնականում առանց տեղումների եղանակ»:*

Ադրբեջանական մամուլում ոչ հաճախ անդրադարձ է կատարվում նաև կենդանական և բուսական աշխարհին, իսկ բառապաշարն առանձնանում է ինքնատիպ բառերով և տերմիններով. օրինակ՝ zoopark–կենդանաբանական այգի, materik–մայրցամաք, koala–կոալա, kenquru–կենգուրու, meşə fondu -անտառային ֆոնդ, ağac-ծառ, kol–թուփ և այլն: Մեջբերումներ մամուլից. *«Ağ kenquru Çexiya zooparkından gətiriləcək. Bu növ kenquruya hər zooparkda rast gəlinmir.»*[267] */ «Չեխիայի կենդանաբանական այգի սպիտակ կենգուրու է բերվելու: Նման կենգուրու հնարավոր չէ տեսնել ամեն կենդանաբանական այգում»: «Donuz orqanizmində başqa viruslar da yaşayır.»*[268] */ «Խոզի օրգանիզմում այլ վարակներ էլ կան»:*

[265] Ölkə çaylarında mövcud vəziyyət açıqlanıb, 08 Fevral 2016, http://az.apa.az/news/415027
[266] Azərbaycan sinoptikləri xəbərdarlıq etdi , 1 Mart 2013, http://news.milli.az/society/172601.html
[267] Bakı Zooparkı iyunun 1-dən yay rejiminə keçəcək, 24.05.2012, http://www.olaylar.az/news/social/2699
[268] Donuz əti niyə haram buyurulub? , 30.09.2013, http://modern.az/articles/45321/1/

3.10. Կրոն

Ժամանակակից էլեկտրոնային մամուլում կրոնական հարաբերություններին վերաբերող հրապարակումներն աչքի չեն ընկնում իրենց հաճախականությամբ և առանձնապես մեծ հետաքրքրություն չեն առաջացնում ոչ կրոնական ուղղվածություն ունեցող լրատվամիջոցներում: Երբեմն ընթերցողների լայն շրջանակների համար նախատեսված ժամանակակից տեղեկատվական բնույթի տեքստերը դիմում են հնացած կրոնական բառապաշարին հուզականություն, արտահայտչականություն առաջացնելու համար: Եթե անգամ մամուլում արծարծվում են կրոնական թեմաներ, ապա դրանք առավելապես զուտ տեղեկատվական բնույթ ունեն՝ կապված, օրինակ՝ որևէ կրոնական տոնի կամ ավանդույթի հետ: Երբեմն կրոնական տերմինները մամուլում գործածվում են փոխաբերական իմաստով: Այլ խոսքով, կրոնական բառերը, ընդլայնելով իրենց իմաստը, ձեռք են բերում նորանոր իմաստներ, իմաստային նրբերանգներ և կիրառվում են հաղորդակցության տարբեր ոլորտներում: Այսօր գործում են կրոնական ուղղվածություն ունեցող ադրբեջանական կայքեր՝ առանձին ենթաբաժիններով. նորություններ, հոդվածներ, Ղուրան, մշակույթ, նամազ, Ռամազան, իսլամի պատմություն, այլ կրոններ, կրոնական ծիսակարգեր, տոներ և այլն(http://www.din.az/http://az.islam.az/http://qafqazislam.com/az/index.php, http://ahlibeyt.az/, http://islamiyyet.ucoz.ru/, http://www.islam-azeri.az/,http://www.abubakr mescidi.com/):

Մամուլի վերոշարադրյալ ոլորտին առնչվող նյութերի բառապաշարն ընդգրկում է նմանատիպ բառեր՝ şəhid–նահատակ, məscid–մզկիթ, ibadət–պաշտամունք, peyğəmbər–մարգարե, namaz–նամազ, müsəlman–մահմեդական, dini dözümlülük–կրոնական հանդուրժողականություն, konfessiya-դավանանք, dini icma–կրոնական համայնք, katolik–կաթոլիկ, kilsə-եկեղեցի և այլն: Օրինակներ մամուլից. *«İslam alimi Hacı Mirzə Məhdinin həyatı qəmli olub.»*[269] / *«Տխուր է անցել իսլամագետ, գիտնական Հաջը Միրզա Մահդիի կյանքը»: «Əziz Peyğəmbərimiz sübh namazı bitəndən sonra insanlara yaxınlaşar və soruşardı ki, sizlərdən kimsə xəstə deyil ki, onu ziyarət edək.»*[270] / *«Մեր սիրելի մարգարեն առավոտյան նամազն ավարտելուց հետո մոտենում է մարդկանց և հարցնում, թե ձեզնից որևէ մեկը հիվանդ չէ, որպեսզի նրան*

[269] Mirzə Mehdi Nehrəmi Naxçıvani,1 Noyabr, 2011, http://ahlibeyt.az/news/a-398.html
[270] Xəstəni ziyarət etməyin ədəb qaydaları, 19 Avqust, 2015, http://az.islam.az/news/a-21242.html

այցելենք»: «İmam Əli: "Pislik edən, pislikdən daha pisdir.(Nəhcül-Bəlağə, hikmət 32)»[271] */ «Իմամ Ալի. «վատություն անողը վատությունից ավելի վատն է»:*

3.11. Քրեական անցուդարձ

Վերջին տասնամյակներում լրագրության ոլորտում շրջանառության մեջ են մտել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «քրեական լրագրությունը», «քննչական լրագրությունը, «լրագրողական հետաքննությունը»: Մերօրյա ադրբեջանական մամուլում հաճախ կարելի է հանդիպել լուրերի, որոնք վերաբերում են արտակարգ դեպքերին, պատահարներին, քրեական աշխարհի նորություններին, իրավական հարցերին: Հիմնականում ոչ բոլոր էլեկտրոնային տեղեկատվական կայքերն ունեն քրեական անցուդարձի համար նախատեսված առանձին բաժին, բայց որևէ այլ բաժնում սովորաբար լինում է կամ առանձին ենթաբաժին կամ պարզապես նյութը զետեղվում է օրվա լրահոսում: Հաճախ քրեական բնույթի հոդվածներ կարելի է կարդալ «քրեական նորություններ», «իրավունք», «հասարակություն», «սոցիալական», «դեպքեր և պատահարներ», «այլ լուրեր» և այլ բաժիններում: Սույն բաժիններում հաճախ հանդիպող բառերից և արտահայտություններից են, օրինակ՝ hadisə-դեպք, պատահար, hüquq-mühafizə orqanları–իրավապահ մարմիններ, oğurlamaq-գողանալ, qaçmaq-փախչել, məhkəmə-դատարան, hökm–վճիռ, azadlıqdan məhrum edilmək-ազատազրկվել, vəsatət–միջնորդություն, qəza–վթար, պատահար, qəzaya uğramaq–վթարի ենթարկվել, yanğın–հրդեհ, təxliyə olunmaq–տարհանվել և այլն: Բերենք մի քանի մեջբերում մամուլից. *«Azərbaycanda bank müdiri külli miqdarda vəsaiti oğurlayaraq ölkədən qaçıb.»*[272] */ «Ադրբեջանում բանկի կառավարիչը, հափշտակելով խոշոր չափի դրամական միջոց, դիմել է փախուստի արտերկիր»: «Trend-in verdiyi məlumata görə, bütün şaxtaçılar təxliyə olunub, yanğının səbəbi müəyyənləşdirilir.»*[273] */ «Թրենդի»-ի տված տեղեկության համաձայն, բոլոր հանքափորները տարհանվել են, հրդեհի պատճառը պարզվում է»:*

[271] "Pislik edən...", 26 Dekabr, 2015, http://az.islam.az/news/a-23080.html
[272] Azərbaycanda bank müdiri pul oğurlayıb ölkədən qaçdı,28 İyul 2015, http://news.milli.az/society/359482.html
[273] Türkiyənin kömür mədənində yanğın olub, 7 OKTYABR 2015, HTTP://OLAYLAR.AZ/NEWS/DUNYA/142970

3.12. Այլ իմաստային խմբեր

Ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում հաճախ ընթերցվող հրապարակումներից առանձնացնենք նաև կենցաղին, առօրյային, ժամանցին, տարբեր խոհանոցների կերակրատեսակներին, նորաձևությանը, աստղագուշակությանը, դիզայնին, զանազան դիետաներին և այլն վերաբերող հոդվածները: Դրանք մեծ պահանջարկ ունեն մասնավորապես երիտասարդների և կանանց շրջանում: Վերոնշյալ թեմաներով նյութերը տեղ են գտնում «հետաքրքիր նորություններ» անվանմամբ բաժնում՝ տարբեր անվանումներ ունեցող ենթաբաժիններում (http://zaman.az/News/ZNews/5http://azerbaijan-news.az/, http://ikisahil.az/?page=9&lang=aze, http://ucnoqta.az/category/97/maraqli, http://news.milli.az/): Սույն բառապաշարը հարուստ է՝ պայմանավորված թեմաների բազմազանությամբ: Այսպես, կենցաղային բառապաշարը ներառում է առօրյա կյանքին վերաբերող առարկաների, երևույթների անվանումները՝ այդ թվում, սովորույթների, ավանդույթների, շրջապատող միջավայր իրողությունները, ինչպես նաև կենցաղային–խոսակցական բառապաշարը: Այս բառապաշարն իր արտացոլումն է գտնում հրապարակախոսական լեզվում ավելի հղկված տարբերակով:

Ինչ վերաբերում է խոհանոցային թեմաներին, կերակրատեսակներին, դիետաներին, բաղադրատոմսերին վերաբերող հոդվածներին, շեշտենք, որ դրանք ընդհանուր տեղեկատվական բնույթ ունեցող մերօրյա ադրբեջանական լրատվամիջոցներում հաճախ չեն հանդիպում: Կան նաև առանձին կայքեր, որոնք վերաբերում են բացառապես խոհանոցին և նման թեմաներին (http://www.leziz.ru/, http://www.metbex.net/, http://tasty.az,http://www.azcookbook.com/azeri, http://dadli.az): Բնականաբար, նմանատիպ հոդվածների բառապաշարը հարուստ է զանազան կերակրատեսակների, սննդամթերքի տեսակների անվանումներով, բաղադրատոմսերին բնորոշ տերմիններով՝ şəkər–շաքար, ərzaq–մթերք, yumurta–ձու, qazan–կաթսա, xəmir–խմոր, stəkan-բաժակ, tökmək–լցնել, ləziz–համեղ, peçenye-թխվածքաբլիթ, hazırlamaq–պատրաստել, salat-աղցան, süd–կաթ և այլն: Օրինակ՝ *«Paxlava Şərbəti hazırlamaq üçün limon suyu, şəkər tozunu, suyu qazana töküb 15- 20 dəqiqə*

qaynadırıq.»[274] */ «Փախլավայի քաղցրահյութը պատրաստելու համար կիտրոնը, շաքարավազը, ջուրը լցնում են կաթսայի մեջ և եռացնում 15-20 րոպե»: «Içi ləziz karemelləşmiş süd ilə doldurulmuş peçenyesini kim xoşlamır? Məncə hamı xoşlayır.»*[275] */ «Ո՞վ չի հավանում համեղ կարամելով և կաթով լցված միջուկով թխվածքաբլիթը: Կարծում եմ, բոլորն են հավանում»: «Bu şirniyyatla həm uşaqları, həm də pəhriz saxlayanları sevindirə bilərsiniz: o, adamı kökəltmir.»*[276]*/ «Այս քաղցրավենիքով կարող եք ուրախացնել և՛ երեխաներին, և ՛դիետա պահողներին. այն մարդուն չի գիրացնում»:*

Զանգվածային լրատվամիջոցները, որպես հասարակության մեջ տեղի ունեցող զանազան լեզվական և հաղորդակցային գործընթացների արտացոլանք, ունեն «մենաշնորհ»՝ ազդելու զանգվածային լսարանի վրա: Լրագրողները կիրառում են տարբեր լեզվական հնարքներ՝ հուզական բառապաշար, բառախաղ, բազմիմաստ վերնագրեր, ժարգոնային բառեր, նոր փոխառություններ, ոճերի միախառնում, մեջբերումներ և այլն: Սույն մեթոդները հաճախ գործածվում են այսպես կոչված «գլամուրային» ոճի մամուլի էջերում, որը համարվում է հրապարակախոսական ոճ, սակայն միաժամանակ առանձնանում է իր յուրահատկություններով: Կան անգլերեն բառեր, որ դարձել են միջազգային՝ շնորհիվ ամերիկյան համընդհանուր ճանաչում ունեցող զանգվածային մշակույթի՝ star-աստղ, shopping-գնումներ, brand-ապրանքանիշ, fashion–նորաձևություն, party-երկույթ, club-ակումբ, event–միջոցառում, like-հավանել, share-տարածել, cash–կանխիկ, design-դիզայն, hotel–հյուրանոց, make-up–շպար և այլն:

Նշենք ևս մի հետաքրքիր միտում. հաճախ հոդվածագիրը կամ խմբագիրը փորձում է նյութին հաղորդել, այսպես ասած, «էլիտար» բնույթ՝ դրանով փորձելով բարձրացնել դրա «մակարդակը» և մեծացնել պահանջարկը: Այս միտումը նկատվում է ոչ միայն ժամանակակից ադրբեջանական մամուլում, այլև, օրինակ՝ հետխորհրդային տարածքի մի շարք երկրներում, այդ թվում՝ երբեմն հայ մամուլում: Ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների համապատասխան հրապարակումներում ժամանակ առ ժամանակ նկատվում է արտահայտությունների անտեղի կուտակում, որի

[274] Büzməli paxlava resepti, http://www.metbex.net/buzm%C9%99li-paxlava-resepti/
[275] Dulce de Lecheli "Qoz" Peçenyesi, Mart 3, 2015 , http://www.azcookbook.com/azeri/dulce-de-lecheli-qoz-pecenyesi/
[276] Alma marmeladi, 16.12.2014, http://dadli.az/pehriz-yemekleri/1928-alma-marmeladi-resepti.html

արդյունքում տեքստն աղավաղվում է և դառնում արհեստական: Վերոնշյալ տեքստերն աչքի են ընկնում նաև աղքատ բառապաշարով, կրկնվող բառերով և արտահայտություններով: Մեջբերումներ մամուլից. *«Komitə sədrinin qızı Kəmalə İbrahimova Azərbaycanda moda aləminə daxil olmaq iddiasındadır.»*[277] */ «Կոմիտեի նախագահի աղջիկը՝ Քեմալե Իբրահիմովան, ցանկանում է մուտք գործել Ադրբեջանի նորաձության աշխարհ»: «Ölkə.Az xəbər verir ki, mərasimdə məşhur amerikalı model Bella Hadid və rusiyalı model İrina Şeyk qonaq qismində iştirak ediblər.»*[278]*/ «ՕԼկե.ազ-ը տեղեկացնում է, որ արարողությանը հյուրի կարգավիճակով մասնակցել են ամերիկացի հայտնի մոդել Բելլա Հադիդը և ռուս մոդել Իրինա Շեյքը»:*

«Այլ հետաքրքիր լուրեր» բաժնում թեմաները շատ ընդգրկուն են, չունեն թեմայի առումով սահմանափակում, ուստի բառապաշարի մասին էլ կարելի է փաստել, որ այն չունի որևէ կոնկրետ ուղղվածություն, աչքի չի ընկնում մասնագիտական տերմինների հարստությամբ, լեզուն ավելի շատ մոտ է համաժողովրդական լեզվին: Ներկայացնենք մեջբերումներ. *«Qeyd edək ki, hazırda dünyanın ən hündür tikilisi Dubayda 828 metr hündürlüyündə olan "Burj Khalifa" binasıdır.»*[279]*/ «Նշենք, որ ներկայումս աշխարհի ամենաբարձր շինությունը Դուբայի 828 մետր բարձրությամբ «Բուրջ Խալիֆա» շենքն է»: «Dünyanın ən yaşlı qadını 2015-ci ilin sentyabr ayının 28-də 115 yaşında ölüb.»*[280] *«Աշխարհի ամենատարեց կինը մահացել է 2015թ. սեպտեմբերի 28-ին 115 տարեկան հասակում»: «Milli.Az ən çox göydələnlərin olduğu şəhərlərin siyahısını təqdim edir.»*[281] */ «Միլլի.ազ-ը ներկայացրել է ամենաշատ երկնաքերներ ունեցող քաղաքների ցանկը»: «Qeyd edək ki, "Gangnam Style" rəqsinin videosu "Youtube" videoportalında 350 milyondan çox adam tərəfindən izlənilərək, "Ginnes Rekordlar Kitabı"na daxil olub.»* [282] */ «Նշենք, որ «Գագնամ սթայլ» պարի տեսանյութը «Յութուբ» կայքում ունեցել է 350 միլիոնից ավելի դիտում և ընդգրկվել «Գինեսի ռեկորդների գրքում»:*

---

[277] Azərbaycanda məmur qızı modelyerliyə başladı, 04.11.2013, http://big.az/153500-Azerbaycanda_memur_qizi_modelyerliye_basladi.html

[278] İrina Şeyk Elman Rüstəmovun qızının moda gecəsində, 02.02.2016, http://www.olke.az/maqazin-9/irina-seyk-elman-rustemovun-qizinin-moda-gecesinde-foto-46851

[279] Dünyanın ən hündür binası tikilir , 21 Noyabr, 2012, http://www.anspress.com/heyat-terzi/21-11-2012/dunyanin-en-hundur-binasi-tikilir-video

[280] Yaponiyada dünyanın ən ahıl adamı vəfat etdi, 19 Yan 2016, http://oxu.az/world/112876

[281] Ən çox göydələnlərin olduğu şəhərlər, 11 Fevral 2016, http://news.milli.az/world/406516.html

[282] Koreya rəqsi "Ginnes Rekordlar Kitabı"na daxil edilib, 7 Oktyabr 2012, http://news.milli.az/world/143217.html

Ժամանակակակից ադրբեջանական մամուլի բառապաշարի վերլուծությունը ըստ իմաստային խմբերի թույլ է տալիս կատարել որոշակի եզրահանգումներ: Զանգվածային լրատվամիջոցները ծանրակշիռ ազդցություն ունեն ժամանակակից ադրբեջաներենի բառապաշարի ակտիվ շերտերի վրա, և ըստ էության, այդ ազդեցությունը փոխադարձ է:

Ադրբեջանական մամուլում առավել ծավալուն և բովանդակային են քաղաքական, ինչպես նաև ռազմական ոլորտի բառապաշարի կիրառման հաճախականությունը և բազմազանությունը: Այն արտացոլում է նաև ադրբեջանական մամուլի բառապաշարի զարգացման ուղղություններն ու առանձնահատկությունները, փոխառյալ բառերի աշխարհագրությունը, տերմինների կիրառման շրջանակները և այլն: Գլխում առաջ քաշվող դրույթները հիմնավորվում և լրացվում են ժամանակակից ադրբեջանական առաջատար էլեկտրոնային կայքերից համապատասխան օրինակներով՝ հայերեն համարժեք թարգմանությամբ: Ժամանակակակից ադրբեջանական մամուլի բառապաշարի իմաստային և ոլորտային ներկայացումն իր համապատասխան օրինակներով բավական լայն է՝ քաղաքականից և ռազմականից մինչև տնտեսական, սոցիալական, մշակութային, սպորտային, կենցաղային, կրոնական հարաբերություններ և այլն: Առանձին վերլուծելով արցախյան հիմնախնդրին առնչվող մամուլի բառապաշարը՝ արվել են եզրահանգումներ կապված ռազմական տերմինների առավել գործուն կիրառության, պետական համապարփակ վերահսկողության, ժամանակակից ադրբեջանական առաջատար լրատվամիջոցներում առանձին բաժին հատկացնելու հետ և այլն:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅ և ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հանգվածային լրատվամիջոցներում և հատկապես մամուլում արտացոլվում են լեզվի արդի վիճակը, նրա փոփոխությունների ընթացքը, զարգացումը: Հարգացման այդ ընդհանուր գործընթացը «իրացվում է բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով»[283]: Հաշվի առնելով ատենախոսության ուսումնասիրության առարկան՝ ստորև ուրվագծեր անցկացնենք ժամանանակից հայ և ադրբեջանական մամուլի բառապաշարների միջև պատմական զարգացման համատեքստում: Հանուն արդարության փաստենք, որ համամետության եզրերը սահմանափակ են, թեկուզև միայն հաշվի առնելով հայկական տպագիր մամուլի՝ ավելի քան երեքհարյուրամյա հարուստ պատմություն ունեցող անցյալն ու լավագույն ավանդույթները:

Ընդունված է տարբերակել կամ առանձնացնել լեզվի գործառնական ոճերի հետևյալ խմբերը՝ գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյախոսակցական և զանգվածային: Գործառնական ոճերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, իրեն հատուկ խոսքային կառույցները, լեզվական միջոցների գործածության յուրահատուկ համակարգն ու հաճախականությունը[284]: Հրապարակախոսական ոճում հավասարապես գործում են դրա երեք հիմնական տարրերը՝ տեղեկատվությունը, քարոզչությունը և գնահատողական վերաբերմունքը: Լեզվաբան ոճագետների մեծ մասը հրապարակախոսական ոճն առանձնացնում է որպես գրական լեզվի տարբերակ[285]:

Հայոց լեզվի հրապարակախոսության պատմությունը սկսվում է 1794թ., երբ Հնդկաստանի Մադրաս քաղաքում հիմնվեց առաջին հայ պարբերական մամուլը՝

[283] Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 167-168:
[284] Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2003, էջ 28:
[285] Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր,, Նաիրի հրատ., 2000, էջ 131:

«Ազդարարը»: Արդեն հայրենիքում լույս տեսած առաջին պարբերականը Էջմիածնի պաշտոնական «Արարատ» հանդեսն է, Երևանում էլ լույս ընծայված առաջին տպագիր պարբերականն է «Պսակը»: 20-րդ դարի սկզբին հայկական պարբերականների թիվը շուրջ 600 էր, իսկ հիմնական կենտրոններն էին Թիֆլիսը («Մշակ», «Մուրճ» ամսագիրը, «Նորդար», «Փորձ», «Արձագանք» և այլն) և Կոստանդնուպոլիսը («Մասիս», «Մեղու», «Արեւելք» և այլն): Հայ մամուլի պատմության առանձին բաժին է կազմում արեւմտահայ մամուլը: Արեւմտահայ «դեմոկրատական եւ լուսավորական գաղափարներով տոգորված մտավորականության սերուցքը կենտրոնացած էր Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում»[286]: Առաջատար ժանր դարձած լրատվությունն առավել հասկանալի կամ հաղորդակից էր դառնում ընթերցողին, երբ տեղեկություններ էր տալիս նրան «Արեւմտահայաստանի հայ բնակչության կյանքի առօրեական երեւույթների, նրա կենցաղի, բարոյականության ու հոգեբանության, բարքերի եւ այլնի մասին»[287]: Արևմտահայ մամուլի գրական լեզուն բոլոր հիմնական օրինաչափություններով հաստատված էր, սակայն մի շարք ձևեր դեռևս ընդհանրացված չէին[288]:

Ադրբեջանական մամուլի պատմությունը, ինչպես նշվել է ներածությունում, սկիզբ է առնում միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ մի շարք ադրբեջանցի գործիչներ սկսեցին մտածել ներկայիս Ադրբեջանի տարածքում լուսավորության գաղափարներ տարածելու մասին: Զարդաբին և իր համախոհներն իրենց առջև նպատակ էին դրել «ադրբեջանցի ժողովրդին դուրս բերել հետամնաց վիճակից, միաժամանակ տարածել ժամանակակից արժեքներ ու գաղափարներ»[289]: Ադրբեջանական մամուլի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի երգիծական «Մոլլա Նասրեդդին» (ադրբ.՝ Molla Nəsrəddin, խմբագիր՝ Ջ.Մամեդգուլուզադե)[290] ամսագիրը: Ադրբեջանական մամուլը շատ ավելի կազմակերպված և հարուստ էր

[286] Հովսեփյան Մ., Արեւմտահայ մամուլի պատմություն (1832-1915 թթ .) ,Դասախոսություններ, Եր ., ԵՊՀ հրատ ., 2014, էջ 6:
[287] Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը XX դ. առաջին քառորդին, Եր., Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, էջ 20 http://lraber.asj-oa.am/6238/1/20.pdf
[288] Ավետիսյան Յու., «Անահիտ» հանդեսը, Եր, Երևանի համալսարանի հրատ., 1999, էջ 162:
[289] H.Zərdabi, Seçilmiş əsərləri, Bakı, Azərbaycan dövlət nəşriyyatı, 1960, s. 59.
[290] Q.Məmmədli, Molla Nəsrəddin həyat və yaradıcılığının salnaməsi, Bakı, Azərnəşr, 1966, s. 214.

խորհրդային շրջանում, երբ Ադրբեջանում լույս էին տեսնում բազմաթիվ և բազմապիսի պարբերականներ:

Այսպես, 20-րդ դարի 20-30-ական թթ. հրատարակվող թերթերում արաբապարսկական բառերին զուգահեռ կիրառվում էին նաև թուրքաբանություններ, որոնք լայն կիրառություն ունեին մտավորականների շրջանում: 20-ական թթ. ադրբեջաներենում հանդիպում ենք նաև թուրքերենի միջոցով լեզու անցած եվրոպական լեզուներից փոխառությունների: Դրանց մեծ մասը կրել է փոփոխություններ՝ հարմարվելով ադրբեջաներենի հնչյունական կանոններին: Այսպես, «parlament-խորհրդարան» բառն ադրբեջաներենում ժամանակին կիրառվում էր parlaman տարբերակով, իսկ այսօր կրկին կիրառության մեջ է parlament ձևը: Նույն կերպ թուրքերենի միջոցով ադրբեջաներեն են անցել stansiya-կայարան, metro-մետրո, sinema-կինոթատրոն, teatr-թատրոն, abunə-բաժանորդ և այլ նմանատիպ եվրոպական բառեր (օրինակ՝ *«Bu paraxodun uzunluğu 148 metro olub, həcmi isə 15 bin tonajdır».*[291]*/ «Այս շոգեքարշի երկարությունը եղել է 148 մետր, իսկ ծավալը՝ 15 հազ. տոննա»:)*

1920-30-ական թթ. սկսվում է ռուսերեն բառերի ավելի մեծ ներհոսք դեպի ադրբեջաներենի բառապաշարի տարբեր շերտեր, որոնք նախ և առաջ տեղ էին գտնում մամուլի էջերում՝ bolşevik-բոլշևիկ, bolşevizm-բոլշևիզմ, konstruksiya-կառուցում, kooperasiya-կոոպերացիա, pioner-պիոներ, sovet-խորհրդային, sosial-սոցիալական, sosializm–սոցիալիզմ, revolyusiya–հեղափոխություն, ekonomika-տնտեսություն, injener-ճարտարագետ և այլն:

Հարկ է հավելել, որ 1926թ. Բաքվում հրավիրված Թյուրքագիտական համաժողովը տերմինաստեղծման ոլորտում ունեցել է նշանակալի դերակատարում[292]:

Նշված ժամանակահատվածում ռուսերեն բառերի ներհոսք նկատվում էր բոլոր միութենական հանրապետությունների լեզուներում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի մամուլի լեզվում: Վերոնշյալ ռուսերեն փոխառություններով հարուստ էր նաև ժամանակի հայկական մամուլի լեզուն:

[291] Xudiyev N., Azərbaycan ədəbi dili lüğət tərkibinin inkişafı (sovet dövrü), "Kommunist" qəzeti, 5 aprel 1929-cu il, Bakı, V. I.Lenin adına API-nin nəşri, 1986, s. 23.

[292] Latın əsaslı yeni türk əlifbası və İ Bakı Türkoloji Qurultayı,Tərtibçilər-prof.: K.V.Nərimanoğlu,Ə.Ağakişiyev, S.Abdullayeva, Bakı, AR Mədəniyyət və turizm nazirliyi,-2006, s. 6.

Հայրենական պատերազմի տարիներին ոչ միայն հայերենում և ադրբեջաներենում, այլև ԽՍՀՄ մյուս ժողովուրդների լեզուներում ավելանում են ռազմական տերմինները և բառակապակցությունները. օրինակ՝ ռազմաճակատ (ադրբ.՝ cəbhə, ռազմական (ադրբ.՝ hərbi, հրաձիգ (ադրբ.՝ atıcı), դիվիզիա (ադրբ.՝ diviziya), ռազմաճակատի գիծ (ադրբ.՝ cəbhə xətti), ռազմական պարետ (ադրբ.՝ hərbi komendant), ռազմական պատվերներ (ադրբ.՝ hərbi sifarişlər), զորաջոկատ (ադրբ.՝ qoşun dəstəsi), ռազմական պահեստ (ադրբ.՝ hərbi anbar), հրաձգային դիվիզիա (ադրբ.՝ atıcı diviziya), մարտնչող բանակ (ադրբ.՝ döyüşən ordu) և այլն:

Նոր բառակապակցությունները կիրառության մեջ են մտնում նաև հասարակական հարաբերությունների այլ ոլորտներում՝ օրինակ՝ աշնանացան (ադրբ.՝ payızlıq əkini), ամենօրյա հանձնարարություն (ադրբ.՝ gündəlik tapşırıq), պահուստային աշխատուժ (ադրբ.՝ ehtiyat əmək qüvvələri), տրակտորի բրիգադ (ադրբ.՝ traktor briqadası), երիտասարդական բրիգադներ (ադրբ.՝ gənclər briqadaları), բնակարանաշինություն (ադրբ.՝ mənzil tikintisi), արդյունաբերական հիմնարկ (ադրբ.՝ sənaye müəssisəsi), արտադրական ուժ (ադրբ.՝ istehsal gücü) և այլն: Հայերենում, ի տարբերություն ադրբեջաներենի, ավելի մեծաթիվ են բառապատճենման միջոցով ստեղծված նորաբանությունները, ադրբեջաներենում գերակշռում են փոխառությունները: Որպես բառակազմության հիմնական միջոց համարվել է ձևաբանականը:

Խորհրդային շրջանում հայերեն և ադրբեջաներեն մուտք են գործել նաև գիտատեխնիկական մեծաքանակ տերմիններ և բառակապակցություններ՝ հեռագրային ազդանշաններ (ադրբ.՝ teleqraf siqnalları), հեռաչափիչ սարք (ադրբ.՝ telemetrik aparat), թռչող սարքեր (ադրբ.՝ uçuş aparatları), մանևրող տիեզերանավ (ադրբ.՝ manevrli kosmik gəmi), միջմոլորակային կայան (ադրբ.՝ planetlərarası stansiya), միջմայրցամաքային հրթիռ (ադրբ.՝ global raket) և այլն: Այս և նմանատիպ բազմաթիվ այլ բառեր մինչ օրս գործածվում են, սակայն ժամանակին հայերենում ավելի շատ գործածվում էին ռուսերեն տարբերակները, մինչդեռ ԽՍՀՄ փլուզումից հետո նախապատվությունը տալիս ենք դրանց առկա հայերեն համարժեքներին:

Մամուլի բառապաշարում, ըստ էության, գերիշխողը հասարակական-քաղաքականն է: Թե՛ խորհրդահայ և թե՛ մերօրյա մամուլը պարզապես հեղեղված են հրապարակախոսության լեզվին բնորոշ գնահատողական երանգավորում ունեցող բառերով: Բոլոր այն բառերը, որոնք առնչվել են խորհրդային ապրելակերպին, իրականությանը, ունեցել են ընդգծված դրական երանգավորում, ինչպես, ասենք, պիոներ, ազատություն, հոկտեմբերիկ, կոմունիստ, հավասարություն, բոլշևիկ, բանվոր, դասակարգ, լենինյան, աշխատավոր, կարմիրբանակային, սոցիալիզմ, կոմունիզմ, կուսակցական, եղբայրություն և այլ հազարավոր բառեր և կազմել են խորհրդահայ և խորհրդային ադրբեջանական մամուլի լեզվի անբաժանելի մասը: Հասարակական և քաղաքական կարգի փոփոխությունների, նշանակալի տեղաշարժերի, տնտեսական հարաբերությունների շրջադարձերի արդյունքում նմանատիպ բառերը կորցրել են իրենց դրական երանգավորորումը, և դրանցից շատերն այսօր ստացել են այլ երանգավորում: Ամեն դեպքում, խորհրդային իրականությանն առնչվող իրողություններն արտահայտող բառերն ու արտահայտությունները մեծ մասամբ անցել են հնաբանությունների շարքը: Նկատելի է նաև հակառակ գործընթացը, երբ նախկինում բացասական իմաստ ունեցող բառերը ներկայումս նույնիսկ դրական երանգավորում ունեն: Այսպես, խորհրդային մամուլում բացասական երանգ ունեցած «մոնոպոլիա» բառը ժամանակակից հայ մամուլում գործածվում է «մենաշնորհ» տարբերակով՝ զուտ որպես տնտեսագիտական իրողություն, իսկ ադրբեջանական մամուլում՝ inhisarçılıq, monopoliya տարբերակներով: Օրինակ՝ *«Lakin bu sahədə çox böyük inhisarçılıq mövcuddur.»*[293] / *«Այնուամենայնիվ, այս ոլորտում առկա է շատ մեծ մենաշնորհ»:*

Անդրադառնանաք մի երևույթի, երբ խորհրդային մամուլի լեզվում հնաբանություն համարվող բառերը կրկին մտնում են կիրառության մեջ: Ժամանակի ընթացքում փոխվել է նաև հասարակության վերաբերմունքը նման բառերի նկատմամբ: Օրինակ՝ «նախարար» բառն ունեցել է «մեծ կալվածքի տեր, անկախ իշխան, տանուտեր» իմաստը, խորհրդային շրջանում այն համարվել է հնաբանություն, և կիրառվել է «մինիստր» բառը: Հայաստանի Հանրապետությունում այն կրկին մտել է

[293] "Azərbaycanın kənd təsərrüfatında çox böyük inhisarçılıq var", 2016, http://azpolitika.info/?p=258144

շրջանառության մեջ որպես գործուն բառ, փոխարենը «մինիստր»-ն է անցել հնաբանությունների շարքը: Ինչ վերաբերում է ադրբեջաներենում ministr բառի գործածությանը, ապա փաստենք, որ այն կիրառվել է խորհրդային ադրբեջանական մամուլում, մինչդեռ մերօրյա լրատվամիջոցներում կիրառվում է բացառապես nazir-նախարար բառը: Օրինակ՝ *«Nazir bildirib ki, əsas məsələ 2017-ci ildə iqtisadi artıma keçməkdir».*[294]*/«Նախարարը հայտնել է, որ հիմնական խնդիրը 2017թ. տնտեսական աճ ապահովելն է»:*

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ընթացող գործընթացների արդյունքում ադրբեջաներեն են ներմուծվել մեծ քանակությամբ նոր տերմիններ: Այդ գործընթացները հանգեցրել են հետևյալին. ա)օտար լեզուներից ադրբեջաներեն է ներթափանցում տերմինների մեծ հոսք, բ)լեզվի քերականական կանոնները կոպտորեն խախտվում են, գ)հաճախ առօրյա լեզվում՝ հատկապես էլեկտրոնային լրատվամիջոցներում, կիրառվում են թուրքերեն բառեր և արտահայտություններ, դ) գովազդային ցուցանակներում, վահանակներում հաճախ կարելի է հանդիպել օտար բառերի, ե)բազմաթիվ ռուսերեն բառեր, որոնք առօրյա խոսակցական բառապաշարի անքակտելի մասն էին, սկսում են աստիճանաբար փոխարինվել դրանց ադրբեջաներեն համարժեքներով:

20-րդ դարի 80-ական թթ. վերջին և 90-ական թթ. սկզբին՝ ԽՍՀՄ փլուզման և նախկին միութենական հանրապետությունների անկախացման շրջանում հայ հրապարակախոսության լեզվում սկսեցին նկատելի տեղաշարժեր: Ազգային զարթոնքն իր հետքը թողեց հասարակական գիտակցության և հետևաբար՝ լեզվամտածողության և բառապաշարի վրա: Հայաստանի անկախացումից հետո մամուլի լեզվում որոշ լեզվական գործընթացներ նման էին ադրբեջաներենում ընթացող փոփոխություններին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու երկրներն էլ, միաժամանակ դուրս գալով ԽՍՀՄ կազմից, բռնում են զարգացման նոր, ինքնուրույն ուղի: Վերջինս էլ իր ազդեցությունն է թողնում լրատվամիջոցների լեզվի բառապաշարի զարգացման ընթացքի վրա: Վերջին երկու-երեք տասնամյակում երկու լեզվի բառապաշար անցած հասարակական-քաղաքական ոճի բառերից

[294] Nazir: Dövlət SOCAR-a müəyyən yardım göstərmək məcburiyyətindədir, 2016, http://oxu.az/economy/163279

առանձնացնենք մի քանիսը, որոնք գործածվում են ժամանակակից մամուլում. երդմնակալություն (ադրբ.՝ inauqurasiya) հասցեատեր, պատասխանող կողմ (ադրբ.՝ respondent), աշխարհաքաղաքական (ադրբ.՝ geopolitik), կաշառք, կոռուպցիա (ադրբ.՝ korrupsiya), նախադեպ (ադրբ.՝ presedent), բողոքի ցույց (ադրբ.՝ piket), գործող անձ (ադրբ.՝ funksioner), գաղտնի (ադրբ.՝ konfidensial), բախումնաբան (ադրբ.՝ konfliktoloq), փլուզում (ադրբ.՝ kollaps), ճեպազրույց (ադրբ.՝ brifinq) և այլն: (օրինակ մամուլից՝ *«Աշխարհաքաղաքական գործընթացները ընթանում են Սեւրում իշխած զինվորաքաղաքական տրամաբանությամբ».*[295]*/ Ադրբեջանական մամուլից մեջբերում. «Yanvarın 21-də ABŞ prezidenti Barack Obamanın inaqurasiya mərasimidir.»*[296] */ «Հունվարի 21-ին ԱՄՆ նախագահ Բարակ Օբամայի երդմնակալության արարողությունն է»:)*

Նորաբանություններով հարուստ է թե՛ հայ, թե՛ ադրբեջանական մամուլի լեզուն, սակայն, ի տարբերություն ադրբեջաներենի, հայերենում որպես նորաբանությունների ստեղծման հիմնական միջոց ծառայում են բառակազմական գործող կաղապարները: Ադրբեջաներենում գերակշռում են փոխառյալ նորաբանությունները: Ադրբեջանցի լեզվաբանները փորձում են դրանք փոխարինել ադրբեջաներեն համարժեքներով, սակայն շատ հաճախ բախվում են իրենց լեզվի սահմանափակ հնարավորությունների հետ: Արդյունքում երբեմն ստացվում են արհեստական բառեր, որոնք այդպես էլ չեն դառնում համագործածական:

Թերևս, ադրբեջանական մամուլում միշտ չէ, որ այդ նորաբանությունները հասկանալի և ընդունելի են ընթերցողների լայն շրջանակների համար: Վերջերս որոշ էլեկտրոնային թերթերում narahat-անհանգիստ, դժգոհ բառի փոխարեն գործածում են rahatsız բառը՝ *«Bunun neticesidir ki, bu defe Ermenistan terefi diplomatik sahede rahatsız olduğunu-büruze verir.»*[297] */ «Դրա արդյունքում է, որ այս անգամ հայկական կողմը դիվանագիտական ոլորտում ցույց է տալիս իր անհանգստությունը»:* Քննարկվող բառի պարագայում կիրառվում է իրանական նախածանց, որը բնորոշ չէ թյուրքական լեզուներին, և փորձ է արվում այն փոխարինել

[295] Սեւրի տրամաբանությունը գերիշխող՝ ներկա աշխարհաքաղաքական գործընթացներում, 2016, http://www.lragir.am/index/arm/0/politics/view/137555

[296] Prezidentin andiçmə mərasimi... rəqəmlərdə, 2013, https://www.azadliq.org/a/24877090.html

[297] Ermenistancebheyeyaxınerazilerdekimülkiehaliniköçürür, http://xeber.azeri.net/dunya/ermenistan-cebheye-yaxin-erazilerdeki-mulki-ehalini-kocurur

նույն ժխտական թյուրքական վերջածանցով: Արդյունքում փոխվում է բառիմաստը: Ներկայացնենք առավել հանգամանալից. ադրբեջաներենում -siz վերջածանցն ածականակերտ է և կցվում է գոյականներին, գոյություն ունի դրան նաև հականիշ վերջածանց՝ -lı: Նման կերպ կազմվող ածականներն ունեն հակադիր իմաստներ. օրինակ՝ dadlı–dadsız-համեղ, անհամ, ağıllı–ağılsız-խելացի, անխելք, yaraşıqlı–yaraşıqsız-գեղեցիկ, տգեղ, yağmurlu–yağmursuz-անձրևոտ, առանց անձրևի և այլն: Վերոնշյալ օրինակում-sız վերջածանցը կցվում է ոչ թե գոյականին, այլ ածականին, իսկ ադրբեջաներենում ածականից այլ ածական կազմող նման վերջածանց գոյություն չունի: Եթե ընդունելի է rahatsız բառը, ապա պետք է գործածության մեջ մտնի նաև rahatlı բառը:

Վերջին տարիներին, ինչպես նշվեց, գրական հայերենի բառապաշարը ևս հարստացել է հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող բազմաթիվ նորաստեղծ բառերով, արտահայտություններով և բառակապակցություններով՝ ազգախնդիր, անդրազգային, ազգափոխություն, հայակենտրոն, ադրբեջանահայ, գերքաղաքականացում, քաղգործիչ, գիտաօժանդակ, գիտահամակարգ, ուսումնահետազոտական, ուսումնառազմավարական, լեզվապահպանություն, լեզվաքաղաքականություն, իշխանատենչ, քարոզարշավ, մրցարշավ, եկեղեցասիրություն, անկախամետ, վազքուղի, քարոզչաբանակ, ընտրախախտում, ջրագողություն, ճեպազրույց, վեհաժողով, այլախոհ, քրեածին, մասնաճյուղ, տեղեկատվական պատերազմ, համալիր միջոցառումներ, քաղաքական էլիտա և այլն)[298]:

Լեզվի բառապաշարի հարստացումն ու զարգացումը, անշուշտ, կանգ չի առնում, բայց այդ գործընթացի վրա որոշակի ազդեցություն է ունենում ժամանակի իշխող մտայնությունը՝ խոչընդոտելով կամ արագացնելով այդ ընթացքը[299]: Նորակազմ բառերի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ կան ժամանակակից հայերենի բառակազմության գրեթե բոլոր տիպերը՝ բարդությունն իր

[298] Նորաբանությունների մասին մանրամասն տե՛ս՝ Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատարակչություն, Երեւան, 2002:
[299] Մարության Ա., Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ, Պատմա-բանասիրականհանդես, № 2, էջ 112, http://hpj.asj-oa.am/5080/1/1997%2D2(111).pdf

տարբեր ենթատեսակներով, ածանցումն իր կաղապարային տարբեր դրսևորումներով[300] : Եթե հայերենում վերոնշյալ նորաբանությունները ստեղծվում են հիմնականում բառաբարդման միջոցով, ապա ադրբեջաներենում նման նորաբանությունները կազմվում են գոյականների կապակցության երկրորդ ձևի միջոցով, որը թույլ է տալիս կապակցել երկու և ավելի գոյական ու ստանալ նոր բառակապակցություններ:

Դիտարկենք «ընտրարշավ» նորակազմ բառը, որը հայերենում կազմվել է բառաբարդման միջոցով՝ ընտրություն և արշավ գոյականների օգնությամբ: Ադրբեջաներենում այն կազմվել է seçki-ընտրություն և kampaniya-արշավ փոխառյալ բառի օգնությամբ: Օրինակ մամուլից՝ *«Seçki kampaniyası başlamazdan öncə televiziyada prezidentliyə namizəd və hazırkı prezidentin təbliğatının aparıldığını iddia edən Milli Şura məsələ ilə bağlı MSK-a müraciət edəcəyini açıqlamışdı».*[301]/ *«Ընտրարշավից առաջ Ազգային ժողովը պնդել է, որ հեռուստատեսությամբ տարվել է նախագահության թեկնածու և գործող նախագահի քաոզչություն, և պարզաբանել է, որ այդ հարցի առնչությամբ դիմելու են ԿԸՀ»: Մեջբերում հայ մամուլից. «ՀԱՄԱԽՄԲՈՒՄ-ը քաղաքականապես բավականին գրագետ ընտրարշավ է իրականացնում, ինչպես դա արվում է զարգացած ժողովրդավարական երկրներում»*[302]*:*

Համեմատենք նաև հայերեն ընտրահամակարգ և ադրբեջաներեն seçki sistemi հասկացությունները. *«Ժառանգություն» հայկական ընդդիմադիր կուսակցության վարչության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը, խոսելով մեծամասնական ընտրահամակարգի խնդիրների և խորհրդարանում խոշոր բիզնեսի ներկայության մասին...»:*[303] *Մեջբերում ադրբեջանական մամուլից՝ «Beynəlxalq seçki sistemləri haqqında məlumat kitabı"nda doqquz sistem və onların hər birindən doğan nəticələr təsvir edilmiş.»* [304]/ *«Միջազգային ընտրահամակարգերի մասին տեղեկություն» գրքում նկարագրվել է ինը*

[300] Սողոմոնյան Մ., Մամուլի բառապաշարի հարստացումը ածանցավոր նորակազմություններով, էջ 68 http://www.ysu.am/files/08M_Soghomonyan.pdf

[301] Seçki kampaniyası başladı: ilk gün kim nə edir?, 2013, http://www.bbc.com/azeri/azerbaijan/2013/09/130916_elex_campaign

[302] ՀԱՄԱԽՄԲՈՒՄ-ը քաղաքականապես բավականին գրագետ ընտրարշավ է իրականացնում, 2016, http://www.7or.am/am/news/view/113961/

[303] Հայաստանի քաղաքական ուժերի մեծ մասը կողմ է համամասնական ընտրահամակարգին. ՀՅԴ, 2012, http://newsarmenia.am/am/news/politics/politics-20120120-42598664/

[304] Beynəlxalq seçki sistemləri və seçkilərin hüquqi tənzimlənməsi qaydaları, 2010, http://www.xalqqazeti.com/az/news/social/6411

համակարգ և նրանցից յուրաքանչյուրից բխող հետևանքները»: Այստեղ կրկին տեսնում ենք նույն պատկերը. ադրբեջաներենում «ընտրահամակարգ» բառը ներկայանում է որպես գոյականական բառակապակցություն:

Մերօրյա հայ մամուլում կարելի է հանդիպել և՛ նախածանցավոր, և՝ վերջածանցավոր կազմությունների: Արդյունավետ նախածանցներից առանձնացնենք ան-, ապ-, անդր-, արտ-, գեր-, ներ-, հակ-, վեր-, առ- նախածանցները՝ ապակառուցողական, ներկոալիցիոն, առաջնածին, անդրազգային, արտադասարանական, գերավճար, հակակոռուպցիոն, հակաաղանդավորական, հակաահաբեկչական, ներկառուցված և այլն: Գործուն վերջածանցներից առանձնացնենք՝ -ական, -ային, -անք, -որեն, -ություն, -ույթ, -ում, -ոտ, -որդ, -իչ. օրինակ՝ համացանցային, քրեորեն, դրամահավաքություն, ռադիոծածկույթ, ականազերծում, դիտորդ, ջրաբաշխիչ, պիտականշում, դրոշմագրում և այլն: Մեջբերում մամուլից. *«Հովհաննիսյանը անդրադառնալով դպրոցներում դրամահավաքության խնդրին՝ նշեց, որ հուրախություն բոլորի, այս տարի դրանց ահազանգերի թիվը քիչ է»*[305]*: «Ադրբեջանում իշխանության հակակոռուպցիոն քաղաքականությունը նոր և ավելի հզոր կաշառակերության աղբյուրի է վերածվել»*[306]*:*

Կանգ առնելով հայերեն հակա- նախածանցի օգնությամբ կազմված նոր բառերին, ի հակադրություն դրա նշենք, որ ադրբեջաներենում գործածվում է փոխառյալ արևմտաեվրոպական anti- նախածանցը՝ antiterrorçu-հակաահաբեկչական, antierməni-հակահայկական, antisemitizm-կամ էլ կիրառվում է qarşı հետադրությունը՝ fashizmə qarşı-ֆաշիզմի դեմ, müxalifətə qarşı-հակաընդդիմադիր, fundamentalizme qarşı-հակաարմատական և այլն: Օրինակ ադրբեջանական մամուլից. *«Böyük Mançestr qraflığının antiterrorçu polis bölmələri Şimali İngiltərədə 8 əməliyyatı həyata keçirib».*[307]*/ «Մեծ Մանչեսթրի դքսության հակաահաբեկչական ստորաբաժանումները Հյուսիսային Անգլիայում իրականացրել են 8 գործողություն»: «E.Hüseynli bildirib ki, terrorizmə qarşı*

[305] Դպրոցներում դրամահավաքության հետ կապված ահազանգերը պարզաբանվել են, 2016, http://henaran.am/204394.html

[306] «Ենի Մուսավաթ». «Հակակոռուպցիոն շոուի ստեղծած կոռուպցիան», 2011, http://www.panorama.am/am/news/2011/11/15/azerbayjan-coruption/856032

[307] Böyük Britaniya polisi böyük anti-terror əməliyyatı aparır, 2006, http://az.trend.az/other/world/824651.html

yeni mübarizə üsulları tətbiq edilməsə, terror aktları daha geniş vüsət ala bilər».[308]/ *«Է.Հյուսեյնլին հայտնել է, որ եթե չկիրառվեն ահաբեկչության դեմ պայքարի նոր մեթոդներ, ահաբեկչական գործողություններն ավելի մեծ ծավալ կարող են ձեռք բերել»:* Օրինակ հայ մամուլից. *«Հակաահաբեկչական գործողությունները շարունակելու մասին նախօրեին հայտարարել էր նաև երկրի ժամանակավոր նախագահ Ալեքսանդր Տուրչինովը»*[309]*:*

Լրագրության մեջ ամենաշատ կիրառվող տեղեկատվություն հաղորդող բառերից բացի, մամուլում, այդ թվում՝ հայ մամուլում, շատ են հատուկ անունները անձնանունները, տեղանունները, պետությունների և միջազգային կազմակերպությունների անվանումները, քաղաքական և հասարակական, տնտեսական և մշակութային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների անվանումները և այլն (Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ադրբեջան, Թուրքիա, Սիրիա, Ֆրանսիա, Երոպա, Երևան, Ստեփանակերտ, Սյունիք, Տավուշ, ՄԱԿ, ԵԱՀԿ, Մինսկի խումբ, ԵԱՏՄ, ՀՀԿ, «Ռիա նովոստի», «Ռոյթերս» և այլն): Օրինակ՝ *«Ի դեպ, համաձայն Ռուսաստանի Դաշնային օրենքի՝ «համերկրացի» են սահմանվում այն մարդիկ, ովքեր ծնվել են մեկ պետության մեջ, ապրել կամ ապրում են այնտեղ, ունեն լեզվի, կրոնի, մշակութային ժառանգության, սովորույթների ընդհանրություն, ինչպես նաև՝ նրանց ուղիղ ժառանգները»*[310]*: «Սումգայիթում հայերի կոտորածը կազմակերպված է եղել ամենայն մանրամասնությամբ, այդ թվում՝ գաղափարախոսական և հոգեբանական տեսակետներից»*[311]*:* Երբեմն տեղանունների ածականացմամբ ստեղծվում են քիվեսթյան, լիսաբոնյան, սանկտպետերբուրգյան, փարիզյան, նյույորքյան, վաշինգտոնյան և այլ նմանատիպ նորակազմություններ:

[308] "Dünya liderləri terrorizmə qarşı mübarizə üsullarını yenidən işləməlidirlər", 2016, http://metbuat.az/news/473126/dunya-liderleri-terrorizme-qarsi-mubarize-usullarini-yeniden.html

[309] Ուկրաինայի արևելքում հակաահաբեկչական գործողությունները չեն կասեցվել ՌԴ-ի բանակի զորավարժությունների պատճառով. Ավակով, http://www.armeniatv.am/hy/45849-1398413118

[310] Մովսիսյան Բ., ՌԴ միգրացիոն ծրագիրը կշարունակի՞ գործել Հայաստանում. «Յուրաքանչյուր կողմ հավատարիմ է իր դիրքորոշմանը», 2012, http://www.panorama.am/am/news/2012/10/24/migration-rf/655385

[311] Սումգայիթ. Անպատիժ ցեղասպանություն, 2012, http://www.a1plus.am/55858.html

Օրինակ՝ *«Ինչպե՞ս է գնահատում փարիզյան հանդիպումը եւ այն ինչպիսի՞ ազդեցություն կունենա բանակցային գործընթացի վրա»*[312]*:*

Բնականաբար, վերոնշյալ և ոչ միայն այդ հատուկ անուններով հարուստ են նաև ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցները: Օրինակ՝ *«Azərbaycan Respublikası prezidentinin orta aylıq əmək haqqı 15 min yeni Azərbaycan manatı olacaq».*[313]*/ «Ադրբեջանի Հանրապետության նախագահի միջին աշխատավարձը կկազմի 15 հազար նոր ադրբեջանական մանաթ»: «BMT-də Kolumbiyanın liderliyində 30-a yaxın ölkə qadın baş katibin seçilməsi üçün lobbi fəaliyyəti göstərir».*[314]*/ «ՄԱԿ-ում Կոլումբիայի առաջնորդությամբ մոտ 30 երկիր կին լոբբիստական գործունեություն է իրականացնում քարտուղարի ընտրության համար»:*

Անդրադառնալով հայ մամուլում փոխառյալ բառերի գործածությանը՝ փաստենք, որ բազմաթիվ օտար բառերի փոխարեն գործածության մեջ են մտել մայրենիի բառերը, որոնցից շատերն այսօր համընդհանուր գործածություն են ստացել. ինտերնետ-համացանց, դիսկ-սկավառակ, գլոբալիզացիա-համաշխարհայնացում, գրանտ- դրամաշնորհ, էլիտա-ընտրանի, մենտալիտետ-մտածելակերպ, տերմին-եզր, եզրույթ,բառեզր, ռեյտինգ-վարկանիշ, գեոպոլիտիկ-աշխարհաքաղաքական, ժալյուզի-շերտավարագույր, բրիֆինգ–ճեպազրույց, բիզնեսմեն–գործարար,լեգիտիմ–օրինական, էլեկտորատ-ընտրազանգված, դեկլարացիա-հռչակագիր, պրինտեր-տպիչ, քսերոքս-պատճենահանում, ինֆորմացիոն- տեղեկատվական, էքսպերտ–փորձագետ, կոմպյուտեր–համակարգիչ և այլն: Նույնը չենք կարող ասել ադրբեջաներենի մասին, որտեղ կիրառվում են հիմնականում հետևյալ փոխառյալ բառերը՝ internet-համացանց, sayt-կայք, disk-սկավառակ, grant-դրամաշնորհ, amnistiya-համաներում, alternativ-այլընտրանք, jalyuzi-շերտավարագույր, snayper-դիպուկահար, elita-վերնախավ, demokratiya-ժողովրդավարություն, mentalitet-մտածելակերպ, reyting-վարկանիշ, geopolitika-աշխարհաքաղաքականություն, printer-տպիչ, legitim-օրինական, brifing-

[312] ԼՂ հարցով փարիզյան հանդիպում եւ քաղաքագետների գնահատականներ, 2014, http://armtimes.com/hy/article/55580

[313] Azərbaycan Respublikası prezidentinin aylıq əmək haqqı 15 min yeni Azərbaycan manatı olacaq, 2005,http://az.trend.az/azerbaijan/politics/816663.html

[314] BMT-nin yeni baş katibi kim olacaq?, 2015, http://axar.az/news/planet/66295.html

ճեպազրույց, ekspert-փորձագետ, kompüter-համակարգիչ, divident-շահաբաժին, globalizasiya-համաշխարհայնացում, informasiya-տեղեկություն և այլն:

Երկու լեզվում էլ գործածվող վերջին տարիների փոխառություններից առանձնացնենք լեգիտիմություն (անգլերեն legitimacy բառից) ածանցավոր բառը, որն ադրբեջաներենում կիրառվում է ադրբեջաներեն -lik վերջածանցի օգնությամբ՝ legitimlik, իսկ հայերենում գործածական է ինչպես լեգիտիմություն, այնպես էլ օրինականություն տարբերակները: Մեջբերենք մամուլից՝ *«Ժամանակակից աշխարհում իշխանությունների նկատմամբ վերաբերմունքը դրսեւորվում է այդ իշխանության լեգիտիմությամբ»*[315]*: «Qarşıdakı referendum ciddi legitimlik böhranı yaradır»*[316]*: / «Առաջիկայի հանրաքվեն ստեղծում է օրինականության ճգնաժամ»:* Համեմատենք նաև վերջին տարիներին շրջանառության մեջ մտած «Eurovision» անգլերեն բառի հայերեն և ադրբեջաներեն տարբերակները: Ադրբեջանական լրատվամիջոցներում գործածվում են և՛ «Eurovision»[317], և՛ «Avroviziya» [318], և՛ «Avrobaxış» տարբերակները: Մինչդեռ հայերենում գործածական է «Եվրատեսիլ» (երբեմն «Եվրոտեսիլ») բառապատճենման մեթոդով ստեղծված տարբերակը. *«Մայիսի 14-ին Ստոկհոլմում կայացավ «Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթի եզրափակիչ փուլը»*[319]*:*

Փաստենք, որ հայ մամուլում ևս երբեմն չեն խուսափում կիրառել օտար բառերը, որոնց մի մասի հայերեն համարժեք բառերը գոյություն ունեն ժամանակակից հայերենում: Դրանցից առանձնացնենք՝ բիզնես, ինտերնետ, ռեզյումե, ռենտգեն, օկուպացիա, ֆորմատ, տեռոր, մենթալիտետ, օրիգինալ, մոնիտորինգ/մոնիթորինգ, կոռումպացվածություն, էլիտա, ստրատեգիական և այլն: Օտարաբանություններն օտար լեզուներից վերցված այն բառերն են, որոնց հայերեն համարժեքը կա, լեզվակիրների մեծ մասն այդ համարժեքները գիտի, սակայն այս կամ այն պատճառով

[315] Հայաստանում քաղաքացիական արժեքները դեռ լեգիտիմ չեն, 2004, http://www.hra.am/hy/point-of-view/2004/12/21/14254
[316] ABŞ konqresmenləri: "Azərbaycanda Konstitusiya referendumu legitimlik böhranı yaradır", 2016, http://contact.az/docs/2016/Politics/091600168770az.htm?85#.WHYuIVMrLIU
[317] Norveç "Eurovision-2014" mahnı seçiminə başladı, 06.07.2013, http://big.az/143332-Norvec_Eurovision-2014_mahni_secimine_basladi.html
[318] Eurovision mahnı müsabiqesi üçün kürdce mahnı telebi, 02 Noyabr 2013, http://xeber.azeri.net/sou-biznes/eurovision-mahni-musabiqesi-ucun-kurdce-mahni-teleb
[319] «Եվրատեսիլի» հաղթողը հայկական արմատներով Ջամալան է, 2016, http://www.aravot.am/2016/05/15/691995/

շարունակում են գործածել օտար բառը: Հատկապես շատ են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով վերցրած բառերը, իսկ վերջին տարիներին ավելացել են նաև անգլերեն բառերը[320]:

Դիտարկենք մոնիթորինգ բառի գործածությունը, որն ունի և՛ ստուգում, և՛ դիտարկում իմաստը: Մերօրյա մամուլում այն փոխարինվում է դիտարկում կամ մշտադիտարկում համարժեքով և գործածվում է տարբեր ոլորտներին առնչվող հրապարակումներում (ֆինանսական շուկա, մարդու իրավունքներ, ռազմական ոլորտ, լրատվամիջոցներ և այլն): Մեջբերենք մամուլից. *«ՄԱԿ-ի ԱԽ-ն Սիրիայում տարհանման մոնիտորինգի մասին բանաձև է ընդունել»*[321]*: «Տվյալ մշտադիտարկումը գրանցում է էական բարելավումներ ընկերության բնապահպանական, առողջապահական և անվտանգության կառավարման համակարգերում և կարողություններում նախագծի ամբողջ փևողության ընթացքում»*[322]*:* Այս պարագայում ադրբեջանական մամուլում գործածական է միայն monitoring փոխառյալ տարբերակը, որը, ի դեպ, հաճախ կիրառվում է ղարաբաղա-ադրբեջանական զինված ուժերի շփման գծում մշտադիտարկում անցկացնելու վերաբերյալ լրագրանյութերում:

Վերջին 2-3 տասնամյակում հայկական զանգվածային լրատվամիջոցների լեզվում գործուն կիրառություն ունեցող բառերից առանձնացնենք ռուսերենի видео արմատով կազմված բազմաթիվ բառապատճենումներ՝[323] տեսախցիկ, տեսաժապավեն տեսաերիզ, տեսահոլովակ, տեսանյութ և այլն: Օրինակ, «Օրեր առաջ »Ոտքի Հայաստան« նախաձեռնության կողմից համացանցում հայտնվեց մի տեսանյութ, որով փաստացի հաստատվում էր այն հանգամանքը, որ նախահարձակ կողմն Ադրբեջանն էր»[324]:

Համեմատելու համար նշենք, որ ադրբեջաներենում մինչ օրս կիրառվում է փոխառյալ video տարբերակը և վերջինիս մասնակցությամբ կազմված

[320] Քամալյան Ա., Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, (տարբերակման փորձ), http://ysu.am/files/07A_Kamalyan.pdf

[321] Ռազմաշաբաթ. Տարածաշրջան. 18 – 24 դեկտեմբերի, 2016, http://razm.info/94038

[322] Բանկը ներկա պահին բանակցություններ չի վարում որևէ նոր նախագծի շուրջ, 2013, http://www.aravot.am/2013/07/24/269786/

[323]ԵզեկյանԼ., նշվ. աշխ.էջ 61

[324]Արցախի օմբուդսմենի արձագանքն՝ Ադրբեջանի վայրագությունների, հարձակման մասին պատմող տեսանյութի մասին, 2016, http://galatv.am/hy/news/156311/

բառակապակցությունները՝ video kamera, video xidmətlər, video kabel, video çəkiliş, video kart և այլն: Օրինակ՝ «*Müsabiqəyə təhsil sahəsinin müxtəlif məsələlərinə aid jurnalist araşdırmaları – yazılar, video və radio materialları qəbul olunur».*[325] / «*Հարցազրույցի համար ընդունվում են կրթական ոլորտի տարբեր հարցերին վերաբերող ուսումնասիրություններ՝ հոդվածներ, տեսանյութեր և ձայնագրություններ»:*

Եվ՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի լրահոսում մեծաքանակ են արցախյան հակամարտության թեմային վերաբերող բառերն ու բառակապակցությունները: Մասնավորապես, վերոնշյալ հրապարակումները հագեցած են Արցախի տեղանուններով և համապատասխան բառակապակցություններով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Դաշտային Ղարաբաղ, Ստեփանակերտ (ըստ ադրբեջանցիների՝ Խանքենդի), Շուշի (ըստ ադրբեջանցիների՝ Շուշա), Արցախի կամ Ղարաբաղի կարգավիճակ, Արցախի անվտանգություն, արցախյան հիմնահարց, Շուշիի ազատագրում Մինսկի խումբ, Բաքվի դիրքորոշում, Սումգայիթյան ջարդեր, Քարվաճառ (ըստ ադրբեջանցիների՝ Լաչին), Բաքու, Ադրբեջան, Խոջալու, Շահումյանի շրջան, Մարտակերտ, Հադրութ, Գետաշեն, Մարտունաշեն և այլն: Օրինակ հայ մամուլից. «*Կարինեի մորեղբորից իմացա, ով այդ օրը գնացել էր* Քարվաճառ, *որ զինվորական ամուսնուն տեսներ»*[326]*: «Ներկայացվել է «Ափլաս» հետազոտությունների կենտրոնի ղեկավար Էլիան Շահինօղլուի «Լեռնային Ղարաբաղ. Կարգավիճակ առանց կարգավիճակի» գիրքը*»[327]: Օրինակ ադրբեջանական մամուլից՝ «*Laçın rayonunda baş verən məmur özbaşınlıqları ilə bağlı araşdırmalarımız davam edir».*[328] / «*Շարունակվում են Լաչինի շրջանում տեղի ունեցող պաշտոնյաների թողտվության վերաբերյալ մեր ուսումնասիրությունները: «Dağlıq Qarabağın statusunun müəyyən olunması, sonra beş, daha sonra isə qalan iki rayonun işğaldan azad edilməsidir.»*[329] / «*Լեռնային Ղարաբաղի*

[325]Jurnalist müsabiqəsi: yazı, video və radio materialları mükafatlandırılacaq, 2016, https://www.mi-news.az/az/content/news/1703/Jurnalist-m%C3%BCsabiq%C9%99si-yaz%C4%B1-video-v%C9%99-radio-materiallar%C4%B1-m%C3%BCkafatland%C4%B1r%C4%B1lacaq.htm

[326] Հարությունյան S., Հակառակորդի դիվերսանտի կրակոցից վիրավորված կինը գնացել էր Քարվաճառ՝ ամուսնուն տեսնելու, 2014, http://armlur.am/199657/

[327] Մելքումյան Հ.,«ԼեռնայինՂարաբաղ. Կարգավիճակ առանց կարգավիճակի», 2010, http://www.azatutyun.am/a/2261040.html

[328] LAÇINDA MƏMUR DƏRƏBƏYLİYİ, 2016, http://conflict.az/gundem/45621-lachnda-memur-derebeyly-cra-bashchs-shehdn-adna-olan-jurnal-satmaq-sted.html

[329] Putinin dostundan Qarabağ açıqlaması:"Dağlıq Qarabağın statusu +5+2 variantı", 2016, http://strateq.az/aktual/51085/putinin-dostundan-qarabag-aciqlamasi.html

կարգավիճակի որոշումը նշանակում է հետո հինգ, իսկ ավելի ուշ՝մնացած երկու շրջանի ազատագրումը»:

Արցախյան թեմայով հրապարակումները, բնականաբար, հագեցած են նաև ռազմական տերմիններով. օրինակ՝ «Հուսով ենք՝ կողմերը կհարգեն հրադադարի ռեժիմի պահպանումը առաջիկա տոների, հիշատակի արարողությունների և տարածաշրջանում միջազգային միջոցառումների ընթացքում»[330]: Ադրբեջանական մամուլ. «*Yəni erməni tərəfini ən çox atəşkəsin qorunması, ayrı sözlə, hər hansı konstruktivlik göstərmədən işğal rejimini saxlamaq maraqlandırır.»*[331] */ «Այսինքն, հայկական կողմին ամենաշատը հետաքրքրում է հրադադարի պահպանումը, այլ խոսքով՝ առանց որևէ կառուցողականություն դրսևորելու հետաքրքրում է զավթիչ ռեժիմի պահպանումը»:*

Թեմային առնչվող ընդհանուր քաղաքական-հասարակական արտահայտությունները ևս ծանրակշիռ տեղ ունեն՝ կարգավիճակ, ինքնորոշում, հանրաքվե, փուլային տարբերակ, փաթեթային տարբերակ, փոխզիջում, ազատագրված տարածքներ, տարածքների վերադարձ, տարածքների վերաբնակեցում, ռազմական հոետորաբանություն, սպառնալիքներ (հնարավորություն), ստատուս-քվո, պատերազմի վերսկում, եռանախագահներ, համանախագահներ, սառեցված հակամարտություն, միջազգային հանրություն, բանակցային գործընթաց և այլն: Օրինակ՝ *«Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ Վալտեր Շտայնմայերն իր հայ պաշտոնակցի՝ Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում խոսել է ղարաբաղյան խնդրի կարգավորման մասին ու նշել, որ ստատուս քվոն երկար պահպանել հնարավոր չէ, կողմերը պետք է պատրաստ լինեն փոխզիջումների»*[332]*:*

[330] Գրիգորյան Հ.,Ուորլիքն ակնկալում է հրադադարի պահպանում հիշատակի օրերի և տոների ընթացքում, 2015, http://www.azatutyun.am/a/26942703.html

[331] Ermənistan müharibə, yoxsa sülh seçimini edəcək?, 2016, http://azeri.press/siyaset/222294-ermenistan-muharibe-yoxsa-sulh-secimini-edecek.html

[332] Վարդանյան Ա.,Տեւական ստատուս քվո անհանար է պահպանել՝հայտարարեց ԵԱՀԿ գործող նախագահը, 2016, http://www.armradio.am/hy/2016/06/29/%D5%BF%D5%A5%D6%82%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%BD-%D6%84%D5%BE%D5%B8-%D5%A1%D5%B6%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A1%D6%80-%D5%A7-%D5%BA%D5%A1%D5%B0%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A5/

Հայ և ադրբեջանական մամուլում հաճախ անդրադարձ կատարվող թեմաներից են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գործունեության հետ կապված իրադարձությունները: Ընդ որում, երկու լեզվում էլ համանախագահ բառը նորաբանություն է, սակայն հայերենում երբեմն գործածվում է եռանախագահ տերմինը: Օրինակ՝ *«Տ.Բալայանը տեղեկացրել է, որ Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների և եռանախագահների փարիզյան վերջին հանդիպմանը որևէ առաջարկ ադրբեջանական կողմը չի արել»*[333]: Ադրբեջաներենում գործածվում է həmsədr-համանախագահ տարբերակը. Օրինակ՝ *«ATƏT-in Minsk Qrupunun həmsədrləri və ATƏT-in fəaliyyətdə olan sədrinin şəxsi nümayəndəsi bölgəyə səfərlərinin yekunlarına dair bəyanatla çıxış ediblər».*[334] */ «ԵԱՀԿ Մինսկ խմբի համանախագահները և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը տարածաշրջան իրենց այցի արդյունքների վերաբերյալ հանդես են եկել հայտարարությամբ»:*

Այսպիսով, մամուլի լեզուն, հագեցած լինելով հասարակական-քաղաքական գնահատողական բառերով, ժամանակի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումների և տեղաշարժերի արտացոլանքն է: Խորհրդային շրջանի մամուլը (այդ թվում՝ հայ և ադրբեջանական մամուլը) արտացոլում է Խորհրդային Միության տարբեր հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային իրողությունները, որոնք ընդհանուր առմամբ բնութագրում են խորհրդային իրականությունը տվյալ ժամանակաշրջանում:

ԽՍՀՄ մաս կազմող հանրապետությունների անկախացումից հետո պատկերը սկսում է փոխվել: Հայերենը՝ իր հերթին, ադրբեջաներենը՝ իր, բռնում են զարգացման առանձին, ինքնուրույն ուղիներ, որի արդյունքում լեզուների ժամանակակից գործուն բառապաշարային պատկերը սկսում է աստիճանաբար փոխվել: Հնացած ռուսական փոխառություններն աստիճանաբար դուրս են մղվում, փոխարենը ստեղծվում են նոր բառեր, և մուտք են գործում նոր փոխառություններ՝ այս անգամ նախապատվությունը տալով ոչ թե ռուսերենին, այլ արևմտաեվրոպական լեզուներին: Հայերենում մեծ թիվ են կազմում նորակազմ բառերը, որոնք փոխարինելու են գալիս փոխառյալ օտար

[333] Տ.Բալայան. «Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների և եռանախագահների փարիզյան հանդիպմանն Ադրբեջանը որևէ առաջարկ չի արել», 2013, http://www.times.am/?p=18030&l=am
[334] ATƏT-in Minsk Qrupunun həmsədrləri bəyanatla çıxış ediblər, 2017, http://www.azadliq.org/a/24781215.html

բառերին, մինչդեռ ադրբեջաներենում էականորեն փոխառյալ բառերը գերակշռում են լեզվի ներքին հնարավորություններով ստեղծված բառերին: Որպես ադրբեջաներենի փոխառության նոր աղբյուր, սկսում է ծառայել թուրքերենը: Այնուամենայնիվ, բազմաթիվ հանգամանքներ հաշվի առնելով՝ փորձ է արվել ցույց տալ հայ և ադրբեջանական ժամանակակակից մամուլի լեզվի բառապաշարային զարգացման ընդհանրություններն ու տարբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը հաստատում է, որ բառապաշարը և հատկապես՝ մամուլի լեզվի բառապաշարը, գտնվում է մշտական շարժման ու փոփոխման մեջ, պահանջում է համակողմանի ուսումնասիրություն և մշտական դիտարկում:

Քննությունից պարզ է դարձել՝

1.Բառապաշարը, լինելով լեզվի՝ փոփոխությունների նկատմամբ ամենազգայուն հատվածը, իր վրա կրել է և կրում է հասարակական-սոցիալական կյանքի փոփոխությունների հետևանքները, որոնք ներկայումս առաջին հերթին իրենց արտացոլումն են գտնում մամուլում: Ժամանակակից ադրբեջաներենի բառապաշարի հիմքն են թյուրքական, արաբապարսկական, եվրոպական և սլավոնական ծագման բառերը, որոնցից յուրաքանչյուրի դերը պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղել է տարբեր՝ պայմանավորված պատմաքաղաքական իրադրությամբ:

2. Ադրբեջաներենի բառապաշարի զարգացման ընթացքը նոր և նորագույն շրջանում դառնում է բառապաշարի զարգացման կարևոր խթան և հարթակ: Հատկապես ժամանակակից էլեկտրոնային լրատվամիջոցների բուռն զարգացումը և տարածումը ավելի է մեծացրել մամուլի լեզվի դերն ադրբեջաներենի կայացման գործում: Մշտադիտարկումների արդյունքում պարզվել է, որ Ադրբեջանի անկախացումից հետո երկրի մամուլի լեզվում նկատվում են հետևյալ միտումները.

ա) 1990-ական թթ.-ից հետո մերօրյա ադրբեջանական մամուլի բառապաշարում էականորեն մեծացել է անգլերենի դերը և թուրքերեն բառերի քանակը,

բ) միաժամանակ նվազել է արաբապարսկական, ռուսերեն բառերի քանակը մամուլի գործուն բառապաշարում, որոնց երբեմն փոխարինելու են գալիս հին թյուրքական բառեր, և այդ երևույթն Ադրբեջանում անվանում են՝ «վերադարձ դեպի արմատներ»,

գ) մամուլի լեզվում ուշադրության արժանի երևույթներից առանձնացնենք նույնանիշների գործածությունը, երբ լեզու ներթափանցած նոր փոխառյալ բառերը սկսում են զուգահեռաբար կիրառվել լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի հետ:

3. Ադրբեջանական մամուլում տեղ գտած մեծաքանակ նորաբանություններն աչքի են ընկնում բազմազանությամբ և գործածության առանձնահատկություններով: Նորաբանությունների ստեղծման հիմնական ուղիներն են բառակազմությունը և փոխառությունները: Փոխառյալ նորաբանությունների մեծ քանակը պայմանավորված է հիմնականում համաշխարհայնացմամբ, գիտատեխնիկական նվաճումների, հասարակական տեղաշարժերի հետ: Որպես նորաբանությունների հիմնական աղբյուր ծառայել է ռուսերենը, բացի այդ, ռուսերենի միջոցով ադրբեջաներեն են ներթափանցում եվրոպական լեզուներից բառեր: Եվրոպական լեզուներից փոխառված նորաբանությունների շարքում առաջատար է անգլերենը:

4.Տերմինների կիրառությունն ադրբեջանական մամուլում նպաստում է մասնագիտացված բառապաշարի հարստացմանն ու կանոնակարգմանը: Ադրբեջաներենում տերմինների ստեղծման արդյունավետ մեթոդներից է ձևաբանականը, երբ նոր բառեր են ստեղծվում ադրբեջաներենի ամենաարդյունավետ վերջածանցների օգնությամբ: Մյուս կիրառելի միջոցը բառապատճենումն է, որի արդյունքում մասնավորապես մեծաթիվ ռուսերեն բառեր հայտնվում են ադրբեջաներենի տերմինային համակարգում: Հավելենք, որ վերջին երկու տասնամյակում ավելի մեծ թվով տերմիններ են փոխառվում արևմտաեվրոպական լեզուներից, հատկապես՝ անգլերենից: Նկատվում է նաև միտում նոր փոխառյալ բառերը փոխարինել դրանց ադրբեջաներեն համարժեքներով: Փաստենք, որ ադրբեջաներենի փոխառյալ տերմինների հիմնահարցը, դրանց կառուցվածքը, բառիմաստային առանձնահատկությունները ամբողջությամբ և բավարար մակարդակով դեռևս ուսումնասիրված չեն:

5.Ատենախոսության երկրորդ գլուխը, ելնելով ժամանակակից ադրբեջաներենի մամուլի բառապաշարի համակողմանի ուսումնասիրության նպատակից, շարադրվել է ըստ բառապաշարի իմաստային խմբերի: Արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

ա) ադրբեջաներենի բառապաշարի առավել կարևոր հասարակական-քաղաքական շերտն ունի բառագիտական, պատմամշակութային նշանակություն, կայուն է և առավել զգայուն աշխարհաքաղաքական ազդակների նկատմամբ,

բ)ադրբեջաներենի մամուլի ռազմական բառապաշարի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ ակտիվ բառապաշարը շարունակում է մնալ ռուսերենի ազդեցության ներքո: Փորձ է արվում բառաստեղծման և մասնավորապես տերմինների ստեղծման գործում կիրառել լեզվի ներքին հնարավորությունները, ադրբեջանական վերջածանցները, լեզվական կառույցները, այլ կերպ ասած՝ «ադրբեջանականացնել» փոխառյալ կամ նորաստեղծ բառը:

6.Անդրադառնալով մամուլի բառապաշարի ֆինանսաբանկային, էներգետիկ, կառավարման, առողջապահական, շինարարական, գյուղատնտեսական, բնապահպանական և այլ ենթակառուցվածքային շերտերին՝ կարող ենք եզրակացնել, որ պահպանելով դեռևս խորհրդային շրջանից եկող ռուսերենի էական նշանակությունը, ավելանում է բառապաշարի թյուրքական շերտերի գործածումը, նվազում է արաբապարսկական ծագման բառերի ակտիվ կիրառությունը: Ատենախոսությունում վերհանվել են նաև ադրբեջանալեզու մամուլի բառապաշարի գիտական, մշակութային, կենցաղային, զբոսաշրջային, կրոնական, մարզական և այլ ենթաշերտերի կիրառման յուրահատկությունները:

7.Ադրբեջանալեզու մամուլի լեզվի բառապաշարի ուսումնասիրությունն ըստ ծագման հնարավորություն է տալիս փաստելու, որ չնայած արաբապարսկական և ռուսերեն բառերը գործածությունից հանելու ճանապարհով լեզուն թյուրքական ծագման բառերով հարստացնելու փորձերին, մինչ օրս արաբապարսկական ծագման բառերը շարունակում են պահպանել իրենց կայուն դիրքերը բառապաշարի գրեթե բոլոր շերտերում: Ռուսերեն բառերի քանակի նվազմանը զուգահեռ մինչ օրս ռուսերենը պահպանում է իր կայուն տեղը ներկայիս ադրբեջանական մամուլի բառապաշարում: Պայմանավորված աշխարհաքաղաքական, պատմալեզվական, հասարակական գործոններով՝ վերջին երկու տասնամյակում մամուլում ավելացել են թուրքերեն բառերը, որոնք փոխառվում են՝ ենթարկվելով աննշան հնչյունական փոփոխության: Արևմտաեվրոպական լեզուներից փոխառությունների աճը գերազանցապես պայմանավորված է համաշխարհայնացման գործընթացներով, Արևմուտքի տեխնոլոգիական առաջատար դիրքով: Սույն լեզուներից ադրբեջաներեն

ներմուծված բառերը հիմնականում վերաբերում են ժամանակակից տեխնիկական գիտություններին, համակարգչային լեզվին ու ժամանցին:

8.Հասարակական-քաղաքական տեղաշարժերն անմիջական ազդեցություն են ունենում յուրաքանչյուր լեզվի բառապաշարի վրա: Բազմաթիվ բառեր և արտահայտություններ, որոնք գործուն կիրառություն ունեին խորհրդահայ մամուլում, այսօր անցել են բառապաշարի պասիվ շերտ՝ հիմնականում վերածվելով հնաբանությունների: Հայաստանի անկախացմամբ արձանագրված հասարակական-քաղաքական տեղաշարժերն իրենց ազդեցությունը թողեցին հայալեզու մամուլի բառապաշարի վրա: Արդյունքում բառերը ոչ միայն կրեցին որոշակի իմաստային փոփոխություններ, այլև ստեղծվեցին բազմաթիվ նորակազմ բառեր, լեզու ներմուծվեցին մեծաքանակ նոր փոխառություններ:

9.Խորհրդային, իսկ նվազ չափով ցարիզմի շրջանից սկսած՝ հայ և ադրբեջանական մամուլի պատմությունը խաչաձևվել է, խորհրդային շրջանում երկու լեզվի հրապարակախոսական ոճն ուներ որոշ ընդհանուր գծեր, ընդհանուր բառային միավորներ, որոնք մուտք էին գործել մեծ մասամբ ռուսերենից կամ ռուսերենի միջոցով: 1991թ.-ից հետո ադրբեջաներենի և հայերենի հրապարակախոսության լեզուները սկսեցին զարգանալ տարբեր ուղիներով՝ իրենց վրա կրելով ժամանակի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունների հետքերը: Անկախացումից հետո ավելի ընդգծվեց հայ մամուլի բառապաշարի, ընդհանրապես հայոց լեզվի հզոր հիմքը նոր իրականությունում ինքնուրույն զարգանալու հարցում, որը չէր կարելի ասել ադրբեջանալեզու մամուլի բառապաշարի զարգացման համար: Ադրբեջաներենի՝ պատմական բավական սահմանափակ հնարավորությունները, արաբապարսկական, թյուրքական և ռուսական բառային շերտերի «պայքարը», ադրբեջանական հասարակական, մասնագիտական և քաղաքական շերտերում չընդհատվող փնտրտուքներն ու տրամագծորեն միմյանցից տարբերվող մոտեցումները շարունակվում են մինչ օրս՝ խնդիրներ ստեղծելով զարգացման կայուն ուղղություն և հիմքեր ուրվագծելու հարցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984, 372 էջ:
2. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 366 էջ:
3. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների), Իմաստաբանություն, բառաքննություն, շարահյուսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2005, 352 էջ:
4. Ավետիսյան Յու., «Անահիտ» հանդեսը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1999, 228 էջ:
5. Բաղրամյան Ռ., Ադրբեջաներեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 767 էջ:
6. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003, 376 էջ:
7. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատարակչություն, Երեւան, 2002, 492 էջ: http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=100&dt=HY_HY&pageNumber=3
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հատոր չորրորդ, Երևան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1980, 829 էջ:
9. Խառատյան Ա., Լրատվության ժանրը Հայաստանի մամուլում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, թիվ 1, էջ 48-65:
10. Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը XX դ. առաջին քառորդին, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, http://lraber.asj-oa.am/6238/1/20.pdf
11. Հովսեփյան Մ., Արեւմտահայ մամուլի պատմություն (1832-1915 թթ.),Դասախոսություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 90 էջ:
12. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր,, Նաիրի հրատ., 2000, 244 էջ:

13. Մարության Ա., Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ, Պատմա-բանասիրականհանդես, № 2, էջ 112, http://hpj.asj-oa.am/5080/1/1997%2D2(111).pdf

14. Մովսիսյան Լ., Լեզվաքաղաքականությունը ժամանակակից Ադրբեջանում, «21-րդ դար Նորավանք գիտակրթական հիմնադրամի» հանդես N3, 2009, էջ 86-97:
15. Պետրոսյան Հ.,Հայերենագիտական բառարան, Երևան, Հայաստան հրատ.,, 1987, 686 էջ:
16. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 347 էջ:
17. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 748 էջ:
18. Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, Զանգակ-97, 2007, 140 էջ:
19. Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոքմագյոզյան Տ., Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2015, 319 էջ:
20. Սողոմոնյան Մ., Մամուլի բառապաշարի հարստացումը ածանցավոր նորակազմություններով, http://www.ysu.am/files/08M_Soghomonyan.pdf
21. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 1999, 352 էջ:
22. Քամալյան Ա., Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, (տարբերակման փորձ), http://ysu.am/files/07A_Kamalyan.pdf

23. Байкова О., Заимствования в речи российских немцев Кировской области, с.16, http://www.lib.csu.ru/vch/093/15.pdf
24. Баскаков Н., Введение в изучение тюркских языков, Изд. 2-е, испр. И доп., Москва, Высшая школа, 1969, 384 с.
25. Восканян В., Тюркские на территории Аррана и Ширвана, http://voskanapat.info/?p=4364
26. Гейбуллаев Г., К этногенезу азербайджанцев, т.1 – Баку, Элм, 1991, 552 с.

27. Гукасян В., В. Асланов, Исследования по истории азербайджанского языка дописьменного периода, Баку, Элм , 1986, 227 с.
28. Демирчизаде А., “О периодизации истории азербайджанского литературного языка”, Структура и история тюркских языков, Сборник статей. Ред. Севортян Э., М., Наука,1971, 311 с.
29. Демьянков В., ИНТЕРПРЕТАЦИЯ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА В СМИ, // Язык СМИ как объект междисциплинарного исследования: Учебное пособие, Москва, Изд-во МГУ, 2003, 391 с.
30. Демирчизаде А., “О периодизации истории азербайджанского литературного языка”, Структура и история тюркских языков, Сборник статей. М., Наука-1971, сс. 251-260, 311 с.
31. Добросклонская Т., Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, Москва, Макс-Пресс, 2008, 203 с.
32. Жеребило Т.**,** Словарь лингвистических терминов. Изд. 5-е испр. И доп. – Назрань: ООО «Пилигрим» 2010, 486 с.
33. Заимствонание, Лингвистика, Энциклопедия Кругосвет, http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/ZAIMSTVOVANIE.html
34. Исенгалиева В., “Интернациональные основы в тюркских языках”, Советская тюркология, No 5, Баку, Академия наук Азербайджанской ССР, 1970, 36-51 сс.
35. Кононов А., Грамматика турецкого языка, изд. Академии Наук СССР, М.-Л., 1941, 312 с.
36. Культура русской речи. Учебник для вузов, Под ред. Граудиной Л. И Ширяева Е., Москва, НОРМА-ИНФРА, 1999, 560 с.
37. Куранбеков А., Проблемы формирования научно-технической терминологии в современном персидском языке, (Вопросы филологии, № 2 (14), сс. 16-18, Москва, 2003
38. Лексика русского языка с точки зрения активного и пассивного запаса, http://www.morfema.ru/publ/16-1-0-55
39. “Лингвистическое наследие Н. К. Дмитриева и современная советская тюркалогия”, Структура и история тюркских языков, под ред. Э.В.Севортяна, М. Наука, 1971, 311 с.
40. Лингвитический энциклопедический словарь, Неологи́змы. http://tapemark.narod.ru/les/331b.html

41. Лопатин В., Рождение слова, Неологизмы иокказиональные образования, Москва, изд-во Наука, 1973, 151 с.
42. Маджаева С., Глобализация медицинской терминологии, Вестник Челябинского государственного университета. 2013. № 1 (292). Филология. Искусствоведение. Вып. 73, 298 с.
43. Новрузова С., О многозначности в научно-технических терминах, Terminologiya məsələləri №1, Bakı, Elm, 2014, 208 s.
44. Поликарпов А., Теоретические основания и эксперименты для анализа соотношения индивидуальных словарей с лексической системой языка, http://www.philol.msu.ru/~lex/pdfs/polikarpov_2012_2.pdf
45. Севортян, Э.В. Этимологический словарь тюркских языков: Общетюркские и межтюркские основы на гласные, М.:, АН СССР.Ин-т языкознания, Наука, 1974, 768с.
46. Свентоховский Т., Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербаджане, http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_002.htm
47. Скороходова Е., Использование некодифицированной лексики в текстах СМИ, Современный Русский Язык, http://filfucker.ru/pervoistochniki/e-u-skorochodova-ispolzovanie-nekodifitsirovannoy-leksiki-v-tekstach-smi
48. Суперанская А., Подольская Н., Васильева Н., Общая терминология: Вопросы теории, Москва, ЛИБРОКОМ, 2012, 248 с.
49. Хуонг Т., Чарыкова О., Тематические группы актуальной экономической лексики в русских печатных СМИ, Филологические науки. Вопросы теории и практики, № 11(53): в 3-х ч. Ч. II., Тамбов, изд-во Грамота, 2015, 213 с.
50. Ширалиев М., Процессы развития азербайджанского литературного языка на современном этапе , Вопросы языкознания, Май-Июнь, Москва, «Наука», 1978, 160 с.
51. Язык СМИ как обьект междисциплинарного исследованиз, Отв. Ред: Володина М., Москва, изд-во МГУ, 2003, 25 с.
52. Язык СМИ как объект междисциплинарного исследования. Учебное пособие. Часть 2. Отв. Ред. Володина М., Москва, изд-во Московского университета, 2004, 319 с.
53. Bell A.,The Language of News Media, London, Oxford, 23 p.
54. Swietoghowski T., Russian Azerbaijan 1905-1920, The shaping of national identity in a muslim community, Cambridge, Cambridge University Press 1985, 247 p.

55. Abbasov M., Neft və qaz üzrə rusca-azərbaycanca-ingiliscə terminlər lüğəti, Bakı, Mütərcim 1999. 758 s.
56. Abdullayev E., Türk dillerinin tarihsel gelişme sorunları, Ankara, Türk Dil Kurumu Yayınları, 1996, 176 s.
57. Aşırlı A., Azərbaycan mətbuatı tarixi (1875-1920), Bakı, Elm və Təhsil, 2009, 171 s.
58. Azərbaycan dilində alınma sözlər, http://zekalar.edu.az/2014/10/az%C9%99rbaycan-dilind%C9%99-alinma-sozl%C9%99r/
59. Babayeva P., Azərbaycan dilinin lüğət tərkibində müasir dövrdə zənginləşmə prosesi, "Filologiya məsələləri", № 4, Bakı, «Elm və təhsil», 2014, 521 s.
60. Balayev X., Azərbaycan dilinin dövlət dili kimi təşəkkül tarixindən (XVI-XX əsrler), Bakı, "Elm ve heyat", 2002, 199 s.
61. Buludxan X., Müasir Azərbaycan dilinin leksikologiyası, Bakı, Nurlan nəşriyyatı, 2008, 442 s.
62. Cəfərov S., Qarayev A., Cəfərova K., Avropa mənşəli sözlərin qısa lüğəti, Bakı, "Maarif", 1981, 236 s.
63. Dəmirçizadə Ə, Müasir Azərbaycan dili, I hissə, fonetika, orfoepiya, orfografiya, Baki, Şərq-Qərb, 2007, 256 s.
64. Ərəb və fars sözləri lüğəti (Azərbaycan klassik ədəbiyyatını oxumaq üçün), Elmi red. Məmməd A., İki cilddə, İİ cild, Bakı, "Şərq-Qərb", 2005, 472 s.
65. Həsənzadə M., Azərbaycan telekanalında erməni dilində veriliş...http://modern.az/articles/49360/1/
66. Hüsiyev F., Xarici ölkələrdə Azərbaycan mətbuatı: 1990-2005-ci illər, (postsovet məkanında), Bakı, «OL» MMC, 2014, 196 s.
67. Xudiyev N., Azərbaycan ədəbi dili tarixi, Ankara, 1997, 493 s.
68. Xudiyev N., Radio, televiziya və ədəbi dil, Bakı, Azərbaycan Dövlət Nəşriyyatı, 2002, 656 s.
69. Xudiyev N., Azərbaycan ədəbi dili tarixi. Ali məktəblər üçün dərslik, Bakı, "Elm və təhsil", 2012, 686 s.
70. Xudiyev N., Azərbaycan ədəbi dili lüğət tərkibinin inkişafı (sovet dövrü), Bakı, V. I.Lenin adına API-nin nəşri, 1986, 83 s.
71. Kazımov İ., Müstəqil mətbuatın dilində gedən proseslər, http://ahiska-az.narod.ru/m015.htm
72. Kazımova Z., Azərbaycanda xarici dildə mətbuat ənənəsi, http://www.lent.az/xeber_62142_Az%C9%99rbaycanda_xarici_dild%C9%99_m%C9%99tbuat_%C9%99n%C9%99n%C9%99si

73. Klassik Azərbaycan ədəbiyyatında işlənən Ərəb və fars sözləri lüğəti, Elmi red. Məmməd A., İki cilddə, İ cild, Bakı, "Şərq-Qərb", 2005, 416 s.
74. Qasımova X., Müstəqillik illərində Azərbaycan dilində termin yaradıcılığının əsas istiqamətləri, Bakı, Elm, 2009, 141 s.
75. QURBANLI T., KAMALQIZI R., Azərbaycan mətbuatının dünəni və bugünü, http://www.anl.az/down/meqale/ses/2010/iyul/126682.htm
76. Latın əsaslı yeni türk əlifbası və İ Bakı Türkoloji Qurultayı, Tərtibçilər-K.V.Nərimanoğlu,Ə.Ağakişiyev, S.Abdullayeva, Bakı, AR Mədəniyyət və turizm nazirliyi, 2006, 93 s.
77. Məhərrəmli Q., Kino, televiziya, radio terminlərinin izahlı lüğəti, Bakı, Azərbaycan Milli Ensiklopediyası nəşriyatı, 2002, 345 s.
78. Məhərrəmova V., Azərbaycan və İngilis dilləri arasındakı Abreviativ xarakterli leksik paralellər, Terminologiya məsələləri, №1, BAKI, ELM, 2014, 208 s.
79. Məmmədquluzadə C., Əsərləri, 3-cü cild, Bakı, "Onder" nəşriyyatı, 1967, 480 s.
80. Məmmədli N. Alınma terminlər (1920-1995-ci illər), Bakı, Elm , 1997, 312 s.
81. Məmmədli Q., Molla Nəsrəddin həyat və yaradıcılığının salnaməsi, Bakı, Azərnəşr, 1966, 563 s.
82. Rzayeva V., Müasir mƏbuatin dinildƏ türkizmlƏr, Tədqiqlər, Bakı, AMEA NƏSİMİ adına dilcilik institutu, 2008, №1, 312 s.
83. Sadıqova S., Dil sistemində leksik paralellərin ifadə formaları, Terminologiya məsələləri, №1, Bakı, Elm, 2014, 207 s.
84. Sadıqova S., Azərbaycan dili terminologiyası, http://www.azerbaijan-news.az/index.php?mod=3&id=31234
85. Sadıqova S., Ana dilinə dövlət qayğısı onun inkişafına real təminat yaradır, http://www.xalqqazeti.com/az/news/social/22961
86. Şahverdiyev A., Azərbaycan mətbuatı tarixi, Bakı, "Təhsil" nəşriyyatı, 2006, 287 s.
87. Tanrıverdi Ə., Dilimiz, mənəviyyatımız, Bakı, Nurlan, 2008, 232 s.
88. YAQUBOVA T., AZƏRBAYCAN MƏTBUAT DİLİNDƏ ALINMALAR (1990-2000), Bakı, MBM, 2008, 152 s.
89. Zamanov N., Heydər Əliyevin nitqində neologizmlər, http://anl.az/down/meqale/azerbaycan/2011/iyun/181174.htm
90. H.Zərdabi, Seçilmiş əsərləri, Bakı, Azərbaycan dövlət nəşriyyatı ,1960, 474 s.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

1. http://www.7or.am
2. http://www.a1plus.am
3. http://www.aravot.am
4. http://www.armeniatv.am
5. http://armlur.am
6. http://armtimes.com
7. http://www.armradio.am
8. http://www.aysor.am/
9. http://www.azatutyun.am/a/2261040.html
10. http://galatv.am/
11. http://henaran.am
12. http://www.hra.am
13. http://www.panorama.am
14. http://www.lragir.am
15. http://newsarmenia.am
16. http://razm.info
17. http://www.times.am
18. http://ahlibeyt.az/
19. http://axar.az/
20. http://aktual.az/
21. http://www.amerikaninsesi.org/
22. http://amerikavekil.com/
23. http://anl.az/new/
24. http://www.anspress.com/
25. http://apa.az/
26. http://arxiv.az/
27. http://ayna.az/

28. http://azcookbook.com/
29. http://www.azadliq.org/
30. http://www.azerbaijan-news.az/
31. http://azerisport.com
32. http://azinforum.az/
33. http://azertag.az/
34. http://az.islam.az/
35. http://azpolitika.info/
36. http://azxeber.com/
37. http://azpress.az/
38. http://www.baki-xeber.com/
39. http://www.bbc.com/azeri
40. http://big.az/
41. http://birlik.az/
42. http://www.cahid.info/
43. http://contact.az/
44. http://www.dia.az/
45. http://dadli.az/
46. http://www.ekspress.az/
47. http://www.dilcilik.org/
48. http://www.goal.az/
49. http://www.ffl.msu.ru/
50. http://filfucker.ru/
51. http://xalqqazeti.com/
52. http://xeber.azeri.net/
53. http://xeber-24.az/
54. http://idman.com/
55. http://kayzen.az/
56. http://www.kaspi.az/
57. http://www.krugosvet.ru

58. http://www.qafqazinfo.az/
59. http://qol.az/
60. http://legend.az/
61. http://www.lib.csu.ru/
62. http://marketing.az/index.php/az/
63. http://www.mediaforum.az/
64. http://www.metbex.net/
65. http://metbuat.az/
66. https://www.meydan.tv/az
67. http://www.milli.az/
68. https://www.mi-news.az/
69. http://miq.az/
70. http://modern.az/az/#
71. http://morfema.ru/
72. http://muxalifet.az/
73. http://news.atv.az
74. http://news.day.az/
75. http://news.lent.az/
76. http://olaylar.az/
77. http://www.olke.az/
78. http://oxu.az/
79. http://www.philol.msu.ru/
80. http://portal.edu.az/
81. http://publika.az/
82. https://report.az/
83. https://sahinekber.com/
84. http://sia.az/
85. http://tibb.az/
86. http://www.trend.az/
87. http://ucnoqta.az

88. http://yukselis.info/

89. http://zekalar.edu.az/

90. http://7news.az/